

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ
Ա. ՆԱԶԵՃՅԱՆ ԳՐԱՐԱՆ

ԳԱԻԹ ԽԱՉԿՈՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ Ա.

Ք. ՏԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶԵՃՅԱՆ ԳՐԱՐԱՆ
11, ՊԱԳԵՐՔԵԼԱՐ, ՍՈՒԹԱՆ ՀԱՄԱՐ
4. ՊՈՒԽՍ

Ա. ԵԱԶԸՃԵԱՆ

ԳՐԱՎԱՃԱՌ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

Պագրերըլար, Սուլթան Համամ, Թիւ 11, Կ. Պոլիս

ՄԻԱԿ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՌԱԳՈՅՆ ՄԵԹՈՏՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱՆ
ԶԱՆԱԶԱՆ ԳՐԱՐՆԹԱՅՔԵՆԵՐՈՒ



Ա. Եազընեան Գրասուըը պարժանըով կը յայտարարէ պո
ուարժան Դպրոցական վարիչ Տարիներու Թէ թիչ ատենէն դասագիրքէ
հրապարակի վըյ մեծ համբաւ շահեցաւ իր հրատարակած բազմա
մանկավարժական կարեւոր գործերով, որոնց մէջ առաջին տեղը գրաւե
պատիւն ունին Յ. Թ. Գալանեանի Մայրենի Լեզուի երեք տարիները:

Ա. Եազընեան Գրասան կողմէ հրատարակուած Հ. և Չ. Լ
ասուրի, Գ. Գավաճեանի, Գ. Խաչկունցի և Օր. Ա. Արապեանի երկ
սիրած գոյընթացքներն ալ նոյն առաւելութիւններով օժտուած ըլլալը
գնահատուած են ձեռնհաս անձնաւորութենէ:

Հետեւաբար **Ա. Եազընեան Գրասուըը** կոչոււմ կ'ընէ պա
ուարժան Հայ Հասարակութեան որ իրենց օգտին համար փութան գործ
ծել **Գրասան** սեփականութիւնները, որոնց գերազանցութեան նկատ
մամբ մանրամասնօրէն խօսուած է մեր Ընդարձակ Գրացոյցակին մէջ:

Գրասան սեփականութիւնները յանձնարարել ուղղակի մ
հասցէին, առանց երկրորդի չը միջնորդութեան, չկայ, սպառած լ
կը կազմուի, եւայն անտեղի առարկութիւններու հանդէպ չգտուել
համար:

ՏԻՆՏԵԳՐՈՒԹԻՒՆ միշտ Գրատանս հասցէին.

در سعادتده سلطان حمامده باقر جيلر نومرو ۱۱

۱. یازیدجیان کتبخانه سی

Ա. ԵԱԶԸՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Սուլթան Համամ, Պագրերըլար, Թիւ 11, Կ. Պոլիս

A. YAZIDJIAN

LIBRAIRE-EDITEUR

Sultan Hamam, Bakirdjilar, No.

CONSTANTINOPLE

01 SEP 2011

9127 925

ԴԱԻԹ ԽԱԶԿՈՆՑ

31 AUG 2007

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

Հ Ա Յ Ո Ց Պ Ա Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մ Ե Ջ Ե Ն Ա.

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆ ՈՐ ՀՈՒՆՆԵՐՆԵՐ)



1. Առածներ
2. Պատմուածքներ
3. Պատկերներ
4. Թելադրութեամբ դասեր
5. Ընթերցումներ
6. Վերատեսութեան հարցումներ
7. Խմբագրութեան նիւթեր
8. Հնագրական եղանակաւորումներ
9. Պատմ. բառգրքուկ
10. Աշխարհացոյցներ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏՔՆՈՍՆԱՆ

1912

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐՈՒՆ

Շ Ա Ր Ժ Ա Ռ Ի Թ Ը

(Ա. Տպագրութեան արտատպում)

Սահմանադրութեան վերահաստատմամբ Արեւմտեան Հայոց Դպրոցական Դրականութեան մէջ դարձեալ սկսան հրատարակուիլ Հայոց պատմութիւններ: Հրատարակութեանն ուղղութեամբ աչքէ անցուցինք, իսկ հրատարակուելիքներուն վրայօր ստոյգ տեղեկութիւններ քաղեցինք: Ասկէ զատ ձեռնհաս ուսուցիչներու կարծիքն ու շօշափեցինք ատոնց մասին: Մեր ու այդ յարգելի անձնաւորութեանց նկատողութիւններն ու դիտողութիւնները կը շարունակուին սն եզրակացութեան յանգեցանք Թէ Հայոց Պատմութեան Նոր Գրագիրք մը պէտք է որ գոհացնէ արդի Մանկավարժական պահանջը: Ուստի՝ մեր անձնական ուժերն ամփոփելով՝ ձեռնարկեցինք մասնանշուած պակասները լրացնելու մեր կարողութեան չափս Ապագայն պիտի սրբազրէ մեր Թերութիւններն ալ և պիտի ամբողջացնէ մեր տեսութեանն նաև վրիպած Մանկավարժական կէտերը:

Ն Պ Ա Տ Ա Կ Ը

Ո՛րքէ դասագիրք որ հրատարակ կ'ելլէ՝ անշուշտ նպատակի մը կը ձգտի Ըստ այսմ Պատմութեան նպատակն եղած է Ուսանողութեան մէջ

1. Արժարժել սեր Հայրենիքի Եղանակը վայրենուել,
2. Երախտագիտութիւն՝ Մեր Նախնեաց Ակամամբ,
3. Մղում՝ սաչ տղուն՝ Ժամանակակից ու յաջորդ սերնդին Ակամամբ ունեցած Պատմականութեան գիտակցութեան,
4. Զարգացնել Հայ տղուն Պատմական երեւակայութիւնը,
5. Բացարեւել Պատմական ու Ընկերական սարսական գաղափարները,
6. Ազդել Ուսանողութեան Բարոյական Աշխարհին վրայ՝ ոգեւորելով զայն Հայրենի հերոսներու պատկերացումով ու արքնցնելով անոր մէջ վսեմ ձգտումներ:

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱԹԱՆՈՑ
Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Թիւ 27, Ֆինանսներու Եօզուում, Կ. Պոլիս



4. 10885-4

Ն Ի Ի Թ Ը

Այս նպատակին յարմար նիւթեր ալ մշակել հարկ է: Որովհետև
Հեքեամներու աշխարհէն՝ Հեքեամներու պատմուածքէն տղայն կը հրա-
պուրի, մենք ընտրեցինք այնպիսիներ որ մէկ կողմէ Հեքեամներու և միւս
կողմէ ճշգրիտ Պատմութեան հետ կապ ունենան միանգամայն և Ուսանողու-
թեան թելադրեն Պատմական երևոյթներու Հետաքրքրութեան զարմնումը:

Արդ՝ Հայոց պատմութեան Աւանդական մասը թանկագին գանձ
մըն է այս մասին: Հայրենի առաւելչներով ոչ միայն Հայ Յիշին Հոգե-
խօսական ու Բարոյագիտական տարրերը կը վերլուծուին, այլ և օգտուելով
անոնց մէջ խտացած ցանուցիր տեղեկութիւններէն՝ կարելի է լուսաբանել
ու բացատրել Պատմական երևոյթները — Բաղաբակրթութեան աստիճա-
նական զարգացումը, ինչպէս կը տեսնուի ըստ պատշաճի դասաւորուած
ընթերցումներուն մէջ, Այսպէս ուսանողը կը խնամտի թէ ի՞նչ է Ընտանիքը,
Յեղը, Նահապետը, Հայրենիքը, Վարչութիւնը, Թագաւորը, Ազգն և այլն.
և թէ նախնական մարդիկ ի՞նչպէս մտած են զանազան օգտակար գիւտեր
և ի՞նչպէս զանոնք հետզհետէ կատարելագործած են: Եւ որպէս զի Ուսա-
նողութիւնը լաւ Թափանցէ Բաղաբակրթութեան զարգացման, աշակերտին՝
Ընթերցման նիւթին հետ բաղդատել տալու է իր ապրած Դաւառին Ազգա-
գրական երևոյթներն որոնք — այս տեսակէտով բարեբախտաբար — գրեթէ
յար և նման, միևնոյն աստիճանին վրայ, գոյութիւն ունին մեծ մասամբ
Օրինակ. «Նահապետութիւն» ընթերցման ատեն այդ հատուածին հետ բաղ-
դատութեան եզր կազմելու են ըրդական կեանքէ դրուագներ:

Աւանդութեանց դասաւանդութիւնն ուրիշ առաւելութիւն մըն ալ
ունի, որ է՝ Բանաստեղծական մասը: Ասիկայ է որ պիտի մշակէ Միշին Դա-
սընծացքի տղոց Գեղեցկագիտական ճաշակն և սիրելի պիտի ընծայէ ո՛չ
միայն Հերոսներու անձնաւորութիւնները, այլ և այն տեղը՝ ուր կատարուած
են անոնց սխալի ու տխրալի գործերը: Այս պարագային ուշադրութեան
առարկայ դարձնելու է առասպելներու այն մանրամասնութիւններն որոնք
կապուած են Ուսանողին ապրած տեղին հետ: Ինչպէս՝ Տարծոյ, Բաղէշի ու
Վասպուրականի Ուսանողութեան ուշադրութիւնն աւելի կը լարուի, երբ
անոնց կը պատմուի Հայկի մասին:

Ա Ղ Բ Ի Ի Բ Ը

Տարրական, Միշին ու Բարձրագոյն Հայոց պատմութեան նիւ-
թերը, ոչ թէ հիւսիքը բաղած ենք թէ՛ Բուսպետութեան շրջանին և թէ
Սահմանադրական շրջանին Արեւելեան Հայոց ու Արեւմտեան Հայոց մէջ
հրատարակուած նմանօրինակ պատմութիւններէ: Ատոնք հայթայթեցին
շինուածքին նիւթը՝ ատաղձ — նուազ կամ առաւել տաշուած վիճակին
մէջ, — իսկ մենք պատրաստեցինք ձարտարապետական խտակադիժն ու
կրտուցանելով Շինուածքը՝ զայն սազեցինք դրսէն ու ներսէն:

Մ Ե Թ Ո Տ Ը

Ամէն անգամ որ դասագիրք մը պատրաստելու յատակադիժն ու-
սումնասիրած ենք, ջանացած ենք նոր՝ օգտակար դրութիւն մը մտցնել վար-
ժարաններու մէջ: Ասոր ապացոյց՝ մեր **ԿՐՈՑԻ ՈւՍՈՒՄՆԵՐԸ, ԱՇԽԱՐ-
ԿԱԳՐՈՒՔԻՆԵՆԵՐՆ ՈՒ ԴՈՒՆ ԱԻՏԻ ԸՂԱՍՆԵՐԸ:** Իսկ հետզհետէ հը-
րատարակելի **Հայոց Պատմութեան երեք Դասընթացքն** ալ —
Տարրական, Միշին Ա. ու Միշին Բ. — բոլորովին մանկավար-
ժական նորութիւն են: Պատմական նիւթերը վերածուած են Պատմուածքի:
Եւ որպէս զի Պատմուածքներն իր բարոյական ազդեցութիւնն ունենան, աս-
նոնց իւրաքանչիւրին սկիզբն աւանդած ենք յարմար շինիչ առած մը, այն-
պէս որ այդ Պատմուածքն Առածը լուսաբանող Բարոյական ընթերցուածք-
ներու գոյն մը կ'առնէ: Կէտ մը՝ որուն պէտք է ձգտի Պատմութեան դասաւան-
դութիւնը, ինչպէս ըսինք նպատակին մէջ: Մէն մի Պատմուածքի դասին
վրայ այնպիսի թելադրութիւններ ըրած ենք որ ուսուցչին հարցումներն և
ուսանողին պատասխաններն Ընտանեկան խօսակցութեան եղանակին յանգին:
Առաւելութիւն մը՝ որ ամէն տեղ զնահատուած է: Թելադրութեամբ դասին
կը յաջորդէ Նիւթը լուսաբանող պատշաճ Ընթերցում մը: Մէն մի Պատմա-
կան շրջանն աւարտելուն՝ տուած ենք Պատմուածքներու Ամփոփումը՝ բե-
րան ուսանելի, նաև Պատմուածքներու և Ընթերցումներու մասին Վերատե-
սութեան խտացեալ հարցումներ՝ Միտքը մշակող, Սիրան ազնուացնող ու

Դատողութիւնը գորացնող Այդ Վերատեսուծեանց գործնական, շօշափելի օգտակարութիւնը յայտնելու համար՝ առաջարկած ենք խմբագրական այնպիսի նիւթեր ուր խտացած ըլլան մէն մի Պատմական շրջանի էական մասերը։ Աշակերտները զանոնք շարադրելու են իրենց մտածած եղանակաւ։

Թէ՛ ճրջատի յաջողութիւնը ենք այս մասին, ահա Տպագրուած բանի մը պրակները, ի մէջ այլոց, զրկեցինք ծանօթ հոգեբան-մանկավարժ Յովհաննէս Էֆ. Հինդլեանի՝ իր անաշտու դիտողութիւնները լսելու խնդրանքով, Սոյն յարգելի մասնագէտ ուսուցիչն իր 3 Օգոստոս, 1909 Սուակիր նամակին մէջ կարգ մը կէտեր մեր ուշադրութեան ներկայացնելով — որոնք իրաւամբ նկատի առնուեցան և գործադրուեցան Միջին Բ. ի մէջ — կ'աւելցնէ, «Գործը ուսումնասիրելով ըստ այն յատակագծին որուն վրայ պատրաստած էք զայն, և ո՛չ ըստ այն յատակագծին որուն վրայ պիտի փախարէի որ պատրաստուած ըլլար, գնահատելի առաւելութիւններ կը գտնուի աւելորդ մեք, օգտակար շեղումներ հնացեալ սովորութիւններ, և այսչափը կը բաւէ ինքնին՝ շնորհաւորելի կացուցանելու համար մեր երկը. Ծրագիրը զոր ընտրած եք՝ համամայն կը գտնուի Հոգեբանական և Գրքիչ Մանկավարժութեան և մեր գործը կոչուած է Յեղաշրջում յառաջ բերել պատկաններ հասցնելու յարմար դասագիրքի տու մեք։»

Արդ՝ մեծայոյս ենք թէ մեր այս Ձեռնարկը լաւ Գործիք մը պիտի հանդիսանայ Պատ. Պաշտօնակիցներուս ձեռքը՝ Ուսանողութիւնը դարբնելու Մանկավարժական հայեանքներու համաձայն,

Հասցիւղ (Կ. Պոլիս)
1 Օգոստոս, 1909

Գ. ԽԱՉԿՈՆՅԱՆ



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ի Զ Ի Ն Ա.

ԳՒՒԻԹ ԽԱՉԿՈՆՅԱՆ

Ա.

Ահա պզտիկ, կոկիկ, սիրուն հատորիկ մը, հաստատուն կազմ, ընտիր թուղթ և մաքուր տպագրութիւն, պատկերներն ալ այնքան ճիշտ ու նպատակայարմար, որքան կարելի է։ Բայց գրքին միայն արտաքին երեսոյթը չէ որ հրապուրիչ է, ներքին արժէքն ալ համապատասխան է։ Առաջին ակնարկով հետաքրքիր դիտողը կը հասկնայ որ սովորական գործ մը չէ իր տեսածը։

Հազիւ թէ գրքին կափարիչը կը բանաս, ահա աչքիդ առջև կը շարուին սակողաձեռն աւսիճանաւորութեան մասերն այն իմաստուն ծրագրին որ հիմ կազմած է գործին պատրաստութեան, ծրագիր մը՝ իր տեսակին մէջ նոր, հրահանգիչ, մանկավարժական և վերջին ծայր տպաւորիչ։ Ահա այդ ծրագրին մասերը բառ առ բառ. 1. Առածներ, 2. Պատմութիւններ, 3. Պատկերներ, 4. Թեղադրութեան դասեր, 5. Ընթերցումներ, 6. Վերաստեւորութեան հարցումներ, 7. Խմբագրութեան նիւթեր, 8. Հնագրական եղանակաւորումներ։

Դասագրքին սկիզբը դետեղուած է յառաջաբանն որ տափակութիւններու և անձնագիտութեան ընկալելալ ձեւաբանութեանէն տարբեր պարունակութիւն մը ունի. հոն խտացած են Հեղինակին այս աշխատասիրութեան

մասին ընդհանուր ծանօթութիւններ որոնք կը բացատրեն Հայոց Պատմութեան այս Դասընթացներուն Շարժառիթը, Նպատակը, Նիւթը, Աղբիւրն ու Մեքոնքը:

Աւելորդ չենք համարիր հոս արտագրել Յառաջաբանին այն շատ շահեկան քանի մը տողերն որոնք Պատմութեան ուսման և միանգամայն այս գրքին նպատակը կը բերեղացնեն. 1. Արժարժեղ սեր Հայրենիքի նշանաւոր վայրերուն, 2. Երասխագիտութիւն՝ մեր Նախնեաց նկատմամբ, 3. Մղում տալ տղան՝ ժառանգակալից ու յաջորդ սերնդին նկատմամբ ունեցած պարտականութեան գիտակցութեան, 4. Զարգացնել Հայ տղան պատմական երեւակայութիւնը, 5. Բացատրել պատմական եւ շնորհալի սարակալան գաղափարներ, 6. Ազգիչ Ուսանողութեան բարոյական աշխարհին վրայ՝ ոգեւորելով գայն հայրենի հերոսներու պատկերացումով ու արեւոցներով անոր մեջ վսեմ ձգտումներ: Ահա որքան հակիրճ, այնքան նշանակալից ուրուագիծ մը այն գեղեցիկ նպատակին զոր ժրջան հեղինակը կը ջանայ հետապնդել իր այս նոր երկասիրութեան միջոցաւ:

Աչքէ անցուցէք Պատմութեան Պատմութիւնը ծայրէ ծայր և պիտի տեսնէք թէ ո՛չ մէկ ջանք խնայուած չէ արդարացնելու համար իր կոչումը: Մէն մի պատմական նշանաւոր իրողութիւն կամ դէմք կազմած է գլուխ մը կամ դաս մը, որ երեք ամբողջացուցիչ մասերէ բաղկացած է. Պատմութեան մը, Թեւադրութեան մը դաս մը և Ընթերցում մը: Պատմութեան մը ձեւին վերածուած և Հեքեաթի եղանակով աւանդուած են պատմական նիւթերը: Ամէն մէկ պատմութեան մը սկիզբը դրուած է շինիչ առած մը որ նիւթին հոգեբանութիւնը կը կազմէ: Պատմութեան մը կը յաջորդէ Թեւադրութեան մը Դասն որ հարցարան մըն է և կը ծառայէ Պատմութեան մը իմաստը վերլուծելու, ուսանողին և ուսուցչին միջև ընտանեկան խօս-

սակցութիւն մը բանալու և տղուն դատողութիւնը կըրթելով հանդերձ՝ յիշողութիւնը զօրացնելու: Իսկ Ընթերցումն որ ամէն գլուխներու կամ մասերու վերջին օղակը կը կազմէ՝ Պատմութեան նիւթին հետ սերտ կապ ունեցող և զայն ամբողջացնող վերջին ծայր հրահանգիչ հատուած մըն է:

Ինչ որ ուսուցիչը պարտաւոր էր ընել, Պատմական ուրոյն ընթերցումներով իր դասերը լուսաւորելու և ճշխացնելու համար, հոս Հեղինակը ինք կանխահոգութեամբ նշելու կատարած է: Այս մասն արդարեւ միաներուն չափ և թերեւս ա՛լ աւելի ճոխ է ու մտամարդիկ, վասն զի կը բացատրէ մէկ կողմէ Քաջապարտութեան աստիճանաւոր զարգացումը, այսինքն՝ Նախնական մարտից գիտելը, — ընկերային դիմայեղումներ, կրօնքի դիմայեղումներ, բնատոնմիկ քաղաքակրթութիւն, միւս կողմէ՝ գեղեցիկ կենսագրութիւններ Հայ կեանքի ու կրօնքի, նշանաւոր դիւցազուններու, այնպիսի հրապարիչ լեզուով եւ վեհ զգացումներու արտայայտութեամբ որ մեր Ազգագրութեան Մեծ Նահապետին՝ Հ. Ղ. Ալիշանի Յուշիկներու նկարագրութիւնը կը յիշեցնեն:

Պատմութեան մը և Ընթերցումներուն բովանդակութիւնը տղոց մտքին մէջ տպաւորելու և անոնց ազդրի երեւակայութիւնն արժարժելու համար՝ Հեղինակը հոգ տարած է այդ հատուածները զարգարելու բազմաթիւ պատկերներով. և ուր որ ազգային դրոշմ կրող նկարը կը պակսի, դարուն ընդհանուր քաղաքակրթութեան ոգին բացատրող դրուագներ ճարելու փոյթ տարուած է:

Այս ամէնը նիւթերուն վերլուծական մասին համար կարգադրուած ըլլալով՝ Համադրութեանց մասին ալ միջոցներ զանց առնուած չեն: Դասագիրքն այլ և այլ շարժաններու բաժնուած է, և մէն մի շրջանի վերջ Հեղին-

նակը մասնաւոր ուշադրութեամբ գրած է ի բերան ուսանելի. 1. Անկոտորում մը որ Շրջանին բոլոր իրողութիւնները կը խտացնէ խնայողական, բայց ամբողջ ձեւով, 2. Վերաստուրբեան խտացեալ հարցումներ՝ ճիշտ թելադրական դասերուն նման, և 3. Խնքագրութեան նիւթեր՝ ամէնէն կարկառուն Դէմքերուն և Դէպքերուն ուսումնասիրութեան և բաղդատութեան վրայ:

Կը մնայ գիտնալ թէ Հեղինակն իր նպատակին հասնելու և կատարեալ գործ մը արտադրելու յաջողած է: Ըստ մեզ այսքան խղճամիտ ուսուցչութեամբ, Երջանայեցութեամբ եւ քննական մեքոնով աշխատելի, Մանկավարժութեան ու Հոգեբանութեան սկզբունքները գոհացնելու ջանակ վերջ, ուրիշներէ աւելի ո՞վ աւելի իրաւունք պիտի տահեր յաջողութեան դափնին ի ձեռին ունենալու:

Այս մասին ծանօթ հոգեբան-մանկավարժ Պրն. Յ. Հինգլեանի կարծիքն աւելորդ չենք համարիր հոս ներկայացնելու մեր ընթերցողներուն՝ Գրքին Յառաջաբանին դիմելով դարձեալ. «Գործը ուսումնասիրելով ըստ այն յատակագծին՝ որուն վրայ պատրաստած էք դայն, և ոչ ըստ այն յատակագծին՝ որուն վրայ պիտի փափաքէի որ պատրաստուած ըլլար, գնահատելի առաւելութիւններ կը գտնեմ անոր մեջ, օգտակար շեղումներ հնացեալ սովորութենէ, եւ այնչափը կը բաւէ ինքնին շնորհաւորելի կացուցանելու համար ձեր երկը: Ծրագիրը գործնած էք, համաձայն է Հոգեբանութեան եւ կրթիչ Մանկավարժութեան եւ ձեր գործը կոչուած է Յեղափոխում առաջ բերել՝ պատկաններ հասցնելու յարմար դասագիրքերու մէջ:»

Կը տեսնէ՞ք Հինգլեանի խօսքերն որքան չարտուած ու կշռուած, բայց պատուաբեր յարգելի Հեղինակին:

«Աշխատանք», Թիւ 6-7, Իզմիր

Ս. ԱՄՍՏՅԱՆ

Բ.

Նորածագ ազատութեան շնորհիւ սկսան Հայոց Պատմութեան դասագիրքեր եթէ ոչ ողողել, բայց հետզհետէ լոյս տեսնել և կ'երեւոյ թէ շատեր ալ կ'սպասեն իրենց կարգին՝ մամլոյ տակ մտնելու: Որչափ ալ ուրախալի է արդարեւ այս երեւոյթը, բայց միւս կողմէ չենք կրնար զսպել գլխու շարժում մը ի նշան տհաճութեան, տեսնելով որ ցարդ իբրև դասագիրք հրատարակուածներէն և ոչ մին ունի այն հանգամանքն ու պայմանն որ այժմ այսպիսի դասագիրքէ մը կը պահանջուին:

Խաչկոնց իր դասագրքով գոհացուցած է մանկավարժական պահանջը: Հոս կը շատանանք յառաջ բերել ինքնին իսկ յարգելի Հեղինակին խօսքերով այն մանկավարժական առաւելութիւնները զորոնք ինքնին մասնանիջ ըրած է: Գեղեցիկ դասաւորութեամբ ու յօրինուածական կանոնաւորութեամբ կը ներկայացուին դէպքերը գունագեղ ու դրուագիչ ոճով ու լեզուով: Ասոնց վրայ աւելցնելով այն առաւելութիւնն ալ որ գերքը պատկերազարդ է, որով մանկանց ուշն ու ուրուշը կը գրաւէ և ըմբռնողութեան մեծ դիւրութիւն կ'ընծայէ. կրնանք ամենայն իրաւամբ ըսել թէ իր տեսակին մէջ միակն է Խաչկոնցի Հայոց Պատմութեան Դասագիրքը:

«Հանդես Ամսօրեայ»

2. 2. 2.

1909, Նոյեմբեր, էջ 348-349

Գ.

Խաչկոնցի Ազգ. Պատմութիւնը մէջտեղը կուգայ մեր ուսանողներու լաւ դասագիրքը ըլլալու իր տեսակին մէջ: Ազգ. պատմութիւն մը, մասնաւոր իր հին ձեւին մէջ, գրելը մեծ դժուարութիւն չունի քիչ ու շատ

վարպետ գրիչի մը համար: Եւ ճիշդ ատոր համար է որ քանի մը նոյն տեսակի դասագիրքեր լոյս տեսած են արդէն:

Խաչկոնցի Գասագիրէն ունի իր սեփական յատկութիւնը: Ըմբռնած է թէ ո՞ր մասերն են որոնք անհրաժեշտ են իր դասագիրքին մէջ դնելու. ու կը պատմէ լաւ լեզուով, խնամոտ ոճով: Գլորոցականները, ըստ առաջնոյն, պիտի տեսնեն Հայկը, Արայ գեղեցիկը, այսինքն՝ Դիւցազնական կամ Աւանդական չրջանը որ ամէն Հին Պատմութեան սկիզբը կը շինէ: Եատերու կարծիքով՝ Մեր Պատմութեան մէջ ա՛լ տեղ տրուելու չէ գուուզ մաղերով քաջերու, անուշիկ Նուարդի ու Արայի, կրակէ և բոցէ ծնած աստուածներու: Ոչ. ամէն ազգերու որրանի չրջանն է ատ. Հռոմայեցի ուսանողը այսօր ալ սիրով կը տեսնէ իր երկուորիկ նախահայրերը մատակ զայլի մուշտակին տակ, թաթիկնին երկնցուցած իրենց գայլ-մօրը պտուկներուն և իրեն շրթունքներուն եզերքներէն վար ծորած սպիտակ կաթին հեղուկը: Այդչափը չէ՛ միայն. Հին Գրականութիւն մը կայ որ իր շէնքը կը բարձրացնէ Աւանդութեան այդ հսկաներուն վրայ, և ատոնցմով միայն հասկնալի է:

Խաչկոնցի Գրէին մէկ ուրիշ առաւելութիւնն է Նախապատմական մարդուն պատմութիւնն որ մաս մաս դրած է անոր մէջ հաշիւով, ու այն աստիճանական զարգացումովը ուրկէ կ'անցնի Նախապատմական մարդը:

Խաչկոնց այդ պատմութիւնը իր գրքին մէջ սրակած է ամբողջովին:

Ուրիշ մաս մը, իր այդ գրքին մէջ, կը կազմէ այն քննական ծանօթութիւնը մեր ցեղի ծագմանը մասին, որու տեղ տրուած է:

«Արեւելի», Թիւ 7187

ՀՐԱՆԳ



Հ Ա Յ Ո Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ի Ջ Ի Ն Գ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Բ Ա Ս

Յ Բ Ա Ս Գ Ե Բ

Մ Շ Ա Կ Ո Ւ Ա Մ Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ

Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Մ Ք Ն Ե Ր

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ե Ր Ջ Ա Ն

Ա. Գ Ի Ի Յ Ա Ջ Ն Ա Կ Ա Ն Ե Ր Ջ Ա Ն

1. Հայկ ցահապետ. — Հայկ Սեհաարի մէջ. — Բելի բըն-նակալութիւնը. — Հայկի ազատասիրութիւնը. — Հայկի աշխարհաշինութիւնը. — Հայկի ու Բելի կուր. — Հայկի յաղթութիւնը. — Հայ անուշի ծագումը:

2. Հայկի յաջորդները. — Արմենակ, Արամայիս, Ամասիա, Երաս, Գեղամ, Սիսակ, Հարմա. — Աշխարհակալութեան ծրագիր:

3. Արամ ցահապետ. — Հայերը կը խտանան կրտսի հովիտը. — Հայոց նախկին գրացիները. — Հայոց նախկին կենցաղը. — Հայ ցեղերը կ'զգան միութեան պետքը. — Արամ՝ Միութեան կապ. — Հայ ցեղերը՝ աւատ Արամի. — Արամի առաջին յաղթանակը. — Արամի աշխարհակալութիւնը. — Հարաւային Հայաստան. — Փաքը Հայք. — Հայաստանի բարգաւաճումը. — Հայ՝ Արմէն ու Հայաստան՝ Արմենիա:

4. Արայ Գեղեցիկ ու Եամիրամ. — Հայոց բարոյական կեանքը. — Եամիրամի խնեշութիւնը. — Հայոց մէկ գեղեցիկ հաւատքը:

5. Եամիրամի մեծագործութիւնը. — Եամիրամի կերտ. — Ատրեստանցի արհեստաւորներ Հայաստանի մէջ. — Հայաստանի ամէնէն հին, գեղեցիկ քաղաքը — Հայաստանի հին արձանագրութիւնները:

6. Հայասանի Ասորեսանի հարկաւու. — Կարգոս. — Սոսեաց անտառ. — Անուշաւան. — Ասորեստան կը նուաճէ Հայաստանը. — Հայերը թագաւորութիւն. — Բագրատունեաց ծագումը:

Բ. ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՆԱԽԱՐԵՆԿՆԵՐ ՈՒ ՀԱՅԱՋՈՒՆՔ

7. Հայասանի նախարքիկները. — Ուրարտացիք. — Քեռացիք. — Քետացիք Ուրարտու. — Հայոց ծագումը. — Հայերն Ուրարտու. — Հայազունք:

8. Տիգրան Ա. Մուսանդիան. — Հայերն ահարկու իրենց դրացիներուն. — Զինարական բարեկարգութիւն. — Հայոց դրացիներուն մտահոգութիւնը. — Աժդահակ ու Կիւրոս. — Աժդահակի երգը. — Տիգրան կը յաղթէ Աժդահակի:

9. Վահագն. — Աղբային գիւցաղներ. — Հայոց պաշտամունքը. — Վահագնի ծնունդը. — Յարդգող. — Մշոյ Սուլթան Ս. Կարապետ:

10. Մակեդոնեան ու Սելեւկեան իշխանութիւն. — Մեծն Աղեքսանդր կը տիրէ Հայաստանի. — Հայաստան՝ անկախ. — Հայերը կը դիմեն Պարթեւներուն:

ԵՐԿՐՈՐԳ ՇՐՋԱՆ

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

Ա. ՀԱՅ-ՊԱՐՔԵՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ԱՏՆ

11. Վաղարշակ. — Պարթև-Արշակունեաց ծագումը — Հայ-Պարթև հարստութիւնը. — Մարտիրոսիկէս. — Հայոց պատմութիւնն աղիւններու վրայ. — Վաղարշակի բարեկարգութիւնները. — Արշակ մեծ:

12. Արտաշէս Ա. Աշխարհակալ. — Հայ Առաջնութեան խնդիր. — Հայերը Պանոսի զինակից. — Արտաշէսի զօրքերուն բազմ:

մութիւնը. — «Սահմանք քաջաց՝ զէնք իւրեանց». — Համայնացեաց առաջին դաւը Հայոց գէմ:

13. Տիգրան Բ. Մեծ. — Տիգրան Բ. միակ Արեւելեան Վեհապետ. — Միհրդատի պատերազմները. — Հայերն ու Հռոմոսյեցիք գէմ գիմաց. — Տիգրան կը խորտակէ ահեղ Հռոմայեցիները. — «Բաժնէ որ տիրես». — Տիգրանի զիջումը. — Տիգրանի վրէժխնդրութիւնը. — Երկու Հայ առիւծներ:

14. Արտաշէս Ա. — Հռոմայեցիները յաղթելու նոր ծրարէր. — Հռոմէական դաւաճանութիւն. — Հայաստան կառավարողի:

15. Արգար. — Ապոստամբութեան պատրաստութիւն. — Արգար Յիսուսը կը հրաւիրէ Եգիպտոս. — Հայոց առաջին դարձը:

Բ. ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

ԳՐԻՍՏՈՒՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԱԾԱՆՔԻ ԱՏՆ

16. Հայածանի Բրիտանոսիան դէմ. — Անանէ. — Սանաթրուկ. — Հայոց առաջին մարտիրոսները:

17. Մուսանդ Բ. բռնաւոր. — Բագրատունեաց իրաւունքը. — Երուանդի խժդժութիւնները. — Երուանդի նենգութիւնները. — Երուանդի վատութիւնները:

18. Արտաշէս Բ. — Մթառի տիրաւորութիւնը. — «Ստաբէն մի՛ յուսար». — Բունաւորին վախճանը. — Հայ Արշակունի հարստութիւն. — Արտաշէս Բ.ի վարձատրութիւնները. — Հռոմէական յարձակում. — Ալանաց արշաւանք. — Արտաշէսեան դար:

19. Արտաշէս Ա. — Հայը գիտէ երախտք ճանչալ. — Անարժան որդին. — Վասին մահը:


20. Խոսրով Ա. Մեծ. — Վաղարշ. — Նաւասարդ — Խոսրով Մեծ. — Պահլաւունեաց կործանումը. — Սասանեան դաւ. — Հայաստան՝ Սասանեան երկիր:

Գ. ՀԱՅ-ՊԱՂԱՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳՐԻՍՏՈՒՆՈՒԹԵԱՆ ԱՏՆ

21. Տրդատ ու Գրիգոր պանդուխտ. — Մեծն Տրդատի քաջութիւնները. — Տրդատ կը թագաւորէ Հայաստանի վրայ. — Գրիգոր Կեարկոյ մէջ:

22. Բրիտանոսիւնը կը յորձանակէ Հայասանի մէջ. — Ս. Գրիգոր Խոր վերապր. — Ս. Գրիգորի Տրդատի հիւսար:



23. Հերանոս Հայոց կրօնքը. — Բնապաշտութիւն. — Կապաշտութիւն:

24. Գրիսոնէութիւնը կը քարտուի Հայասանի մէջ. — Էջմիածին. — Հայոց առաջին կրօնական պատերազմը. — Սկիւթացուց արշաւանքը. — Մամիկոնեանց տիրապետութիւնը. — Ս. Գրիգոր Մանեայ սյրը. — Նախարարներուն ապերախութիւնը:

25. Հայ-Պաղիալուցի կը գահավիժին. — Սասանեան քաղաքականութիւն. — Ազգային կռիւներ. — Արշակ Բ թ ձախող քաղաքականութիւնը. — Հայոց Երևազը. — Արշակ Բ թ դաւաճանութիւնը. — Արշակ Բ. Անոյշ բերդ:

Դ. ՇԱՅՆ ՅԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ ԵՐԿՈՒՔԻ ԲԱԺՆՈՒԱԾ

26. Յունաց Հայասան եւ Պարսից Հայասան. — Մեհրուժան Արծրունի. — Մեծն Ներսէս. — Պապ. — Ձերբաւի մեծ ճակատամարտը. — Մեծն Ներսէս Հայաստանի բարերար. — Պապի գլխատումը. — Վարդապետ. — Հայաստան կը բաժնուի:

27. Հայոց Ոսկեղարը. — Վաւաճապուհի խոջեմ քաղաքականութիւնը. — Հայ ժողովրդին վիճակը. — Ս. Մեսրոպ Մաշտոց. — Հայերէն գրի գիւտը. — Թարգմանիչները՝ Առաջին Հայ ուսուցիչներ. — Գրական զարթնում՝ Ոսկեղար:

28. Հայ-Պաղիա Արցախունաց կործանումը. — Բաղաքական անկում. — Յունական Հայաստանի Գրական զարթնումը. — Հայերը սիրաշահելու ձեռնարկ. — Արաաչիր. — Հայ-Պաշտաւանեաց վախճանը:

29. Մարգարեանք ու Կոմոնք. — Պարսկական Հայաստան. — Յունական Հայաստան. — Հայ կոմսեր:

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

ԸՍՏ ՊԱՏԵԱՃԻ ԴԱՍԱՒՈՐՈՒԱԾ՝ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐԸ ԼՈՒՍԱԲԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԳՈՑ ԳԻՒՏԵՐՈՒ ԿԱՐԳԸ

1. Նախնական մարդոց բնակութեան տեղը՝ ծառի ճիւղերու վրայ, քարայրներ ու անձաւներ. — 2 Ուտելիք հում հում՝ բնութեան պարգեւածները, թափառական կեանք — 3. Նախնական մարդոց առաջին գործիքները՝ փայտն ու քարը. — 4. Առաջին մուրճն ու կացինը. — 5 Առաջին ղէնքերն ու որսորդութիւն. — 6. Յղկուած քարէ գործիքներ. — 7. Մետաղէ գործիքներ. — 8. Միսն ու ձուկը պահպանելու միջոցներ. — 9. Կրակի գիւտը. — 10 Մարդոց առաջին բնակարանը. — 11. Չարգեր. — 12. Հագուստ. — 13. Ոստայնանկութիւն. — 14. Կենդանիներու բնակարան. — 15. Հողագործութիւն. — 16. Նտակեաց կեանք. — 17. Անօթներ. — 18. Չարեւազներ. — 19. Հաղորդակցութեան միջոցներ. — 20. Առագաստանաւ. — 21. Փոխանակութիւն. — 22. Առեւտուր. — 23. Գիր:

2. ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳԻՄԱՅԵՂՈՒՄՆԵՐ

1. Մայրական ցեղ. — 2. Հայրական ցեղ. նահապետութիւն. — 3. Ցեղեր, հայրենիք. — 4. Գերիներ ու ազատներ. — 5 Ռամիկներ, ազնուականներ. — 6. Ցեղապետ, տանուէր, նահապետ, նախարար, իշխան, բուրմ, թագաւոր կայսր. — 7. Հայ բնաւանական կեանք:

3. ԿՐԾՆՔԻ ԳԻՄԱՅԵՂՈՒՄՆԵՐ

1. Կրօնքի ծագումը. — 2. Ֆեթիշականութիւն. — 3. Աղեպաշտութիւն. — 4. Բնապաշտութիւն. — 5 Եւհեմերականութիւն. — 6. Կապաշտութիւն. — 7 Միաստուածութիւն. — 8. Հայ Պանթէոնը. — 9. Հայ ուխտատեղիներ:

4. ՀԱՅ ԳԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Հայաստանի վիճակը Տիգրան Ա թ օրով. — 2. Հայաստան Տիգրան Բ թ օրով. — 3. Նաւասարդի տօն. Գուտան. — 4. Հայ նախարարներ. զինւորական ուժ. — 5. Հայ թագաւորներ. — 6. Հայաստանի ժողովուրդը:

Բ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ս. Սանդուխտ կոյս. — 2. Արտուկազդ ու Մհեր. — 3. Ս. Աշխէն թագուհի. — 4. Խորովիդուխտ. — 5. Մեծն Ներսէս. — 6. Մուշեղ Մամիկոնեան. — 7. Ս. Մեսրոպ. — 8. Ս. Սահակ Պարթև. 9. Մովսէս Խորենացի:

Դ Ա Ս Ե Ր

Թեկադրութեամբ ընտանեկան խօսակցութիւններ մէջ մի Պատմաբանի վրայ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ Ն Ե Ր

Իւրաքանչիւր Դասի ու Պատմաբանի գլխաւոր կէտերը բերան ուսանելի:

ՎԵՐԱՏՅՈՒԹԵԱՆ ԽՏԱՏՅԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Պատմաբաններն ու ընթերցողները խտացնող թեկադրութիւններ՝ միտքը մշակելու, դատողութիւնը զօրացնելու, սիրտն աղնուացնելու:

ԽՄՈԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐ

Բաղդատական Քաղաքակրթութեան ու Բաղդատական կենսագրութեան 38 նիւթեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ


Հայաստանի աշխարհացոյցին վրայ Պատմութեան ընթացքին պատահած լեռան, ձորին, հովիտին, դաշտին, լիճին, գետին, վտակին, քաղաքին և այլն մասին ԲԱՌԳՐՔՈՒԿԻ մէջ ծանօթութիւններ:



Հ Ա Յ Ո Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն



ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ



Ա. ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1. ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Մ Ք

«Ազատութիւնը վեհանձն հոգիներու սնունդն է:»

Թորգոմի որդին՝ Հայկ ու իրցեղը Հայկ Սեւաթի Հայկագունգ ի սկզբան քախառական կեանք մը կը վարէին և կ'ապրէին որսորդութեամբ ու խաշնարածութեամբ: Ասոնք տարուան մեծ մասը կ'անցնէին Եփրատ* ու Տիգրիս* երկու մեծ գետերուն միջև գտնուած ընդարձակ ու բարեբեր դաշտագետինը: Այս երկիրը կը կոչուէր Միջագետք՝ Սեւանա*։ Հոս շինուած էր աշխարհի ամէնէն հին ու հռչակաւոր քաղաքներէն մէկը՝ Բաբելոն*։

Միջագետքի մէջ Հայկի ցեղէն զատ Ռէլի Բաճակա. կ'ապրէին բազմաթիւ խաշնարած ցեղեր: Եւրոպայէն Այս ցեղերէն մէկուն նահապետը՝ Բեյ Քաջ կռուող ու ճարպիկ որսորդ ըլլալով՝ վախցուցեր էր շատերն և բռնի հնազանդեցուցեր

ԽԱՆՕԹ. — Աստղանշակ անունները տես ԲԱՌԳՐՔՈՒԿԻ:

Հայկ կը հասնի Վանայ ծովուն*

**Հայկի առխարհա-
ժիւղութիւնը**

հարաւային արեւմտեան կողմը հովասուն լեռնադաշտ մը որ կը տարածուի Կորդուաց* լեռներուն ստորոտը:

Հայկ այս տեղերը յանձնելով իր Կադմոս թոռան (Սրմենակի որդի) ինք կը դիմէ դէպի հիւսիսային արեւմուտք. հոն իր անունով կը շինէ Հայկաշէն* գեղը, գաւառն ալ կը կոչէ Հարֆ* որ կը նշանակէ «Հայերու բնակած տեղ»:

Հայկազունք հոս իրենց թափառական կեանքը թողած՝ սկսան նստակեաց կեանք վարել, գեղեր շինել ու պարապիլ հողագործութեան:

Հայկի բնակած այդ տեղերն ուրիշ թափառական ցեղեր ալ կը բնակէին վաղուց: Ասոնք չկրնալով դիմադրել Հայկի զօրութեան՝ կը հպատակին անոր և զայն իրենց նահապետ կը ճանչնան: Այսպէս Հայկի երկիրներն ու հպատակներն օր ըստ օրէ կը բազմանային:

Բէլ երբ կ'իմանայ թէ Հայկ մեկ-

**Բէլ Հայկի վրայ
կ'արժաւ:**

նած է, սաստիկ կը դայրանայ և շուտով կը հաւաքէ բազմաթիւ զինակիրներ և Հայկին կը հետապնդէ:

Բէլ հազիւ հասեր էր Կորդուաց լեռները. այս տեղի պահապանը՝ Կադմոս իր պապուն լուր կը հաղորդէ այդ մասին: Հայկ իր սակաւաթիւ, բայց կռուի վարժ մարդոցով կը հասնի Վանայ ծովուն հարաւային արեւելեան կողմն և բարձր սարերով շրջապատուած դաշտավայրի մը վրայ բանակ կը յարդարէ:

Հայկ ու իր մարդիկը հազիւ հանգչած էին. անհասարին կողը կ'երեւայ հսկայ Բէլ՝ իր մարդոց մէկ մասը հետն առած: Բէլ ոտքէն մինչև գլուխը բոլորովին զրահապատ կը: Գլուխը դրած էր երկաթէ սաղարարս,

կուրծքն ու կռնակը պատսպարած էր պղնձէ սախսակներով, բազուկներն ու սրունքները պաշտպանած՝ երկաթէ պահպակներով, մէջքն ալ գօտի կապած էր: Մէկ ձեռքը բռնած էր նիզակ, միւսն ալ՝ արոյրէ վահան, սուրն ալ կախած էր մէջքէն: Չորս կողմն ալ սպառազէն խուճերով պատած՝ սպառնալից շարժումներով ու նայուածքով կը յառաջանար: Թէև Հայկն ալ զինուած էր, բայց ո՛չ այնչափ շքեղ ու անարկու, որչափ Բէլը: Հայկի գլխաւոր զէնքն էին ննս ու աղնոց:

Երբ երկու թշնամի բանակները դէմ առ

Հայկի յաղ. դէմ կուգան, իսկոյն կը յարձակին իրարու ռուբիւնը վրայ և իրարու կը խառնուին: Սուրերու,

նիզակներու և վահաններու շկաններն ականջ

կը խլացնէր: Յուսահատ ու կատաղի կռիւ մը տեղի կ'ունենայ: Մարդիկ գազաններու նման իրար կը յօշոտէին: Միայն Հայկ արեւտորպ կը փայլէր իր աննման Հայկազուն դիւցազներուն մէջ:

Կռուի տաք միջոցին Բէլ տեսնելով որ յաղթութիւնը Հայկի կողմը կը մնայ, կ'ուզէ թողուլ պատերազմի դաշտն և հետզհետէ ետ քաշուելով՝ երթալ, միանալ իր պահեստի բանակին և յետոյ իր բոլոր ուժով յարձակիլ Հայկի վրայ:

Հայկ Բէլի մտադրութիւնը կուահելով՝ ճարպիկութեամբ կը մօտենայ հսկային, կը քաշէ աղեղն և ուղղակի նշան կ'առնէ տխտանեան՝ հսկայ Բէլի կուրծքին: Երեքգլխեան նետը կը ծակէ անոր կուրծքի զրահներն և կը խրուի սիրտը: Բէլ իսկոյն անագին դողդուժով կը Գլտորի, անճոռնի ու սոսկավիթխար հսկայն հոգին կը փչէ, իսկ իր մարդիկը սարսափահար՝ հոս հոն կը փախչին:

Այսպիսի քաջութեան յիշատակն ա-
 Հայ անունին պազայ սերնդին մէջ յաւերժացնելու և
 ծագումը զանոնք յաղթութեան սիրով վառելու
 համար՝ Հայկ պատերազմի տեղը դաս-
 տակերտ մը կը շինէ և Հայք կը կոչէ: «Գերեզմանք»
 կ'անուանէ բլրին ստարտան ուր ինկաւ, կործանեցաւ Բէլ
 իր հազարաւոր հսկայներով:

Հայկ հրամայեց որ Բէլի քստմնելի դիակը տանին
 Հայք և բարձր բլրի մը վրայ թաղեն՝ իբր պարծանք իր
 քաջութեան և ամօթ թշնամիներուն:

Մենք այսպիսի ազատաւոր, հայրենաւոր ու ազգաւոր
 Դիւցազնի մը անունով Հայ կը կոչուինք:

Հայկազանց խանձարուրքը Վանայ շին առաջանն
 էր, բայց ասոնց հողերը հետզհետէ ընդարձակուելով՝
 Հայկի անունով կը կոչուին Հայաստան:

Դ Ա Ս


Թելադրութեամբ

Հայկ ու իր ցեղն ինչ կեանք կը վարէին եւ ո՛ւր.
 — Ո՛ր երկիրը կը կոչուի Միջագետք. — Ո՛րն է աշխար-
 հի ամենէն հին քաղաքներէն մէկն եւ ո՛ւր շինուած էր.
 — Հայկի ցեղէն զոս որո՞նք կը բնակէին հոն. — Ո՛վ էր
 Բէլ. — Որո՞նք հնազանդեցան Բէլի. — Բոլոր ցեղերն
 ի՞նչ կ'ընէին Բէլի. — Ի՞նչու. — Բէլ զո՞վ հնազան-
 դեցնել կը փորձէ. — Հայկ ի՞նչ նկարագրի տէր էր. —
 Հայկ ի՞նչու կը բողոք Սենաարն եւ ո՛ւր կը գաղթէ. —
 Որո՞նք էին Հայկազունք եւ քանի հոգի էին. — Հայկ
 ո՛ւր կը հասնի եւ հոն ինչե՞ր կ'ընէ. — Ո՛րն է Հայկի
 շինած գեղը. — Հայք ի՞նչ կը նշանակէ. — Հայկազունք
 ե՞րբ հողագործութեան վարժուեցան. — Որո՞նք հնա-
 զանդեցան Հայկի եւ զայն իրենց ի՞նչ նախնացան. —
 Ասոր հետեւանքն ի՞նչ եղաւ. — Բէլ ինչո՞ւ կը զայրա-
 նայ եւ ի՞նչ կ'ընէ. — Հայկ զո՞վ պահապան կարգած

էր կորզուաց լեռները. — Ո՞վ Հայկին կ'իմացրնէ Բէլի
 յարձակումը. — Հայկ որո՞նց հետ կը հասնի եւ ո՛ւր. —
 Բէլ սարին կողմ ե՞րբ կ'երեւայ եւ որո՞նց հետ. — Բէլ
 ի՞նչպէս գինուած էր. — Որո՞նք են Հայկի զենքերը. —
 Երկու կողմէն ի՞նչպէս կը կռուին. — Հայկ ի՞նչպէս կը
 փախէր. — Բէլ ե՞րբ եւ ինչո՞ւ կը նահանջէ. — Հայկ
 ե՞րբ եւ ի՞նչպէս կ'սպաննէ Բէլը. — Բէլ ի՞նչպէս կը
 գլորի եւ իր մարդիկն ի՞նչ կ'ըլլան. — Հայկ այս ֆա-
 ջուքիւր յաւերժացնելու համար՝ ինչե՞ր քաւ. — Մենք
 որո՞ւ անունով Հայ կոչուեցանք. — Ո՛ր երկիրն է Հայոց
 խանձարուրքը. — Այդ երկիրն ե՞րբ կոչուեցաւ Հայաստան.
 — Հայկի պատմութիւնն ինչե՞ր կը ներշնչէ Հայ տղուն:

Ը Ն Յ Ե Ր Յ Ո Ւ Մ


ՄԱՐԴՈՒՆ ԵՍԵՆԱԿԱՆ ԶԷՆՔԵՐՆ ՈՒ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ.
 ԽԱՇՆԱՐԱՅՈՒԹԻՒՆ




ՔԱՐԷ ԿԱՅԻՆՆԵՐ

Մարդ երբ կը հնարէ փայտէ ու քարէ գործիքներ, առաջուան
 պէս չի վախճարը գաղաններէն. կը համարձակի ո՛չ միայն անոնց հետ

կռուիլ, այլև կ'որոյս զանոնք և կը ճոխացնէ իր աղբարիկ սեղանը: Կ'սպաննէ այնպիսի կենդանիներ որոնցմէ անիկա առաջ կը փախչէր ու կը պահուէր:



ՅՂԿՈՒԱԾ ՔԱՐԷ ԿԱՅԻՆՆԵՐ




ՊՂՆՁԷ՛ ՍՈՒՐԾԻ ԵՒ ԴԱՇՈՅՆՆԵՐ

ԵՂՋԻՒՐԷ ԵՒ ՈՍԿՈՐԷ ԳՈՐԾԻՔՆՆԵՐ ՈՒ ԶԷՆՔ

Մարդ այսպէս կ'սկսի որսորդութեան պարսպիլ:

Մարդիկ շարունակ որսերու հետապնդելով՝ կը խորհին թէ արդեօք կարելի չէ՞ այնպիսի գործիք մը կամ զէնք մը հնարել որով կարելի ըլլայ որսը (թռչուն կամ գազան) սպաննել հեռուէն՝ առանց անոր շատ մտտենալու: Ուստի երկար ձողի մը ծայրը կը յարմարցնէ ու կ'ամրացնէ սուր քարի մը կամ սկրի մը կտոր: Այսպէս յառաջ եկաւ առաջին նիզակը, զէնք մը՝ զոր մարդ կրնար թէ՛ շատ հեռուն նետել և թէ անով կարելի էր հարուածներ տալ որսին:




ԱՂԵՂԻ ՈՒ ՆԵՏԻ ՑԵՍԱԿՆԵՐ

Ասկայն այս հնարուած նիզակն ալ չի գոհացնէր որսորդը: Զայն նետելու համար ուժեղ ձեռք պէտք էր, մտնաւանդ շարունակ նետելէն ձեռքը կը յոգնէր: Պէտք էր այնպիսի հնարք մը գտնել, կը խորհէր նախնական մարդը, որ թէ՛ ձեռքը չյոգնեցնէ և թէ նիզակը շատ աւելի հեռուն երթայ:

Ատոր միջոցն ալ կը գտնէ: Կը փրցնէ ծառի դալար ու առաւելական, ճկուն ճիւղ մը, կը ծռէ զայն ու կ'հիտաշրջանակի կեռ ձև մը կուտայ անոր: Յետոյ կ'հիտաշրջանակի ծայրերն ամուր մը կը կապէ զանազան ծառերու և բոյսերու կեղեւներէն շինուած բարակ լարով: այդպէս ահա պատրաստուեցաւ աղեղը:

Աղեղի միջոցով նիզակ նետելը շատ գիւրացաւ, միայն թէ նիզակն այս անգամ նախկինէն շատ աւելի կարճ էր: Այդպիսի նիզակը կը կոչուի նետ:

Որովհետև նախնական մարդիկ շարունակ բնութեան ծոցը կ'ապրէին, զանազան կենդանիներու և դաղաններու հետ գործ ունէին, վաղուց սորված էին այս ու այն վայրերի կենդանին ընտելացնել



ՊՂՆԵՔ ԳՈՐԾՈՒԹՆԵՐ

և իրենց պէտքերուն ծառայեցնել: Կենդանիներն ու թռչուններն ընտելացնելու անթիւ միջոցներ կան: Ետբունակ որսորդութեան պարագելով՝ մարդիկ յաճախ այս ու այն թռչունի կամ գազանի բոյնը կը գտնէին, և անոնց անօգնական ձագուկները բռնելով՝ կը բերէին, կը պահէին ու կը մեծցնէին: Այսպէս փոքր հասակէն պահուած անասունները կ'ընտելանան մարդուն ու ընտանի կը դառնան: Սակայն դարձեալ թափառական կեանք կը վարէին: Ուստի մարդ զանոնք ընտանեցնելէն ետքն ալ կ'աշխատէր միշտ անոնց բնաւորութեան յարմարիլ ու միտօին չուէլ այս ու այն կողմը: Այնպէս մեր նախահայրերը կ'սկսին զբաղիլ խաչմտածուքիւսով:

2. ՀԱՅԿԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Ծերերուն պակր՝ իրենց թոռները, զաւակներուն պարճանքը՝ իրենց հայրերը:»

Հայկի մահէն ետք իր որդիները կ'սկսին Արմենակ ցրուիլ զանազան կողմեր: Հայկի յաջորդը՝ Արմենակ նահապետ Հայք գաւառը յանձնելով իր Մանաւազ ու Խոռ եղբայրներուն՝ ինք ընտանիքով կը չուէ դէպի հիւսիս ու բնակութիւն կը հաստատէ բարձր լեռան մը քով գեղեցիկ դաշտի մը մէջ: Հոս ալ կը գտնէ առաջուց ցրուած ալլազգ ժողովուրդ մը ու զանոնք իրեն կը հնազանդեցնէ: Արմենակ լեռն իր անունով կը կոչէ Արմգաւճ* ու դաշտն ալ՝ Արագաւճոճն*:

Մանաւազի Բագ որդին կը բնակի Ադի ծովու հիւսիսային արեւմտեան կողմերը: Ծովը Բագի անունով կոչուեցաւ Բգևուռեաց ծով (արդի Վանայ ծովը):

Արմենակի որդին՝ Արաւայիս Արարա-Արամայիս սեան* դաշտին մէջ մեծ գետի մը եզերքը բլրի մը վրայ կը շինէ իր անունով Արմախր* աւանն որ յետոյ ամուր քաղաք մը դարձաւ: Երկար ատեն հոս բնակեցան Հայոց նահապետները: Արամայիս իր Արաս թուան անունով երամախ* կը կոչէ մեծ գետը:

Արամայիս ունէր շատակեր ու բազմածին Ծարա որդի մը Ծարա անունով: Ասոր համար Արամայիս Ծարայի կը յանձնէ Արագածի միւս կողմն արգաւանդ դաշտ մը որ Ծիրանկ* կոչուեցաւ Ծարայի անունով: Ծարայի շատակերութիւնն առած դարձած էր Հայ

ժողովրդին մէջ : Երբ հանդիպէին շատակեր մարդու մը կ'ըսէին. «Եթէ դուն Շարայի որկորն ունիս, մենք Շիրակի ամբարները չունինք.»

Այն ատենները մէն մի նահապետական ծրագիր պետ իր ամբողջ կալուածները կը թողուր անդրանիկ զաւկին, իսկ միւս որդիներուն համար, դեռ իր կենդանութեան, նոր նոր հողեր կը գտնէր ու կը շէնցնէր որով երկիրը հետզհետէ կ'ընդարձակուէր : Այսպէս ալ Արամայիսի որդին՝ Անասիա իր անդրանիկ որդի Գեղալին կը թողուր Արմաւիրը, իսկ կրտսերները՝ Փառախոսն ու Յոշակը կ'առնէ կը տանի Երասխի միւս կողմը՝ դէպի հարաւային Սպիտակափառ լեռը : Հոս անոնց համար գեղեր կը շինէ — Փառախոս ու Յոշակերս, լեռն ալ իր անունով կը կոչէ Մասիս* : ~

Գեղամն ալ իր հօր մահէն ետք Աղզին նահապետ կ'ըլլայ : Արմաւիրը կը յանձնէ իր Հարնա որդուն և ինք կը չուէ Ագաս* գետի վրայօք դէպի հիւսիսային արեւելք՝ քաղցրաջուր ծովակի մը քով : Հոս կը հիմնէ աւան մը Գեղարփուցի* անունով, լեռը կ'անուանէ Գեղ, ծովն ալ Գեղամայ ծով* (հիմայ Սեւանայ լիւն) : Գեղամ այս երկիրները մինչև Երասխ գետ իբրև ժառանգութիւն կուտայ իր Սիսակ որդւոյն :

Այսպէս Հայկի որդիներն ու թոռները հետզհետէ բազմանանալով՝ կը ցրուին ու կը տիրեն Հայաստանի կեդրոնական մասին՝ ամբողջ Արարատեան դաշտին ու Սիւնեաց աշխարհին, թէև մէն մի նահապետ կ'ապրէ իրարմէ անկախ և կը պարապէր ինչպէս անուրբեան ու Հոդագործութեան :

Գ Ա Ս

Թեղաբուքեամբ

Հայկի մահէն ետք իր որդիներն ինչ բրին. — Ո՞վ էր Հայկի յաջորդը. — Արմենակ Հարք գաւառն որո՞նց յանձնեց եւ ինք ո՞ր գնաց. — Արմենակի բնակած տեղն ի՞նչ կոչուեցաւ. — Հոս որո՞նք հնազանդեցան անո՞ր. — Ո՞վ էր Բագ եւ ո՞ր բնակեցաւ. — Ո՞վ էր Արամայիս, ո՞ր բնակեցաւ եւ ո՞ր քաղաք շինեց. — Ո՞ր քաղաք բնակեցան Հայոց նահապետները. — Գեոն որո՞ւ անուանով Երասխ կոչուեցաւ. — Ո՞վ էր Շարա. — Ո՞ր բնակեցաւ. — Շարայի շահակերութիւնն ի՞նչ դարձած էր. — Ո՞րն է այդ առածը. — Հայկի յաջորդներուն ասե՛ն Աբխաթախութեան ծրագիրն ի՞նչ էր. — Ամասիա որո՞ւ քողուց Արմաւիրը. — Ինքն ո՞ր գնաց. — Որո՞նց համար շինեց Փառախոսն ու Յոշակերսը. — Ո՞ր լեռը Մասիս կը կոչուի եւ որո՞ւ անուանով. — Այդ միջոցին մէն մի նահապետ ի՞նչպէս կ'ապրէր. — Գեղամ ո՞ր կողմերը նուանեց. — Գեղամ ո՞ր երկիրները կը յանձնէ իր Սիսակ որդւոյն. — Հայկի յաջորդներն ե՞րբ սիւնեցի Արարատեան դաշտն ու Սիւնեաց երկիրն : — Հայկի յաջորդներուն այս պատմութեան ի՞նչ բարոյական կրնանք քաղել :

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Ս

ՆԱՆԵՆԱԿԱՆ ՈՒՏՆԵՐԻ, ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Նախնական մարդը բացի բնութեան տուած բարիքներէն, ուրիշ բան մը ունեցած չէր. ո՛չ հազուստ ունէր, ոչ բնակարան, և ոչ ալ ապրելու ուրիշ միջոցներ :

Մարդուն առաջին բնակարանն եղած է ծառերու խիս ծխող երու վրայ, զանազան ֆայրներու և ֆայրանուներու մէջ : Հոս անիկա

Թէ՛ գաղաններու յարձակումներէն կը պաշտպանուէր և Թէ՛ դիշերն ալ ապահովութիւն մը կ'ունենար:

Բնութեան ծոցն ու միայն բնութեան տուած բարիքներով ապրող մարդը պիտի կերակուուէր այն բոլոր բաներով, ինչ որ գիււրին կրնար հայթայթել: Կ'ուտէր զանազան պտուղներ, բոյսերու արմատներ, ձկներ, մորեխներ, և այլն, որովհետև գեւ չէր գիտեր հերկել, ցանել և իր աշխատութեամբ կեանքիան հրաժեշտ պէտքերն արտադրել:

Շարունակ զանազան բուսեղէններ ուտելով՝ շատ բնական էր որ ուսումնասիրէր Բուսական աշխարհը, Գծուար չէր նկատողութեան առնել Թէ՛ վար ինկած սերմէն, հաւստէն նոր բոյս մը կ'աճէր, և ան ալ նոյն տեսակ պտուղներ կամ սերմեր կ'արտադրէր:

Ամէնէն առաջ մարդ կ'սկսի ցանել ա՛յնպիսի սերմեր որ հա-



ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐՈՐՆԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐ

մեմատարար աւելի շուտ կ'աճէին և մանաւանդ զանոնք՝ որոնց մէկ սերմնցուն շատ աւելի սերմ կ'արտադրէր: Այսպիսի բոյսերէն էին Բագահասիկները:

Նախնական մարդիկ երբեք չէին կրնար խորհիլ պտղատու ծառեր պահելու կամ տնկելու մասին, որովհետև ասոնց պտուղները ստանալու համար շատ երկար տարիներ պիտի սպասէին:

Նախնական մարդիկ կը ցանէին շատ պարզ եղանակաւ. սերմնցուն ձեռքով կը թաղէին հողին մէջ, երբ բոյսերը կը մեծնային, կը հասնէին, զանոնք ձեռքով կը քարերով կը մանրէին. հատիկներն ալ կը զատէին և հում հում կ'ուտէին: Շա՛տ ետքն էր որ մարդիկ կը սովորէին հատիկներն աղալ նախ երկու քարի տակ, յետոյ ասնոքի մէջ ու երկամի միջոցաւ:

Մարդիկ հաց թրերն ալ մէկ անգամէն սորված չեն: Ի սկզբան ալբերը ջրի հետ խառնելով՝ կ'ուտէին: Շա՛տ ետք սորվեցան եփած խմոր՝ հաց ուտել:

Եւ որովհետև ձեռքով հողը կակղցնել գիւրին չէր, ասոնք հետզհետէ հնարեցին ու շինեցին զանազան հողագործական գործիքներ, ասով բոյսերն աւելի աճեցան ու բերքն ալ առատ եղաւ:

ԹԱՓԱՌԱԿԱՆ ԳՆԱԿ, ՆՍՏԱԿԵԱՑ ԳՆԱԿ

Երբ առաջին մարդը ստիպուած էր ապրուստը Բնութենէն քաղել, բնական է որ անհկայ չէր կրնար ունենալ ո՛չ հայրենիք, ո՛չ ալ մշտական բնակավայր, քանի որ շարունակ հաս. հոն կ'իջնար, տեղէ տեղ կը բափառէր՝ կերակուր գտնելու և սովամահ չըլլալու նպատակաւ:

Այսպէս՝ կերակուր գտնելու նպատակաւ թափառած ասէն, շարունակ կը գիտէին և կը պրպտէին Բնութիւնը թէ տարուան ո՞ր եղանակին և ո՞ւր հնար է առատօրէն գտնել այս կամ այն պտուղը, ե՞րբ և ո՞ր բոյսի վրայ կը գտնուին մեծ քանակ զեռուններ, ճիճիներ կամ կենդանիներ:

Այդ եղանակաւ ապրուստ հայթայթող մարդոց համար մշտական բնակավայր ունենալը նոյն իսկ ծանր բեռ մըն էր, որովհետև անոնք դատապարտուած գիտի մնային տունը զայն պահպանելու համար ու սովամահ պիտի կորուսէին:

Մարդիկ երբ Հողագործութեան կը պարապին, կ'սկսին վարժուիլ Նստակէաց կեանքի, այսինքն՝ հասստուն քնակարան ունենալու: Այս պարագային անոնք չդադրեցան նաև թափառական կեանք վարելէ: Ինչպէս որ խաշնարածութեամբ զբաղելով՝ մարդիկ չդադրեցան Որսորդութենէ ու Ձկնորսութենէ, այսպէս ալ Հողագործութեան պարապելով և Նստակէաց կեանքի վարժուելով՝ չթողուցին իրենց ապրուստի միւս միջոցները:

Գետերու և ծովերու եզերքներն ապրողները նախամեծար համար էն Ձկնորսութիւնը, որովհետև շատ գիւրին էր ձկներ ու ծովային պէս պէս կենդանիներ որսալ: Իսկ այնպիսի տեղեր որ աւելի կը յարմարէին Որսորդութեան, Խաշնարածութեան կամ Հողագործութեան, անոնք այդ զբաղումները նախամեծար համարեցին:

Աշխարհի վրայ կան ցարդ ա՛յնպիսի տեղեր ուր մարդիկ կրնան հաւատարապէս թէ՛ այս և թէ՛ այն գործին պարապիլ:

Հողագործութիւնը մարդոց վրայ ա՛յն արդեցութիւնն ունե-

ցաւ որ անոնք տարուան որոշ միջոց մը կեցան որոշուած տեղ մը ու սպասեցին մինչև որ իրենց ցանքը վերջանայ ու բերքերը հաւաքեն:

Կարելի չէ ըսել թէ մարդիկ ամէն տարի միեւնոյն տեղը կատարեցին իրենց ցանքը, ընդհակառակն անոնք միշտ կը շրջէին և ուր որ յարմար ու անմշակ տեղ գտնէին, հոն կը ցանէին: Անմշակ տեղերը շատ էին, որովհետեւ դեռ մարդիկ բազմաթիւ չէին աշխարհին վրայ:

Որովհետեւ Որսորդութիւնը կենտրոն համար շատ դժուար էր մանաւանդ որ կեները պարտաւորուած էին կերակրել ու մեծցնել իրենց զաւակները, ստիպուած էին անոնք տուելի բուսական ուտելիք ներով գոհանալ:

Ուստի կենը խնամքով ու քիչ տոնէն կրցաւ ուսումնասիրել Բուսական աշխարհը: Հաւանական է որ կի՛նն է յրացի առաջին անգամ սերմեր ցանելու և Հողագործութեամբ պարապելու գողափարը:

Երբ մարդիկ սկսան Հողագործութեամբ զբաղել, այր մարդիկ այդ գործն իրեն անվայել իրենց՝ իրեն թելթե աշխատանք մը կը յանձնէին կենտրոն և իրենք կը շարունակէին Որսորդութիւնը:

Մինչև այսօր ալ կան շատ տեղեր ուր Հողագործութիւնը «կանոն գործ» կը համարուի և կիներն են միայն հողագործ:

3. Ա Ր Ա Մ Ն Ա Հ Ա Պ Ե Տ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Սելլացի ու աելիասաւեր զաւակն իր հօր քոզուցած հողէն կտոր մը անգամ չի ծախեր, այլ կ'աւելասի ուրիշ հողեր աւելցնել:»

Հայկ նահապետի մահէն ետք անոր որդիներն ու թոռներն իրենց ընտանիքով, մօտիկ ազգականներով հետզհետէ աւելի հեռու տեղեր ցրուած էին: Ոմանք դէպ ի հիւսիս, ուրիշներ՝ դէպ ի արեւմուտք, շատերն ալ դէպ ի հիւսիսային արեւելք չուած՝ ներքին շինութիւններով զբաղած էին:

Շատեր բնակութեան տեղ ընտրած էին Երասխ գետի ափերն ուր տարիներու ընթացքին մէջ կը շինուին բազմաթիւ գեղեր ու քաղաքներ: Ասոնց ամէնէն հինն ու ծանօթն է Արմաւիր:



ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏ

Հայոց հետ միեւնոյն ատեն կազմուած էին իրենց դրացի ժողովուրդները: Ասոնք նոր երկիրներ գրաւելու համար՝ շարունակ կը յարձակէին այս ու այն ցեղին վրայ:

Հայոց դրացի երկիրներն էին արեւելեան կողմը՝ Մարասան, հարաւային կողմը՝ Անտրեսան, արեւմտեան կողմն ալ՝ Կապադովկիա:

Հայկէն ետք Հայաստանի զանա- Հայոց նախկին զան ցեղերն իրենց նահապետներով բաւական բազմաքանակ իրենց համար գեղեր ու աւաններ շինած էին, գրեթէ ամբողջ Հայաստանի տէր դարձած էին, սակայն միութեան կապ չի կար անոնց մէջ: Ասոնցմէ իւրաքանչիւրը

կ'ապրէր իրեն համար, առանձին՝ առանց ու է կապ պահելու իր դրացնին հետ: Այս դրութիւնը շատ կը վնասէր իրենց, չէին կրնար առաձին դիմադրել հեռաւոր տեղերէ յարձակող, թափառաչըջիկ, բազմաթիւ ցեղերու և ստիպուած էին ծանր հարկեր տալ անոնց՝ իրենց գլուխ ողջ պահելու համար:

Հայաստանի մեծ ու փոքր Հայ ցեղերը կ'զգան միութեան պէտքը ցեղապետները զգալով թէ հետըզհետէ զէնք ու միաբանութիւն պէտք էին, որպէս զի կոռւէին իրենց սահմանները յարձակող թշնամուոյն դէմ, թոյլերը կ'ապաւինին ուժեղներուն:

Արամ միութեան կապ քաջ նահապետը: Բոլոր այս ցեղապետներու մէջ ամէնէն հզօրն ու յարգուածն էր Արամը: Արամ քաջ ատենէն բոլոր ցեղերն իր իշխանութեան տակ կը միացնէ և կը դառնայ Հայաստանի գլխաւոր ցեղապետը՝ իշխան:

Հայ ցեղերն Արամին աւաստանները կանոնաւորապէս օգնել իրենց և թէ ուրիշ անհրաժեշտ պէտքեր հոգալով, ինչպէս՝ ձի, կով, ոչխար, ցորեն, գարի, զեմքեր և այլն: Արամ այս Հայ ցեղերը զինեց դրացի ազգերու պէս պարսափարով, զեղարդով, նիզակով, աղեղով, սեգով, զանոնք Ռազմագիտութեան վարժեցուց և զուճեցուց բաժնեց:

ԱՐԱՄ ԻՇԽԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

Արամ միաբանած նահապետներէն Արամի 50,000ի չափ զօրք կը ժողվէ ու կը Ս. յարգանակը յարձակի Հայաստանի արեւելեան կողմերն ասպատակող Մարաստանի Նիւբար Մադես իշխանին վրայ: Կը խորտակէ անոր բանակը, կը տիրէ անոր երկրին և զայն գերի կը բռնէ: Արամ Նիւբարը կը բերէ Արմաւիր և կը պատժէ զայն՝ ճակատէն աշտարակէն կախելով:

Ասկէ ետք Արամ կ'արշաւէ Հարաւային Հայաստան դէպ ի հարաւ՝ Ասորոց Բարշալ իշխանի վրայ, կը ցրուէ անոր զօրքը, զայն կը փախցնէ Կորդուաց լեռներէն անդին և կը տիրէ անոր երկիրներուն՝ Հարաւային Հայաստանի:

Երբ Արամ իր երկրին արեւելեան ու Փոքր Հայք հարաւային սահմանները կը խաղաղեցնէ, կը յարձակի Կապադովկիոյ Պայապիս իշխանին վրայ որ այդ կողմերն ա՛ն ու սարսափ սիռած էր: Արամ Պայապիսը կը փախցնէ մինչև Միջերկրական ծովու ափերը:

Արամ Պայապիսի երկիրները կը կցէ իր երկրին Փոքր Հայք անուանով և անոնց վրայ կըստակալ կը կարգէ իր ազգական Մշակը:

Արամ իր տիրած երկիրներու ժողովրդէն առհասարակ կը պահանջէր որ Հայերէն խօսին: Կը հրամայէ որ նոյնն ընեն Կապադովկիացիները:

**Հայաստանի
բարգաւանումը**

Արամ իր իշխանութեան մայրաքաղաքը կ'ընէ Արմաւիր ու զայն բարձր աշտարակաւոր պարիսպներով կը պատէ :

Արամի մղած պատերազմներու հետեւանքով Հայերը կը հաղորդակցին զանազան ժողովուրդներու հետ և անոնցմէ շատ նոր բաներ կը սորվին : Ասոնք կը ծանօթանան Մարասանցիներուն, Ասորեսանցիներուն, Բաբելոնացիներուն ու արեւմտեան կողմը Փոքր Ասիայի բազմաթիւ ժողովուրդներու հետ : Այս յարաբերութեանց շնորհիւ Հայաստանի մէջ կը դարձանան մէկ կողմէ իշխանարածութիւնն ու Հողագործութիւնը, միւս կողմէ՝ Արհեստներն ու Առեւտուրը :

Արամին անունով է որ օտարները Հայերն անուանեցին Արմէն, իսկ Հայաստանը՝ Արմենիա :

Արամի այս յաղթութիւններէն չափազանց կը նախանձի Ասորեստանի ու Բաբելոնի թագաւորը՝ Նինոս որ Բէլի թոռներէն կը համարուէր : Նինոս կ'ուզէ Արամէն լուծել Բէլի վրէժը, սակայն Արամը քաջութենէն ահաբեկած՝ կը նախընտրէ բարեկամանալ անոր հետ : Ուստի իշխանական մարզարտէ վարսակալ մը ընծայ կը զրկէ անոր :

Գ Ա Ս

Թեալորութեամբ

Հայկի յաջորդները դեպի ո՞ւր ցրուեցան . — Հայերն ինչպէ՞ս կը խտանան Երասխի հովիտը . — Ո՞րն էր Երասխի հովտին ամենէն հին բաղաւթը . — Հայ ցեղերն իրենց համար ինչե՞ր շինած էին . — Ասոնցմէ իւրա-

բանչիւրն ի՞նչպէս կ'ապրէր . — Ասոր հետեւանքն ի՞նչ եղաւ . — Հայոց հետ միեւնոյն ասեմ որո՞նք կազմուեցան . — Ասոնք ինչե՞ր կ'ընէին . — Որո՞նք էին Հայոց նախկին դրացիները . — Հայերն ինչո՞ւ շատ կը նեղուէին . — Ի՞նչ ստիպուած էին ընել . — Մեծ ու փոքր ցեղապետներն ի՞նչ բանի պէտք կ'զգան . — Հետեւանքն ի՞նչ կ'ըլլայ . — Ո՞վ էր Միութեան կապը . — Արամ ի՞նչ ըրաւ . — Բոլոր ցեղապետներն Արամի ինչե՞ր պարտաւոր էին . — Արամ Հայերն ինչպէ՞ս զինեց ու զանոնք ի՞նչի վարժեցուց . — Ո՞րն է Արամի Ա. յաղթութիւնը . — Արամ ինչպէ՞ս կը սիրէ Հաւաւային Հայաստանի . — Արամ արեւմտեան կողմն որո՞ւն վրայ կը յարձակի . — Ո՞ր երկիրները Փոքր Հայք կը կոչուին . — Ո՞վ կը նախանձէր Արամէն . — Նինոս ինչո՞ւ եւ ի՞նչ նախանձար համարեց . — Արամ Արմաւիրն ինչպէ՞ս կը զարդարէ . — Արամի մղած պատերազմներուն հետեւանքն ինչե՞ր կ'ըլլան . — Հայերն որո՞նք հետ յարաբերութիւն կը մտակեն . — Ասոր շնորհիւ Հայոց մեջ ինչե՞ր կը զարգանան . — Որո՞ւ անունով Հայերն Արմէն ու իրենց երկիրն Արմենիա կը կոչուին :

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Հ Ա Մ Ա Ն Ե Մ Բ Ո Ւ Մ Ե Ն Բ Ո Ւ Պ Ե Տ Բ Ը .

Մ Ա Յ Բ Ա Վ Ա Ն Յ Ե Ղ , Հ Ա Յ Բ Ա Վ Ա Ն Յ Ե Ղ , Կ Ա Մ Ը Ն Ա Չ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Նախնական մտորելի գաղափարներու նման ստիպուած էին շարունակ տեղէ տեղ թափառել, որպէս զի իրենց համար ուտելիք գտնեն ու իրենց ապրուստը հայթայթեն : Ասոր համար է որ անոնք ո՛չ հայրենիք, ո՛չ կազմակերպուած իշխանութիւն և ո՛չ ալ կառավարութիւն ունէին : Ատկէ զատ անոնք դեռ ընտանիք ալ չունէին այնպէս, ինչպէս որ մենք ունինք հիմայ :

Այդ ատեն ամէն մարդ կ'ապրէր միայն իրեն համար : Այդպէս

պետի շարունակէին ապրիլ, եթէ պիտի ու կեանքի պայմանները չստիպէին զիրենք հետզհետէ համախառնելու, Բնասնիք, Հասարակութիւն ու Պետութիւն կազմելու:

Նստնական մարդը յաճախ կը տեսնէր որ իր ապրուստը հոյթ թայթելու և իր գոյութիւնը պահպանելու համար՝ կան այնպիսի գործեր զոր ինք միևնաչ կը կրնար ընել, այլ անհրաժեշտ է որ քանի մը մարդիկ միասնաբար խմբով գործեն: Օրինակ. անոնք կը միանային կը համախմբէին մեծ որս մը սպաննելու, ջրի մէջէն ձկներով լեցուն կողովը դուրս քաշելու, դժուար գործիք մը շինելու, շէնք կառուցանելու, թշնամիներէն պաշտպանուելու և այլն:

Այսպէս համախմբուելու և միասին աշխատելու պէտքը շատ անգամ կրկնուելով՝ մարդիկ կ'ստիպուին մշտնջենապէս ապրիլ խմբովին և տեղէ տեղ շարել: Այդ աշխատանքի խումբերն այնուհետեւ մէյ մէկ մեծ կամ փոքր Բնասնիք կը կազմեն որոնց անդամներն էին հեռուոր կամ մտակ աղագականները: Մենք հիմա սովորաբար «ընտանիք» կ'անուանենք ամուսինը, կիներն ու տղանց զաւակները:

Հին ատենները զաւակները միայն մայրերնին կը ճանչնային ու մայրերն ալ՝ իրենց զաւակները, որովհետեւ կիները կը պահէին, կը մեծցնէին իրենց զաւակները: Արուներն ալ իրենց ապրուստը հոգալու համար շարունակ թափառական կեանք վարելով՝ չէին ապրեր իրենց զաւակներուն հետ: Ուստի մարդկային ցեղը կամ Ազգանունը հիմակուան պէս էրիկամորդու անունով չէր մեշուեր, այլ միմիայն մօտ անունով: Օրինակ. փոխանակ Բագրատունիի, Արշակունիի, Սմբատունիի, Յովհաննէսեանի՝ կ'ըսէին Մանուշակի զաւակները, Հոյիփսիսի մեծի ցեղը, Շուրանենց աղջիկները:

Ժամանակի ընթացքին մէջ, երբ կեանքի պայմանները հեռուցեալ կը բազմանան, արական ցեղն իբրև շատ դժուար աշխատութեան տակացող՝ աւելի մեծ իրաւունք կը վայելէ: Այդ պայմաններուն մէջ մայրական անունը հետզհետէ երկրորդական տեղ կը զբաւէ ու ամբողջ ցեղ մը արական անունով կ'սփսի կոչուի: Ալ չէին ըսեր Հախիփի մեծի ցեղը կամ Շուրանենց աղջիկները, այլ կ'ըսէին Հայկի որդիները՝ Հայկազունի, Արամի ցեղը կամ Արամեան:

Յեղն երիտասարդներու անունով չէր կոչուեր: Այն մարդն որուն անունով կը կոչուէր այն կամ այն ցեղը՝ կը համարուէր Յեղին Նահապետը, այսինքն՝ ցեղին գլխաւորը, անոր պապը, ինչպէս՝ Հայկ Արամ, և այլն:

Յեղին բոլոր անդամները կը հնազանդէին Նահապետին, անոր առաջնորդութեամբ կռիւներն ու պատերազմներ կը մղէին իրենց հա-

կառակորդ ու թշնամի ցեղերու հետ: Ամէն դարձ անոր հրամանաւոր կարգադրութեամբ կը կատարուէր:

Ի սկզբան ցեղերն իրենց Նահապետներու առաջնորդութեամբ կը շարունակէին թափառական կեանք վարել և միշտ տեղէ տեղ շարել: Յետոյ երբ մարդիկ կ'սկսին մանաւանդ Հողագործութեան պարտաւր Որսորդութենէ ու Խաշնարածութենէ աւելի, և երբ անոնք կը սորվին տուն, բնակարան շինել, ցեղերը հետզհետէ կը թողուն իրենց թափառական կեանքն և իւրաքանչիւրը հաստատուն բնակարան կ'ուենեայ՝ և է երկրի մէջ: Ահա՛ այսպէս այդ երկրները Հայրենիք կը դառնան այդ ցեղերուն:

4. ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿ ՈՒ ՇԱՄԻՐԱՄ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Փողովդին անախիճութեան համար աս բան գործեցէք, պէտքիս համար՝ բաւական, հանցիկիս համար՝ քիչ:»

Ասորեստանի գահը կը բարձրանայ

Հայոց բարոյա- Նինոսի կին՝ հռչակաւոր Շամիրամը: կան կեանքը Ասիկայ հետզհետէ տէր դառնալով Մարասանի ու Պարսկասանի՝ աչք կը

տնկէ նաև Հայոց աշխարհին:

Այդ միջոցին Հայաստանի վրայ կ'իշխէր Արամի որդին՝ Արայ Գեղեցիկ: Շամիրամ կ'ուզէր Արայ Գեղեցիկի հետ ամուսնանալ՝ իր մտադրութիւնն իրականացնելու համար: Ուստի թանկագին զարդերով ու ընծայներով հրաւիրակ կը զրկէ Արայի իր փափաքն ու կամքը կատարելու: Շամիրամ մեծ յոյս ունէր թէ Արայ Գեղեցիկ չէր մերժեր իր առաջարկը, բայց չարաչար սխալեցաւ: Արայ Գեղեցիկ ի դերև կը հանէ Շամիրամի դիմումն ու յոյսը, որովհետև չուզէր դաւաճանել իր Նուարդ կիներ:

**Շամիրամի
խնկեութիւնը**

Ասորեստանի գուռը թագուհին
 չկրնալով հանդուրժել այդ անարգան-
 քին՝ կ'որոշէ ուղղակի զէնքի ուժով
 իր կամքը յարգել տալ։ Ուստի՝ Ասո-
 րեստանէն, Մարաստանէն, Բաբելոնէն ու Միջագետքէն
 բազմաթիւ զօրք կը ժողվէ և կ'արշաւէ Հայաստանի վրայ։
 Երկար ու տաժանելի ճամբորդութենէ ետք Շամի-
 րամի անեղ բանակը վերջապէս կը հասնի դաշտ մը։ Հոս



ԱՐԱՑ ԳԵՂԵՑԻԿ

կը հասնի Արայ Գեղեցիկ սահաւաթիւ զօրքերով՝ իր
 պատիւն ու երկիրը պաշտպանելու համար։

Պատերազմի սկիզբը Շամիրամ խստիւ կը պատուիրէ
 չսպաննել Արայ Գեղեցիկը, այլ աշխատիլ ողջ բռնել զայն։

Կռիւր կ'սկսի, երկու կողմն ալ
 Հայոց մէկ գեղե- քաջարար կը պատերազմին, հակա-
 ցիկ հաւասօր ուսկ Շամիրամի բուռն ցանկութեան՝
 Արայ Գեղեցիկ կուռի տաք միջոցին
 չճանչցուելով՝ կ'սպաննուի Շամիրամի զօրքերէն։ Դաշտն
 Արայի անունով կը կոչուի Արարւսեան։

Հայերը տեսնելով իրենց սիրելի իշխանին մահը,
 սաստիկ գրգռուած՝ կ'ուզեն շարունակել պատերազմը։
 Շամիրամ ալ Հայերը հանդարտեցնելու համար՝ Արայի



ԱՐԱՑ ԳԵՂԵՑԻԿԻ ԳԻՍՎԵՆ ՈՒ ՇԱՄԻՐԱՄ

դիակը բարձր տեղ մը կը դնէ, որպէս զի աստուածները
 լիզեն ու կենդանացնեն։ Սահայն երբ դիակը նիխիլ
 սկսաւ, կը հրամայէ Հայոցմէ գազանի թաղել և կը յայ-
 տարարէ թէ աստուածներն ողջնցուցած են Արայ Գեղե-
 ցիկը։ Հին Հայերը հաւատացին Շամիրամի յայտարարու-
 թեան, որովհետեւ քաջագործութեան մեծ նշանակութիւն

կ'ընծայէին և կը կարծէին թէ ա՛յդպիսի մարդիկ կրնան
յարութիւն առնել, մանաւանդ որ պատերազմի դաշար
մեռնողներն անմահ կը մնային :

Դ Ա Ս

Թելադուքեամբ

Ո՞վ եր Շամիրամ. — Որո՞ւ աչք կը սնկէ. — Այդ մի-
ջոցին ո՞վ կը սիրէ Հայասանի. — Արայ Գեղեցիկ որո՞ւ
որդին եր. — Շամիրամ որո՞ւ հետ ուզեց ամուսնանալ.
— Ինչո՞ւ. — Շամիրամ ինչո՞ւ բանկազին բնծայներ կը
դրկէ Արայի. — Արայ Գեղեցիկ ինչո՞ւ մերժեց Շամի-
րամի առաջարկը. — Հայերն ի՞նչպիսի բարոյական ու-
նեին. — Օտարներէն ի՞նչպիսի բարոյականով կը սար-
բերէին. — Շամիրամ ինչո՞ւ կը դիմէ զեմքի. — Շամի-
րամ ուրկե՞ զօրք կը ժողվէ. — Շամիրամ ո՞ւր կը հասնի.
— Արայ ինչո՞ւ կը դիմէ զեմքի. — Շամիրամ ի՞նչ պատ-
ուիրած եր պատերազմէն առաջ. — Արայ ի՞նչ կ'ըլլայ
պատերազմին մէջ. — Դաճն ինչո՞ւ Արարեսեան կը
կոչուի. — Շամիրամ Հայերը հանդարտեցնելու համար
ի՞նչ միջոցի կը դիմէ. — Յաջողեցա՞ւ. — Ուրեմն Հայերն
ինչո՞ւ հաւատացին թէ Արայ ողջնցած է. — Հայոց հա-
ւատով որո՞նք անմահ կը մնային :

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ջ Ա Ր Դ Ե Ր

Նախնական մարդոց մէջ զարդարուելու պէտքը հաղնելու պատ-
հանքէն շատ առաջ սկսած է: Մարդ այն ատեն սկսած է հագուել,
երբ տաք երկիրներէ ցուրտ երկիրներ փոխադրուած է: Իսկ զարդար-
ուելու, արհեստական միջոցներով զեղեցկանալու և ուրիշներուն

հաճելի ըլլալու զգացումը բնածին է ո՛չ միայն մարդոց, այլ և զրեթէ
բոլոր թռչուններու և կենդանիներու մէջ:

Տարուան որոշ ժամանակներ զազաններն ու թռչունները, նոյն
խիկ մեր բակերուն հաւերն իրենց մազերն ու փետուրները կը փոխեն
ու կը զեղեցկանան, կը զարդարուին անով, ինչ որ Բնութիւնը
առած է իրենց:

Մարդ Բանականութեան ու Ստեղծագործելու ձիրքով օժտուած
է: Բնութեան ծոցէն կ'առնէ ինչ որ պէտք կը համարի զարդարուելու
համար և կը պճնուի իր յարմար դատած եղանակով:

Նախնական մարդը, ինչպէս որ իր առաջին գործիքներն ու զէն-
քերն առած է Բնութենէն, այնպէս ալ անկէ առած է իր զարդա-
րանքը: Զարդարուած է ա՛յն կենդանիներու մորթով և թռչուններու
փետուրներով զորոնք ինք համարած է ամէնէն գեղեցիկը, մանա-
ւանդ որ աշխատած է անոնց նմանիլ:

Հիմա՞յ ալ կան Այրեցեալ Գօռույ մէջ ա՛յնպիսի ցեղեր որոնք
իրենց գէմքն ու մարմինը կը ներկեն զանազան գոյներով, և մազեր-
նին կը սանտրեն ա՛յնպիսի ձեւով որ այր կամ այն թռչունին նմանին:
Այդ թռչուններու փետուրներով ալ կը զարդարեն իրենց գլուխը,
կուրծքն ու մարմնոյն ուրիշ մասերը:

Ինչպէս որ մարդ հետզհետէ կատարելագործած է իր գործիք-
ներն ու գործածած միւս առարկայները, այնպէս ալ հետզհետէ կա-
տարելագործած է իր զարդերը:

Մարդիկ իւրեւ զարդ կամ զարդարուելու առարկայներ գոր-
ծածած են փետուրներ, մորթեր, գունաւոր խեցիկներ, ոսկորի փոփոխիկ
կտորներ, կանաչ միւշուկ, սերուցան, ծաղիկներ և այլն: Իսկ երբ մար-
դիկ կը ծանօթանան մետաղներու, ապակիին եւ քանկազին ֆաբրու,
կ'սկսին այդ նիւթերէն պատրաստել իրենց զարդարանքի զանազան
առարկայները:

Հ Ա Գ Ո Ւ Ս Ս Ո Ւ Ո Տ Ա Յ Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ն Ս

Մարդիկ ի սկզբան զուրկ էին նաև հագուստներէ. որովհետև
կ'ապրէին այնպիսի տաք երկիրներու մէջ ուր հագուստի պէտք չէին
զգար: Յարդ Այրեցեալ Գօռույ մէջ կան ցեղեր որ բոլորովին մերկ են:

Մարդ կրակը հնարելով՝ հետզհետէ չուեց աւելի ցուրտ տեղեր
և կըցաւ հոն ապրել: Այդ տեղերու մէջ դիտեց որ զազաններն ու
կենդանիները ցրտէն չէին վախնար, որովհետև պատասպարուած էին
տաք մորթով կամ մուշտակով: Մարդ սկսաւ նմանիլ կենդանիներ-

բու. իր սպաննած գաղաններու մերթով իր մերկութիւնը ծածկեց, Բայց այդպիսի հաղուստ մարդը չգոհացուց. չխաղախորդած մերթը թէ՛ կոշտ էր և թէ՛ մարմինը լաւ մը չէր դրկերս Աւտոի մարդիկ հետզհետէ կը սորվին խաղախորդել մերթը. անոնք կը քերեն մերթին տակը, կը թըջեն, ձեռքի մէջ կը ճմուռն և վերջն ալ երբ ծանօթացան զանազան բոյսերու հետ, անոնց միջոցաւ լաւ մը խաղախորդեցին ու փափկացուցին իրենց նորագիւտ հաղուստը:

Մարդ նմանապէս ծանօթացաւ այնպիսի բոյսերու հետ որոնց կեղեւներէն կարելի էր հաստ ու բարակ թելեր պատրաստել: Ար նախնական փայտէ ու քարէ գործելնեհն ու զէնքերը պատրաստելու համար՝ պէտք ունէր զանազան հաստութեամբ թելերու: Այդ թելերը կը պատրաստէին թելանման խտտերէ ու բոյսերու կեղեւներէ:

Եւ երբ մարդիկ զգեստեղէնի պէտքը զգացին, սկսան այդ բոյսերէն շատ աւելի բարակ թելեր մանել և անոնցմէ անոնցմէ կտորներ գործել: Ինչպէս հիմուկուան փախարք, որոնցմէ հնար ըլլաւ հաղուստ կարելու: Մեր գործածած պողպատէ ասեղները չունէին, իբրև ասեղ կը գործածէին ծառերու փուշեր և կենդանիներու, մանաւանդ ձկներու բարակ սկորներ:

Մարդիկ շատ ետքն է որ սորվեցան բրդեղէն մանուածքներ գործել: Ի սկզբան երբ անոնք ընտանեցուցին ոչխարն ու այծը, անոնց բուրդէն ու կաշիէն չէին օգտուեր, այլ զանոնք կը պահէին միմիայն՝ միտն ու կալմն ուտելու համար: Նախ մինի վարժուեցան, յետոյ կալմնն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅԵՍՏՆԵՐ

Հայ ժողովուրդը կը հագնէր շապիկ, վարտիկ ու պարեգոս: Ետ պիկի վրայէն կը հագնէին կարճ պարեգօտ մը զոր կը հանդրեծէին լայն վարտիկին մէջ: Վարտիկը կը կապէին խոնջանով որ միանգամայն իբրև գօտի կը ծառայէր:

Ազնուականները պարեգօտի վրայէն կը կրէին կարճ թիկնոց, խոնջանէն ալ կը կախէին դաշայն մը: Իբրև զարդարանք անոնք ականջներէն կը կախէն սոկիէ կամ արծաթէ օղեր, թեւերուն ալ կ'անցնէին ապարակնակներ: Ազնուականներն իրենց ձիերն ալ շատ շքեղ կը զարդարէին:


Ժողովուրդը զուրկ էր ազնուականներու վայելած բոլոր պերճանքներէն: Անոնք կ'ապրէին գետնափոր տաններու մէջ անասուններու և հաւերու հետ:

5. ՇԱՄԻՐԱՄԻ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄՈՒԱԾ՞

Պատերազմէն ետք Շամիրամ Հա-
Շամիրամակեռս յաստանի զեղեցիկ օդին ու դիրքին
վրայ զմայլած՝ քիչ մը ատեն կը
մնայ Արարատեան դաշտը. յետոյ կ'երթայ Բզնունեաց
ձովու եզերքը: Ատոր մէկ կողմը կը բարձրանայ քարա-
ժայռ մը:

Վանայ ձովէն դէպի հիւսիս ու դէպի արեւելք
մինչև Ուրմիոյ ձովը հին ատենները կը բնակէին զա-
նազան ցեղեր:



ՎԱՆԱՅ ԳԱՐԱԺԱՅՈՒՆ

Աւանդութիւնը կ'ըսէ թէ Շամիրամ Վանայ ձովուն
եզերքը, հովտի մը մէջ շինած է այն հուշակաւոր ամա-
րանոցն որ իր անունով կոչուած է Շամիրամակեռս
(հիմայ Վան):

Շամիրամ իր ամարա-

Ասորեսացի արհեսաւորներ
Հայասանի մէջ

նոցը գեղեցկապէս զար-
դարել կուտայ Ասորես-
տանի ճաշակով : Զանոնք

չինելու համար Հայաստանի մէջ վարպետներ չգտնելով
Ասորեստանէն բերել կուտայ բազմաթիւ վարպետներ ու
գործաւորներ : Ասոնք ծանօթ էին այն ատենուան քարի
փայտի, պղնձի ու երկաթի արհեստներուն : Քաղքի
չինութեան կը յատկացնէ նաև տեղացիները : =

Ամէնէն առաջ հոգ կը

Հայասանի ամէնէն հին
գեղեցիկ բաղաբը

տանի քաղքին ջուր մատա-
կարարելուն . ուստի՞ մօտակա-
գետակի ջուրը բերել կուտայ

քաղքին զանազան մասերը, որպէս զի առատօրէն ուսող-
ունին քաղքին ծաղկանոցները, բուրաստանները, այգի-
ներն ու պարտէզները : Քաղքին ընդարձակ փողոցներու
երկու կողմերը, նաև չըջակայները տնկել կուտայ
պաղատու ու անպտուղ ծառեր : Ատկէ զատ քաղաքը
կը զարդարէ բարձր, երկու երեք յարկ տուններով, շքեղ
պալատներով, նաև գեղեցիկ բաղնիքներով . բոլորն ալ
չինուած էին գոյնզգոյն, տեսակ տեսակ, ընտիր քարերով :

Շամիրամի շինել տուածներուն մէջ հոյակապ ու
չքեղ էին մանաւանդ այն այլ և այլ մեծութեամբ սեն-
եակներն ու սրահները, զանձատուններն ու խոր անցքերը,
գործնք պարսպապատ ժայռի գաղաթը, ապառաժները
մէջ փորել տուած էր :

Հայասանի հին
արձանագրութիւնները

Շամիրամ նոյն այդ ժայռի
արեւելիան երեսն որ շատ կարծ-
է՞ զարմանալի նրբութեամբ բն-
ւեռագրով արձանագրել կուտայ

իր կենսագրութիւնը : Գիտնականները վերջերս միայն
սկսան կարդալ այդ բեւեռագիր արձանագրութիւնները

6. ՀԱՅԱՍՏԱՆ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՏՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆԿԱԽ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ծ Ք

«ճարտարագոյնը միտ կը յարէ
գորագուինն :»

Արայի մահէն ետք Շամիրամ Հայաստանի
Կարգոս իշխանութիւնը կը յանձնէ Արայի որդի Կար-
դոսի : Ասիկայ Շամիրամի հետ կը միանայ
Նինուասի դէմ կուռելու ատեն : Նինուաս Շամիրամի
որդին էր և հօր իշխանութիւնը կը պահանջէր :

Կարդոս ունէր հանճարեղ ու
Սօսեաց անհառը խոհեմ որդի մը՝ Անուշաւան անունով :
Ասիկայ նուիրուած ըլլալով Արմաւիրի
մօտ գտնուած Սօսեաց անհառիկ՝ կը կոչուէր Սօս կամ
Սօսանուէր : Հին Հայերն այս անտառի սօսափունէն գու-
շակութիւններ կ'ընէին :

Հօրը մահէն ետք Անուշա-
Սսորեսաց կը նուանէ
Հայասանը

լան գերի կ'իյնայ Ասորեստանց-
ւոց ձեռքը, և սակայն Նին-
ուասի հաճակրանքը գրաւելով՝
նախ Հայաստանի մէկ մասը, յետոյ ամբողջ Հայաստանը
կառավարելու հրաման կ'ստանայ :

Անուշաւանի կը յաջորդեն բազմաթիւ Հայ իշխաններ :
Ասոնք Ասորեստանի գերիշխանութեան տակ ըլլալով՝
չկրցան անուանի գործեր կատարել, մինչև որ է. զարու-
սկիւղքը Պարոյր Հայկազն իշխանութեան գլուխ անցաւ :

Ատորեստան հեազհեաէ քայքայ-
 Հայերը՝ բազա- ուած ու ակարացած էր: Մեր Պարոյր
 տուրքին Հայկազն իշխանն ու Մարաց կիսասար
 Ա. միանալով Բաքերացոց նաքուպա-
 շասար թագաւորին հետ՝ կը յարձակին Նինուէի վրայ և
 և քաղաքը կը կործանեն: Իսկ Ատորեստանի վերջին




ԿԱՐԳՈՍ ՈՒ ԶԱՄԻՐԱՍ

Թագաւորն ալ՝ Սարղանաբաղ թշնամուոյն ձեռքը չիյնա-
 լու համար՝ պալատին մէջ ինք զինք այրեց իր կինե-
 րուն հետ:

Այս պատերազմէն ետք Պարոյր կ'ստանայ Թագ և

Կ'ըլլայ Հայոց առաջին պսակակիր թագաւորը (620 Ն. Ք.):
 Անկէ առաջ եղածները նախ ևս հայկէս էին մինչև Արամ,
 յետոյ եղան իշխան Արամէն մինչև Պարոյր:

Պարոյրի յաջորդ Հրաչեայ կ'օգնէ
 Բագրատունեաց . Բաքերացոց նաքուգործնուոր թա-
 ճագոււմը գաւորին Հրէաստան պատերազմ եր-
 թալու ատեն: Պարոյր դարձին հետը
 կը բերէ Հրեայ գերիներ: Ասոնց մէջ նշանաւոր էր Շաւ-
 րաս ուրկէ սերեցաւ Բագրատունի նախարարական ցեղը:



ՊԱՐՈՅՐ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ

Հրաչեայէն մինչև Տիգրան Ա. յաջորդեցին ութ
 թագաւորներ:

Դ Ա Ս

Թելադրութեամբ

Պատերազմեն ետ Ծամիրամ ի՞նչ ըրաւ. — Ո՛ր կը հասնի. — Վանայ ծովուն կողմերն որո՞նք կը բնակէին. — Ո՞վ շինած է Ծամիրամակետ. — Ծամիրամ իր քաղաքն որո՞նք նախապեսուրբեամբ շինեց. — Ասորեսանէն զորո՞նք բերել կուսայ. — Ո՞րն է Հայաստանի ամենէն հին, գեղեցիկ քաղաքը. — Ծամիրամ քաղաքն ինչո՞ւ շուր բերել կուսայ. — Քաղաքին փողոցներու երկու կողմերն ինչո՞ր սնկել կուսայ. — Ի՞նչպէս կը զարդարէ քաղաքը. — Որո՞նք են Ծամիրամի շէնք շէնքերը. — Որո՞նք են Հայաստանի հին արձանագրութիւնները. — Ի՞նչպիսի գրով գրուած են. — Ե՞րբ եւ որո՞նք կարդացին այս արձանագրութիւնները. — Ո՞վ կը յաջորդէ Արայի. — Կարդոս ի՞նչպէս մեռաւ. — Ո՞վ էր Անուշաւան. — Ինչո՞ւ կը կոչուէր Սոս. — Հայերն Արմաւիրի Սոսեաց անճառին մէջ ի՞նչ կ'ընէին. — Անուշաւան որո՞նք ձեռքը գերի կ'իյնայ. — Ի՞նչպէս կ'ազատի. — Որո՞նք յաջորդեցին Անուշաւանի. — Ասորեսան ի՞նչ եղած էր. — Որո՞նք միացան Հայոց Պարոյր իսխանին հետ. — Ո՞վ էր Ասորեսանի վերջին քագաւորը. — Ի՞նչ եղաւ. — Ո՞վ էր ինչպէս եղաւ Հայոց առաջին քագաւոր. — Ո՞վ էր Պարոյրի յաջորդը. — Որո՞նք օգնեց. — Ո՞վ էր Ծամբաս. — Բագրատունիք ո՞ւրիկ սերեցան:

Ը Ն Յ Ե Ր Յ Ո Ւ Մ

ԳՐԱԿԻ ԳՐԻՑԸ ՈՒ ԵՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ. ՄԱՐԴՈՅ ԱՌԱՋԻՆ ՏՈՒՆԸ

Մեր նախածնողքին հնարած գիւտերուն մէջ ամէնէն նշանաւորն է կրակ վառելու գիւտը:

Անշուշտ մարդիկ այն ինչ աշխարհ եկած էին, տեսեր էին կրակը Անոնք գիտած էին թէ ի՞նչպէս երկնքի մէջ որսաման ասեն կը փայ-

լատակէ, թէ այդ փայլակն երբ ծառերու վրայ կ'իյնայ, կը վառէ և մինչև իսկ հրդեհներ կը պատճառէ: Սակայն այնպէս այդ կրակը մարդոց երկիւղ ու սարսափ կ'ազդէր միայն Անոնք կը փափաքէին ունենալ այնպիսի կրակ մը որ պէտք եղած ասեն կարելի ըլլար թէ՛ վառել, պահել և թէ՛ մարել:

Այդպիսի կրակ մը ստանալու միջոցն ալ գտան վերջապէս: Մինչ փայտէ, քարէ և սևիորէ գործիքներ կը շինէին մարդիկ, նկատեցին որ երբ քարը, սևիորը կամ փայտն ամուր ու արագօրէն չոր փայտի կտորին կը շփէին, չոր փայտը նախ շատ կը տաքնար, յետոյ կը վառէր, կրակ կը դառնար:

Երբ անգամ մը այսպէս դիպուածով կրակն ստացան, բնական է որ աշխատէին հնարել նաև այնպիսի գործիքներ որոնցմով կարելի ըլլար համեմատաբար աւելի արագ կրակ արտադրել: Յարգ վայրենի ցեղերէ ոմանց գործածած կրակահան գործիքներէ կարելի է գաղափար կազմել թէ մեր նախնիք ի՞նչ միջոցներով կրակը կը հայթայթէին: Այդ կրակահան գործիքը ստիպակ ու չոր փայտի կտոր մըն է որուն վրայ ծակեր բացուած են, այդ ծակերէն իւրաքանչիւրին մէջ փայտէ ցողիկ կը մտնեն ու արագօրէն ձեռքի մէջ կը դարձնեն: Յոշիկն ս'ըջափ արագ դառնայ, կրակն այնչափ շուտ կ'արտադրուի:

Մարդիկ հետզհետէ բարձունքով կրակին ծայր սատիճան օգտակարութիւնը գայն նկատեցին աստուածի մը պարգև և մինչև իսկ զայն պաշտեցին իբրև աստուած:

Մարդիկ ինչպէս իբրև աստուած չպաշտէին կրակը, երբ անիկա անթիւ ու անհամար օգուտ ու բարեք կը շնորհէր իրենց: Յուրաին անոնք կը ստաքնային կրակէն, գիշերները կրակի լոյսի քով պառկելով՝ բարբոսներն ապահով կը մտային գաղաններու յարձակումներէն: Կրակի շնորհիւ կրնային երթ եւեկել ցուրտ երկիրներ: Ատոնցմէ զատ կրակով կարելի էր միս, պտուղ, հատիկներ խորովել որ անշուշտ աւելի համեղ ու օգտակար է քան հում ստեղծելը:

Կրակի դերն ու նշանակութիւնը հասկնալէն ետք մարդիկ կը մտածեն գտնել այնպիսի միջոց մը որ կարենան կրակն անշէջ պահել երկար ատեն, որովհետև բացօդեայ ապրելուն համար հոյն ու անձրեւը յաճախ կը մարէին կրակը: Վերջապէս փայտէ ու քարէ պատուարներ շինեցին հովին փչած կազմերը. կրակն ալ անձրեւէ զերծ պահելու համար այդ պատուարներուն վրան ալ ծածկեցին:

Ահա այդպէս մարդ առաջին անգամ կը սորվի տուն շինել՝ նախ կրակ-աստուածն անշէջ պահելու, վերջն ալ անոր մէջ ապրելու և ջրակէ պատապարուելու համար:



Բ. ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԲՆԻԿՆԵՐԸ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Քրիստոսէ գրեթէ 2000 տարի առաջ Ուրարդուցիք Ուրարդուի=Արարատի մէջ կը բնակէր քաջ պատերազմասէր ու քաղաքակրթութեան ընդունակ ազգութիւն մը՝ Ուրարդուցիներ=Խալդեանք։ Խալդեանք զարերով կը պատերազմէին Ասորեստանի հետ։ Ունէին մեծ ու պարսպապատ քաղաքներ, բացած էին մեծ, գեղեցիկ ջրանցքներ։ Վարժ էին թելեռազիք գործածելու և Գրականութեան մէջ։ Այդպիսի բեւեռագիր արձանագրութիւններէ գրեթէ 100 կտոր կը գտնուին Կեդրոնական Հայաստանի մէջ՝ Սեւանայ լիճէն մինչև Վան։ Անոնց գլխաւոր քաղաքներէն մէկն էր Վան։ Այսօր կարգացուած են այդ արձանագրութիւններն ու Խալդեանք կը պատմեն իրենց արչաւանքները, պատերազմներն ու քաջութիւններն Ասորեստանի և ուրիշ գրացի ազգերու վրայ։

Կապադովկիա էր Քեսացուց=Քեսացիք=Հասեանք Հասեանց հայրենիքը։ Քեսացիք մուտք՝ Փոքր Ասիա, մինչև Էդեսան ծով և դէպ ի հարա՝ Ասորիք, նոյն իսկ միջոց մը կը տիրեն Եգիպտոսի ալ։ Եգիպտոսի փարաւոններն երկարատե պատերազմներ կը մղեն Քեսացուց հետ Ասորիքի տիրապետութեան համար։ Եգիպտացիք վերջապէս կ'ստիպուին հաշտութիւն լանդրել (1367 Ն. Ք.)։

Այնուհետև Քեսացիք արիւնահեղ կռիւներով կ'ըզբազեցնեն Ասորեստանի վեհապետները (1110—717)։ Փոփոխակի բախտով կռիւներէ ետք Քեսացիք կ'ընկնուին և իրենց բնակավայրին մէջ կ'ամփոփուին։

Կիւմլե՛րեանց՝ յարձակումներու Քեսացիք Ուրարդու պատճառաւ Քեսացիք Կիլիկիոյ կը հաստատուին կողմէն Եփրատէն կ'անցնին, կը յարձակին Ուրարդու (640 Ն. Ք.) և հետզհետէ հոն կը հաստատուին։

Հայկի, Արամի, Արայի և այլն Հայոց ծագումը պատմութիւնը—Դիւցազնական շրջանը կազմուած է միմիայն աւանդութիւններէ։ Տեսնենք թէ ի՞նչ է մեր բուն իրական պատմութիւնը։

Արդի գիտութիւնն ապացուցած է որ Հայերը կը պատկանէին Հնդեւրոպական=Արիական՝ ցեղին որուն նախկին բնակավայրն եղած է Կեդրոնական Ասիա։ Արիական ցեղէ հատուածներ Կեդրոնական Ասիայէն կը տարածուին դէպ ի արեւմուտք՝ Եւրոպա ու Արեւմտեան Ասիա և դէպ ի Հարաւային Ասիա՝ Հնդկաստան։

Հերոդոտոս Յոյն պատմիչը կ'աւանդէ թէ Հայերը Թրակիայէն (Էտրնէ կուսակալութիւն) ելլելով՝ կ'անցնին Փոքր Ասիա, և Է. դարուն վերջերն ալ (Ն. Ք.) կը գաղթեն, կը հաստատուին Բիւսանս=Ուրարդու=Արարատ որ յետոյ իրենց անունով կը կոչուի Հայաստան։

Ուրարդուցիները Հայոց=Թոր-Հայերն Ուրարդու գոմեակներու դէմ ալ երկարատե կռիւ կը մղեն, բայց վերջապէս կը յաղթուին։ Ոմանք գաղթական Հայոց հետ կը խառնուին։

ուրիշներ ալ դէպ ի հիւսիս կը չուեն: Այդ երկիրն իրենց անունով կոչուեցաւ Խաղճիխ*: Խաղճեաց յիշատակները կը մոռցուին Ուրարդուի մէջ և կը տիրեն Քեսականն ու Հայականը:

Հայաստանի աշխարհագրական բազմաթիւ անուններն Ուրարդուցիներէն մնացած են. ինչպէս՝ Արարատ*, Հայն-ձիք*, Վան*, Տոսպ*, Արածանի*, Արծրհունի*, Ռշտունի*, Երեւան* և այլն: Ասոնք Հայերէն չեն ու Հայերէնով չեն ստուգաբանուիր:

Հայերն ամէն ինչ իւրացուցին Բիանայի մէջ, ձուլուեցան Խաղտեաց ու Քետացոց հետ: Երջակայ Արիական իշխաններու ազդեցութեան տակ ընդունեցին Նոր քաղաքակրթութիւն մը ու հաստատեցին սեփական Հայ քաղաւորութիւն մը—Հայազունք կամ Հայկազնեանք: Այսպէս Պատմական Հայերը Խաղտեաններէ ու Հատեաններէ բազկացած խառնուրդ ցեղ մը կազմեցին:

Առաջին Հայ թաղաւորն է Երուանդեան Տիրգրան:

Գ Ա Ս

Թելադուքեամբ

Հայկազանց օրջանն ինչե՞ կազմուած է. — Հայերն ո՞ր ցեղին կը պատկանին. — Արիական ցեղին բնակավայրն ո՞ր եղած է. — Ասկէ ո՞ր սարածուեցան. — Հերոդոտոս ի՞նչ կը պատկ. — Թորգոմեան Հայերն ե՞րբ հաստատուեցան Բիանա. — Այս երկիրը յետոյ ի՞նչ կոչուեցաւ. — Ուրարդուի մէջ որո՞նք կը բնակէին եւ ե՞րբ. — Որո՞նք էին Ուրարդուցիք. — Խաղճեանք դաբերով ինչե՞ր բրին. — Խաղճեանք ինչե՞ր շինած էին. — Նախահայերն ի՞նչ բանի մէջ վարժ էին. — Ո՞րն է բեւե-

ռագիր արձանագրութեանց սահմանը. — Նախահայոց գլխաւոր քաղաքն ո՞րն էր. — Խաղճեանք բեւեռագիր արձանագրութեան մէջ ինչե՞ր պատմած են. — Ուրարդուցիք Հայոց դէմ ինչե՞ր մղեր են. — Վերջապէս ի՞նչ եղան. — Հայաստանի ո՞ր անունները Խաղճեանքէն մնացած են. — Հայերն ի՞նչ բրին Բիանայի մէջ. — Պատմական Հայերն ո՞ր ցեղերու խառնուրդ են. — Ո՞ր երկիրն է Քեսաւոց հայրենիք. — Ո՞ր կ'արժանանաւ ու կը սիրապետեն. — Քեսաւոց ցեղացեաց փարաւոններուն դէմ ինչո՞ւ կը պատերազմին. — Քեսաւոց զորո՞նք զբաղեցուցին երկար ատեն. — Քեսաւոց վերջապէս ո՞ր հաստատուեցան. — Ո՞րն է բուն Հայոց Ա. քաղաւոր:

Ը Ն Յ Ե Թ Յ Ո Ւ Ս

Ա Ռ Ա Ս Պ Ե Լ Ն Ե Բ

Հաղարատը տարիներու ընթացքին մէջ, երբ հետզհետէ կը կազմակերպուին ազդերը, իրենց տակուս, յարատե աշխատութեամբ ու խելքով, համեմատաբար աւելի ապահով վիճակ մը կ'ունենան, կ'սկսին իրենց Ազգի ու Հայրենիքի շատ հեռուօր անցեալով հետաքրքրուիլ:

Անոնց իւրաքանչիւրին մէջ հետաքրքրութիւն մը կ'արթննայ հասկնալու թէ ե՞րբ և ո՞ր տեղէն յառաջ եկած է իր ազգը, որո՞նք եղած են իրենց նախահայրերը ի սկզբան իրենց հայրերն ի՞նչ վիճակի մէջ գտնուած են:

Բոլոր ազգերու նախահայրերն ալ իրենց մասին յիշատակարան մը թողած չեն, որովհետեւ անոնք ո՛չ գիր ունէին և ոչ ալ այդպիսի բաներու վրայ կը խորհէին:

Եւ որովհետեւ ու է յիշատակարան չի կար, մէն մի ժողովուրդ իր երեսակայութեամբ կը ջանար իր նախահայրերու և իր Հայրենիքի մասին զանազան պատմութիւններ հնարել, հիւսել և սերունդէ սերունդէ րեւանացի աւանդել:

Յաճախ այս աւանդութիւնները զուրկ էին ո՛ր և է ճշմարտութեանէ: Անոնք պարզապէս վառ երեւակայութեամբ յօրինուած էին

և կամ ու է իրական դէպք երեւակայութեամբ կը գունաւորէին այն աստիճան որ չտփազանց կը հեռանար ճշմարիտ պատմութենէն:

Մարդիկ առհասարակ այնպէս կը կարծէին թէ հաղարաւոր տարի առաջ ապրող մարդիկ իրենց պէս կեանք կը վարէին:

Այս եղանակաւ յերկրուած պատմութիւնները կը կոչուէին առասպելներ: Ամէն ժողովուրդ թէ՛ իր ազգի ծագման և թէ՛ անյիշատակ ժամանակներու մասին շատ առասպելներ հիւսած է: Այս առասպելներու շարքէն են Հայկի, Արամի, Արայ Գեղեցիկի և այլ մասին պատմութիւնները զոր մեզի հաղորդած է Մովսէս Խորենացի Հայ պատմիչը՝ հաւաքելով ու կազմելով ազգային աւանդութիւններէ, երգերէ, զրոյցներէ ու առասպելներէ:

Հայկ, Արամ, Արայ, Տիգրան ու Վահագն անունով հերոսներ դիւցազներ անկասկած եղեր են: Ժողովուրդն ասոնց անունին շուրջ խոսացուցած է իր իշխաններուն, թագաւորներուն դարաւոր կրօններն Ասորեստանի հետ:

Հ Ա Յ Ա Ջ Ո Ւ Ն Ք

8. ՏԻԳՐԱՆ Ա. ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Բանուկ նամբայն՝ փոփ, անկրն
նամբայն՝ փուս»:

Արայի մահէն ետք Հայերն

Հայերն ահարկու երկար ատեն Ասորեստանցոց հարկ
իրենց դրացիներուն կատու մնացին, մինչև որ Պարսիկ

հետ միանալով՝ կրցան թօթափել

անոնց լուծն ու անկախութեան տիրանալ:

Հետզհետէ Հայաստանի սահմաններն ընդարձակուած էին ու ժողովուրդը բազմացած էր: Հայերն ազատ ու անկախ դառնալով՝ կրցան ստեղծել բաւական զօրա-

ւոր պետութիւն մը՝ դրացիներուն պատկառանք ազդելու չափ:

Եղաւ ատեն մը որ դրացի թագաւորները Հայոց թագաւորներէն կը սարսափէին:



ՏԻԳՐԱՆ Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայկազուն թագաւորներու մէջ

Զինուորական նոր ամէնէն նշանաւորն եղաւ Տիգրան կարգ ու կանոն Երուանդեան:

Մինչև Տիգրան Ա. Հայոց բանակը թէ՛ թուով քիչ և թէ՛ անկանոն ու անկարծ էր:

Բանակին զէնքն էին աղեղ, նիզակ, սեգ, գեղարդ ու պարսաֆար: Տիգրան այդ բոլորն ալ կը փոխէ:

Տիգրան հետեւակ զինւորին ու հեծելազօրքին թիւ կը շտոցնէ, բանակին մէջ կարգ ու կանոն կը մտցնէ և իւրաքանչիւր զինւոր կը զինէ տէգէն ու նիզակէն զատարով, սակրով և զինւորներուն կը հագցնէ երկաթէ շապիկ—շրահ: Եւ որպէս զի թշնամոյն նետերէն, նիզակներէն ու սուրերէն պաշտպանուիլ կարենան, զանոն կը զինէ պղնձէ վահաններով ալ:


Տիգրան այս կանոնաւոր բաշտոյց դրացիներուն նակի գլուխն անցած՝ քանի մը մտաւորութիւնը պատերազմ կը մղէ զբացի պետութիւններու դէմ ու հռչակաւոր կը հանդիսանայ: Ասոնցմէ ոմանք կը փափաքէին Տիգրանի հետ բարեկամանալ և անոր ուժերէն օգտուելով խորտակել իրենց թշնամիները: Ուրիշներ ալ կ'ըզարէին անոր յաջողութեան վրայ ու կը ջանային կործանել Հայոց թագաւորութիւնը:

ՏԻԳՐԱՆԻ ՈՒ ԱԺՏԱՀԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Երուանդեան Տիգրանի օրով Աժտահակ ու Կիւրոս Հայոց զբացի ուժեղ ու մեծ պետութիւններն էին արեւելքը՝ Մարասան ու հարաւային արեւելքը՝ Պարսկաստան: Մարաստանի թագաւորն էր նախանձոտ ու կասկածոտ ծերունի Աժտահակ, Պարսկաստանի թագաւորն ալ էր երիտասարդ ու կորիճ Աքիմենեսն՝ Կիւրոս՝ Աժտահակի թոռը:

Կիւրոս չափազանց կ'ատէր իր պապը, մինչև անգամ կը մտածէր խլել անոր թագաւորութիւնը: Ուստի՝ կը բարեկամանայ ու դաշինք կը կնքէ Տիգրանի հետ:




ՊԱՏԵՐԱԿ ՈՒ ԱԺՄԻԿՆԵՐ

Այս դաշնագրութիւնը ծանր Աժտահակի երազը կասկածներու մէջ կը ձգէ ծերունի Աժտահակը: Չափազանց մտածելէն՝ զիշեր մը դարձուրելի երազ մը կը տեսնէ: Անմիջապէս նոյն զիշերը կը հաւաքէ իր խորհրդականներն ու գիտնականները, և յուզուած՝ կը պատմէ իր երազը սապէս:

«Հայաստան կը գտնուէի: Ասոր բարձր ու ձիւնապատ լեռներէն մէկին գագաթը նստած էր գեղեցիկ կին մը ուրկէ ծնան երեք կորիճ: Առաջինն առիւծի վրայ հեծած՝ արեւմուտք թռաւ, երկրորդն ընձի վրայ նստած՝ հիւսիս սլացաւ, իսկ երրորդն անազին վիշապ մը սանձած՝ ուղղակի արշաւեց տէրութեանս վրայ: Այդ միջոցին ես ու ձեզմէ շատերը միասին պալատին տանիքին վրայ աստուածներուն զոհ կը մատուցանէինք ու խունկ կը ծխէինք: Յանկարծ վիշապի վրայ նստողը խոյացաւ

ասնիքի վրայ և կ'ուզէր աստուածները ջարդ ու փշուր ընել: Ես զայրացած՝ յարձակեցայ անոր վրայ: Կատազօրէն կռուեցանք նախ նիզակով, յետոյ սրով ու զանազան զէնքերով: Ես յաղթուեցայ ու ինկայ:

Սորհրդականներէն շատերն երազը զանազան կերպով կը մեկնեն, բայց ետքը համամիտ կը գտնուին Աժդահակի որ արդարեւ Հայոց ու Պարսից կողմէ վտանգ կը գուշակէր Մարաստանի թագաւորութեան: Աժտահակ Տիգրանի քոյրը՝ Տիգրանուհի կնութեան կը խնդրէ և կը յաջողի: Աժտահակ մէկ կողմէն կը պատրաստուի և միւս կողմէն Տիգրանուհին պազեցնել կ'ուզէ իր եղբորմէն որ անոր ձեռքով յանկարծակի բերէ Հայոց թագաւորը:



ԿՐՐՈՒՄ ԳՆԵՆՏԱՆԸ

Աժտահակ պատգամաւոր կը զրկէ Տիգրանի և զայն կը հրաւիրէ սահմանը՝ անձամբ տեսակցելու պատրուակաւ: Տիգրան իր Տիգրանուհի քրոջմէն զաղտնի իմացած ըլլալով Աժտահակի նպատակը՝ բազմաթիւ զօրքերով կը յարձակի Մարաստանի սահմանը: Հոս օգնութեան կը

հասնի իր դաշնակից Կիւրոսը: Կուռի տաք միջոցին Տիգրան կը սլանայ Աժտահակի վրայ ու նիզակի հարուածով կ'սպաննէ Աժտահակը:

Աժտահակի անկումով կը կործանուի Մարասանի թագաւորութիւնը: Տիգրան շատ գերի կը բերէ Հայաստան: Ասոնք կը բնակին Մասիս լեռան արեւելեան կողմը և կը կոչուին Վիշապագունք կամ Մուրացակ:

Դ Ա Ս

Թելադուքեամբ

Արայի մահէն ետք Հայերն որո՞նց հարկատու մնացին. — Ի՞նչպէս անկախութիւն գտան. — Հայաստանի սահմանը հետզհետէ ի՞նչ եղած էր. — Հայերն ազատ անկախ ըլլալով՝ ի՞նչ դիւրստացան. — Հայկազանց մէջ ո՞վ եղաւ նշանաւոր թագաւոր. — Հայոց բանակն ի՞նչ վիճակի մէջ էր. — Որո՞նք էին բանակին զէնքերը. — Տիգրան բանակին մէջ ի՞նչ կարգ ու կանոն մտցուց. — Տիգրան այս բանակով ինչե՞ր բրաւ. — Դրացիներէն ոմանք այս զօրութենէն պատկառելով՝ ի՞նչի փափաքեցան. — Ուրիշները. — Տիգրան Ա. ի օրով որո՞նք էին Հայոց դրացի հզօր տերութիւնները. — Ո՞վ էր Աժտահակ. — Կիւրոսը. — Կիւրոսը զո՞վ կ'ատէր եւ ի՞նչ կը մտածէր. — Որո՞ւ հետ դաշինք կը կնէր. — Այս դաշնագրութիւնով ի՞նչ բրաւ Աժտահակը. — Ի՞նչն էրազ կը տեսնէ. — Որոնց եւ ե՞րբ կը պատմէրազը. — Երազին մէջ ի՞նչեր տեսնէր էր. — Երեք կերպերէն ո՞րն արեւմուտք բրաւ. — Երկրորդն ո՞ր պայցաւ. — Երրորդն ի՞նչի՞ վրայ նստած էր ո՞ւր արեւմուտք. — Այդ միջոցին որո՞նք զոն կը մատուցանէին մատուածներուն. — Ով կը յարձակի ու չարաչար կը

յաղթուի . — Ռո՞ճճ մեկնեցի՞ն երազն եւ ի՞նչպէս . — Ո՞վ ճիւղ մեկնեց երազը . — Աժսահակ զո՞վ եւ ի՞նչո՞ւ կնուրբեան կ'ուզէ . — Տիգրանուհի ի՞նչե՞ր կը հաղորդէ եղբորը . — Աժսահակ զո՞վ կը հրաւիրէ Մարասան . — Ի՞նչո՞ւ . — Տիգրան ի՞նչպէս կը մեկնի Մարասան . — Ո՞վ կը հասնի Տիգրանի օգնութեան . — Կռուի մէջ ի՞նչ մեծ եղելութիւն կը պատահի . — Աժսահակի անկումով քաղաքական ի՞նչ մեծ փոփոխութիւն յառաջ կուգայ . — Ո՞ր ցեղը Վիքայազունք կամ Մուրացանք կը կոչուի :

ԸՆԹԵՐՅՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՏԻԳՐԱՆ Ա.Ի ՕՐՈՎ .

Տիգրան Ա.ի օրով Հայ ժողովուրդը կ'սկսի սերտ յարաբերութիւն մշակել զբացի ազգերու հետ որով կը զարգանայ Հայոց Իմացական ու Տնտեսական փիճակը :

Տիգրան Ա.ի օրով Հայաստանի մէջ Արամի ատենէն աւելի կը ծաղկին Խաշարածութիւնն ու Հողագործութիւնը, Արհեստներն ու Առեւտուրը : Արդէն ժամանակի ընկածքին մէջ շատցած էին քաղաքներն որոնց մէջ կը բնակէին Տէրութեան պաշտօնեայնքը, զինւորականները, վաճառականներն ու արհեստաւորները :

Քողաքներու կեանքը հետզհետէ զարգանալով՝ քաղաքացիներու ընտանեկան ու ընկերական պայմաններն ալ կը փոխուին ու մտքի կ'սկսին շեղ ու փառքաւ ապրիլ, մինչդեռ գիւղացիներն որ ժողովրդիկ միշտ ու ամէն տեղ մեծամասնութիւնը կը կազմեն՝ անկետքն ալ կը շարունակեն դեռ երկար ատեն ապրիլ պարզ՝ նահապետական կեանքի :

Յոյն պատմագիր մը՝ Քսենոփոն Տիգրանի ատեն Պարսկաստանէն դարձին Հայ գեղացիներու քով հիւր իջած էր : Անիկա կը պատմէ թէ Հայոց այն ատենուան գեղջուկ բնակարանները գեղատար Էին ինչպէս որ մինչև այսօր ալ Հայաստանի մէջ շատ տեղեր տուներն այնպէս են : Իրուանքը ջրհորի բերաններու նման թէ Է նեղ ու բարձր էին, բայց տուներուն ներսն ընդարձակ էր : Այդ դուռները միայն տնտեսներու համար կը բանային, իսկ իրենք՝ մտրդեկ նոյրիքի անաղուխներով ներս կը մտնէին ու դուրս կ'ելէին :

Բնակարանները թէ Է մէկ կտուրի սակ ու մէկ բաժանումով, սակայն իսկապէս երեք պէտքի յատկացուցած էին, մէկ կողմը՝ անտուռներու, այսինքն՝ պարզապէս ախոռ, միւս կողմը՝ ցորենի, գարիի, հաճարի, ձաւարի, նաև ոգելից ըմպելիքներու, այսինքն՝ ամբարներ, իսկ Ֆոսցած մասն ալ մարդոց բնակարան էր :

Քսենոփոն ու իր ընկերները սիրալիք ընդունելութիւն մը գտան Հայ գեղացիներէն : Հայ գեղացիներն անոնց կը հասէին ճոխ սեղան՝ առատ ու ընտիր կերակուրներով : Սեղաններուն վրայ անպակաս էին դառի, ուլի, հորթի ու հաւի միս, ցորենի ու գարիի հաց, նաև ընտիր գինի :

Հայաստանի ընդարձակ ու բարեբեր դաշտերը շատ կը նպաստեն Հողագործութեան զարգացման ու Հայ գեղացին կ'առանայ առատ բերք, դալարագեղ ու հովասուն հովիտներն ու մտրգաքաղնները հրաշալի արօտավայր են որոնց վրայ կ'արածեն Երամներով ձի, ջրբն, կով, գոմէշ, ոչխար, այծ ևլն :

Տիգրան Ա.ի օրով Հայաստանի մէջ արդէն ծանօթ էին հանքերը : Հայաստանի հիւսիսային արեւմտեան կողմն առատութեամբ կը գտնուէր աղ, հարաւային ու հարաւային արեւմտեան կողմերն ալ՝ պղինձ, երկաթ ու մինչև իսկ ոսկի :

Հայերն իրենց արտագրութիւնները կ'առտածէին օտար երկիրներ ու անկէ կը ներմուծէին զանազան ապրանքներ—ոսկի, արծաթ, քանկազիկն արեւոյ, ընծիր կսաւեղեկն, այլ եւ այլ ներկիր ու գործիքներ :

Հայոց մէջ նախ կը զարգանայ մասնաւորապէս առեւտուրը գրաստներու միջոցաւ, իսկ յետոյ Գեղարքիւր : Ասոր շատ կը նպաստեն Հայաստանի մեծ գետերը : Հայերն ատոնց վրայ նաւարկելով՝ կը հասնէին մեծ ու հեռաւոր ծովերը . — Կուր ու Երասխ գետերով՝ Կասպից* ծովուն, ձորոխով՝ Սև ծովուն*, Եփրատ ու Տիգրիս գետերով՝ Պարսից ծոցին* : Անոնցմէ զատ Հայ վաճառականը կ'երթար մինչև Միջերկրական ծովու եզերքները :

Հին ատեն Հայաստանի մէջ նաւերուն կողերն ուռնիներէ կը շինէին ու յետոյ դրոն մտնելով կը պատէին : Նաւն ո՛չ «նաւառաջք» ունէր, ոչ ալ «թելք», այլ վահանի նման բոլորչի էր և նաւարկելու համար՝ երկու մտրդիկ կը թիովարէին : Մէն մի նաւի մէջ կար էշ մը, իսկ մեծերուն մէջ՝ մէկէ աւելի : Երբոր նաւն որոշուած տեղը հասներ ու ապրանքը ծախէին, ինչպէս նաև անոր վրայ նստելու յարմարութեան համար թափուած յարգը, ֆոսցած մտրթերն ալ կամ կը ծախէին և կամ էշերու վրայ բարձած՝ Հայաստան կը գառնային : Ստիպուած էին այդպէս ընել, որովհետև գետն ի վեր չէին կրնար նաւարկել :

ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԵՐ

Ի սկզբան մարդիկ ո՛չ որոշ բնակարան և ոչ ալ հայրենիք ունէին, և իրենց ապրուստի միջոցները հոգալու համար՝ ոտիպուած էին շարունակ տեղէ տեղ փոխուիլ, անվերջ ճամբորդել: Հարկու ճամբորդել դժուար էր այնպիսի ատեն, երբ դեռ ո՛չ միայն հիմնական երկաթուղիներն ու խճուղիները չկային, այլ և մարդիկ անասուններն ալ ընտելացուցած չէին որ անոնց օգնութեամբ այս ու այն կողմը թափառէին:

Այսպիսի պայմաններու մէջ մարդիկ նախամեծար պիտի համարէին անմտտելի լեռներէ հեռու, տափարակ դաշտագետիններու և անտառախիտ հովիտներու մէջ, գետերու և ծովերու եղերքներն ազբիլ, որպէս զի դիւրին ըլլար ոտնով մէկ տեղէն միւսն երթալ: Ոտքով ալ հեռու տեղեր չէին կրնար երթալ, կամ եթէ երթային, այդ ճամբորդութիւնն ամբողջ ամիսներ ու տարիներ կը տեւէր:

Ոտքով ճամբորդելու դժուարութիւններէն մարդ կ'ազատի միայն այն ատեն, երբ հնար կը գտնէ ջրի վրայէն ուղեւորել, այսինքն՝ երբ նաւարկութեան կը վարժուի:

Բնական է թէ գետերու և ծովերու եղերքի մտաւորապէս մարդիկ վաղուց նկատողութեան առած ըլլալու էին թէ ի՛նչպէս քարն ընկղմելով՝ ջրի տակը կ'երթար, իսկ ընկղմած փայտը ջրի երեսը կը մնար ու կը լողար:

Այդչափը չէր բաւեր նաւարկութեան դիւտին. պատահած է որ ջրի մէջ ինկած մարդը խեղդուելէ ազատուելու յոյսով ծփացող գերանէն բռնած՝ հոն տեսած ըլլայ թէ ինք չ'ընկղմիր, այլ գերանի հետ կը լողայ:

Այս պարագայն արդէն ինքնին բաւական էր որ մարդ ուրիշ անգամ գիտնամբ գետի մէջ գերան ձգէր ու ինք ալ վրան նստած՝ ջրի հոսանքէն ուրիշ տեղ մը փոխադրուէր:

Ծփացող գերանը պէտք եղած տեղն և ուղած ատեն դետափին մտեցնել մեծ հնարագիտութիւն մը չէր պահանջեր: Գերանի վրայ նստած մարդը ձեռքը երկար փայտի ձող մը ունենալու էր որ անոյ ծայրը գետին յատակին մտնէր:

Մէյ մը որ այդպէս ջրի վրայ ճամբորդելու հնարքը կը գտնէ, ա՛լ մարդուն դժուար չէր այդ միջոցը հետզհետէ կատարելագործել: Քանի մը գերաններ իրարու կը կապէ, որպէս զի թէ՛ ինք չ'ըրթուի թէ քանի մը հոգի միասին կարենան անոր վրայ կենալ:

Այսպէս մարդ կը հնարէ կասանաւն որ ցարդ շատ տեղեր կը գործածուի:

Կաստով ծովու վրայ երբ կը ճամբորդէին, մարդիկ նկատեցին թէ հով ելած ատեն լատոն անոր ուղղութեամբ աւելի արագ կը պլանար: Ահա մարդ յղացու Առագաստի գողափարը:

Իբրև առագաստ նախ կը գործածեն մեծամեծ ծառերու հասակեղենները, կենդանիներու մարմերն ու յետոյ այսօրուան ամուր քիթանը:

Կաստն իր ձեռով ու կողմով շատ անյարմար էր թէ՛ ղեկավարելու և թէ ուղած ձեռով շարժելու: Մարդիկ կ'օտիպուին աւելի կատարելագործել իրենց հնարած նաւը: Կը խորհին ծառի հաստ փայտը փորել կամ այրել՝ աաշտի ձեռով և անով ճամբորդել: Ոգեւորուած իր հնարած գիւտով՝ տարիներ կ'աշխատի մինչև որ տաշտաձև մակոյկն երեւան կը բերէ:

Մակոյկն ու առագաստանաւը հնարելէ ետք մարդիկ կը հնարեն նաև քիւերն որով կը թիւփարեն հովին հակառակ ուղղութեամբ ճամբորդելու ատեն:

Շատ եաքն է որ մարդիկ ուրիշ միջոց ալ կը գտնեն ջրի վրայ նաւարկելու: Երբ անոնք կը սորվին անասուններու մարմէն թիկ պատրաստել փշելով ուռեցուցած տիկերն իրարու կապելով՝ յառաջ կուգայ սկանաւը: Զանոնք ջրին երեսը կը թողուն և իրենք ալ վրան նստած՝ թիկերով կը նաւարկէին:

Հին ատեն Հայերը սկանաւով կը ճամբորդէին Հայաստանի գետերուն վրայ:

9. Վ Ա Հ Ա Գ Ն

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Մարդ ինկած Ասուած մրն է:»

Հայ ժողովուրդն իր քանի մը դիւցազններն ու թագաւորներն իրենց մասէն ետք վաղուց աստուածացուցած ու պաշտած էր: Այդպիսիներէն մէկն եղած է Երուանդեան Տիգրանի կրտսեր որդին Վահագն: Իր հօր ողջութեան ատեն Վահագն զանազան պա-

տերազմներու մէջ ցոյց տուած քաջագործութիւններով
մեծ համբաւ ստացած էր և զբաւած էր ժողովրդին ու
ցեղապետներուն սիրտը, այնպէս որ Ազգային ղիւցազ
նէրու* կարգը կը դասուի:

Վահագն յաղթապանծ կուի կը մղէ Մարաստանէն
գաղթած Աժտահակի ցեղին դէմ:



Վ. Ա. Հ. Ա. Գ. Ն.

Վահագնի օրերը Հայերը կը
Հայոց պառօսամունքը պաշտէին Երկիրն ու Երկիրը՝
Գեղեցիկ ու Քաջ մարդիկը: Ա. մէջ
առտու Ծագող Արեւուն կ'երկրպագէին ու կ'աղօթէին

զայն համարելով բոլոր բարիքներու պատճառը: Ուստի
անոնք իրենց շատ յարգելի ու սիրելի ղիւցազները —
ինչպէս Վահագն—կը բաղդատէին Արև-առտուածին հետ:

«Գողթան երգիչները» մոռ-
Վահագնի ծնունդը նալով Վահագնի մարդկային ծը-
նունդը՝ այսպէս կ'երգէին. «Յաւի
մէջ էին երկինքը, երկիրն ու ծիրանի ծովը: Կարմիր ե-
ղեգնիկ մը որ ծիրանի ծովուն մէջ էր՝ ծուխ ու բոց
կ'արձակէր. այդ բոցին մէջէն պատանհակ մը կը վաղէր.
անոր մազերը կրակ էին, մօրուքը բոցեղէն ու աչքերը
մէյսէկ արեգակ:»

Վահագն օր մը Ասորեստան կ'երթայ և
Յարդոզ այն տեղի Բարչամ աստուածին յարդը գող-
նալով՝ երկնքի երեսը կը վախճի: Բայց սաս-
տիկ աճապարելէն՝ յարդը կը թափթփի երկնակամարին
վրայ. ասոր սպիտակ հետքը կը տեսնուի երկնքի երեսը
և կը կոչուի Յարդոզի = Գարնանգոյի ճամբայ զոր Աշ-
խարհագրութեան մէջ Ծիրկաթին կ'անուանենք:

Հայերն Աշտիշատի մէջ շինած էին
Մեծ Սուլթան Վահագնի մեհեանը. հոս կը գտնուէր
Ս. Կարապետ նաև Վահագնի պղնձէ կուռքը:

Տարուան մէջ որոշուած օրեր Հա-
յաստանի ամէն կողմերէ հազարաւոր մարդիկ ուխտի
կ'երթային հոն և անկէ կը խնդրէին առողջութիւն, քա-
ջութիւն, քաղցր ձայն ու ամէն տեսակ բարիք:

Վահագնի մեհեանին մօտերը հիմայ կը գտնուի Մշոյ
«Սուլթան» Ս. Կարապետ վանքն ուր նմանապէս ուխտի
կ'երթան Հայերը՝ նոյն բարեմասնութիւնը խնդրելու:

Վահագնէն սերած է Վահուռնեանց քորմ-նախա-
բարութիւնը:

Պ Ա Ս

Թելադրութեամբ

Հայ ժողովուրդը զորո՞նք իրենց մահէն ետք աստուածացուցած ու պատեցած է. — Վահագն ո՞վ էր եւ որոնցմէ՞ էր. — Վահագն ինչո՞ւ Ազգային դիւցազներու կարգը դասեցաւ. — Հայերը Վահագնի օրով ինչե՞ք կը պատեցին. — Ե՞րբ եւ որո՞ւ կ'աղօթէին. — Ջայն ի՞նչ կը համարէին. — Ջորո՞նք կը բաղդասէին Արեւուն հետ. — Գողթան երգիչներն ի՞նչպէս կ'երգէին Վահագնի ծնունդը. — Ինչո՞ւ. — Որո՞նք ցաւի մէջ էին. — Կարմիր եղեգներին ո՞ւրկէ ի՞նչ կ'արձակէր. — Պատանիկինն ո՞ւրկէ կը վազէր. — Մազերն ինչե՞ք էին. — Մօրո՞ւքը. — Աչքե՞րը. — Վահագն Բարեամի ի՞նչը կը գողնայ. — Ո՞վ է Բարեամ. — Յարդն ի՞նչ կ'ըլլայ. — Ինչո՞ւ. — Ի՞նչ կը կոչուի Յարդողի նամբայն. — Ուրիշ ի՞նչ անուններ ունի. — Ինչո՞ւ. — Ի՞նչ աւանդութիւններ գիտէ այս մասին. — Ո՞ւր էր Վահագնի մեհեանը. — Կուռնն ինչե՞ք շինուած էր. — Հայերն Ե՞րբ եւ ո՞ւր ուխտի կ'երթային. — Ինչե՞ր կը խնդրէին Վահագնէն. — Վահագնի մեհեանին տեղ հիմայ ի՞նչ կը գտնուի. — Հայերը Ս. Կարապետէն ինչե՞ր կը խնդրեն. — Որո՞նք սերած էին Վահագնէն:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ՅԵՆԵՄԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Մեր նախնիք ո՛չ միայն մարդու կերպարանքով կուռքեր շինած ու զանոնք իրեն աստուած պաշտած են, այլև երբեմն աստուածացուցած են այնպիսի մարդիկ որոնցմէ ոմանք նշանաւոր հանդիսացած էին իրենց գեղեցկութեամբ, քաջութեամբ և ուրիշներ ալ իրենց

դաժան ու ահաւելի բնաւորութեամբ: Այնպիսի մարդիկ ընդհանրապէս կ'ըլլային ցեղի մը կամ ազգի մը գիւցազն նահապետները, զօրապետները իշխաններն ու թագաւորները: Եւ որովհետեւ մարդիկ այնպիսիներէն սաստիկ կը վախնային ու կը սարսափէին, անոնք պաշտամունքի աւարկոյ գարձան:

Ինչպէս որ աստուածներուն կը վերագրէին այնպիսի յատուկութիւններ որ մի՛միայն մարդոց յատուկ են, այնպէս ալ այդպիսի մարդոց կ'ընծայէին այնպիսի գերբնական յատուկութիւններ զորոնք միայն մարդոց երեւակոյութեամբ աստուածները կրնային ունենալ:

Մարդիկ չէին կրնար հաւատալ թէ քաջ, անվեհեր, գիւցազն, նաև դաժան, անողոք ու ահաւելի իշխաններն ու թագաւորները կը մեռնէին սովորական մարդոց պէս և կը դադրէին գոյութիւն ունենալէ: Նորպէս չէին կրնար հաւատալ թէ այդ կարգի մարդիկ սովորական մարդոց պէս ծնած էին, այլ կը կարծէին թէ անոնք անպատճառ ծնած էին կամ Արեգակէն, կամ ծովէն և կամ՝ ընտրութեան ուրիշ տարրէ մը:

Այդպիսիներու մահէն ետքն ալ մարդիկ իրենց վառ երեւակայութեամբ հազար ու մէկ առասպելներ կը հիւսէին ու կ'աւանդէին սերնդէ սերունդ:

10. ՄԱԿԵՂՈՆԵԱՆ ՈՒ ՍԵԼԵԻԿԵԱՆ ԻՇՊԱՆՈՒԹԻՒՆ

Պ Ա Ս Մ Ո Ւ Ս Բ

«Բնացող աղուէտը հաւ չի կրնար որսալ:»

Վահագնի յաջորդներէն էր Մեծն Աղեքսանդր Վան որ կը նորոգէ Շամիրամա կերտ քաղաքն և իր անունով կը կոչէ Վան: Ասոր յաջորդն էր Վահե որ 30,000 հետեւակ և 7,000 հեծելազօրքով Պարսից Դարեհ թագաւորին օգնութեան կ'երթայ Մեծն Աղեքսանդր Մակեդոնացւոց* թագաւորին դէմ: Վահէ կը մեռնի պատերազմի մէջ ու 330ին Հայաստան կ'իյնայ Մակեդոնացի աշխարհակալին ձեռքը:

Մեծն Աղեքսանդր կը տիրէ Հայաստանի միայն Հարաւային ու Արեւմտեան նահանգներուն: Հիւսիսային Հայաստանի (Կուր* ու Երասխ գետերու) մէջ կային անկախ Հայ իշխաններ:



ՄԵՏՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ

Հարաւային Արեւմտեան Հայաստան շարունակ պատերազմի մէջ էր. նախ կ'իշխէ Աղեքսանդրի կողմէն Միհրան Հայ իշխանը, յետոյ չարսիրտ Պսղոմեոս* որ հալածելով Արսաւազդ Հայ իշխանը՝ կը նուաճէ Հայաստանը:

Հայաստան 301ին ըստին կ'իջ Հայասան* անկախ նայ Ասորոց Սելեւկեան* թագաւորներուն: Սելեւկեանները Հայաստանը կը կառավարեն Հայ իշխաններու ձեռքով. ասոնց մէջ նշանաւոր եղաւ Արսաէս: Ասիկա կը պաշտպանէ ու կը զարգացնէ Արհեստները, Առեւտուրն ու Հողագործութիւնը:

Արտաչէս օգուտ քաղելով Սելեւկեանց տկարութենէն՝ Հայասանը կ'ազատէ անոնց լծին տակէն և կ'ըլլայ Հայոց քաղաւոր: Ասոր օրով էր որ Կարգեղոնացոց* հանձարեղ զօրավարը՝ Աճնիբալ կը փախչի Հայաստան Արտաչէսի քով: Արտաչէս Աննիրայի խորհրդով Երասխ ձախ եղերքը կը հիմնէ Արսաւազ* քաղաքը (189):

Արտաչէսի յաջորդ Արսաւազի Հայերը կը դիմեն Թուլութենէն ձանձրացած՝ Հայերը Պարթևներուն կը դիմեն Պարթևներուն* որ հետըզհետէ կը յառաջանային դէպ ի Արեւմտեան Ասիա: Պարթևները կ'ընդունին Հայոց առաջարկը, կուգան ու Հայաստան իրենց գերիշխանութեան կ'ենթարկեն:

Դ Ա Ս

Թելադուքեամբ

Ո՞վ եր վահագնի յաջորդը . — Ի՞նչ ըրաւ . — Ո՞վ եր վահե եւ որո՞ւ օգնութեան գնաց . — Աղեքսանդր Մակեդոնացին որո՞ւն վրայ կը յարձակէր . — Վահե ի՞նչ եղաւ . — Հայասան որո՞ւն ձեռքն ինկաւ եւ ե՞րբ . — Մեծն Աղեքսանդր Հայասանի ո՞ր մասին տիրեց . — Հայերն ո՞ր կողմերն անկախ մնացին . — Հայասանի ո՞ր մասը Երասխ պատերազմի մէջ էր . — Աղեքսանդր զ՞ով իբխան կարգեց Հայասանի . — Պսղոմեոս զ՞ով հալածեց եւ ի՞նչ ըրաւ . — Սելեւկեանք ե՞րբ տիրեցին Հայասանի . — Սելեւկեանք ի՞նչպէս կը կառավարէին Հայասանը . — Ո՞վ եղաւ նշանաւոր ասոնց մէջ . — Արսաէս իբխան ինչե՞ր պատգամեց ու զարգացուց . Ո՞վ ազատեց Հայասանը . — Ո՞վ եր Աճնիբալ եւ ո՞ր փախաւ . — Արսաէս Աճնիբալի խորհրդով ի՞նչ ժողովեց եւ ե՞րբ . — Հայերն ինչո՞ւ եւ որո՞նց դիմեցին . — Ո՞րո՞նք ընդունեցին եւ ի՞նչ ըրին :

Ը Ն Յ Ե Ր Ց ՈՒ Մ

ՍՏՐՈՒԿՆԵՐ ՈՒ ԱԶԱՏՆԵՐ

Մարդկային ցեղերն առհասարակ վաղուց ի վեր միշտ թշնամական յարարեցումն մէջ են իրարու հետ: Ի սկզբան մարդիկ իրար կ'որսային ճիշտ այնպէս, ինչպէս կ'որսային գաղաններն սկենդանիները:

Եւ որովհետեւ այս ցիղի պատկանող մարդիկ բոլորն էլ կը նկատէին այն ցեղի պատկանողները, կ'աշխատէին զիրար բնաջինջ ընել:

Մարդիկ բնաջինջ կ'ընէին զիրար իրենց սպորուսն ա՛յլ աւելի ապահովելու համար: Անոնք վտանգավթէ բնութեան բերքերը որքան պտուղները, արմախքները, ձկները, և ըն. չեն կրնար ամէնուն բաւել իրար կ'սպաննէին, որպէս զի իրենք աւելի հանդիստ կեանք վարեն և միմիայն զուարճալի ժամանց մը վայելեն: Գերիներն էին որ կը պահէին ու կը խնամէին ընտանի անասունները, կը հերկէին ու կը մշակէին հողը և կը կասարեին առօրին բոլոր գործերը: Արդիւած էին գերիներուն զէնք կրել և պատերազմի երթալ Այդ փառքը միայն ազատներուն վերապահուած էր:

Այդպէս ահա մարդկային ցեղերու մէջ կաղմուեցաւ երկու դասակարգ՝ ազատներ ու ստրուկներ:

Ստրուկները նոյն իսկ մարդ չէին համարուեր: Զանոնք չէին սպաններ, որպէս զի բնաջինջ չըլար Աշխատող մարդը: Իսկ եթէ պատահէր որ ստրուկը սպաննէին, յանցանք չէր համարուեր:

Ստրուկներու աշխատութեամբ Հողագործութիւնը, Խաշնատառքիւնը, նաև արհեստները շատ ծաղիկեցան ու զարգացան: Այն ցեղերն ու ազգերն որ շատ ստրուկներ ունէին՝ ամէնէն հարուստները կը համարուէին:

Ստրուկներն առեւտր ա՛յնչափ կարեւորութիւն ստացան որ սկզբան առեւտուրի նիւթ դառնալ, վաճառականներն իրրեւ ապրանք կ'առնէին ու կը ծախէին ստրուկները: Այս հակամարդկային առեւտուրը կը կոչուի Գերիվաճառութիւն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԷ

Հայաստանի ժողովուրդը քանի մը դատակարգի բաժնուած էր՝ Հայաստանի ամբողջ հողն ու կալուածները թագաւորին, նախարար՝

ներուն ու անոնց ազգականներուն սեփականութիւն էին: Սեփականութիւնը ժառանգարար զաւակէ զաւակ կ'անցնէր:

Բոլոր մեծ ու փոքր հողատէրները Հայաստանի Ազնուական դասը—ազատները կը կազմէին: Անոնք կը կոչուէին Ազատներ: Ժողովրդին Ֆեացած մասը — ստրուկ արհեստաւորներն ու վաճառականները հողատէր չէին և կը կոչուէին ոչ-ազատներ—եղապակներ:

Ազատներու դատակարգին կը պատկանէին նաև Քուրմերն որ նոյնպէս ունէին իրենց սեփական կալուածները: Սեփական կալուածներէ զատ քուրմերը կը վայելէին նաև տաճարներու յատկացուած կալուածներու եկամուտները: Թէ՛ քուրմերուն և թէ՛ տաճարներու պատկանած կալուածներն ապահարկ էին:

Ստրուկները գերզարնակ հողագործներն էին: Ստրուկներն էին որ թէ՛ աղատորեարներու և թէ՛ քուրմերու բոլոր հողերը կը մշակէին և ատոր փոխարէն վարձք մը կ'ատանային: Ստրուկները աղնուականներու անտէրը—բայաններն էին:

Արհեստաւորներն ու վաճառականները քիչ մը աւելի բարձր դեր կը վայելէին և մեծ մասամբ կը բնակէին քաղաքներու մէջ:

Հողատէր աղնուականները կը պաշտպանէին ստրուկները արհեստաւորներու և վաճառականներու զեղծ ու մեղքէն:

Ա. Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ

ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ, ԽԱԼԴԵԱՆՔ, ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Մեր ազգին հիմնադիրն է Հայկ նահապետ որ նոյն նահապետի թոռներէն էր: Հայկ չուզելով հնազանդիլ Բել բռնաւորին՝ ազատութեան համար անոր հետ կը կռուի ու կ'սպաննէ զայն: Մենք Հայ կոչուեցանք Հայկի անունով: Հայոց իւսնաճարուրդն եղած է վանայ լճին աւազանը:

Հայկի յաջորդները կ'սկսին ցրուիլ: Մէն մի նահապետ իր ամբողջ կալուածները կը յանձնէր իր անդրանիկ զակին: Իսկ միւս որդիներուն համար նոր նոր երկիր կը գտնէր: Այսպէս երկիրը հետզհետէ կ'ընդարձակուի եւ Հայերը կը տարածուին: Այսպէս երկիրը հետզհետէ օխն ու Սիւնեաց երկրին մէջ: Հայերն այս միջոցին խաշնատած ու հողագործ էին: Հայ ցեղերն իրարու հետ կապակցուելու ջուղենալով՝ դրացիներէն յարձակում կը կրէին: Արամ նահապետ այդ ցեղերը կը

միացնէ, կը հաստատէ Զինուորական նահապետութիւն, կը յաղթէ յարծակող Մարաց, Ասորոց, Կապ սորվիկացոց եւ Հայաստանի սահմանները կ'ընդարձակէ. Արամի շորհիւ Հայերն աւելի քաղաքաբնակները ունեցան: Մենք Արամի անունով Արմէն կոչուեցանք ու մեր երկիրն ալ Արմենիա կոչուեցաւ:

Ասորեստանի Շամիրամ թագաւորը կ'ուզէր Հայաստանի տիրել Արայ Գեղեցիկ նահապետին հետ ամուսնանալով: Արայ Գեղեցիկ կը մտրժէ Շամիրամի առաջարկն եւ պատերազմի մէջ ինչալով՝ իր պատիւն ու երկիրը կը պաշտպանէ, Հայերը հաւատացին թէ այս անձնուէր դիւցազն անմահ մնացած է:

Շամիրամ Վանայ ձովուն գեղերը կը շինէ գեղեցիկ քաղաք մը որ իր անունով կոչուեցաւ Շամիրամակերտ: Շամիրամ այս քաղաքը կը շինէ Ասորեստանի արհեստաւորներու ձեռքով: Քաղաքը գեղեցիկ շէնքերով կը զարդարէ եւ Բեւեռակիր կոչուած արծանագրութեամբ բերդին վրայ կը պատմէ իր կեանքը:

Կարգուի մահէն ետք Ասորեստանցիները Հայաստանը կը նուաճեն, մինչեւ որ Պարոյր իշխանը Մարաց ու Բաբելոնացոց հետ միացած՝ կը կործանէ Ասորեստանի ինքնակառչիւնը, Այնուհետեւ Հայերը կ'ունենան թագաւորական իշխանութիւն:

Հայիկ, Արամի Արայի եւ ուրիշ նահապետներու պատմութիւնն աւանդութիւն է եւ կը կազմէ Դիւցազնական շրջանը:

Հայերն Արիական ցեղէն են, Նախապէս ապրած են Թրակիայ, յետոյ Փոնտոսիա եւ ասկէ **Ս. դարուն վերջերը** (Ն. Բ.) արշաւելով **Ուրարտու** = Բիանա երկիրն եւ հոն բնիկ Հայ քաղաւորութիւն մը կը հաստատեն, Հոս կը բնակէին Խաչեանի = Նախահայերը: Աստուգ պատմութիւնը կը տեսնուի Բեւեռակիր արծանագրութեանց մէջ զորս գիտունները վերջերս կարդային:

Սուրանդեան Տիգրան Ա. եղաւ Հայ առաջին քաղաւորութիւնը: Տիգրան Ա. բանակը կը կանոնաւորէ, կը կազմակերպէ ու պատկառանքը կ'ազդէ դրայիններուն, Տիգրանի դաշնակից էր Պարսից Կիւրոս քաղաւորը: Կիւրոսի հաւը՝ Մարաց Աժտահակ քաղաւորն երազին մէջ տեսային մեկնութեան համեմատ կը յարձակի Տիգրանի վրայ: Աժտահակ կ'իյնայ, կը մտնի պատերազմին մէջ: Տիգրան կը տիրէ Աժտահակի երկիրներուն, Տիգրանի օրով Հայաստան շատ կը բարգաւաճի: Հայերը կը զարգանան առեւտուրի մէջ: Գետերու վրայ նաւարկելով դրայի երկիրներու բերքերը կը փոխանակէին իրենցին հետ:

Տիգրանի որդին **Վահագն** իր դիւցազնական զորքերուն համար պաշտուեցաւ, Վահագն նոյնացաւ Արեւ-աստուածի հետ եւ հա-

մարուեցաւ ամէն քարի ի խնդրակասար: Վահագնի մեհեանին մօտերը հիւնայ կը գտնուի Մշոյ Մուշքան Ս. Կարապետը:

Աղեխանգր Մակեդոնացին Վահիկ օրով կը տիրէ Հայաստանի մէկ մասին. անկախ իշխաններ կային Կուրի ու Երասխի հովտին մէջ: Սեղիկեանք կը նուաճեն Հայաստանն ու զայն կը կառավարեն Հայ իշխաններով: **Արտաշէս** իշխանն ապստամբելով **քաղաւորութիւն** կը հռչակէ:

Արտաշէս թագաւորին օրով Հայերը կը դիմեն Պարսիւներուն որոնք հետզհետէ կը յառաջանային դէպի արեւմուտք:

Ա. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՑԵԱԼ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

ԴԻՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԵՐԶԱՆ, ԵԱԼԻԿԱՆՔ, ՀԱՅԿԱՅՈՒՆԵՐ

Ինչեք՝ շինուած էին մարդոց նախնական գործիքները. — Մարդ ինչպէս ձեռք կը բերէ առաջին նիզակը. — Ինչպէս պատրաստեց աղեղը. — Կենդանիներն ու թռչուններն ինչպէս ընտելացուցին — Երբ սկսու խաշնարածութիւնը. — Հայերն ե՞րբ որսորդ ու խաշնարած եղան. — Ինչեք՝ եղան մարդոց առաջին բնակարանը. — Մարդիկ նախ ինչո՞ւ հագուստէ զուրկ էին — Մարդ ե՞րբ և ինչո՞ւ սկսու խաղաղըդեղ մորթը. — Մարդիկ զգեստի իբրև թել ինչեք՝ կը գործածէին. — Ինչեք՝ էին իրենց ասեղները. — Հայ ժողովուրդը ինչեք՝ կը հագնէր. — Ազնուականներուն զգեստներն ինչեք՝ կը տարբերէին հասարակ ժողովրդին հագուստներէն. — Ազնուականներն ինչ զարդեր կը կրէին. — Հասարակ ժողովուրդն ինչ զարդեր կը կրէր. — Մարդիկ նախ ինչո՞ւ կը պահէին կենդանիները. — Յետոյ ինչո՞ւ պահեցին. — Որո՞նք են մարդոց նախնական ուտելիքը. — Նախնական մարդիկ ինչպէս կը ցանկէին — Սկզբան հացն ինչ վիճակի մէջ կ'ուտէին. — Հայերն ե՞րբ սկսան պարապիկ Հողագործութեան. — Ո՞ր նահագետներուն օրով մշում տրուեցաւ Հողագործութեան. — Մարդիկ ե՞րբ նստակեաց կեանք վարեցին. — Նստակեաց կեանք վարելով ինչեր ըլին. — Որո՞նք ձկնորս եղան. — Որո՞նք խաշնարած, որո՞նք հողագործ. — Հողագործութիւնն որո՞նց յանձնուեցաւ յետոյ. — Այրերն ինչո՞վ զբաղեցան. — Նախնական մարդիկ նախապէս ինչպէս կ'ապրէին. — Ե՞րբ զգացին համախիլ. — Ե՞րբ կը կազմուի Ընտանիքը. — Նախապէս ինչո՞ւ զաւակներն իրենց մօրն անունով կը կոչուէին — Ե՞րբ փոխուեցաւ այդ վիճակը — Ո՞վ ցեղին նահագետ կը համարուէր. — Յեղապետներն ինչ իշխանութիւն ունէին. — Ե՞րբ և ինչպէս սկսու Հայրենիքի դաշակարը:

Մարդ զարդարանքի գաղափարն ո՞րքէ ընդօրինակեց . — Ո՞ր
 ցեղերը դեռ կը զարդարուն նախնական մարդոց պէս — Մարդիկ
 երբև զարդ ինչ առարկայներ գործածեցին . Զորո՞ք իրբև աստուած
 պաշտեցին . — Հայերն Անուշանի օրով ինչ կը պաշտէին . — Ո՞ր
 երբ և ինչո՞ւ . — Մեր նախնիք զորո՞ք աստուածացուցին . — Աստուած-
 ներու ինչե՞ր վերադրեցին . — Որո՞նք չէին մեռնել . Ասոնք ինչպէ՞ս
 ծնած էին . — Ո՞վ էր Վահագն և ո՞րքէ ծնած էր . — Նախնական մար-
 դոց գիւտերուն մէջ ո՞րն է նշանաւորը . — Ինչ երեւոյթներ և ինչպէ՞ս
 թեւադրեցին մարդոց կրակ պատրաստել . — Ինչպէս կրակ կը պատրաս-
 տէին . — Ինչ է կրակահատը . — Ո՞ր ցեղերը ցարդ կը գործածեն կրա-
 կահատը . — Ինչո՞ւ կրակը պաշտեցին . — Ինչ միջոցներ խորհեցան
 կրակն անչէջ պահելու . — Մարդոց առաջին տունն ինչի՞ր յատկաց-
 ուած էր և յետոյ ինչ եղաւ :

Մարդիկ նախապէս զերար ինչ կը նկատէին . — Ինչո՞ւ զերար
 բնաջինջ կ'ընէին . — Մարդիկ յետոյ իրենց գերիներն ինչ ըրին . —
 Գերիներն ինչ զբաղում ունէին . — Ինչե՞ր վերապահուած էին ա-
 զատներուն . — Հին ատեն քանի՞ գասակարդ կար . — Որո՞նք էին ամէնէն
 հարուստ աղագերը . — Ինչո՞ւ . — Ե՞րբ սկսաւ Գերեվաճառութիւնը :

Հայաստանի բնակիչները քանի՞ գասակարդի բաժնուած էին .
 — Հոգն ու կալուածներն որոնց կը պատկանէր . — Ո՞ր Հայերը կը
 կաղմէին Աղնուականները = Աղասները . — Որո՞նք էին հողագործները .
 — Քուրմերն ո՞ր գասակարդին կը պատկանէին . — Ինչե՞ր կը վայել-
 լէին . — Ինչե՞րն սպահարկ էին . — Որո՞նք կը կոչուին ծորտ . — Ինչ
 էր անոնց կենցաղը . — Արհեստաւորներն ու վաճառականներն ինչե-
 րով կը տարբերէին սորուկներէն :

Մարդիկ ինչպէս նուարկեցին . — Մարդ ինչպէս հնարեց լա-
 տանաւր . — Ինչպէս յղացան առաքատի գաղափարը . — Ինչե՞ր եղան
 առաջին առաքատը . — Ինչպէս մակոյկ շինեց . — Մարդ ինչպէ՞ս
 հնարեց տկանաւր . — Հայաստանի մէջ ինչպէս կը նուարկէին :

Մարդիկ երբ սկսան հետաքրքրուիլ իրենց անցեալով . — Մէն մի
 ժողովուրդ երեւակայութեամբ ինչ ընել կը ջանար . — Այս առան-
 դութիւններն ինչերէ՞ զուրկ էին ու ինչպիսի յօրինուած էին . — Ա-
 ռասպէլներն ինչպէս յերկրուեցան . — Ինչ ըսել է զբոյց . — Որո՞նք
 են Աղդային զբոյցները . — Ե՞րբ կ'սկսի Հայոց իսկական պատմութիւնը .
 — Հայերն ո՞ր ցեղէն են և ո՞րքէ գաղթած են . — Հայաստան նախա-
 պէս ինչ կը կոչուէր . — Որո՞նք կը բնակէին Բիւնան . — Խաղախոնք
 որոնց հետ պատերազմեցան . — Խաղախոնք քաղաքակրթութեանն
 ինչե՞ր մնացած են . — Հայերն ինչ ըրին Ուրարդուն :

Հայերը Հայկի ու իր յաջորդներուն օրով ինչ կեանք կը վա-
 րէին . — Ո՞ր թագաւորին օրով Հայաստան աւելի քաղաքակրթուե-
 ցաւ . — Տիգրանի օրով քաղաքաւորներու կեանքն ինչ եղած էր .
 — Հայ գեղջուկ տուններն ինչպէս շինուած էին . — Կրնա՞ք բաղդա-
 տել Հայկի . իր յաջորդներէն Արամի ու Տիգրանի օրով հետզհետե
 Հայոց կրած Տստեսական, Իմացական ու Բարոյական փոփոխութիւն-
 ները . — Արամի օրով Հայերն որոնց հետ շփուեցան . — Շամիրամի
 օրով Հայերն որոնց քաղաքակրթութեան հետեւեցան . — Տիգրան Ա.
 բանակն ինչպէս ղինեց . — Տիգրանի օրով Հաղորդակցութեան ինչ
 միջոցներ կային . — Քսենոփոն ինչպէս կը նկարագրէ Հայոց կեանքը .
 — Հայերն իրենց նաւերն ինչպէս կը շինէին . — Հայերն ինչպէս ետ
 կը դառնային առեւտրական ճամբորդութենէ :

Ա. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

1. Թէ ինչ է եւհեմերականութիւնը կամ վահագնի պաշտամունքի պատճառը :
2. Հայաստան Տիգրան Ա. ի օրով :
3. Հայոց բնապաշտութիւնը :
4. Մարդիկ ինչպէս համախմբուեցան . Հայերն ե՞րբ եւ ինչո՞ւ համախմբուեցան . ինչպէս կազմուեցաւ Հայրենիքը :
5. Մարդոց նախնական ուտելիքն ինչ ղիմայեղում-ներ կրեց . մարդիկ ինչպէս խաշնարած ու հողագործ եղան :
6. Ինչ եղաւ նստակեաց կեանքի հետեւանքը :
7. Մարդիկ ինչպէս հնարեցին նախնական զէնքերը :
8. Հազուստին կրած բարեշրջումն ու հայացի զգեստներ :
9. Կրակի գիտն ու իր հետեւանքները :
10. Հայ ժողովրդին դասակարգն եւ հանգիստութիւն-ներ գտնել արդի Հայ ժողովրդին ու իր դրացի ցեղերու մէջ :

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

ՀԱՅ-ՊԱՐՔԵԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՀՆԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

11. Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Կ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Առիւծը մագիլներէն կը ճանչցուի:

Երուանդեան Տիգրանէն

Պարբեւ—Արտակունեաց հոք քանի մը թագաւորներ
ժազումը տիրեցին Հայաստանի, բայց

անոնցմէ ոչ մէկն անոր չափ

փառաւոր գործեր կատարեց: Անոնք այնչափ թուլցան
որ չկրցան պաշտպանել Հայրենի աշխարհն օտար աշխարհ
հակառակէ որով երկիրը հպատակեցաւ դրացի Պարսիկ
ներուն: Երբ Մակեդոնացի Աղեմսանդը քաղաւորը
Պարսից տէրութիւնը կործանեց, առաւ Միջագետքն ու
միւս դրացի երկիրները, Հայաստան ահագին խռովու
թեան մասնուեցաւ. շատեր ջանացին տիրելու անոր:

Ահա՛ այդ առնն Կասպից ծովու Հարաւային արեւ
ւելեան ափը՝ Հիւսիսային արեւելեան Պարսկաստանի
լեռնագաւառակին մէջ փայլեցաւ Արշակ* անուհով Պար


թեւ քաջ իշխան մը: Ասիկա իր Պարբեւ թախառական,
բայց քաջ աղեղնաւոր ու ձիավարժ ժողովրդին գլուխն
անցած՝ կրցաւ իր երկիրն ազատել Սելեւկեանց ձեռքէն,
և յետոյ սկսաւ իրեն հնազանդեցնել դրացի ժողովուրդը
ները: Արշակէն սերեցան հզօր թագաւորներ՝ Պարբեւ
Արշակունիք* (253 Ն. Ք.) որոնք ընդարձակեցին իրենց
երկիրը: Արշակ* Մեծ իր սահմանները տարածեց (255 Ն. Ք.)
մինչև Հնդկաստանի Ինդոս* գետն ու Հայաստանի Եփրատ
գետը և իրեն մայրաքաղաք ըրաւ Տիգրան* քաղաքը:
Պարթեւները՝ Մակեդոնացուց, Սելեւկեանց կատարած
բռնութեանց հակառակ՝ համեմատաբար աւելի քաղցր
կը վարուէին իրենց հպատակներուն հետ, որով թէ՛ իրենց
և թէ՛ դրացի ժողովուրդներու սիրտը կը գրաւէին:

Հայերը խնդրեցին Պար-
ձայ. Պարբեւ հարսուրթիւն թեւներու պաշտպանութիւ-
նը, Արշակ Մեծ ալ իր եղ-
բայրը՝ Վաղարշակը կը զրկէ Հայաստան իրբե թագաւոր
որ կը հաստատէ (150 Ն. Ք.) Հայ-Պարբեւ* հարսուրթիւնը:
Արշակ Հայաստանի կը միացնէ Ասրպասականը*, Մի-
ջագետքը, Սեւ ու Կասպից ծովեզուն միջեւ սարածուած
երկիրն մինչեւ Կովկասեան* շեռները: Ասով կը կազմէ
ահագին Հայ-Պարբեւ Տերութիւն մը որ պիտի դիմադրէր
Սելեւկեանց յարձակումներուն:

Վաղարշակ երբ Հայաստան կը մտնէ, Բագարուս իշ-
խանն իր զօրքերով կը դիմաւորէ զայն ու անոր գլուխը
կը դնէ Հայկազնեան վերջին քաղաւորներէ մնացած քաղը:

Սելեւկեան հպատակները սիրով
Պարթիւղիկեա չհնազանդեցան Վաղարշակի, այլ ընդ-
վզեցան ու Կապադովկիոյ Մորփիլոյի-
կեա իշխանին առաջնորդութեամբ յարձակեցան անոր
վրայ. Պատերազմը տեղի կ'ունենայ Փոքր Հայոց մէջ:

Մորփիւղիկէս քաջ էր, խուճը մը թիկնապահներով ճան-
բայ բացաւ և հասաւ մինչև Վաղարշակի ամրացած տեղը։
Սակայն Հայ իշխանները կը փրկեն իրենց թագաւորին
կեանքը՝ սպաննելով Մորփիւղիկէսն ու հալածելով ա-
նոր զօրքերը։



ՎԱՂԱՐՇԱԿ

Հայոց պատմութիւնն
աղիւտներու վրայ
Վաղարշակ իր աթոռը կը
հաստատէ Մծրիկն* և այնուհետեւ
կը փափաքի, կը հետամտի ճանչ-
նալ Հայոց անցեալը։ Եւ որով-
հետև Հայաստանի մէջ ստոյգ գրուածք մը չի գտնուիր՝

Ասորի Մար Արաւ գիտնականը նամակով իր եղբորը կը
ըրկէ՝ խնդրելով որ գիտնականը Նինուէի գրատունը
հետազօտէ։ Մար Արաւ կը գտնէ Վաղարշակին փափա-
քածն ու կը բերէ Հայաստան։ Վաղարշակ կը հրամայէ
այլ գիրքը պահել իր գանձարանը և անկէ զանազան
կտորներ փորել կուտայ արձաններու վրայ։

Վաղարշակ Հայոց անցեալը
Վաղարշակի ճանչնալէն ետք Հայաստանի մէջ
բարեկարգութիւններ կարգ ու կանոն կը հաստատէ՝
հետեւելով Հայոց հին սովորու-
թեանց ու շատ բան ալ փոխ առնելով աւելի քաղա-
քակրթուած ազգերէ։

Հայաստանի սահմանադրուիւնները կը կարգէ ասինա-
նապահ բղեշխներ—կուսակալներ։ Քաղաքներու մէջ կը
նշանակէ դասաւորներ, Բագրատ իշխանին թագաւորնե-
րուն գլուխը թագ դնելու և բանակին հրամանատար
ըլլալու իրաւունքը կուտայ. ասով Բագրատունիի կոչ-
ուեցան «Թագադիր-Ասպետ»։ Հայկայ սերնդէն Խորխո-
րունիները կ'ընտրէ թիկնապահներ. անոնց գլխաւորը
կը կոչուէր Մաղիսագ։ Կանանոցի վերակացութիւնն ալ
յանձնէ Հայկայ սերնդին. ասոնց գլխաւորը կը կոչուէր
«Հայր-Մարդպետ»։ Հայր-Մարդպետը նաև Արքունի կալ-
ուածներու վերին հսկողն ու արքունի գանձապետն էր։
Հայր-Մարդպետին իշխանութեան ենթարկուած էին
«Մարդպետներ»ն որ արքունի կալուածներու հսկողն ու
թագաւորական տուրքերու հաւաքիչն էին։ Մուրացանաց
նախարարութիւնը կ'անուանէ Թագաւորի երկրորդը. Վա-
հագնի ցեղին կը շնորհէ Քրմապետարխան. Արծրունիի ալ
որսի ատեն արծիւ պիտի տանէին թագաւորին առջևէն,
այսինքն՝ Արծուենչան դրօշակակիրներ էին։
Ունէր երկու յուշարար. ասոնցմէ մէկը պիտի յիշե-
ցնէր բարի գործերը, միւսը՝ պատիժները։

Արքունի տան մէջ ալ կը մտցնէ կարգ ու կանոն: Որովհետեւ շատ որդի ունէր, կարգադրեց որ միայն անդրանիկը՝ քաղաքացու ընկերներն քով, մնացածներն ալ ընակին Հաշնէնից՝ գաւառը:

Վաղարշակի կը յաջորդէ իր անդրանիկ Արեակ որդին՝ Արշակ Ա. որ հօրն ընթացքին հետեւելով՝ իր երկիրներն ընդարձակեց: Պոնտացոյնց՝ հետ կը պատերազմի ու կը յաղթէ անոնց և ի նշան յաղթութեան Սեւ ծովու եզերքը կը կանգնէ արձան մը զոր երկար ատեն պաշտեցին Պոնտացիք: Բայց Արշակի որդի Արապչէսի դէմ մղած պատերազմի ատեն ծովը կը նետեն զայն:

Գ Ա Ս

Թելադրութեամբ

Երուանդեան Տիգրանի յաջորդող քաղաւորներն ինչո՞ւ չկրցան պաշտպանել Հայասանը. — Ի՞նչ եղան. — Հայասան ե՞րբ խռովութեան մասնուեցաւ. — Հետեւեա՞նք. — Այն ատեն ո՞վ փայլեցաւ եւ ո՞ւր. — Արեակ որո՞նց հետ իր երկիրն ազատեց ու որո՞նց ձեռնեց. — Արեակուցի՞ք ո՞ւր կէ ստեղծ եղ. — Արեակ Մեծ ի՞նչ քաւ. — Ո՞րն է Պարթեւ-Արեակուցեաց մայրաքաղաքը. — Պարթեւներն իրենց հպատակներուն հետ ի՞նչպէս կը վարուէին. — Սելեւկեանները. — Ասոր հետեւանցն ի՞նչ եղաւ. — Հայոց խնդրանքով Արեակ Մեծ ի՞նչ քաւ ու ե՞րբ. — Ո՞վ է Հայ-Պարթեւաց հիմնադիրը. — Վաղարշակ ո՞ր երկիրները Հայասանի միացուց. — Ասով ի՞նչ կազմեց եւ ինչո՞ւ. — Ո՞վ Վաղարշակը դիմաւորեց եւ ի՞նչ քաւ. — Որո՞նք սիրով չհպատակեցան Վաղարշակի

ու միացան Մորփիւղիկեսի. — Ո՞վ էր Մորփիւղիկես. — Ի՞նչ քաւ. — Վաղարշակ որո՞նց ձեռնու ազատեցաւ. — Վաղարշակ իր արուն ո՞ւր հաստեց. — Ի՞նչ անցնալ ուզեց. — Հայասանի մէջ ստոյգ բան մը գտա՞ւ. — Ինչո՞ւ. — Զո՞վ դրկեց իր եղբորն եւ ինչո՞ւ. — Մար Աբաս ի՞նչ գտաւ ու Վաղարշակ ի՞նչ հրամայեց. — Վաղարշակ ինչե՞րո՞ւ հետեւելով՝ ինչե՞ր քաւ. — Ո՞ւր կարգեց սահմանապահ բոլորներ. — Ի՞նչե՞ր հաստեց. — Զո՞վ քաղաքի ու հրամանատար կարգեց. — Բագրատունիք ի՞նչ կոչուեցան. — Զորո՞նք ընտրեց քիկնապան. — Ո՞վ կը կոչուէր Մաղխազ. — Հայր-Մարդպետին պաշտօնն ի՞նչ էր. — Ո՞ւր կէ ստեղծ էր. — Մարդպետներուն պաշտօնն ի՞նչ էր. — Ի՞նչ տուաւ Մուրացանաց ցեղին. — Վահուցեաց. — Արժուցեաց. — Յուշարարներուն պաշտօնն ի՞նչ էր. — Արժուցիքին մէջ ի՞նչ կարգադրութիւն քաւ. — Ո՞վ էր Վաղարշակի յաջորդը. — Որո՞նց հետ պատերազմեցաւ. — Սեւ ծովու եզերքն ի՞նչ կանգնեց. — Պոնտացիք ի՞նչ քաւ յոյ արձանը:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐ ՈՒ ՌԱՄԻԿԱՆԵՐ

Իւրաքանչիւր ցեղ շարունակ պատերազմ մղելով մէկ կամ քանի մը ցեղերու դէմ՝ պիտի կ'զգար իրեն առաջնորդ մը ընտրել, որպէս զի կռիւներն ու պատերազմները վարէ: Վարիչ կ'ընտրէին այնպիսի մէկը որ ցեղին մէջ այնպէս էր իր խելամարտը, անվիհերուքեամբ, փորձառութեամբ ու խելով: Ընդհանրապէս այդ զօրապետը կ'ըլլար սանուշկը: Իսկ եթէ նա հապտեալ ծեր, տկար ըլլար, կամ ուրիշ պատճառներ ըլլային, ցեղի երբեք զօրապետ կ'ընտրէր ուրիշ մը: Այդ ընտրուած զօրապետը նոստապէս սարքերու քիւղն չունէր ցեղի միւս անդամներէն, բայց զօրապետի գիրքն ու կարեւորութիւնը հետզհետէ մեծնալով՝ անիկա կ'սկսէ այնպիսի արտօնութիւններ ու

իրաւունքներ վայելել որ անոնցմէ զուրկ էին ցեղի միւս անդամները: Օր. պատերազմի մէջ առնուած աւարն ու գերիները մեծ մասամբ զբաղակալին, ցեղապետին բաժինն էին: Ասկէ զատ ցեղի անդամները միջև պատահած զանազան վէճերու և կռիւններու ատեն ցեղապետին գիմելով դատաստան ու արդարութիւն կը խնդրէին: Այդպէս զբաղակալը պատերազմները վարելով հանդերձ՝ հետզհետէ կը դառնայ ցեղին դասաւորն ալ:

Բայց որովհետեւ մարդ մը չէր կրնար միւսնոյն ատեն քանի մը պաշտօններ կատարել, ցեղապետը ստիպուած էր իր ցեղին մէջէն օգնականներ ընտրել: Չանոնք կը վարձատրէր իր սեփական հարստութեամբ, պատերազմէն իրեն ինկած բաժիններով ստրուկներով և այլն:

Ցեղապետը մտամբ ասիկայ կ'ընէր ճիշտ անոր համար որ ինք ցեղին մէջ հաւասարիմ շատ կուսակիցներ ունենայ ու իր դիրքն աւելի հաստատուն ու մշտեւ ըլլայ: Երբ ցեղի մէջ դժգոհութիւն ծագէր ցեղապետին դէմ, հաւատարիմ բարեկամներն ու օգնականները չէին թողուր որ ցեղապետը փոխուի ու նոր մը ընտրուի:

Ժամանակի ընթացքին մէջ ցեղապետին այդ օգնականներն իրենց վարձատրութիւնը կ'սկսին ստանալ ո՛չ թէ ցեղապետի սեփական հարստութենէն, այլ արտօնութիւն ու իրաւունք կ'ստանան ցեղապետին նման պատերազմի աւարէն աւելի մեծ բաժին առնել, ինչպէս նաև ցեղապետին միւս իրաւունքներուն ալ կը տիրանան:

Այսպէս ցեղապետն ու իր օգնականները հետզհետէ մէկ կողմէն աւելի կը հարստանան և միւս կողմէ ցեղի միւս անդամները կը զբոս կուրս իրենց իրաւունքներէն, որով ցեղին մէջ կը կողմուէր երկու դասակարգ—Ազնուակալները՝ հարուստ արձօնեալները, և Ռախիկները՝ աղքատ իրաւազուրկները:

Հետզհետէ Այնուակալներն իշխանութիւննին ա՛ւելի կ'ընդարձակեն և կը կոչուին իշխան: Նախ միայն ցեղապետները կը կոչուէին ցեղապետ, բայց յետոյ երբ ցեղը կը մեծնար ու երկիրը կ'ընդարձակէր ցեղապետը կը կոչուէր **Թագաւոր**, իսկ իշխան, նախարար, պաշտօն և այլն անուններով կը կոչուէին թագաւորին սպազակները, օգնականներն ու բարեկամները: Բազմացած ու աճած ցեղն ալ կը դասաւորնար **Ազգ**:

Յ Ա Պ Յ Ա Ռ Ր Ը

Հայրստան կը կառավարուէր Բաւնապետական իշխանութեամբ: Թագաւորը Հայրստանի միահեծան, ինքնիշխան, ինքնակալ էր: Թագաւորին մէն մի հրաւան օրէնք էր, ոչ ոք կրնար փոխել այլ:

օրէնքը: Ամենքն ալ պարտաւոր էին հնազանդել թագաւորին, նոյն իսկ անոր հրամանն ոճիր մըն ալ թելադրէր: Թագաւորն երբեմն կ'ըլլար իրականք:

Թագաւորին անձը սուրբ կը համարուէր: Նախարարներն ու ժողովուրդն որչափ ալ չտիրէին իրենց թագաւորը, դարձեալ ոչ ոք կը դաւաճանէր անոր կեանքին:

Արքունիքը կը կառավարուէր երեք կարգի նկատուաներով: **Առաջին**՝ արքունի կալուածներէն ստացած եկամուտները: **Երկրորդ**՝ նախարարներու վճարած հարկը: **Յերրորդ**՝ վաճառականներէ գանձուած մաքան որ Հաս կը կոչուէր:

Արքունի կալուածները շատ ընդարձակ էին: Երբեմն ամբողջ նահանգներ թագաւորին կը պատկանէին, ինչպէս՝ Արաւստեան ընդարձակ դաշտն ուր և ոչ մէկ նախարարութիւն կար: Թագաւորն ուրիշ շատ կալուածներ ալ ունէր զանազան նախարարներու սահմաններուն մէջ:

Թագաւորները փառայեղ ու մեծափարթամ կեանք մը կը վարէին: Անոնց բոլոր անօթներն ոսկեղէն ու արծաթեղէն էին: Հագուածներն ու զէնքերը զարդարուած էին թանկագին քարերով, մարգարտներով և զէնքերը զարդարուած էին թանկեթել բանուածքով: Հարկատներով: Հագուածներն կարուած էին ոսկեթել բանուածքով: Երկար մազեր կը պահէին ու կը կրէին ակնայեռ վարսակալ: Նախարարներն ալ թագաւորին արտօնութեամբ կրնային կրել վարսակալ: Լուր օրեր թագաւորներն իրենց գլուխը կը դնէին խոյր, իսկ սոնական—հանդիսական օրեր՝ Թագ:

Թագաւորը կը հագնէր շապիկ, վրայէն երկար վերարկու մը՝ որ պատմուածան կը կոչուէր: Պատմուածանին վրայէն կը հագնէր ծիրանի ծածկոցը՝ որուն եզերքը գեղազարդուած էր սամուր մարթերով: Պատմուածանին վրայ, մէջքը կը կապէին սկանակուռ, ոսկեզարդ գօտի մը, ուրկէ կը կախէին գեղազարդ դաշններ:

Թագաւորին կոշիկները կ'սրմիր կ'ըլլային. ուրիշ ոչ ոք իրաւունք ունէր այդ գունով կոշիկներ հագնելու: Միայն թագաւորին արտօնութեամբ ու և է նախարար մէկ ոտքը միայն կարմիր կոշիկ կը հագնէր, ինչպէս նաև թագաւորապետը ոսկի բաժակ և կամ ուրիշ անօթ գործածել:

Թագաւորին վրանն ալ կարմիր կ'ըլլար: Վրանին վերև կը փայլէր ոսկի կամ արծաթէ արծիւն որ Հայոց քագաւորին զինանակն էր:

Հայոց թագաւորներն ոսկիէ ու արծաթէ դրամներ կ'սրէին կ'ուտային: Ասոնց մէկ կողմը թագաւորին պատկերը կ'ըլլար, միւս կողմն ալ՝ արքունի զինանշանը:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ, ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՈՒԺԸ

Հայաստան լեռնոտ երկիր մըն է որ զանազան լեռնագոտիներով բաժնուած է անկախ գաւառներու: Այս գաւառներէն իւրաքանչիւրն առանձին ինքնազուխ իշխանութիւն մըն էր որ կը կոչուէր Նախարարութիւն, իշխանն ալ՝ Նախարար:

Ինչպէս որ թագաւորն ամբողջ Հայաստանի մէջ, նոյնպէս մէնմի Նախարար իր գաւառին մէջ բացարձակ իշխան էր:

Նախարարներն իրենց հարստութեան ու վայելած դիրքին համեմատ կը բաժնուէին երկու կարգի. 1. Առաջիններ 2. Կրտսերներ: Այս երկու կարգի նախարարներն ալ թագաւորին հպատակ—ծառայման էին որ խաղաղութեան ատեն որոշ տուրք մը կը վճարէին և ի դէպ պատերազմի զորքով կ'օգնէին թագաւորին:

Նախարարները զանազան աստիճաններու բաժնուած էին, ինչպէս Տանուսեր=Նահապետ, Իշխան, Ասպետ, Սեպուռ և թագաւորին պալատին մէջ անոնցմէ իւրաքանչիւրն իրեն յատուկ տեղը=բարձն ունէր: Բարձրաստիճանները կը նստէին դահլիճին վերի կողմը, իսկ ստորինները՝ աւելի ցած:

Այս բարձրուն թիւը երբեմն կը հասնէր 400ի: Թագաւորը կրնար պարագային համաձայն բարձրուն տեղը փոխել:

Նախարարներէն շատերն Արքունիքին մէջ վարչական կամ Պալատական պաշտօններ կը վարէին:

Արեւելեան ճիւղ Արքունիքի ընկալեալ սովորութեան համաձայն բազմաթիւ պալատական պաշտօնային կային: Ասոնց գլխաւորներն էին քաղաքիտ-Ասպետը, Հայր-Մարդասպետն ու Մարդասպետը:

Հիմակուան պէս մշտապէս բանակներ չէին պահէր Հայաստանի մէջ: Թագաւորը միայն փոքրիկ զորագունդ մը ունէր որ իբրև թիկնապահ կ'ուղեկցէր իրեն:

Պատերազմի ատեն թէ՛ թագաւորն և թէ՛ նախարարներն իրենց հպատակ ժողովրդէն զօրք կը հաւաքէին ու պատերազմի կ'առաջնորդէին: Զօրքը թողակ չէր ստանար: Անոր ծախքերը կը հայթայթուէին մասամբ մը արքունի գանձէն, մասամբ մըն ալ պատերազմի ատեն յափշտակուած աւարէն ու կողպուտէն:

Երբեմն օտարներէն ալ վարձակ զօրք կը հաւաքէին:

Հայ զօրաբանակը կը բաժնուէր երեք կարգի. 1. Սպառազէն հեծելազօրք. 2. Թիքեալակն հեծելազօրք. 3. Հետիոտն զօրքը: Սպառազէն հեծելազօրքին թէ՛ ձիերն և թէ՛ զինւորներն երկաթ զրահներով ծած-

կուած էին: Գլուխին կը դնէին սաղաւարտ և զէնքերնին էին սեգ, սուր, վահան:



ՍՊԱՌԱՋԻՆ ՀՆՍՆԱՋՐԻ

Հետիոտն զօրքը կը կուուէր նետով ու աղեղով: Թագաւորն ու նախարարները ձիու վրայ նստած՝ կը կռուէին:

Հայերը սովորաբար իրենց զէնքերը կը քուլաւորէին. սւստի իրենց հարուածները մահացու էին:

Հայ աղեղնուորները նշանաւոր էին իբրև ճարտար նետածիգ. իրենց նետերը շատ հեռու կը թռչէին և դուռ ուրեք կը վրիպէին նպատակէն:

Թագաւորներն ու նախարարները քաղաքներուն մէջ ունեցած իրենց հոյակապ պալատներէն ու սպարանքներէն զատ, երկրին զանաւան կողմերը բազմաթիւ բերդեր ու ամրոցներ ալ ունէին: Չըջապատուած գեղեցիկ պարտէզներով ու պատկերներով. Այդ բերդերն ու ամրոցները պատերազմի ատեն երկրին պաշտպանութեան կը ծառայէին և խաղաղութեան ատեն եղանակին համեմատ թագաւորներն ու նախարարները հոն կը բնակէին:

Արքունի ու նախարարական գանձերն այդ բերդերուն և ամրոցներուն մէջ կը պահուէին և հոն կը թաղուէին թագաւորներն ու նախարարները:

12. ԱՐՏԱՇԷՍ Ա. ԱՇԽԱՐՀԱԿԱԼ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Սահմանք քաջաց՝ զէնք իւրեանց:»

Պարթև-Արշակունիները թէև Առաջնութեան խնդիր հետզհետէ բազմաթիւ երկիրներու տէր դարձած էին, բայց ասոնցմէ իւրաքանչիւրն ունէր իր առանձին քազաւորը: Այդ թագաւորներու մէջ առաջին տեղը կը զբաւէր Պարթեաստանի քազաւորութիւնը, իսկ Հայաստանի երկրորդ տեղը:

Վաղարշակի թոռն Արտաշէս Ա. որ հպարտ ու պատերազմասէր թագաւոր մըն էր՝ այն ինչ իր Արշակ հօր գահը նստած էր, կը փափաքի քազաւորներու քազաւոր դասալ, այսինքն՝ Պարթև թագաւորներէն խել Առաջնութեան պատիւը: Ուստի կը յարձակի իր ազգական Արշակ թագաւորին վրայ, կը յափշտակէ թէ՛ Առաջնութիւնն և թէ՛ դրամ կտրելու իրաւունքը: Պարսկաստանի մէջ արքունիք ալ կը հաստատէ ու իր պատկերով հոն դրամ կը կտրէ: Այս իրաւունքն առաջ միայն Պարթեաց թագաւորին յատուկ է:

Արտաշէս այս յաջողութիւններ հայերը Պոնտոսի թիւններէն քաջալիերուած՝ կ'որոշէ զինակից արշաւել դէպ ի արեւմուտք՝ նուաճելու համար Փոփր Ասիոյ փոփր ազգերն* ու մօտաւոր Յոյները*, և յետոյ ծովուն վրայ նաւարկելով՝ հասնիլ հեռաւոր Յունաստան* և տիրել այդ երկրին:

Իր մտադրութիւնն իրագործելու համար՝ նախ իր Տիգրան որդին Արարատեան երկրին վրայ թագաւոր կը կարգէ, յետոյ Հայաստանի հիւսիսային երկիրները՝ Պոնտոս ու Կովկաս կը յանձնէ իր դաշնակից Միհրդատ Եւպատր Պոնտացի իշխանին:



ԱՐՏԱՇԷՍ Ա. ՊԱՏԵՐԱՅՄԻ ԳԱՇՏԸ

Արտաշէսի զօրեերուն հաջ իր հպատակ ժողովուրդներէն անթիւ, անհամար զօրք կը հաւաքէ և կ'արշաւէ դէպ ի արեւմուտք: Արտաշէսի զօրքերն այնքան շատ էին որ

եթէ մէն մի զինուոր միեւնոյն տեղը քար մը նետէր, ահագին բուր մը կը ձեւանար: Եւ երբ անոնք դետէ մը ջուր խմէին, գետը ցամքելու չափ կը պակսէր: Կը պատմեն թէ երբ զօրքերը մէյմէկ նետ արձակէին, արեւը կը խաւարէր:

Արտաշէս սր տեղէն որ անցնէր, բոլոր թագաւորներն ահ ու սարսափի մատնուած՝ կը դիմաւորէին թանկագին ընծաներով ու իրենց հպատակութիւնը կը յայտնէին:

Արտաշէս տիրելով Փոքր Ասիոյ

Սահմանք քաղաք՝ շատ երկիրներուն՝ այն տեղերէն՝ զեւր իւրեանց պղնձէ ձուլուած կամ ոսկեզօծ շատ կուռֆեր կը դրկէ Արմաշիր և կը

հրամայէ զանոնք կանգնել այլ և այլ մեհեաններու մէջ, ինչպէս նաև յունական քանդակներ և զանազան անօթներ կը դրկէ Հայաստան:

Այս Պարթև-Արշակունի աշխարհակալը վերջապէս կը հասնի Ծովուն եզերքն ու իր նաւերով կ'անցնի Ծովուն միւս ափը՝ Յունաստան: Հոն շատ հարուստ քաղաքներ, միծ ու փոքր գեղեր աւերելէ, քանդելէ ետք բազմաթիւ յունական կուռֆեր ալ Հայաստան կը դրկէ: Անոնք ալ զետեղուեցան Հայոց աստուածներու քովիկն ու անոնց հետ նոյնացան:

Ահ ու սարսափ ազդող

Հռովմայեցւոց առաջին Արտաշէսն երբ կը պատրաստուէր ալ աւելի հեռուն՝ մինչև Հռոմ՝ երթալ, խորամանկ

Հռովմայեցիք՝ փոխանակ պատերազմելու, առատ ոսկիներով կը կաշառեն անոր զօրավարներն ու անոնց ձեռքով սպաննել կուտան այս յանդուզն քաղաւորը:

Հպարտ ու փառասէր թագաւորը մեռնելու ատեն հետեւեալը կը բացագանչէ. «Աւաղ փառացս անցաւորի»:

Դ Ա Ս

Թելադրութամբ

Արեակունիի հետզհետէ ինչերո՞ւ տիրած էին. — Անոնցմէ իւրաքանչիւրն ի՞նչ ուներ. — Թագաւորութեանց մեջ ո՞րն էր առաջինը. — Երկրորդը. — Ո՞վ էր Արսաշէս Ա. եւ ի՞նչ փառասիրութեամբ տոգորուած էր. — Ասոր համար ի՞նչ բռաւ. — Պարսկաստանի մեջ ի՞նչ հաստատեց եւ ի՞նչ կտրեց. — Այդ իրաւունքը նախ որո՞ւն էր. — Ո՞րեկէ քաղաքուած՝ ի՞նչ կ'որոշէր. — Արսաշէս վինչեւ ո՞ւր նուանել կը խորհէր. — Իր մտադրութիւնն իրագործելու համար ինչե՞ր բռաւ. — Ինչպէ՞ս եւ ո՞ւր կ'արեւակէր. — Արսաշէսի զօրքերուն բազմութեան համար ի՞նչեւ կը պատկէր. — Որո՞նք ահ ու սարսափի մատնուեցան եւ ինչե՞ր բռին. — Ի՞նչ կը նշանակէ «Սահմանք քաղաք՝ զեւր իւրեանց». — Արսաշէս ո՞ւր տիրեց եւ անկէ ինչե՞ր դրկեց Հայաստան. — Մինչեւ ո՞ւր կը հասնի. — Արսաշէս Յունաստանի մեջ ի՞նչեւ բռաւ եւ ինչե՞ր դրկեց Հայաստան. — Այս կուռֆերն ո՞ւր, որո՞նց բով զետեղուեցան ու նոյնացան անոնց հետ. — Արսաշէս ի՞նչպէս մեռաւ ու որո՞նց դաւադրութեամբ. — Ինչո՞ւ. — Ո՞վ բացագանչեց «Աւաղ փառացս անցաւորի». — Ի՞նչ կը նշանակէ:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Ս

ԱՆՕԹՆԵՐ, ԶՈՒՐ ԵՌԱՅՆԵՆԸ

Նախապատմական մարդոց գործիքներուն մէջ Անթրոպոլոգիան շատ անհրաժեշտ էին: Նախնական ամանները ծառի հատուկ ու լայն տերեւերէ ու ճիւղերէ հիւտուած կողմերէն էին, և այլն: Երբ մարդ հնարեց իր առաջին քարէ ու ոսկորէ դանակը, կասկէնը, մուրճն և այլն, կատարելագործեց նաև իր ամանները: Սկսած էր

փայտե ու աւելի դիւրատաշ քարերէ զանազան ձեւով ամաններ շինել կրակ արտադրելէն ետքն ալ աշխատեցաւ այնպիսի ամաններ պատրաստել որ կրակէն չայրէինն Ծառ ետքն է որ մարդ կաւը քրծեց ջուրն եռացուց ու կերակուր եփեց, Նախնական մարդիկ իրենց սրտացածէն աւելորդ միւր կամ ձուկը յաջորդ օրուան պահելու գաղտնիքը չէին գիտեր. հում հում կ'ուտէին և մնացածը հոտելով՝ ուտել անկարելի էր, և եթէ ուտէին, կը հիւանդանայինն Ծառ ետքն է որ մարդիկ պատահմամբ նկատեցին որ սպորէ կամ՝ քարէ դանակով յօշոտուած միւս երբ արեւու տակ մնայ, կը չորնայ ու համն ալ կ'անուշ նայ: Այս գիւտէն ետք արեւուն տակ չորցուցին միտն ու ձկնեղէններն իբրև պաշար թէ՛ որսորդութեան տանն և թէ ուտելիք չգտնելու պարտայինն:

Մարդիկ յետոյ խորոված կերան միւր, պտուղն ու հատիկները խորովելու համար առանձին ամանի պէտք չի կար, կարելի էր փայտէ շամփուրներով խորովել, կամ ուղղակի կրակի վրայ դնել խորովելիքը և կամ տափակ սալ քարերը կրակի վրայ լաւ տաքցնելէ ետք, անոնց վրայ խորովել: Հացն առաջին անգամ այդ եղանակաւ կը թխէին. կրակի վրայ կը դնէին քարի տափակ կտոր մը և երբ քարը լաւ կը տաքնար, անոր վրայ կը շարէին խմորի տափակցած փոքրիկ գնդակներն և փայտի ծայրով զանոնք այս ու այն կողմը կը դարձը նէին: Յարդ կան ցեղեր որ այդպէս կը թխեն իրենց հացը:

Մարդիկ ջուր եռացուցին այն տանն, երբ կրցան պատրաստել այնպիսի խոր ամաններ որ հնար բլլար կրակի վրայ դնել անվտանգ: Փայտէ ամանը կրակի վրայ դնելով՝ խիզոյն կրնար այրել: Ասով հանդերձ նախնական մարդիկ հնար գտած էին ջուրը տաքցնելու փայտէ ամաններու մէջ: Անոնք կրակի վրայ կը տաքցնէին քարի կտորները և յետոյ կը դնէին զանոնք կիսով չափ ջուրով լեցուած փայտէ ամանի մէջ: Այս գործողութիւնը կրկնելով՝ ջուրն սրոշ աստիճան մը կը տաքնար: Ջուրն եռացուց միայն այն տանն, երբ դուռ կաւը քրծեալ աւիհետք:

Մարդ երբ կողովի մէջ ու է բան կը լուսնար, դիտած էր թէ կողովին կրցած կարմիր հողն անբարխանց է և միւս հողերուն պէս թող չէր տար որ ջուրն իր մէջէն միւս կողմը ծծուրն Հետեւապէս փորձեց ճիւղերէ հիւստուած կողմիկները, զամբիւղներն ու կ'իծոցնէրը պատել ներսէն ու դրսէն կաւի տիղմով և արեւուն դբաւ որ չորնանն: Ետ երբ այդ ամաններուն մէջ ջուր տաքցուց, դիտեց որ ամանի զրոյս փայտեղէն մասը կը վաւեր, կ'օջնչանար, իսկ կաւը կ'եփէր, աւելի լաւ ու դիմացկուն կը դառնար, այսինքն կը քրծուէր, մանաւանդ որ ջուրն ալ այդպիսի ամանի մէջ շատ դիւրին կ'եռար:

Մարդ այսպէս երկու գիւտ հնարեց միանգամայն ու սորվեցաւ կաւէ անբարխանց ու կրակի վրայ դիմացող ամաններ շինել և ջուրն եռացնել:

Երբ մետաղը գտնուեցաւ ու դիպուածով ալ՝ ապակին, մարդիկ սկսան մետաղէ ու ապակիէ ամաններ շինել:

ԿՈՒԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Երբ նախնական մարդոց մէջ դասակարգերու բաժանումներ յաւաջ կուգան — ազնուականն ու ռաւիկ, ազատ ու ստրուկ — մարդիկ իրենց երեւակայութեամբ աստուածներն ալ զանազան կարգի կը բաժնեն, որովհետեւ անոնք կը կարծէին թէ անպատճառ աստուածներու մէջ կան հզօրներն ու տկարները, իշխաններն ու ստորագտեալները:

Ասկէ զատ անոնք կը կարծէին թէ աստուածներն ալ անպատճառ մարդոց նման ամբողջ ընտանիք մը կը կազմեն: Անոնց մէջ կան էրիկ մարդիկ ու կիներ, ծնողքներ, դաւակներ, ազգականներ և այլն:

Այդպիսի երեւակայութեամբ աստուածները զանազան կարգի բաժնէին ետք, մարդիկ կ'սկսին փայտէն, քարէն ու արոյրէն զանազան աստուածներ — կուռքեր շինել ու իրենց ձեռնակերտ կուռքերը պաշտել: Պաշտամունքն այդ ձեւը կ'ուսուցաւ Կուսպաշտութիւն:

Նախապէս այդ կուռքերը շատ կոշտ ու կոպիտ էին, մանաւանդ որ զանոնք զանազան այլանդակ հրէշերու կերպարանքով կը շինէին՝ բոլորովին մարդու նման չըլլալու համար: Օր. կը շինէին այնպիսի հրէշ մը որուն մարմինն ո՛ր և է կենդանւոյ՝ առիւծի, վագրի, ձիու, իսկ գլուխն ու կերպարանքը՝ մարդու նմաներ: Կամ թէ կը շինէին այնպիսի մարդակերպ աստուած մը որ չորս ձեւք կամ չորս ոտք ունենար:

Ժամանակի հոլովմամբ, երբ Քանդակագործութիւնը զարգացաւ, կ'սկսին շատ աւելի գեղեցիկ ու նուրբ կուռքեր շինել: Այդ ժամանակ արդէն կը ջանային կուռքերը գեղեցիկ էրիկ մարդոց ու կանանց պատկերով ու կազմուածքով շինել:

Կուռքեր քանդակելու արուեստը շատ զարգացած էր մանաւանդ Հին Յունաստան ուր հազարաւոր տարի առաջ շինուած մարմարէ կուռքերը մինչև այսօր ալ պահուած են և կան զանազան թանգարաններու մէջ և ընդհանուրին հիացում կ'ազդեն: Այդ կուռքերը հիմա պարզապէս արձան կը կոչուին: Հայերն ալ հին տան իրենց կուռքերն ունէին, սրոնցմէ Անահիտն ու Աստղիկն իրենց գեղեցիկութեամբ նշանաւոր էին:

Մարգիկ Իսկղրան այս կուռքերը կը դնէին բացօթեայ տեղ մը՝ բլրի մը կամ լեռան մը գագաթի վրայ, երբեմն ալ՝ գետին եզերքը կամ անտառին մէջը: Որոշուած ատեն հոն հաւարուելով՝ իրենց պաշտամունքը կը կատարէին և բուրմերու միջոցաւ անոնց պատգամները կը լսէին:

Շատ ետք է որ մարգիկ անոնց յատուկ բնակարաններ կը շինեն որ մենեան կոչուեցան: Այդ մեհեաններու մէջ կը պահէին կուռքերն և հոն կը կատարէին իրենց կրօնական արարողութիւնները: Ժողովուրդը հոն կը բերէր իր պատարագը:

13. Տ Ի Գ Բ Ա Ն Բ. Մ Ե Մ

Յ Ա Ղ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ

Պ Ա Ս Մ Ո Ւ Ա Մ Ք

«Խօսք՝ մեծին, ջուրը՝ պղծիկին:»

Տիգրան Բ. գահին հետ

Տիգրան Բ. Արեւելեան ժառանգած էր հօրը գոռոզութիւնն ու փառասիրութիւնը:

Երբ հօր մահը կը լսէ, իսկոյն կ'անցնի զօրքին գլուխը ու կը յարձակի յոյներուն և զրացի ազգերուն վրայ որոնք արդէն ոտնակոխ կ'ընէին Հայաստանի սահմանները: Անոնց յաղթելէն ետք Տիգրան Հայրենի պաշտամունքը վառ պահել կը ջանայ:

Պարթեաց Արշական թագաւորը լսելով Արտաշէսի մահը՝ կ'ուզէ իր վրէժը լուծել Տիգրանէն ու աւագութիւնը նորէն ետ առնել: Պատերազմը տեղի կ'ունենայ Երասխի ափերուն մօտ, Արշական թագաւորը կ'իյնայ Տիգրանի զինորդներուն ձեռքն ու Ասիոյ գերիշխանութիւնը կը մնայ Տիգրանին:

Այդ միջոցին Սելեւկեանց թագաւորը՝ Անտիոխոս իր եղբորը հետ կը կուռէր թագին համար: Ժողովուրդը ձանձրացած այդ կռիւններէն՝ կը դիմէ Տիգրան Բ.ի: Ասիկա ալ առանց պատերազմի կը տիրէ Ասորոց: Երկրէն կը տարագրէ Անտիոքոսը, և Ասորիքը 22 տարի շարունակ կը կառավարէ:



Տ Ի Գ Բ Ա Ն Բ.

Ասորիքէն ետք Տիգրան կը նուաճէ Փիւնիկիւն և կ'արշաւէ Պաղեսիսը*, Երուսաղէմի* Աղեփսանդիս թագուհին թանկագին ընծայներով կը դիմաւորէ Տիգրանն ու հպատակութիւն կը խոստանայ: Տիգրան Հայաստան կը դառնայ բազմաթիւ հրեայ գերիներով:

Տիգրան իր գերիշխանութիւնը կը տարածէ ամբողջ Արեււտեան Ասիոյ վրայ և ամենքը զայն կը ճանչնային բազաւորներու բազաւոր: Մարտ*, Արարացիք, Ասրպասական*, Վրասան*, Աղունակ*, Բարեղուն, Միջագետք, Կիլիկիա*, Կասպողովկիա հարկատու էին Տիգրան Բ. ի Հայաստան այն միջոցին կայսրութիւն էր:

Տիգրանի դաշնակից Միհրդատ որ Մարտաշէսի մահով բաւական տկարացած էր, Տիգրանի օգնութեամբ նորէն կը զօրանայ ու պատերազմ կը հրատարակէ Հռոմայեցւոց դէմ: Միհրդատ կը տիրէ Փոքր Ասիոյ փոքր տէրութեանց ու զօրք մտցնելով Յունաստանի ամբողջ յոյները կ'ապստամբեցնէ Հռոմի դէմ: Սակայն



ՄԻՒՐՏԱՏ ԵՌՊԱՏՈՐ

Հռոմայեցիք Միհրդատի վրայ կը զրկեն Սիրլա զօրավարն որ անկէ ետ կ'առնէ նուաճած երկիրներուն մեծ մասը և կ'ստիպէ զայն որ ամօթալի հաշտութիւն մը կնքէ (86 Ն. Ք.): Ասոր պայմաններէն մէկն էր իբրև տուգանք վճարել պատերազմի բոլոր ծախսերը:

Սակայն Միհրդատ նորէն զօրք կը ժողվէ ու կրկին պատերազմի

կը ձեռնարկէ Հռոմայեցւոց դէմ: Տիգրան ալ անոր օգնելու համար՝ կը յարձակի Կասպողովկիոյ վրայ և բազմաթիւ զերի կը բերէ Հայաստան:

Հռոմայեցիք այս անգամ

Հայերն ու Հռոմայեցիք դէմ դիմաց Միհրդատի ու Տիգրանի դէմ կը զրկեն Լուկուլլոսը: Քանի մը ճակատամարտներէ ետք Միհրդատ Մակրոսի* մօտ կը յաղթուի և կը փախչի (70 Ն. Ք.) Հա-

յաստան Տիգրանի քով: Տիգրան զայրացած՝ չ'ուզեր տեսնել անոր երեսն անգամ, միայն կ'ազատէ զայն թրջնամուտն ձեռքէն: Լուկուլլոսի դէսպանները կու գան և կը պահանջեն որ Տիգրան իրենց յանձնէ Միհրդատը: Տիգրան կը մերժէ և կը պատրաստուի զէնքով չափուելու Հռոմայեցւոց հետ:




ՀՌՈՄԵԱԿԱՆ ՁԵՆՔԵՐ

Լուկուլլոս արդէն մտած էր Միջագետք ու պաշարած էր Տիգրանակերտն ուր պահուած էին Տիգրանի զանձերը: Տիգրանի 6,000 ձիաւոր զօրքերը ձեղքելով Լուկուլլոսի բանակը՝ կը մտնեն Տիգրանակերտ ու կ'ազատեն Տիգրանի հարստութեան մէկ մասը:

Տիգրան անեղ բանակով Տիգրան կը խորակէ (200,000) Լուկուլլոսի դէմ տանելու Հռոմայեցիները կ'ելլէ. և տեսնելով անոր սակաւթիւ զօրքը՝ կ'ըսէ. «Եթէ ղեսպան են, շատ են. իսկ եթէ պատերազմող՝ քիչ» Այսպէս հպարտացած՝ անհոգ կը կենայ: Սակայն Լուկուլ-

լու յանկարծ կը յարձակի Հայոց վրայ և մեծ շփոթու-
թիւն կը ձգէ բանակին մէջ: Տիգրան ժամանակ չունե-
նար իր ցրուած բանակին կարգապահութիւնը յարգել
տալու: Լուկուլլոս փութով կը պաշարէ Տիգրանակերտը
և քաղքին ֆակի մը գաղթական յոյներու մասնութեամբ
կ'առնէ զայն:



ՀՈՍՏԷԱՎՍՆ ԶԱՄԱՐ—ԱՍՆԱՎԱՏՆՂԻ

Տարի մը ետք պատերազմը նորէն կ'արժարծի Արա-
ծանի գետին ափը: Պատերազմն երկու կողմէն ալ կա-
տաղի էր. այս անգամ Լուկուլլոս կ'ստիպուի նահանջել
դէպ ի Միջագետք ուր կը պաշարէ Մծրին քաղաքը:
Տիգրան նորէն կը նուաճէ իր կորսնցուցած երկիրները:
Միհրդատ ալ քանի մը յաղթութիւններով վերստին կը
տիրէ իր երկիրներուն:

Դ Ա Ս

Թելադուրեամբ

Ո՞վ էր Մեծն Տիգրան Բ. — Գահին հետ ի՞նչ ժա-
ռանգած էր. — Ե՞րբ եւ որո՞նց վրայ յարձակեցաւ . —

Ե՞րբ եւ որո՞ւ յանձնեց Կապադովկիան. — Ո՞ր երկիրն է
Կապադովկիա . — Պարսից Արեւական քաղաւորն ի՞նչ
բաւ եւ ե՞րբ. — Պատերազմն ո՞ւր տեղի ունեցաւ. — Ի՞նչ
եղաւ պատերազմին հետեւանքը. — Այդ միջոցին ո՞վ էր
Ասորոց քաղաւորն եւ ի՞նչ կ'ընէր. — Ասորիներն ին-
չո՞ւ եւ որո՞ւ դիմեցին . — Տիգրան ի՞նչ բաւ Ասորիքի
մէջ. — Այնուհետեւ ո՞ր երկիրները նուանեց. — Ո՞վ քան-
կագին ընծայեցրով դիմաւորեց Տիգրանը. — Տիգրան զո-
րո՞նք Հայասան բերաւ . — Ո՞ր երկիրները Տիգրան Բ.ի
գերիշխանութեան տակ էին . — Հայասան ե՞րբ կայս-
րութիւն էր . — Ո՞վ էր Միհրդատ եւ Տիգրանի օգնու-
թեամբ որո՞նց դիմ պատերազմ հրատարակեց . — Միհր-
դատ ո՞ր երկիրներուն տիրեց եւ զորո՞նք ապստամբեցուց
Հռոմի դէմ . — Հռոմայեցիք զո՞վ զրկեցին Միհրդատի
վրայ . — Միլլա ինչե՞ր էտ առաւ . — Միհրդատ ինչե՞ր
կնէր եւ ե՞րբ. — Միհրդատ հանդարտ նստաւ. — Ո՞վ օգ-
նեց Միհրդատի. — Հռոմայեցիք զո՞վ զրկեցին Միհրդատի
ու Տիգրանի վրայ. — Միհրդատ ո՞ւր յաղթուեցաւ. —
Ո՞ւր է Ամիսոս . — Միհրդատ ո՞ւր փախաւ . — Տիգրան
ի՞նչպէս վարուեցաւ յաղթուողին հետ . — Լուկուլլոս
ալ զորո՞նք զրկեց Տիգրանի եւ ի՞նչ պահանջեց . — Տիգ-
րան ի՞նչ պատասխանեց . — Լուկուլլոս ո՞ւր մտած էր. —
Տիգրան ո՞ւր պահած էր իր զանձերը. — Տիգրանի զօ-
րերն ի՞նչպէս ազատեցին արժուի գանձերը. — Տիգրան
Բ.ի հպարտութեան օրինակ մը կրնա՞ք տալ . — Ասոր հե-
տեւանքն ի՞նչ եղաւ. — Լուկուլլոս որո՞նց մասնութեամբ
առաւ Տիգրանակերտը . — Ե՞րբ եւ ո՞ւր սկսաւ անեղ
նակասամարտը . — Լուկուլլոս ո՞ւր նահանջեց եւ ո՞ր
բաղաբը պաշարեց . — Տիգրան ո՞ր երկիրները նուանեց.
— Միհրդատ ի՞նչպէս տիրեց իր երկիրներուն:

ՏԻԳՐԱՆ Բ.Ի ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

Այդ ձախողութեան լուրն առնելու
Բաձնէ որ յիշես լով՝ Հոռոմ կը սարսափի ու Տիգրանի
դէմ կը շրջէ Պոմպէոս զօրավարը :
Պոմպէոս կը խորտակէ Միհրդատի զօրութիւնն Եփրատի
ափերուն մօտ : Այնուհետև Միհրդատ կը խորհի Կոլկիանի
Ժողովուրդներու օգնութեամբ Եւրոպա անցնիլ ու Հոռոմը
Հոռոմի դուռներուն փով ջախջախել, բայց իր Փառնակ
հարազատ որդին դաւաճանելով իրեն՝ անձնապաշտ
կ'ըլայ :



ՊՈՄՊԵՈՍ



ՏԻԳՐԱՆ Բ.Ի ԴԵՄԵՐ

Պոմպէոս այնուհետև իր զէնքերը կ'ուղղէ Տիգրանի
դէմ : Հայաստանի մէջ Պոմպէոսի կը միանայ Տիգրանի
հարազատ որդին՝ Կրսանէն Տիգրան որ արդէն դաւաճա-
նելով հօրը՝ միացած էր Պարթեւաց թագաւորին հետ :

Տիգրան արտաքին ու ներքին
Տիգրանի զիջումը թշնամիներէ պաշարուած ու իր հա-
րազատ որդւոյն ամօթալի դաւաճա-
նութեան համար սրտաբեկ՝ խոհեմութիւն կը համարի
հաշտուիլ Հռոմայեցւոց հետ : Անձամբ կը դիմէ Պոմպէոսի
բանակն և արժանաւոր պատուով կ'ընդունուի :

Հռոմայեցւոց հետ կնքած հաշտութեամբ Տիգրան
կը հրաժարէր Փոփր Ասիոյ մեջ նուաճած երկիրներէն
ու կը թողուր անոնց . իրեն մնացին միայն Հայաստան
ու Միջագետք : Կրտսեր Տիգրան որ կ'ուզէր յափշտակել
ու Միջագետք : Կրտսեր Տիգրան որ կ'ուզէր յափշտակել
թագը հարազատ հօր գլխէն՝ այս դաշինքէն գոհ չմնաց :
Պոմպէոս տեղեկանալով որ Կրտսերն Տիգրան գաղտնի
դաշնակցութեան մէջ է Պարթեւաց թագաւորին հետ՝
չլթայակապ հետը Հոռոմ կը տանի : Հայրադաւ որդին
Հայոց թագին փոխարէն կը կրէ Հոռոմի շորայները :

Երբ Պոմպէոս հեռացած էր, Տիգ-
րան կը խորհի ետ առնել իր կորսնցու-
ցած երկիրները . ուստի կը հաշտուի ու
կ'ընդունայ կ'ըլլայ Պարթեւաց հետ՝ Ա-
ռաջնութեան—Նախագահութեան պատիւն անոնց թա-
գաւորին ետ դարձնելով : Այդ միջոցին Հոռոմի եռա-
պետները Հռոմէական աշխարհի կառավարութիւնը մէ-
ջերնին բաժնած էին . Ասիան բաժին ինկած էր Կրաստ-
սի : Սուրեն Պարթեւ ասպետը գլուխն անցած Պարթե-
ւաց ու Հայոց զօրքին՝ Խառակն մօտ կը խորտակէ ու
կը հալածէ Հռոմէական լեգէոնները :

Երբ Սուրեն Պարթեւի հրաւերով Կրաստոս հաշտու-
թեան կուգար, ճամբայն խռովութիւն կը ծագի և Պար-
թեւ պատգամաւորները կ'սպաննեն Կրաստոսը . Հռոմայեցի
բանակը ցիրուցան եղաւ : Այդ միջոցին Պարթեւաց թա-
գաւորին որդին՝ Բակուր կ'ամուսնանար Տիգրանի աղջ-

կան հետ: Սուրէն հարուստ աւարներու հետ սպաննուած
Կրասոսի գլուխն ընծայ կը զրկէ Հայոց արքունիքը:

Հոռոմայեցիք այս անգամ կը զրկեն
Երկու Հայ իրենց եռապետներէն մէկը՝ Կասիոսը: Տիգ-
առիւծներ րան ծերացած էր. Հայոց ու Պարթեւաց
դաշնակից բանակը կը յանձնէ Բարզափրան
Ռշտունի նախարարին: Ասիկայ կը յառաջանայ մինչև
Անսիոյ ու կը պաշարէ Կասիոսն որ աղաւտեցաւ Կիլիկիոյ
հիւսպասոս* Կիլիկերոնի օգնութեամբ: Բարզափրան կը
յաղթէ Հոռոմայեցւոց, կրկին կը նուաճէ Ասորիքն ու
Փիւնիկիէն և յառաջ կը խաղայ մինչև Պաղեստին: Գնէ
Գնունի զօրավարին ձեռքով. կը տիրէ Երուսաղէմի և
բազմաթիւ գերիներով ու աւարով Հայաստան կը
դառնայ:

Տիգրան արդէն ծերացած և ուժասպառ՝ 53 տար-
ուան թագաւորութենէն հաք կը մեռնի (36 Ն. Բ.):

Դ Ա Ս

Թելադրութեամբ

Ի՞նչ կը նշանակէ «Բաժնէ որ սիրես». — Հոռոմ ին-
չո՞ւ եւ որո՞ւ դէմ կը զրկէ Պոմպէոսը. — Ո՞վ եւ ո՞ւր
խորտակեց Միհրդատի գօրութիւնը. — Միհրդատ ի՞նչ խոր-
հեցաւ. — Ո՞վ արգելք եղաւ Միհրդատի այս յանդուզն
խորհրդին. — Պոմպէոս այնուհետեւ ի՞ր զենքերն որո՞ւն
դէմ ուղղեց. — Ո՞վ դաւաճանեց Տիգրան Բ.ի. — Կրսսերն
Տիգրան ուրի՞ց անգամ որո՞ւն հետ միացած էր. — Տիգրան
Բ. ինչո՞ք սրտաբէկ էր եւ ի՞նչ բրաւ. — Պոմպէոս ի՞նչ-
պէս եւ ո՞ւր ընդունեց Տիգրանը. — Ի՞նչ եղաւ հաւ-

տուքեան հետեւանքը. — Կրսսերն Տիգրան գոն մեա՞ց այս
դաշինէն, ինչո՞ւ. — Պոմպէոս ի՞նչ բրաւ Կրսսերն Տիգ-
րանը. — Հայադաւ որդին ի՞նչ պատիժ կրեց. — Տիգրան
Բ. ի՞նչպէս վրէժ լուծեց. — Այդ միջոցին որո՞նք Հոռոմ-
ական աշխարհը մեղերնին բաժնած էին. — Կրասոսի
ի՞նչ բաժին ինկած էր. — Սուրէն Պարթեւ ո՞ր գօրեւով
ո՞ւր եւ որո՞ւ յաղթեց. — Ի՞նչպէս սպաննուեցաւ Կր-
ասոս. — Ո՞վ էր Բակուր եւ որո՞ւ հետ կ'ամուսնացար. —
Սուրէն ի՞նչ ընծայ զրկեց Հայոց արեւունիքը. — Ո՞վ էր
Կասիոս. — Տիգրան որո՞ւ յանձնեց Հայ եւ Պարթեւ բա-
նակը. — Բարզափրան մինչեւ ո՞ւր յառաջացաւ. — Կ-
ասիոս որո՞ւ շնորհիւ ազատեցաւ. — Բարզափրան ո՞ր եր-
կրները նուաճեց եւ մինչեւ ո՞ւր յառաջացաւ. — Ո՞վ
սիրեց Երուսաղէմի եւ ի՞նչ բրաւ. — Տիգրան Բ. քանի՞
տարի թագաւորեց. — Ե՞րբ մեռաւ:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ


Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Մ Ե Ծ Ե Տ Ի Գ Ր Ա Ն Բ. Ի. Օ Ր Ո Վ.

Մեծն Տիգրան երբ ժառանգեց Հայաստանը, Պարթեւները շատ
հողեր խլած էին: Տիգրան Բ. կը միացնէ Հայաստանի մասերը, Պար-
թեւներն ետ կը մղէ, կ'արշաւէ Պարսկաստանի խորերն ու նոր երկր-
ներ կը խլէ:

Տիգրան Բ. Հայաստանն Ասիոյ մէջ կը բարձրացնէ այն առաջ-
նակարգ գերքին որ Աքեմենեան—Հին Պարսից ինքնակալութենէն առ-
ջած էր Սելեւկեանց և այս վերջիններէն՝ Պարթեւ-Արշակունիներու:

Տիգրան Բ. անխնայ կը նուաճէ աջ ու ձախ Սարպատական ու
Կորդուաց Աշխարհն իբրև հարկատու թագաւորութիւններ կ'ենթար-
կուին Հայաստանի Նիւուէի թագաւորութիւնն ու Միջագետքի մեծ
մասը Հայոց ձեռքն էին: Տիգրան Երեսնամեայ կը յանձնէ Արարացի
Քաղթական ցեղի մը, Այնուհետև Տիգրան կ'անցնի Եփրատի միւս
կողմը, կը գրաւէ Կասպարովկան, կը նուաճէ Արեւելեան Կիլիկիան,
Հիւսիսային Ասորիքը, Փիւնիկիէի մեծ մասն և կը հասնի Լըէից թա-
գաւորութեան սահմաններն ու սպառնական դիրք կը բռնէ հան-

Բան մը չէր պակսեր Տիգրանի: Ունէր քանի մը մայրաքաղաք, որոնցմէ մէկն էր Անտիոք: Ասոր հրամանին կը հնազանդէին զանազան ազգեր ու լեզուներ: Կարծես վերածնուած էր Նինուէի թագաւորնէն՝ Սաղմանասարի ու Սեմեմետիսի ժամանակը: Կիլիկիոյ ու Սուրիոյ ծովափը հաւաքած էր կէս միլիոնէ աւելի բաղկացած բանակ մը՝ Կորդուաց, Ասիարեանի, Ասորեսամի, Կիլիկիոյ, Կապադովկիոյ բնա-



ՏԻԳՐԱՆ Բ.Ի ՅԱՂՔԱՅԱՆ ԹԱՓՈՐԸ

կիլները, մանաւանդ Յոյն ու կես Յոյն քաղաքացիները ստիպուած էին գաղթել Տիգրանի ցոյց տուած քաղաքները, մասնաւորապէս իբր նոր շինել տուած քաղաքը՝ Տիգրանակիքս:

Տիգրանակիքս հիմնուած էր Տիգրիսի աջ ափը, Միջագետքի սահմանները և 50 մեզր բարձրութեամբ պատերով, որ սքանչելի պատարով, սյգիներով ու ծառատաններով դարձաւ Նինուէի ու Բուբլոնի նման քաղաք մը:

Տիգրան Պարսից թագաւոր Գարեհի ու Քսերքէսի նման կը կրէր ծիրանի բաճկոն, ծիրանի շապիկ, երկար ու լայն վարտիկ, բարձր ապարօշ ու թագաւորական վարսակալ: Չորս թագաւորներ կ'ուղեկցէին իրեն իբրև թիկնապաշ:

14. Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ Ա.

Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Մ Ք

«Հարուսներուն նոխարիներ, դիցազանց փառքը, քաղաւորներուն մեծ վայելչութիւնը կը վերջացան Աս հանգիստը:»

Տիգրան Բ.Ի որդին Արսաւոր ծրագիր Հռոմայեցիները յարելու թիւնն ունէր, ոչ ալ անոր քաջութիւնը, այլ դրասէր ու գրաւէտ էր: Հռոմայեցի Անտոնինոս զօրավարին հետ հաշտութիւն կը կնքէ ու կը խոստանայ անոր օգնել Պարթեաց դէմ: Սակայն իր խոստումը չի կատարեր ու խարէութեամբ Հռոմի լէգէոնները դեգերել կու տայ անձանօթ, անել ճամբայներ, մինչև որ պատեհ առիթ մը գտնելով՝ կը հեռանայ Անտոնինոսի քովէն: Հռոմայեցի զօրավարն որ Երասիս գետէն անցնելու ատեն 24,000 զօրք կորսնցուցած էր՝ իր ջախջախած բանակով հազիւ Միջագետք կը հասնի: Անտոնինոս կը խորհի վրէժ լուծել:

Հայ զօրքին ստիպմամբ Արհաւակազն զաւատաւոր կողմասեան ցեղերէն ճանուարիները զօրք կը ժողովէ ու Միջագետքէն կը փախցնէ Հռոմայեցիները: Անտոնինոս ասկէ ալ աւելի զայրացած՝ Արտաւազդի վրայ կը

յարձակի մեծ բազմութեամբ ու կը յաղթէ անոր: Հայերը կը նահանջեն: Անտոնինոս կը յաջողի. Արտաւազդ խաբուելով Անտոնինոսի խոստումներէն՝ կը փութայ անոր քով: Անտոնինոս Արտաւազդի հետ կը պտտի Հայոց բերդերը՝ անոնց գանձերը յափշտակելու համար: Բայց Հայերը չխաբուեցան: Անտոնինոս Արտաւազդն ոսկի շղթաներով կապած՝ իրրե ընծայ Աղեֆսանդրիա՝ կը տանի Կղեոպասրա թագուհւոյն որ գլխասել կու տայ զայն (31 ն. Բ.):

Արտաւազդէն ետք Արշաւի օրով որ Արտաւազդի ազգականներէն էր՝ Հայաստան ասպարէզ դարձաւ անընդհատ պատերազմներու: Մէկ կողմէն Հռոմէական լէգէոնները, միւս կողմէ Պարթեւական զօրքերը շարունակ կ'ասպատակէին Հայաստանը: Իւրաքանչիւրը կ'աշխատէին Հայաստանի քաղը յանձնել իր կուսակից զօրախորհն:

Գ Ա Ս

Թելադրութեամբ

Ո՞վ էր Տիգրան Բ.ի որդին. — Արտաւազդ Ա. ինչո՞վ օժտուած էր. — Որո՞ւն հետ հաւատարմութիւն կ'ընէր եւ ի՞նչ խոստացաւ. — Իր խոստումը կ'ատարե՞ց. — Ի՞նչպէս հեռացաւ Անտոնինոսի փոխէն. — Ո՞վ եւ ո՞ւր կ'որսնցուց 20,000 զօր. — Անտոնինոս ո՞ւր հազիւ հասաւ. — Անտոնինոս ի՞նչ խորհեցաւ. — Արտաւազդ Կովկասէն ի՞նչ ժողովեց եւ զորո՞նք փախցուց Միջագետքէն. — Անտոնինոս Արտաւազդի վրայ ինչո՞ւ յարձակեցաւ. — Հայերն ի՞նչ

եղան. — Անտոնինոս ի՞նչպէս ձեռք ձգեց Արտաւազդը. — Որո՞ւն հետ պստեցաւ Հայոց բերդերն եւ ինչո՞ւ. — Հայերը խաբուեցա՞ն. — Անտոնինոս ինչո՞ւ եւ ո՞ւր դրկեց Արտաւազդը. — Կղեոպասրա զո՞վ գլխասեց եւ ե՞րբ. — Ի՞նչ կը նշանակէ «Կռուածադիկ», — Արտաւազդէն ետք ի՞նչ եղաւ Հայաստան. — Որո՞նք կ'ասպատակէին Հայաստան. — Իւրաքանչիւրն ինչի՞ կ'աշխատէր:

15. Ա Բ Գ Ա Ր

ԿՐԻՍՏՈՒԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ


Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Մեծ հոգիները գիտեն քե ս'ըչափ երջանիկ է մարդ, երբ բարի ըլլայ:»

Արշամի յաջորդեց Արքար* (3.

Ն. Բ.): Ասոր առաջին տարիները պատրաստութիւն Հռոմի գործակալներն Օգոստոս կայսեր պատկերը բերին ու դրին Հայոց մենեաններուն մէջ: Հերովդէս Հրէից թագաւորն ալ պահանջեց որ իր պատկերը նաև կայսեր պատկերին քով դրուի: Արքար մերժեց այս խնթ պահանջը: Հերովդէս Արքարին վրայ բանակ զրկեց որ սաստիկ յաղթուեցաւ: Արքար կը պատրաստուէր Հռոմի դէմ ապստամբել, ուստի իր մայրաքաղաքը Մծրինէն Եղեւսի* կը փոխադրէ ու քաղաքն կ'ամրացնէ: Հռոմայեցւոց յաղթելու համար Պարթեւաց օգնութեան ալ պէտք ունենալով՝ կ'երթայ Պարթեւաստան որ մեծ յուզման մէջ էր թէ՛ ներքին

խումբութեանց և թէ՛ Պահլաններուն դէմ մղուած պատերազմներու պատճառաւ : Արգար կը հաշտեցնէ հակառակ կուսակցութիւնները :



ՕԳՈՍՏՈՍ ԿԱՏՍԻ

Արգար Պարթեւաստանէն դարձին ծանր հիւանդութեամբ կը վարակուի : Հոռոմայեցիք կը կասկածին այս ճամբորդութենէն : Արգար դեսպաններ կը ղրկէ Ասորոց Հոռոմի գործակալ Մարիոսի՝ իր ճամբորդութեան նպատակն արդարացնելու համար : Մարիոս մեծ պատուով կ'ընդունի դեսպանները :

Երուսաղէմէն անցնելու ատեն Արգար Սիսուար Եղեւսի կը երաւիտէ : Արգարի դեսպանները կը տեսնեն Յիսուսի հրաշքներն ու դարձին կը կը պատմեն Արգարի : Եղեւսի թագաւորն իր Անանէ սուրհանդակին ձեռքով նամակ

ղրկեց ու խնդրեց Յիսուսէն որ զայ իր հիւանդութիւնը բժշկէ : Յիսուս Թովմա առաքեալին միջոցաւ կը պատասխանէ թէ չի կրնար երթալ Արգարի քով, այլ իր համբաւնալէն ետք պիտի ղրկէ իր առաքեալներէն մէկն որ բժշկէ զայն :



ԱՐԳԱՐ ՈՒ ԿՐԻՍՏՈՍԻ ԴԱՍՏԱՌԱՅԸ

Յիսուսի համբարձումէն ետք Թաւայոց Ա. դարձը դիտս առաքեալը կուգայ Միջագետք, կը բժշկէ Արգարն իր հիւանդութեան, կը մկրտէ զայն իր պալատականներուն հետ : Այնուհետև Արգարի խոյրարար՝ պալատական Ադդեմ եպիսկո-

այս ձեռնադրեց ու իրեն փոխանորդ կարգելով՝ քնաց
Հայասան Քրիստոնեութիւնը փարոզելու:

Այսպէս Աբգար առաջին քազաւորն էր որ ընդու-
նեց Քրիստոնեութիւնն և կոչուեցաւ Անդրանիկ հաւա-
սացեալ: Այնուհետև նամակ գրեց Հռոմայեցոց Տիբե-
րիոս կայսեր, Պահլաւունեաց թագաւորին՝ յորդորելով
զանոնք որ չնալածեն Քրիստոնեայներն ու Քրիստոսի
կրօնքն ընդունին:

Նամակներու պատասխանը չստացած՝ վախճանեցաւ
(25 Յ. Բ.):

Դ Ա Ս

Թելադուրեամբ

Ո՞վ կը յաջորդէ Արեամի. — Հոռոմայեցի գործա-
կալներ ի՞նչ ըրին եւ ե՞րբ. — Հեռովդէս քազաւորն
ի՞նչ քաւ. — Աբգար ընդունե՞ց այս խեցք պահանջը.
— Հեռովդէս ինչո՞ւ բանակ ղրկեց եւ ի՞նչ եղաւ.
— Աբգար ինչի՞ կը պատրասուէր. — Ո՞ւր փոխադրեց
արժուները. — Այս բանին մեզ յաջողելու համար՝ ի՞նչ
քաւ. — Աբգար Պարթեւասանի մեզ ինչո՞վ վարակի-
ուեցաւ. — Որո՞նք կասկածեցան այս համբողջութեան.
— Աբգար ի՞նչ ղրկեց եւ ինչո՞ւ. — Մարիոս ինչպէ՞ս
ընդունեց Աբգարի դեսպանները. — Դեսպաններն Ա-
րուսադէմի մեզ ի՞նչ տեսան. — Որո՞ւ պատեցին եւ
ե՞րբ. — Տղեսիոյ քազաւորը զո՞վ ղրկեց Յիսուսի եւ
ի՞նչ խնդրեց. — Յիսուս որո՞ւ ձեռնով պատասխանեց
եւ ի՞նչ. — Ո՞վ եւ ե՞րբ եկաւ Միջագետք. — Թադէոս ա-
ռաքեալն ի՞նչ քաւ. — Թադէոս զո՞վ կարգեց իրեն
փոխանորդ եւ ո՞ւր գնաց. — Ինչո՞ւ. — Ո՞վ եղաւ

Անդրանիկ հաւասացեալ քազաւորը. — Ո՞ր քազաւոր-
ներուն նամակ գրեց եւ ինչո՞ւ. — Աբգար ե՞րբ վախ-
ճանեցաւ:

Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Կ Բ Օ Ն Ի Մ Ա Գ Ո Ւ Մ

Իրաւ է որ նախնական մարդիկ հետզհետէ իմացականապէս կը
զարգանան ու զանազան հնարագիտութիւն կը կատարեն, ասով
հանդերձ Բնութեան շատ երեւոյթներն անոնց համար անհասկնալի
ու անբացատրելի կը մնային միանգամայն:

Անոնք կը տեսնային թէ ի՞նչպէս սկիզբով Արեւն ամէն առտու
կը ծագէր՝ իրեն հետ բերելով լոյս ու ջերմութիւն և յետոյ՝ երեկոյ-
ները կ'երթար, կը պահուէր հորիզոնին ետեւը, նաև տաք ու պայ-
ծառ ցորեկուան կը յաջորդէր մութ ու խաւար գիշերը: Գիշեր ատեն
կը տեսնէին պողպուն աստղեր որոնցմէ կայծեր կ'իյնային երկինքէն,
մանաւանդ ամառ ատեն: Բայց թէ ո՞ւր վար կ'իյնային, չէր գիտեր
ու չէր կրնար ալ հասկնալ:

Մարդ չէր կրնար նաև հասկնալ թէ ի՞նչ է Լուսինն որ ամիսը
մէկ անգամ կ'երեւայ Երկնակամարին վրայ եղջերաձև ու յետոյ հե-
տզհետէ կը մեծնար, տափակ սկաւառակի ձև կ'ստանար և վերջն ալ
նորէն եղջիւրի ձևով կը փայլէր:

Նախնական մարդոց համար նոյնպէս անհասկնալի էին Որոտուըր,
կայծակը, Հովն և ուրիշ շատ բնական երեւոյթներ:

Իրաւ է որ չէր կրնար հասկնալ ու բացատրել այս շատ բնա-
կան երեւոյթները, սակայն մարդ փորձով կը տեսներ թէ այդ երե-
ւոյթներէն ոմանք իրեն շատ օգտակար էին, ուրիշներ ալ՝ փրատակար,
ինչպէս նաև միեւնոյն երեւոյթն երբեմն օգտակար, երբեմն ալ փրա-
տակար կ'ըլլար: Օր. Արեգակն երբեմն կը լուսաւորէր և կը տաքցներ,
և երբեմն ալ կ'այրէր ու կ'ոչնչացներ ցանբը: Չափաւոր ու ժամանա-
կին տեղացած անձրեւը շատ օգտակար կը հանդիսանար, իսկ չափա-
ցանց ու անժամանակ անձրեւներէն կը կազմուէին հեղեղատներ ու
բոնք ասպարէն փրատներ կը պատճառէին:

Որովհետև կը տեսներ ու չէր կրնար բացատրել այդ երեւոյթ-
ները, սաստիկ կը վախնար ու կը սարսափէր անոնցմէ: Վատի ու Սար-
սափի հետեւանքն ա՛յն եղաւ որ մարդիկ գրեթէ ամբողջ բնութիւնը
պաշտամունքի առարկայ դարձուցին:

Բ Ն Ա Պ Ա Շ Տ Ո Ւ Յ Ի Ւ Ն

Մարդիկ կարծելով թէ Բնութեան բոլոր տարրերը բարի ու չար աստուածներ են, հաւատացին թէ անոնց մէջ բարի ու չար ոգիներ կը բնակին. ուստի՝ աստուած դարձան Արեգակը, Երկինքը, Լուսինքը, Կայծակը, Գեղը, Ծովը, Անտառը, Կրակը, մինչև իսկ Գազաններն ու Անասունները:

Բարի Աստուած կը համարէին այն բոլոր երեւոյթներն ու տարրերն որոնցմէ մարդ բարի գործեր ու օգուտ կը տեսներ, իսկ չար աստուած էին անոնք որ մնաս կը հասցնէին անոնց:

Նախամարդն այնպէս կը հաւատար թէ Բնութեան շնչաւոր ու անշունչ իրերը զիտակցութիւն ու հասկցողութիւն ունին, քանի որ ամէնուն մէջ ալ ոգիներ կը բնակին, Հետեւապէս ամէն բան այդ ոգիներու թելադրութեամբ ու փափաքով կը կատարուէր:

Ենթադրենք թէ Ժայռի գագաթէն քար մը վար իջնար ու մարդը սպաննէր, իսկոյն կը կարծէին թէ քարը վար ինկաւ անոր մէջ բնակող ոգւոյն փափաքով: Ուստի՝ ամէն դժբախտութիւն կամ բարեբախտութիւն կախում ունէր բնութեան մէջ ապրող ոգիներէ: Եւ որովհետև այդ ոգիները մարդոց պէս զիտակցութիւն ու հասկցողութիւն ունէին, անոնք կրնային նաև խօսք հասկնալ, բան ուտել ու զանազան նուէրներ ստանալ:

Այսպէս մարդիկ կ'ոկոսին բարի աստուածներէն խնդրել ու անգաչել որ զիրենք միշտ պաշտպանեն զանազան չարիքներէ ու փորձանքներէ, իսկ չար աստուածներէն ալ կը խնդրէին, կ'աղաչէին որ չբարկանան ու չարիք չհասցնեն իրենց: Ասկէ կը ծագէր աստուածներու հարկաւորութիւնը: Եւ սակայն աղօթքները յաճախ անցոր կը մնային, որովհետև լոկ խնդրքով ու աղաչանքով չէին գոհանար աստուածները: Մարդիկ կ'աշխատէին զանազան սիրաշահիլ զանազան նուէրներով:

Մարդոց ամէնէն մեծ մտածումն էր աստուածներն անօրէի չթողուլ: Ուստի՝ ամէն անգամ որ մարդիկ կը ծաշէին, ամէնէն առաջ բաժին կը հանէին աստուածներուն: Մարդիկ աստուածներու բաժինը կը դնէին որոշուած տեղ մը և կը կարծէին թէ անոնք կուգային և կ'ուտէին իրենց բաժինը: Մինչև այսօր ալ կան շատ ցեղեր որ դեռ այդ սովորութիւնը կը պահեն: Աստուածներու համար յատուկ կացուած բաժինը կը կոչուէր Զոն, իսկ աստուածներուն բաժին հասնելը՝ Զոնաբերութիւն:

Բ. Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

ՀԱՅ-ՊԱՐՏԹԵՒԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

Պարթեւները կը բնակէին Կասպից ծովու հարաւային արեւելեան ափը՝ Հիւսիսային Պարսկաստանի յեռնագաւառային մէջ: Ասոնց Արցախ իշխանն իր երկիրն ազատելով Սելեւկեանց ձեռքէն՝ կը հիմնէ Պարթեւ-Արցախունքի հարստութիւնը:

Հայ նախարարներու խնդրանքով Արշակ իր Վաղարցաւ եղբայրը Հայաստանի թագաւոր կը կարգէ որով կ'սկսի Հայ-Պարթեւաց հարստութիւնը, Վաղարշակ երկիրը խաղաղեցնելէ ետք կը գտնէ Հայոց անցեալ կեանքն եւ ասոր համեմատ գաւազան պաշտօններ կը բաշխէ նախարարներուն: Վաղարշակի կարգադրութեամբ անդրանիկ որդին՝ զահաժառանգը պիտի մնար արքունիքը, միւսները Հաշտանից գաւառը պիտի բնակէին:

Վաղարշակի յաջորդը Արշակ Ա. կը յաղթէ Պոնտացոց:

Արշակ Ա. Արշակ Ա.-ի որդին Պարթեւներու ձեռքէն կը յափշտակէ Առաջնորդեան պատիւը, իր Տիգրան որդին Պարսից թագաւոր կը կարգէ ու Հայաստանի հիւսիսային երկիրները կը յանձնէ իր զաշտանակից Վրաց Միհրդատ իշխանին: Արտաշէս Ա. անհամար զօրքերով Արեւմտեան Ասիան կը նուաճէ եւ այն տեղէն յունական կուռքեր կը զրկէ Հայաստան, երբ Յունաստանի կը տիրէր, Հռոմայեցոց դաւաճանութեամբ սպաննուեցաւ:

Արշակունի Արտաշէս Ա.-ի որդին՝ Մեծն Տիգրան Բ. կը յաղթէ Պարթեւ Արշական թագաւորին, կը նուաճէ Ասորիքը, Փիւնիկիան, Պարթեւսիան եւ իր գերիշխանութեան եերարկելով ամբողջ Արեւմտեան Ասիան՝ Հին Պարսից իմբնակալութեան երկիրները՝ կը կրէ Արեւելից Արեւայ՝ այսինքն Կայսր՝ տիտղոսը, Հռոմայեցիք Տիգրանի զօրութիւնը խորտակելու համար քանիցս պատերազմներ կը մղեն Տիգրանի ու իր զաշտակից Միհրդատի դէմ: Միլլա ու Լուկուլլոս հռոմայեցի զօրավարները փոխօխակի բախտով կը կուռին, սակայն Պոսպտոս հռոմէական ներգաղութեամբ Տիգրանի ու Միհրդատի որդիները հորերնուն դէմ՝ ապստամբեցնելով՝ կը բաժնէ անոր զօրութիւնն ու կը տկարացնէ, Տիգրան թէեւ նախ Հռոմայեցոց յանձնեց Փոքր Ասիոյ մէջ ունեցած երկիրները, բայց յետոյ Պարթեւաց օգնութեամբ կը յաղթէ Հռոմի ետապետներէն Կրատոսի ու զօրավարներէն Կասիոսի: Հռոմի ետապետներէն Անտոնինոս խարդախութեամբ ձեռք

ձգելով Տիրան Բ.ի յաջորդ Արտաւազդ Ա.ը, շղթայակապ՝ կը դրէին Աղերսանդրիա, Կղեոպատա թագուհւոյն որ զլիսատել կու տայ զայն Այնուհետեւ Հայաստան Կառուածադիկ կը հանդիսանայ Հռոմայեցոց ու Պարթեւաց միջեւ:

Արգարի թագաւորութեան առաջին տարին Հռոմայեցի Օգոստոս կայսրն աշխարհագիր—մարդահամար կը կատարէ Հայաստանի մէջ ալ: Արգար կ'երթայ Պարթեւաստան, որովհետեւ կը խորհէր Պարթեւաց օգնութեամբ արգատարիլ Հռոմայեցոց դէմ: Սակայն առիթը յարմար չըլլալով՝ դեսպաններ կը դրկէ Ասորիք, Հռոմի գործակալ Մարիոսի կանխածը փարատելու համար: Դեսպաններուն դարձին Արգար լսեց Յիսուսի հրաշքերը, հաւատաց Անոր եւ խնդրեց որ Յիսուս եղբորն զայ զինք բժշկէ: Բրիտանոս իր Համարածուժէն ետք զրկեց իր առաջնալինքէն Թաղեոսն որ թէ՛ կը բժշկէ Արգարն՝ եւ թէ՛ Բրիտանոսն: Թիւնը կը տարածէ Հայաստանի մէջ: Այսպէս Հայերն եղան առաջին քրիստոնէայ ազգը:

Բ. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՅԵԱԼ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ՊԱՐԹԵՆ ԿԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ՀԵՔԱՆՈՍՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

Նախնական մարդիկ ինչո՞ւ ստիպուած էին շարունակ թափառել տեղէ տեղ. — Այդ միջոցին ո՞ր կազմակերպութիւններէ շրջով էին. — Պետքն ու կեանքի պայմաններն ի՞նչ ըրին նախնական մարդքը. — Նախնական մարդն ինչե՞ր նկատի առաւ. — Ի՞նչպէս փոքր ընտանիքներ կազմուեցան. — Ի՞նչպէս ցեղեր կազմուեցան. — Նախնական ընտանիքի ազգականութիւնն ի՞նչպէս էր. — Հին ատեն զաւակներն ինչպէ՞ս կը ճանչցուէին և ինչո՞ւ. — Արական ցեղն ինչպէ՞ս աւելի սեփեղին նահապետ. — Ի՞նչ եղաւ ասոր հետեւանքը. — Ո՞վ էր ցեղին ինչպէս թողուցին իրենց թափառական կեանքը. — Ի՞նչ եղաւ ասոր հետեւանքը. — Մարդկային ցեղերը Տին ատենէ ի վեր զերար ի՞նչ կը նկատեն. — Ի՞նչու բնաջինջ կ'ընէին զիրար. — Նախապէս յաղթուող գերին ի՞նչ կ'ընէին. — Յետոյ ի՞նչ ըրին. — Մարդկային ցեղերու մէջ ի՞նչպէս ազատներն ու ստրուկները յառաջ եկան. — Ստրուկներն ի՞նչ չէին համարուեր. — Ստրուկներն ի՞նչ աշխատութիւն կը կատարէին:

— Ի՞նչեր վերապահուած էին ազատներուն. — Ի՞նչ տարբերութիւն կար Հայ ճորտին ու նախնական մարդուն ստրուկին միջև. — Հայ ազատորեարին ու ազատներուն միջև. — Ինչո՞ւ սկսաւ գերեզմանաւորութիւնը. — Իւրաքանչիւր ցեղ ինչո՞ւ առաջնորդ մը ընտրեց. — Չորսո՞ք կ'ընտրէին վարիչ. — Վարիչները նախապէս ի՞նչ տարբերութիւն ունէին իրենց ցեղերէն. — Յետոյ ի՞նչ իրաւունքներ վայելէին. — Յեղապետներն ի՞նչո՞ւ իրենց օգնական ընտրեցին. — Չանտե՞ք ինչո՞ւ կը վարձատրէին. — Յեղապետներն ու օգնականները հետզհետէ ի՞նչ ստացան. — Ի՞նչպէս յառաջ եկան ազնուականներն ու ռաւիկները. — Որո՞նք էին ազնուականները. — Ռամիկները՞. — Որո՞նք կոչուեցան իշխան. — Ո՞ր իշխանը կոչուեցաւ թագաւոր. — Որո՞նք նախարար ու պարոն կոչուեցան. — Ո՞ր ցեղն այդ գարձաւ:

Նախնական մարդոց ո՞ր բնական երեւոյթներն անհասկնալի էին. — Մարդ փորձով ի՞նչ կը տեսներ. — Ո՞ր բնական երեւոյթները երբեմն օգտակար, երբեմն ալ վնասակար կ'ըլլային. — Ինչո՞ւ կը վախար ու կը սարսափէր անոնցմէ. — Վախի ու սարսափի հետեւանքն ի՞նչ եղան. — Մարդիկ բնութեան բոլոր տարբերն ի՞նչ կարծեցին. — Որո՞նք էին բարի աստուածները. — Չարերը. — Մարդ ինչո՞ւ կը կարծէր թէ իրերու մէջ ոգիներ կը բնակէին. — Մարդիկ ինչե՞ր կ'ըսէին ոգիներու մասին. — Ի՞նչպէս յառաջ եկաւ Աղօթելու գաղափարը. — Մարդիկ ի՞նչ մտածումով զո՞հ կ'ընէին աստուածներու. — Մարդիկ ե՞րբ աստուածները զանազան կարգի բաժնեցին. — Մարդիկ աստուածներու մասին ի՞նչ կարծիք կազմած էին. — Աստուածներն ինչե՞ր կը կազմէին. — Ի՞նչպէս կ'սկսի կուսպաշտութիւնը. — Կուսքերը նախ ի՞նչպէս շինուած էին. — Ի՞նչպիսի կերպարանքով էին. — Ի՞նչ կը նշանակէ Բանդակագործութիւն. — Ե՞րբ քանդակագործութիւնը զարգացաւ, կուսքերն ի՞նչ փոփոխութիւն կեցին. — Ի՞նչ կը նշանակէ արձանագործութիւն. — Այս արուեստն ո՞ւր շատ զարգացաւ. — Մարդիկ նախապէս ո՞ւր կը պաշտէին իրենց կուսքերը. — Յետոյ ո՞ւր. — Մեր նախնիք ո՞ր մարդիկ կ'աստուածացնէին ու որո՞նք էին աստուածացած մարդիկը. — Այս աստուածներուն ինչե՞ր կը վերագրէին. — Այս աստուածացած մարդիկ անմահ էին թէ մահկանացու. — Ասոնք ո՞ւրի՞նչ ծնած կը կարծէին. — Ո՞ր աստուածացած դիւցազն կրճէին ծնած է. — Ո՞րը ծովէն. — Լուսինէն. — Լեռնէն. — Չեր բնական տեղն ի՞նչ աւանդութիւններ կան այս մասին. — Որո՞նք էին նախնական մարդուն անօթները. — Մարդիկ նախ ինչպէս կ'ուտէին միտք. — Ի՞նչպէս կը խորովէին. — Հացն ի՞նչպէս կը թիւէին. — Մարդիկ ե՞րբ ջուրն եռացուցին. — Չուրն ինչպէս կը տաքցնէին. — Ե՞րբ դասն թրծելու արհեստը. — Ի՞նչ եղաւ ասոր հետեւանքը:

Հայկէն մինչև Տիգրան Ա. Հայաստան հետզհետե տնտեսական ի՞նչ փոփոխութիւններ կրեց. — Ի՞նչ կը նշանակէ Տնտեսութիւն. — Հայաստան այդ միջոցին ի՞նչ վարչական փոփոխութիւն կրեց. — Չինւորական կազմակերպութիւնը. — Տիգրան Ա. ի օրով ի՞նչ էր Հայաստանի տնտեսական վիճակը. — Քաղաքական վիճակը. — Նախասոյժեր — խաղաքանք որո՞նց հետ պատերազմեցան և որո՞նց քաղաքակրթութիւնը գաղութարեցին. — Թորգամեան Հայերն որո՞նց հետ ձուլուեցան. — Հայերն ո՞ր ցեղերու խառնուրդ են. — Տիգրան Ա. ի օրով ո՞ր ժողովուրդներու քաղաքակրթութիւնն ազգայնացաւ. — Ի՞նչ կը նշանակէ ազգայնանալ՝ հայանալ. — Տիգրան Ա. էն ետք ի՞նչ եղաւ Հայաստանի քաղաքական վիճակը. — Պարթեաներն ի՞նչ պիտի ժողովուրդ էին և ի՞նչպէս կազմեցին ինքնակալութիւն մը. — Ի՞նչ տարբերութիւն կար Պարթե և ու Սելեւկեան տիրապետութեան միջև. — Հայերն ո՞րն ընտրեցին. — Հայոց պատմութեան հին շրջանն ինչե՞րու վրայ գրուած էր. — Չեր ընտկած տեղը բեւեռագիր արձանագրութիւն կա՞յ. — Վաղարշակ ո՞ր աղբիւրներու համաձայն ի՞նչ կարգադրութիւններ ըրաւ. — Ի՞նչ կը նշանակէ Առաջնութեան պատիւ. — Որո՞նք են Առաջնութեան իրաւունքները. — Ո՞վ դրուեց այդ պատիւը. — Արտաշէս Ա. ո՞րչափ զօրք ունէր. — Արտաշէս Ա. ի ոչ խորհակալութեան հետեւանքն ի՞նչ եղաւ. — Ո՞վ հիմեց Հայ կայսրութիւնն և ի՞նչպէս. — Տիգրան Բ. ո՞ր ինքնակալներու հետ կրնաք բաղդատել. — Որո՞նք էին Տիգրան Բ. ի կայսերական զգեստները. — Որո՞նք էին իր թիկնապահները. — Հռոմայեցի ո՞ր զօրապետները կուռեցան Տիգրան Բ. ի դէմ. — Հռոմայեցւոց լեզուներն ի՞նչպէս կազմակերպուած էին. — Տիգրան Բ. ի օրով աշխարհիս վրայ ամենէն հզօր տէրութիւնն ո՞վ էր. — Հռոմայեցիք ի՞նչպէս յաղթեցին Տիգրան Բ. ի. — Ո՞րն էր Տիգրան Բ. ի թերութիւնը. — Անտոնիոսն ի՞նչպէս յաղթեց Հայոց. — Արտաւազ Ա. ի՞նչ նկարագրի տէր էր. — Ի՞նչ ըսել է կուռածաղիկ. — Ո՞րն է Ասիոյ կուռածաղիկ երկիրը. — Հայաստան դարերու ընթացքին միջ ո՞ր տէրութեանց կուռածաղիկն եղած է. — Հռոմայեցիք ինչո՞ւ մարդահամար ըրին. — Արգար ինչո՞ւ Պարթեւաստան գնաց. — Քրիստոնէութիւնն ի՞նչպէս մտաւ Հայաստան — Հայաստան ի՞նչպէս կը կառավարուէր. — Ինչե՞րն օրէնք էին. — Հայ թագաւորն երբեմն ուրիշ ի՞նչ պաշտօն կը կատարէր. — Ի՞նչպէս յարգանքը կը տածէին թագաւորին նկատմամբ. — Որո՞նք էին արքունի եկամուտները — Թագաւորն ո՞ւր կալուածներ ունէր. — Թագաւորն ի՞նչ կեանք կը վարէր. — Որո՞նք էին իր զգեստները. — Թագաւորին, ազնուականներուն և հասարակ ժողովուրդին զգեստներուն

միջև ի՞նչ տարբերութիւն կար. — Թագաւորին կոչիկն ի՞նչպէս էր. — Որո՞նք կրնային այդ տեսակ կոչիկ հագնել և ի՞նչ պայմաններու մէջ. — Թագաւորն ուրիշ ի՞նչ իրաւունքներ կը վայելէր. — Հայաստան ի՞նչպէս երկիր է. — Բնականէն ի՞նչերու բաժնուած է. — Որո՞նք կը կոչուին նախարարութիւն. — Նախարարներն ի՞նչպիսի իշխանութիւն ունէին. — Նախարարները քանի՞ կարգի կը բաժնուէին. — Քանի՞ աստիճան ունէին. — Ո՞րչափ նախարար կար. — Նախարարներէն շատերն ի՞նչ պաշտօններ ունէին. — Չինւորական ուժն ի՞նչպէս կազմակերպուած էր. — Հայ բանակը քանի՞ կարգի կը բաժնուէր. — Որո՞նք էին սպառապէն հիծելազօրքին զէնքերը. — Թիթեւազէնքն. — Հետեւակի՞ն. — Հայոց զէնքերն ինչո՞ւ մահացու էին. — Հայ աղեղնաւորն ի՞նչով նշանաւոր էր. — Որո՞նք ունէին բերդեր ու ամրոցներ. — Անոնք ինչերո՞ւ կը ծառայէին

Բ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆԻԻՅԵՐ

1. Բաղդատել Հայաստանի սահմանը Հայկի, Արամի, Տիգրան Ա. ի, Վաղարշակի, Արտաշէս Ա. ի եւ Տիգրան Բ. ի օրով:
2. Բաղդատել Հայաստանի վարչական դրութիւնը Հայկի յաջորդներուն, Արամի ու Վաղարշակի օրով:
3. Ի՞նչպէս կազմուեցան ազատներն ու ստրուկները. ազատականներն ու ռամիկներն ի՞նչ իրաւունքներ ստացան. Վաղարշակի կարգադրութիւնն ի՞նչ էր եւ հետեւանքն ի՞նչ եղաւ:
4. Որո՞նք էին Հայոց դրացի ազգերն Արամի, Տիգրան Ա. ի, Պարոյրի, Վահէի, Վաղարշակի, Արտաշէս Ա. ի ու Տիգրան Բ. ի ատեն. իւրաքանչիւրն ի՞նչ պատերազմներ մղեց անոնց դէմ:
5. Կրօնքի գաղափարն ի՞նչ դիմայեղումներ կրեց:
6. Մինչեւ Տիգրան Բ. Հայերն ո՞ր ազգերու քաղաքակրթութիւնը գաղաբարեցին:
7. Նկարագրել Հայոց արքունիքը:
8. Նախարարական կազմակերպութիւնը:
9. Չինւորին ուժը:

Բ. Հ Ա Յ - Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ի Ք

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՀԱՂԱԾԱՆԻ ԱՏԵՆ

16. ՀԱՂԱԾԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԴԷՄ

«Արիւն մարտիրոսաց՝ սերմն քրիստոնէից:»

Արքարի որդին Անանե այն ինչ կը թա-
Անանէ: Գաւորէ, կ'սկսի հալածել Քրիստոնէութիւնը
և կը բանայ մեհեանները: Պահանջեց Ադդէն
որ Քրիստոնէութիւնը թողու և առաջուան պէս խոյր
չինէ թագաւորներու համար: Ադդէ կը մերժէ թագաւո-
րին պահանջն ու եռանդով կը քարոզէ Քրիստոնէութիւնը:
Անանէ զայրացած՝ սպաննել կուտայ Ադդէն:

Արքարի քեռորդին՝ Սանասրուկ Հա-
Սանասրուկ յաստանի Շաւարշան* դաւառի կառավա-
րիչ էր: Սակայն ապստամբած՝ կը թագա-
ւորէր Հիւսիսային Հայաստանի վրայ: Ասիկա Անանէն
աւելի կատաղի թշնամի դարձաւ Քրիստոնէութեան: Սա-
նատրուկ նահատակել տուաւ Թադեոս առաքեալն ու իր
հարազատ աղջիկը՝ Սանդուխ կոյս:

Սանատրուկ յետոյ Անանէի վրայ յարձակեցաւ՝ Ուր-
հայաստանի* ալ տիրելու համար: Մինչ Անանէ իր պա-
լապը նորոգել կուտար, սիւն մը ինկաւ վրան ու ջախ-
ջախեց իր ոտքերը: Եղեասացիք* մարդ կը զրկեն և կը
խոստանան Սանատրուկի յանձնել քաղաքը, եթէ զիրենք
ազատ թողու Քրիստոնէութեան մէջ:

Սակայն Սանատրուկ իր խոստումը
Հայոց Ա. Մար- կը դրժէ, կոտորել կուտայ Արքարու
սիրուները ցեղը բայ ի աղջիկներէն ու Հեղինե
թագուհիէն: Հեղինէ Երուսաղէմ կ'ա-
ռանձնանայ և սովի ատեն աղքատներուն նպաստին կը
յատկացնէ իր ամբողջ գանձերը: Սանատրուկ որսի ատեն
պատանձմամբ նետահար եղաւ ու սպաննուեցաւ:

Սանատրուկէն ետք գրեթէ 3 դար թէև Քրիստոնէ-
ութիւնը հալածուեցաւ Հայաստանի մէջ, սակայն Հայ
Քրիստոնեայները գաղանի տեղեր ու գեանադամբարան-
ներու մէջ կը կատարէին իրենց պաշտամունքը: Այս հա-
լածանքի ատեն շատեր նահատակուեցան: Բայց Քրիս-
տոնէութիւնը հետզհետէ արմատ կը գտնէր ու կը զօրա-
նար Հայաստանի մէջ, մինչև որ Աստուած Հայոց երկրորդ
անգամ այցելեց ու Քրիստոնէութիւնը պաշտպանուելով՝
պաշտօնական կրօն դարձաւ:

Գ Ա Ս

Թելադուբեամբ

Ո՞վ էր Արքարի որդին. — Անանէ ի՞նչ բրաւ. —
Ադդէին ի՞նչ հրամայեց. — Ադդէ ի՞նչ փարոզեց. —
Անանէ ի՞նչ բրաւ Ադդէին. — Ո՞վ էր Արքարի փեռորդին.
— Սանասրուկ ի՞նչ պաշտօն ունէր. — Սանասրուկ գո-
րո՞նք հալածեց եւ գորո՞նք նահատակեց. — Սանասրուկ
որո՞նք վրայ յարձակեցաւ եւ ինչո՞ւ. — Անանէ ինչ-
պէ՞ս մեռաւ. — Եղեասացիք ի՞նչ պայմանաւ Սանա-
սրուկը քաղաւոր կարգեցին. — Սանասրուկ իր խոս-
տումն ի՞նչ բրաւ. — Զորո՞նք կոտորել տուաւ. — Որո՞նք
ազատեցան. — Հեղինէ ո՞ւր առանձնացաւ եւ ի՞նչ

բաւ. — Սանատուկ ինչպէս մեռաւ. — Քրիստոնէ-
ութիւնն որչա՞փ ասեմ հալածուեցաւ. — Հայ քրիս-
տոնեայներն ո՞ւր կը կասարեին իրենց պաշտամունքը. —
Քրիստոնէութիւնը հետզհետէ ի՞նչ կ'ըլլար եւ ե՞րբ պաշ-
տօնական կրօնք դարձաւ :

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՍՐԲՈՒՀԻ ՍԱՆԳՈՒԽՅՏ

Շատ է մեր Եկեղեցւոյն ու Ազգին նահատակներուն թիւը
ամէն հասակէ, սեռէ ու վիճակէ: Ամենքն ալ կրցած են նոյն ճամբ-



ՍՐԲՈՒՀԻ ՍԱՆԳՈՒԽՅՏ

բով ու քաջաւթեամբ զոհուել Հայրենիքի խորանին վրայ: Հայ կոյ՛

սերու և կրնէրու փափաքն էր մարտիրոսանալ Հայրենիքի ու կրօնի
համար: Անոնց մէջ անդրանիկն է Սրբուհի Սանդուխտ:

Սանդուխտ Սանատուկ թագաւորին աղջիկն էր: Մինչ թա-
ղէտս առաքեալը կը քարոզէր, Սանդուխտ թիթեանիկէ մը պէս տես-
նելով մթու թեան մէջէն հեռուօր լոյս մը՝ թափ կուտայ բոլոր ու-
ժով իր փափկիկ թեւերուն և լուսին կը դիմէ: Այնուհետեւ Սան-
դուխտ իրեն միակ հայր երկնքի մէջ Աստուած կը ճանչնար, երկրէ
վրայ ալ՝ թաղէտս առաքեալը:



Ս. ՍԱՆԳՈՒԽՅՏԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԸ

Քրիստոսի խաչին յաղթանակը գրգռեց, զայրացուց Սանա-
տուկ թագաւորը: Զայրոյթն աւելի բորբոքեցաւ, ծանրացաւ իր
Սանդուխտ աղջկան վրայ զոր շղթայակապ՝ ուրիշ բազմաթիւ քրիս-
տոնեաներու հետ բանտարկիւ հընձայեց: Սանդուխտի կապանքներն
սակի ապարանջաններէ ու մեհեանդներէ աւելի կը փայլէին անոր
ձեռքին ու պարանոցին վրայ:

Սանատուկ ջղազրգիւ ու մտահոգ՝ մոլեգնութեան մը ենթար-
կուեցաւ. մէկ կողմէ չէր կրնար անտարբեր մնալ իր հայրենի սիրոյն,
կը սուկար տանջէլ կամ սպաննել այնպիսի անմասն, մտացի ու
չնորհազեղ աղջիկը զոր այնքան սիրով զգուած ու սնուցած էր:
Միւս կողմէն ալ հայրենի կուռքերուն արհամարհման վրայ անսանձ
բարկութեան մը զինք կը լսուէր: Ահա այսպէս վարանած, տաղնա-
պած՝ իր գառնութեան թոյնը թափեց թաղէտս առաքեալին վրայ:

Փափուկ. բայց արիասիրտ Սանդուխտի աղաւնի սիրտը յանկարծ արծիւ կը դառնայ, կը խզէ կապանքները, կը յաղթէ արգելքներու, կը դիմէ Թագէտոսի տանջարանը, կը խրատուսէ զայն, յետոյ կ'առանձնանայ և տատարակի նման կը հեծէ, կը հառաչէ: Եւ երբ Թագէտոս ու Սանդուխտ անուշ արցունքներու և հրճուածքի վայելքով նահատակութեան ճաշակը կ'առնէին, Սանատրուկ սատոխի զարթացած հրամայեց որ սրածայր ու երկայն բեռներ դաժելով Թագէտոսի ստաբերուն՝ սպաննեն զայն: Սանդուխտ իր ընկերներով գիշերը գնաց պատեց անոր մարմինն ու ձորակի մը մէջ թաղեց:

Սանդուխտ աշուհեմբէ գերազանց զջուրթիւն մը կ'ստանայ և ա՛լ աւելի վե՛ս՝ պաշտօն մը կ'ստանձնէր՝ քրիստոնեայ վշտացեալները կը մխիթարէր, կարօտեալներուն հաց ու զգեստ կը բաշխէր: Սանատրուկ իմանալով որ Քրիստոնէութեան աճման ու զարգանալուն գլխաւոր պատճառը Սանդուխտն է, իր սրտէն խլելով մարդկային ամէն գութ ու հայրենի գորով՝ հրամայեց բռնել ու սպաննել զանիկայ: Սանդուխտ սիրայօժտը կը յանձնուի դահիճներու ձեռքի և երբ գլխատման տեղը տարին, զուարթութեամբ ու սիրով մատուց պարանոցն և իր հոգին աւանդեց (4), Դեկ. 15):

17. ԵՐՈՒԱՆԴ Բ. ԲՈՆԱՒՈՐ

Պ Ա Ս Մ Ո Ւ Ա Մ Ք

«Իրսէն Բահանայ, Անսէն սասանայ:»

Բագրատունեաց իրաւունքը Բագրատունի նախարարները միշտ հաւատարիմ ծառայեցին Արշակունի գահին, Իրենք էին որ կը մեծցնէին ու կը դաստիարակէին արքայազուներն և հօր մահէն ետք անոնցմէ մեծը գահ կը բարձրացնէին ու գլուխը կը դնէին Արշակունեաց ժառանգական թագը:

Սանատրուկ Հիւսիսային Հայաստանի կառավարութիւնը յանձնած էր Երուանդ իշխանին որ մօր կողմէ Պարթեւ-Արշակունի* էր: Երբ Սանատրուկ սպաննուեցաւ, Երուանդ յաջողեցաւ նախարարներուն մեծ մասը սիրաչահելով՝ թագաւորական գահը բարձրանալ, Հակառակ Երուանդի բռուն փափաքին, Բագրատունի նախարարներէն ոչ մէկը յանձն կ'առնէ անոր գլուխը թագ դնել:

Երուանդ կասկածելով թէ Սանատրուկի ժառանգորդները նախարարներու խնդուաբիւնը օգնութեամբ կը փորձեն իրենց հօր գահին տիրանալ, կը հրամայէ բոլորն ալ ջարդել: Այս կոտորածէն կ'ազատի միայն Արսաշես մանուկը զոր ստնտուն գաղտնի կը փախցնէ ու կը պահէ Կապուսան—Ուրմիոյ լճին մօտերը՝ Հեր* գաւառին մէջ: Սմբատ Բագրատունի այն ատեն կը զսնուէր իր հայրենական կալուածը՝ Սպեր* գաւառը: Ստնտուն եղելութիւնը կը հաղորդէ Արտաշէսի դայեակ—դաստիարակ Սմբատի: Դայեակն իր Սմբասանոյշ, ու Սմբասունի աղջիկները պատուարել տալով Բաքերդի* մէջ՝ Արտաշէսի օգնութեան կը փութայ:

Երուանդ լսելով Արտաշէսի փափակութիւնը՝ մարդ զրկեց որ բռնեն զայն: **Անսէն Բահանայ** Սմբատ վերջապէս կը յաջողի Արտաշէսը Պանիլաւ-Արտաշէսի թագաւորին քով տանիլ: Սմբատի քաջութեան համարը վաղուց հասած էր արդէն Պարթեւաց արքունիքը: Պահլաւ-Արշակունի թագաւորը մեծ պատուով կ'ընդունի Սմբատն ու Արտաշէսը: Պալատին մէջ Արտաշէս կրթուեցաւ Պահլաւ արքայազուներու հետ: Սմբատ ալ Մարաստանի մէջ ստացաւ ընդարձակ կալուածներ:

Երուանդ շատ փորձեր ըրաւ Արտաշէսի կեանքը դաւելու համար. մէկ կողմէն Պահլաւունեանց թագաւորին դետպաններ կը զրկէր համոզելու թէ Արտաշէս Սանատրուկի որդին չէ, այլ Մար հովուի մը որդին ու Սմբատը խաբած է զինք, միւս կողմէ Սմբատէն ալ կը խնդրէր զանազան խոստումներով որ Արտաշէսն իրեն յանձնէ:



ԵՐՈՒԱՆՈՒ Բ.

Ո՛չ Պահլաւունեանց թագաւորն և ոչ Սմբատ հաւատք կ'ընծային Երուանդին, այլ հակառակը հետզհետէ աւելի կը սիրեն իրենց խնամքին յանձնուած որբուկը:

Երուանդ սեսնելով թէ իր մտքին ծածուկ դաւը խայտառակուեցաւ, միշտ վասուրիւնը երկիւղի մէջ էր թէ օր մը Արտաշէս սիրտի դրաւէ գահը: Այս վասնդէն ազաաելու համար Միջագետքը կը յանձնէ Հոռմայեցոց ու անոնց հարկ կը վճարէ: Այնուհետև իր մայրաքաղաքը նախ Արմաւիր, յետոյ իր շինել տուած Երուանդաօս* բերդաքաղաքը փոխադրեց: Ինք միջնաբերդն ազատտանեցաւ: Միջնաբերդին սանդուխներուն մէջ ծածուկ գետնուղիներ շարեց թշնամիներու ո և է գաւաճանութենէ ազատ մնալու համար: Երուանդ Արմաւիրի կուռքերը հոս չփոխադրեց, մի գուցէ սօներու պատճառաւ հաւաքուած բազմութիւնը դաւադրութիւն մը կազմէ իրեն դէմ, այլ հրամայեց փոխադրել իր շինել տուած Բագարան* քաղաքը: Իր Երուանդ կը բայրը հոն քրմպպետ կարգեց: Երուանդ որսի համար ալ սնկեց Ծննդոց* անտառը: Ծինել տուաւ նաև Երուանդալիտս դասակերտն իբրև ագարակ: Երուանդի չար աչքէն—նազարէն ոչ ոք կ'աղատէր: Սպասաւորները սովորաբար ամէն առտու կարծր խոշոր քարեր կը բռնէին Երուանդի առջև որ անոր չար նայուածքէն քարերը ճաթին:

— X
Պ Ա Ս

Թեղադրութեամբ

Սանատրուկ որո՞ւ յանձնած եր Հիւս. Հայաստանի կառավարութիւնը. — Երուանդ Բ. ե՞րբ եւ ի՞նչպէս գահը բարձրացաւ. — Ինչո՞ւ համար Բագրատունիի բազմաբնակ Երուանդի գլուխը. — Բագրատունի նախարարներն ի՞նչպէս ծառայեցին Արցախունի գահին. — Եր-

ուանդ ինչո՞ւ համար Սանատուկի սերունդը արե՛ ան-
 ցնել կու՛սայ. — Ո՞վ ազատեցաւ այս կոսորածէն. —
 Ո՞վ փախցուց Արաւսէսն եւ ո՞ւր. — Սմբատ այն ասե՛ն
 ո՞ւր կը գտնուե՛ր. — Սննու՛ն ի՞նչ քաւ. — Սմբատ ի՛ր
 ո՞ր աղչիկներն ո՞ւր պատասխարեց եւ ի՛նք ի՞նչ քաւ. —
 Երուանդ ինչո՞ւ մարդ դիկեց. — Սմբատ Արաւսէսն
 ո՞ւր փախցուց. — Գարեհն ինչո՞ւ եւ ի՛նչպէս ընդու-
 ցեց Սմբատը. — Արաւսէս ո՞ւր եւ ի՛նչպէս կրքուեցաւ.
 — Սմբատ ո՞ւր կալուածներ ստացաւ. — Երուանդ ինչե՛ր
 փորձեց եւ ինչո՞ւ. — Ո՞րոնք հաւատք չընծայեցին Եր-
 ուանդի. — Ի՞նչ վասուքիւն քաւ եւ ինչո՞ւ. — Մայ-
 րաբաղան ո՞ւր փոխադրեց. — Երուանդաւաթի մեջ
 ինչե՛ր շինեց. — Արուսիկն ո՞ւր փոխադրեց եւ ինչո՞ւ.
 — Ձով՛ քրմապետ կարգեց. — Ռոստոմբեան համար
 ի՞նչ տնկել տուաւ. — Ո՞րն եր Երուանդի ազարակը. —
 Երուանդի մասին ի՞նչ կախարդութիւն կ'աւանդեմ:

Ը Ն Յ Ե Ր Յ Ո Ւ Մ

Բ Ո Ւ Ր Մ Ե Ր

Մարդիկ կը տեսնէին թէ յաճախ ո՛չ միայն իրենց աղօթքը
 այլ և զՏաբերուածիւնն ալ չէին կրնար աստուածներն ողբել, քանի
 որ կը մտածէին թէ աստուածներն ալ մարդոց պէս իրարմէ տարբեր
 ճաշակի ու ընտելութեան տէր էակներ են: Ուստի պէտք էր գողտ-
 փար կաղմել թէ անոնցմէ իւրաքանչիւրին ի՛նչպէս աղօթելու էին
 և մտնաւանդ ի՛նչպիսի զո՛հ մատուցանելու էին: Անոնցմէ զատ հարկ
 էր գուշակել ու հասկնալ թէ մէն մի դժբախտութիւն ո՞ր աստուա-
 ծին գործն է, որպէս զի ըստ այնո՞մ խոկոյն անոր աղօթէին ու զո՛հ մա-
 տուցանէին: Ատիկա մտնաւանդ շատ կարեւոր կը համարէին հիւանդ-
 դութեան պարագային: Այնչէ՛ հիւանդն ապաքինէր, անոր տէրերը կը
 կարծէին թէ ճիշտ հասկցած էին ո՞ր աստուածն էր հիւանդութեան
 պատճառը և կրցած էին ժամանակին ողբել զայն: Իսկ եթէ հի-
 ւանդը մեռնէր, կը նշանակէր թէ հիւանդին տէրերը սխալած էին ու


չէին թափանցած թէ ո՞ր աստուածն էր հիւանդութեան պատճառը
 և թէ ի՛նչպէս սիրաշահիլ պէտք էր:
 Եւ որովհետեւ անկարելի էր անթիւ ու անհամար բոլոր աստ-
 ուածներու ընտելութիւնն ու ճաշակը հասկնալ, հետզհետէ մար-
 դոց մէջէն յառաջ եկան այնպիսի յատուկ մտնաղեաներ որ կը գու-
 շակէին, աղօթքով ու զանազան բոյսերով հիւանդութիւններ կը
 բուժէին և այլևայլ կախարդութեան կը պարապէին:
 Հայ ժողովուրդին մէջ ալ մինչև այսօր կան այդ կարգի մարդիկ
 թէև ասոնք գեղեցու մէջ յարգանք ու պատիւ կը վայելեն, ըսյց ա-
 նոնց յարգանքն ու պատիւը նախնական դարերու մէջ անհամեմատ
 աւելն մեծ էին:

Այդ կարգի մարդիկ այն ատենները տեսակ մը բարեխօսի գեր
 կը կատարէին աստուածներու և մարդոց միջև: Մարդիկ ատոնցմէ
 նշոյպէս կը վախնային ու կ'ակնածէին. կ'աշխատէին ատոնց սիրան
 ալ շահիլ զանազան նուէրներով ու ընծայներով, որպէս զի ատոնց
 անէծքին ու կախարդութեան չէնթարկուին:

Ժամանակին ընթացքին մէջ այդ աղօթողները գուշակողներն
 ու բուժողները շատ մեծ դիրք և կարեւորութիւն ստացան ցեղերու
 և ազգերու մէջ: Ի սկզբան անոնք ալ աղնուականներու նման չէին
 տարբերք ցեղի միւս անդամներէն, ըսյց հետզհետէ անջատուեցան
 ու առանձին դասակարգ մը կազմեցին: Ասոնք կոչուեցան **Քուրմեր**,
 այսինքն՝ աւսուածներու պաշտօնիւններ:

Ինչպէս որ աղնուականները հոգ կը ստանէին ռամիկները օտար
 ընծայներէ պաշտպանելու, այնպէս ալ քուրմերը կը ջանային որ ա-
 զատ պահէին ժողովուրդն աստուածներու բարկութենէն ու չարիքներէն:

Եւ ինչպէս որ աղնուականներն իրենց վարչական, դատաստա-
 տող տուրք կ'ստանային, այնպէս ալ քուրմերն իրենց աղօթքներուն
 և ծէսերուն համար որոշած վարձատրութիւնը կ'առնէին: Քուրմերն
 առհասարակ կը վայելէին նոյն դիրքը, նոյն արտօնութիւնն ու իրա-
 ւանքներն ինչ որ կը վայելէին աղնուականները:



18. Ա Ր Տ Ս Ս Շ Է Ս Բ .

Պ Ա Տ Ս Ս Ո Ւ Ա Մ Ք

«Այսի է նախախնամութեան բա-
րիքը, անա՛ իմաստութիւն, ուրիշներու
վայել տուր, անա՛ առաքինութիւն:»

Սմբատի օրո- սիրութիւնը Արտաշէս արքայորդին Պահլաւուն-
եաց թագաւորին պալատին մէջ կը մեծ-
նար. Սմբատն ալ զանազան արչաւանք-
ներու մէջ ցուցուցած իր քաջագործու-
թեամբ ու հաւատարմութեամբ բոլոր Պահլաւ նախարար-
ներուն, մանաւանդ Պահլաւունեաց թագաւորին շատ
սիրելի եղած էր:

Սմբատի խնդրուածքով Պահլաւ իշխանները դիմեցին
թագաւորին և միջնորդեցին որ անիկայ Արտաշէսին օգնե՛-
հորը գահին տիրանալու համար: Դարեհ սիրով կ'ընդունե՛-
այս միջնորդութիւնն ու Սմբատը Պահլաւ բանակով
ըրկէ Հայաստան՝ թագաւորեցնելու Արտաշէսը:

Երուանդ Ուտէացւոց* աչ-
Մի՛ յուսաք օտարէն խարհին մէջ կ'իմանայ թէ Արտա-
շէս ու Սմբատ Հայաստան կը
գան: Իսկոյն կը դառնայ Երուանդաշատ, շուտով կը
հաւաքէ Վրացի ու Հայ զօրքեր և կը հրաւիրէ կապա-
ղովկիայէն ու Միջագետքէն վարձկան զինւորներ: Նա-
խարարներուն հարուստ ընծայներ ու առատ պարգեւներ
կու տայ՝ իրեն դէմ չապստամբելու համար: Բոլոր այս
նախազգուշութիւններն ի դերև ելան. որովհետև այն-
ինչ Սմբատ ու Արտաշէս երեւցան Ուտէացւոց սահմանը
նախարարներն իրենց զօրքով անցան անոնց կողմը
Այնուհետև Երուանդի յոյսը միայն Հռոմայեցիք էին
բայց անոնք ալ կ'ուշանային:

Սմբատի բանակը Գեղար-
Յունաւորին վախճանը քունեաց սարերէն անցնելով՝
կը հասնի Երուանդաշատէն դէպի
Հիւսիս, Ախուրեան* գետին ափն և կը ճակատի Երուան-
դին դէմ: Մուրացան Սրգամ իշխանն ալ Սմբատի խոս-
տացաւ պատերազմի ատեն անոր կողմն անցնիլ:

Պատերազմը կ'սկսի. Սրգամ Սմբատի կողմը կ'անցնի:
Նախարարները՝ զայս տեսնելով՝ նոյնպէս կը թողուն Եր-
ուանդը, կ'անցնին, կը խառնուին Արտաշէսի բանակին
հետ և կը կռուին իրենց նախկին տիրոջ դէմ: Վրացի և
ուրիշ վարձկան զինւորներ կը ջարդուին ու կը փախչին,
միայն Տօրոսցի քաջերն էին որ յանդգնեցան պաշարելու
և սպաննելու Արտաշէսը: Այդ վտանգաւոր վայրկեանին
Արտաշէսի ստնտուին որդին՝ կաթընկեր եղբայրը Գիւսակ
վրայ կը հասնի ու կ'աղատէ Արքայազուներ: Երուանդի
այս վերջին յոյսն ալ կը խորտակուի. սրենթաց կը փախչի
դէպի Երուանդաշատ: Արտաշէսն ալ կը գրաւէ բոլոր
աւարն և պատերազմի դաշտը կը կօչէ Երուանդաշատ*:
Արտաշէս յաջորդ առտուն կը պաշարէ, կ'առնէ Երուան-
դաշտը: Պահապաններն անձնատուր կ'ըլլան ու Արտա-
շէսի զինւորներէն մէկը չճանչնալով՝ կ'ապսնեկ Երուանդը:

Սմբատ մտնելով Արքունական
Հայ-Արցախունեաց գանձարանը՝ կը բերէ Սանատրուկի
Հարսուքիւնը թագն և կը դնէ Արսաշեսի գրուիւր:
Այսպէս կ'սկսի Հայ-Արցախունեաց
Հարսուքիւնը (51 Յ. Բ.):

Արտաշէս կը վարձատրէ իրեն
Սրսուէս Բ.ի օգնողները: Պահլաւ զօրքերուն առատ
վարձատրութիւն նուէրներ կու տայ. Արգամին կը յանձնէ
Երկրորդական գահը, Սմբատին՝ Սպա-
րապետութիւնն ու Արիունի պաշտին վերակացութիւնը:

իր աղափարար Գիսակի ցեղին ալ՝ նախարարութիւն որ կոչուեցաւ Դիւնասեան: Բրմապետ Երուզղին բոլոր հարստութիւնները Սմբատի հետ կը զրկէ իր բարերար Պահլաւունեաց թագաւորին:



ԱՐՏԱՆԷՍ Բ.

Արտաշէս Երասխ գետին եզերքը կը վերաշինէ Արտաշատ մայրաքաղաքն և հոն կը փոխադրէ Բագարանի աստուածներուն արձանները:

Մինչ Արտաշէս զբաղած էր երկրի ներքին գործերով, Հռոմայեցիք բազմաթիւ զօրքով կը պահանջէին իրենց տուրքը: Արտաշէս դիմադրելու անպատրաստ ըլլալով՝ կը կատարէ անոնց պահանջքը:

Հազիւ Արտաշէս ազատած էր Ալանաց արեւայանք Հռովմայեցիներէն, ահա Կովկասեան շեռնակաւներ վրաց հեռ Կովկաս լեռնաշղթային Աշանաց դուռ, հիմայ Տարիեղի կիրճ՝ կոչուած կապանէն անցնելով՝ կ'արշաւեն Հայաստան: Արտաշէս իր զօրքերով կը հասնի Կուր գետի եզերքն և պատերազմի մէջ գերի կը բռնէ Աշանաց՝ թագաւորին որդին: Ծերունի թագաւորը դեսպաններու միջոցաւ կը խնդրէ Արտաշէսէն որ ետ դարձնէ գերի ինկած իր որդին: Արտաշէս կը մերժէ, որովհետեւ շատ զայրացած էր այս ասպատակներուն դէմ:



ՏԱՐԻԷԼԻ ԿԻՐՃ

Արտաշէսի տրամադրութիւնը փոխուեցաւ, երբ վերտահար, ձերունի թագաւորին աղջիկը՝ Սարեցիկ Կուր գետի եզերքը՝ դարաստանի մը վրայ կեցած՝ թարգմանի միջոցաւ սա՛ պէս խօսեցաւ հետը:

«Ո՛վ մեծ թագաւոր, ազատէ սիրելի եղբայրս, միթէ թշուառ հօրս օրն ի բուն թափած արցունքները հաճելի՞ են քեզի: Կը վայելէ՞ որ երկու դրացի ազգերն իրարմէ այդպէս վրէժ լուծեն: Կ'աղաչեմ գթա՛ ձերունի հօրս և ինձի նուիրէ սիրելի եղբայրս:»

Արտաշէս այս խօսքերէն սթափեցաւ, Ալանաց թագաւորին աղայն արձակեց ու Սաթենիկն իրեն հարսնութեան առաւ: Ընծայ զրկեց շատ ոսկի ու կարմիր մորոր այս լեռնականներուն մէջ շատ յարգի էր:



ՍԱԹԵՆԻԿ

Արտաշէս ա՛յնպիսի փառաւոր ու ճոխ հարսնիք կատարեց որ անոր նմանը բնաւ չի յիշատակուիր Մեր Պատմութեան մէջ: Գողթան երգիչները յաւերժացուցին այս հարսնիքը:

Արտաշէս իր երկարատև թագաւորութեան ընթացքին մէջ աշխատեցաւ երկիրը խաղաղ պահել, օտար աշխարհներէ զաղթականներ բերել տալով՝ արհեստները

ու առեւտուրը ծաղիկեցուց Հայաստանի մէջ, և զայն ուրիշ աշխարհներու հետ սերտ յարաբերութեան մէջ դրաւ: Կանուրջներ շինեց, գետերն ու ծովերը նաւարկելի դարձուց, Հայերն ընտելացուց Գրի գործածութեան, նաև օրեր, շաքարներ, արխաններ ու սարիներ հաշուեցաւ: Ամեն տեսակ ուտեստն ու գիտութեանց սերը վառեց ամենուն արտիկ մեջ: Ուստի Հայ ժողովուրդը զայն շատ սիրեց՝ ու անմահացուց երգերու մէջ՝ գովելով թէ Արտաշէսի օրով Հայաստանի մեջ պարսպ ու անվշակ հող մնացած չէր ու անգործ մարդ չկար բնաւ:

Գ Ա Ս

Թելադրութեամբ

Արսաշես արեայորդին ո՛ր կը մեծնար. — Սմբատ ինչո՞ւ սիրելի եղած էր Դարեհի. — Պահլաւ իբխաններն որո՞ւ խնդրուածքով դիմեցին Դարեհի. — Ինչի՞ համար. — Դարեհ այս խնդրուածքն ընդունելով՝ ի՞նչ կ'ընէ. — Ի՞նչ կը նշանակի «Մի՛ յուսա՛ք օսարէն». — Երուանդ ո՛ր կ'իմանայ իր հակառակորդներուն յարձակումն եւ դիմադրելու համար ի՞նչ կ'ընէ. — Չորո՞նք կը կառաւ եւ ինչո՞ւ. — Երուանդի նախազգուշութիւններն ինչո՞ւ ի դերեւ ելան. — Երուանդ յոյսն որո՞նք վրայ դրաւ. — Սմբատի բանակն ո՛ր կը հասնի. — Ո՞վ խոսացաւ Սմբատի կողմն անցնիլ. — Նախարարներն ե՞րբ Սմբատի կողմն անցան. — Որո՞նք ջարդուեցան. — Որո՞նք փախան. — Որո՞նք յանդգնեցան սպաննել Արսաշեսը. — Արեայագունն որո՞ւն շնորհիւ ազատեցաւ. — Երուանդ ե՞րբ եւ ո՛ր կը փախչի. — Արսաշես ինչե՞ր կը գրաւէ. — Ե՞րբ կը պաշարեն Երուանդաւասը. — Որո՞նք անձնա-

սուր կ'ըլլան ու Երուանդ ինչպէս կ'սպաննուի. — Ո՞վ քաղաւոր կը պսակէ Արսաւեսն եւ ի՞նչպէս. — Արսաւեսն զորո՞նք կը վարձարէ. — Արգամին ի՞նչ կը յանձնէ. — Ի՞նչ կը նշանակէ Երկրորդական գահ. — Սմբատին ի՞նչ պատժումներ յանձնեց. — Ո՞ր ցեղը Դիմախեան կոչուեցաւ. — Ի՞նչ կը նշանակէ Դիմախեան. — Դարեհին ինչե՞ր զրկեց. — Արսաւեսն ո՞ր քաղաքը վերաբնեց. — Հոն ինչե՞ր փոխադրեց. — Հռոմայեցիք ե՞րբ եւ ինչո՞ւ յարձակեցան Արսաւեսի վրայ. — Արսաւեսն ինչո՞ւ կասարեց անոնց պահանջքը. — Որո՞նք Կովկասէն արեւելեցին. — Արսաւեսն ի՞նչ զօրեւորով ո՞ւր հասաւ. — Զո՞վ գերի բռնեց. — Ալանաց ծերունի քաղաւորն ի՞նչ խնդրեց. — Արսաւեսի սրամաղրութիւնն ե՞րբ փոխուեցաւ. — Սաքեցիկ ի՞նչպէս համոզեց Արսաւեսը. — Արսաւեսն զո՞վ առաւ կնութեան. — Ի՞նչ բնծայեց զրկեց. — Արսաւեսն ինչպիսի՞ հարսնիք բրաւ. — Ի՞նչ կ'ըսէին Գողթան երգիչները. — Արսաւեսն ինչե՞ր բերաւ օսար երկիրներէ. — Ինչե՞ր ծաղկեցուց. — Ինչե՞ր շինեց. — Հայերն ինչերո՞ւ բնեկացուց. — Ինչերո՞ւ սերը վառեց Հայոց մէջ. — Հայերն Արսաւեսը գովելու համար ի՞նչ կ'երգէին:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Ս Վ Ա Ր Ա Ռ Ի Թ Ի Ն Ն

Երբ ցեղերն իրարու հետ թ շնամական յարաբերութեան մէջ էին, մարդիկ իրենց չունեցածը կամ իրենց երկիրը չգտնուածը կ'ըստանային աւազակութեամբ, յափշտակութեամբ ու կռիւններով:

Այն ցեղերն որ զլիաւորաբար քրտորութեամբ կ'ըրազէին՝ կը յարձակէին ձկնորս ու հացահատիկ մշակող ցեղերու վրայ և կը գողնային կը յափշտակէին անոնց բերքերը: Նոյնը կ'ընէին նաև ձկնորսներն ու հողագործներն որսորդներու:

Զունեցածն ու պէտք եղած իրերն աւազակութեամբ ձեռք բերել

ըլլալն աստիճան սովորական դարձած էր որ մարդիկ նոյն իսկ կը պարծենային թէ ո՞վ ո՞րչափ բան յափշտակած է: Ճաճախ նոյն իսկ աղջիկներն ու կիներն ալ կը յափշտակէին: Բայց այս կերպ ապրելու սովորութիւնը հետզհետէ կը պակսի. ցեղերը կ'սկսին աւելի հաշտ ապրիլ իրարու հետ ու կռուիլ միայն բացառիկ պարագայներու մէջ:

Այնուհետև մարդիկ փոխանակ աւազակութեամբ իրարմէ խելու, յափշտակելու՝ կը փոխանակէին այն առարկայներն ու իրերը, ինչ որ իրենց համար աւելորդ էր: Որսորդ ցեղերն իրենց որսերէն աւելցած մուշտակները կուտային ձկնորս, խաշնարած կամ հողագործ ցեղերու և անոնցմէ կ'ստանային այն բերքերը, ինչ որ անոնց աւելորդ էր: Նոյնը փոխադարձաբար:

Գրամի մասին այն ատեն մարդիկ դեռ գաղափար չունէին, իսկ առանց դրամի առեւտուրն ու փոխանակութիւնը շատ դիւրին չէին: Իսկիւրան դրամի տեղ կուտային ընտանի անասուններ, մուշտակներ և այնպիսի իրեր որ մարդոց համար շատ անհրաժեշտ էին:

Երբ առեւտուրը հետզհետէ զարգացաւ, յառաջ եկան այնպիսի մարդիկ որ իրենց ամբողջ կեանքն առեւտուրով կ'անցընէին: Այնուհետև առեւտուրը բոլորովին գիւրացաւ. բոլոր մարդիկ ալ հարկ չէին դրար իրենց պէտք եղածները ստանալու համար՝ հեռաւոր ճամբորդութիւններ կատարել. միայն վաճառականները կը ճամբորդէին: Ասոնք շարունակ երկրէ երկիր շրջելով՝ կը բերէին, կը յանձնէին ամէնուհեղած ապրանքը:

Վաճառականները տեղէ տեղ պտտելով շարունակ՝ գիտէին թէ ո՞ւր սա ապրանք կը փնտռուէր և թէ ո՞ր տեղէն ո՞ր ապրանքը կարելի էր ստանալ: Այսպէս զանազան երկիրներու ապրանքներն իրարու հետ կը փոխանակէին:

Վաճառականներն ամէն տեղ օտար, պանդուխտ կը համարուէին, բայց ամէն տեղ սիրուած հիւրերն էին ու միշտ կը պաշտպանուէին աւազակներու դէմ:

Առեւտուրն ու վաճառականութիւնն ամէնէն աւելի զարգացաւ այն աղքատ երկիրներու մէջ որ մեծ գետերու և ծովերու մօտ կ'ապրէին, որովհետև հին ատեն հաղորդակցութեան ամէնէն լաւ միջոցները գետերն ու ծովերն էին, իսկ ցամաքային լաւ ճամբայներ քրեթէ չկային:

Հայ վաճառականները հին ատեն Տիգրիս ու Եփրատ գետերու վրայ Տիամաուով կը կատարէին իրենց առեւտրական ճամբորդութիւններն և գետին հոսանքն ի վար կ'երթային մինչև Բարելուն: Հոն իրենց վաճառքները ծախելէ ետք, տիկիրը կը բաժնային էշերու, ձիերու կամ ուղտերու վրայ և կը գառնային իրենց երկիրը:

Առեւտուրն ու վաճառականութիւնն ո՛րչափ կը զարգանայ, այնչափ ալ անյարմար կը դառնար սպորանքներն իրարու հետ փոխանակելու եղանակը, մտնուանդ երբ ոսկին ու արծաթը գտնուեցան: Ի սկզբան այդ մետաղները կաշա ու կոպիտ կտորներով կը դործածէին: շատ ետքն է որ մտադիկ սկսան այդ մետաղներէն զանազան ձեւով ու մեծութեամբ դրամներ պատրաստել:

19. Ա. Ր Տ Ա. Ի Ա. Չ Դ. Բ.

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք

«Անիծուած է անիկա որ իր հայրն ու մայրը կ'անարգէ:»

Մինչ Արտաշէս Բ. Ադրիանոս կայսեր առաջարկութեամբ Պարթեւաստան կ'երթար դաշնադրութիւն կընքելու Հռոմայեցւոց ու Պարթեւաց միջև, ճամբայն սաստիկ հիւանդացաւ: Մարդ զրկեց Երիզա՞ աւանն որ Անահիտ Աստուածուհիէն կեանք ու բժշկութիւն խնդրէ: Բայց մարդն ետ չդարձած՝ Արտաշէս մեռաւ:

Ժողովուրդը մեծ պատիւներ ընծայեց իր սիրելի թագաւորին: Սիրալի ու Խիրալի կերպով կատարեց անոր մեծահանդէս յուզարկաւորութիւնը: Դազաղն ոսկեղէն էր, մէջի բարձն ու անկողինը բնհեղէ. հագած էր ոսկեթել հանդերձներ, գլուխը թագ դրած ու ոսկեպատ զէնքն առջևը դրած: Դազաղին քովերէն կ'երթային կարգաւ որդիներն ու ազգականներն որոնց կը հետեւէին զինուորական պաշտօնեայնորդ, նահապեաները, նախարարներն իրենց գունդերով ու վաշտերով: Առջեւէն պղնձէ շեփորներ կը նուազէին, ետեւէն կու գային սեւազգեստ երգեցիկ կոյսեր ու լալկան կիներ: Ասոնք մի առ մի կը յիշէին Արտաշէսի մեծ դործերն ու բարձ-

րագոյ, խմբովին կ'ողբային անոր կորուստը: Ամէնէն ետքը կը հետեւէր ժողովրդին բազմութիւնը: Այսպիսի հանդէսով տարին ու թաղեցին իրենց միակ սիրելի թագաւորը: Շատեր կ'ողբային ու կը հառաչէին մեռած Արտաշէսի բոլորսիքը: Սիրելի կիները, հարձերն ու ծառայները կը կոծէին. «Ալ ինչո՞ւ ապրինք Արտաշէսի մահէն ետք:» Անոր անկողինն քով կամաւոր կը դնուէին:

Ծանր էր հայրատեաց, նախան- Անարժան որչի՞ն ճոտ Արտաւազդին համար տեսնել այս ամենքը: Անիկա սրտնեղութեամբ բացազանչեց.

«Հայր, դուն գացիր, ամբողջ երկիրը հետդ տարիր, ես աւերակներուն վրայ ինչպէս թագաւորեմ:»



ԱՐՏԱՒԱՅՆ Բ. ԱՆԿՈՒՆԳԻ ԵՐ ԳԼՈՐՈՒՄ

Այն ժամանակ հայրն անիծեց իր անզգամ որդին և ըսաւ. «Երբ որ դուն սրսի ելլես Ազատ Մասիս լեռը, քաջերը—սարերու ոգիները բռնեն քեզ ու տանին վեր՝ Ազատ Մասիսի վրայ. հոն մնաս և լոյս չտեսնես:»

Արտաշէսի յաջորդեց Արտաւազդի՝
 Վասին մահը Ասիկա իր եղբայրները հետապնդեց Արտաւազդէն Ադիոնիս՝ ու Առքերանի՝ գաւառները, միայն իրենք քով պահեց Տիրանն իբրև յաջորդի։
 Եւ ահա օր մը, անցնելով Արտաշատու կամուրջէն, մինչ Մասիս լեռան քով կրնճ ու ցիւ կ'որսար, յանկարծ կը խելագարի, իր ձիով անդունդ մը կը գլորուի ու կ'անյայտանայ։ Կ'ըսէին թէ քաջերը զայն կալանաւորեցին ու բանտարկեցին մութ այրի մը մէջ։ Անոր ձեռքերն ու ոտքերն ամուր շղթայուած են. երկու հաւատարիմ բարակներ շարունակ կը կրծնն երկաթէ շղթայները, կը ջանան փշրել զանոնք՝ Արտաւազդ դուրս նետելու ապառաժներու ծոցէն որ վերջ տայ աշխարհի։ Բայց դարբիններու կռաններու հարուածներէն Արտաւազդի շղթայները կը զօրանան որով չի կրնար պրծիլ Մասիսի մէջէն։ Դարբինները Քրիստոնէութեան ատեն իսկ կիրակնամուտին երեք չորս անգամ մուրճը կը զարնէին ո՞ր Արտաւազդի շղթայները պնդանան։

Աստուած չընէ՝ որ Արտաւազդի կապանքները խոր տակուին, ինք ազատի և դուրս ելլէ։

Գ Ա Ս

Թելադուրեանք

Արսաշես Բ. ո՞ր հիւանդացաւ. — ո՞ր մարդ դրկեց եւ ինչո՞ւ. — Արսաշեսի յուղարկաւորութիւնն ի՞նչպէս կատարեցին. — Ժողովուրդն ի՞նչ բրաւ եւ որո՞ւ. — Ի՞նչն ոսկեղէն եր. — Բեհեզե՞. — Ի՞նչ հազցուցած էին. — Գլուխն ի՞նչ դրած եր. — Որո՞նք կ'երթային դագա-

դին եովէն. — Առջեւէ՞ն. — Ետեւէ՞ն. — Լակկան կիներ ի՞նչ կը յիշէին, — Ամենէն ետ որո՞նք կը հետեւէին. — Որո՞նք կամաւոր զոհուեցան. — Ժողովրդական այս ցոյցն որո՞ւն ծանր եկաւ. — Արսաւազդ նախանձէն ի՞նչ յայտնեց. — Հայրն ի՞նչպէս անիծեց իր որդին. — Ո՞վ յաջորդեց Արսաշես Բ.ի. — Արսաւազդ Բ. ի՞նչ բրաւ իր եղբայրները. — Արսաշեսի կամուրջէն անձնելու ատեն Արսաւազդ ի՞նչ եղաւ. — Որո՞նք զինք բռնեցին ու տարին Մասիս լեռան այր մը. — Անոր ձեռքերն ու ոտքերն ի՞նչ բրին. — Անոր հաւատարիմ բարակներն ի՞նչ կ'ընեն շարունակ. — Ինչո՞ւ չեն յաջողիր. — Այդ սովորութիւնը Քրիստոնէութեան ատեն ալ կա՞ր. — Չեղողներն այդպիսի աւանդութիւն մը կա՞յ. — Ինչե՞ր կը պատմեն. — Արսաւազդի նմանող մարդիկ գոյութիւն ունեցա՞ծ են. — Ի՞նչ հեքեաք գիտե՞ք այս մասին։

Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ւ Մ

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Կ Ե

Բոլոր չին ազգերու պէս չեթանոս Հայերն ալ քաղմակիւն էին Այդ իրաւունքէն աւելի կ'օգտուէին ազատութեամբ, որովհետեւ անոնք հարուստ էին և բազմաթիւ կիներ ու զաւակներ պահելու միջոցներ ունէին կիներէն մէկն էր գլխաւորը. միւսները հարս կը կոչուէին Այսպէս թագաւորին բազմաթիւ կիներէն մէկը կը կոչուէր քաղաւի, նախարարներուն ալ իշխանուհի։

Սովորաբար գլխաւոր կնոջմէ ծնած անդրանիկ զաւակը կը ժաւանդէր Արքունի կամ՝ Նախարարական գահը։ Ատոր համար էր որ թագաւորին կիներուն ու անոնց զաւակներուն մէջ միշտ վէճեր ու կռիւներ կը ծագէին։

Այդ կռիւներէն ու վէճերէն խուսափելու համար՝ թագաւորներն առհասարակ իրենց քով կը պահէին ու կը մեծցնէին միայն թագաժառանգը։ Մնացածներն ալ մանուկ հասակէն կը հեռացնէին Արքունիքէն։

Մեծամեծներու տունները շատ փառաւոր հարսնիք կը կատար-

րէին: Սովորութիւն էր հարսին գլուխը մտրդարիտ, փետին ալ սակի գրամներ լծափել: Հարսնէքը կը տեւեր քանի մը օր:

Ննջեցեալներու առթիւ մեծ սուգ կը պահէին: Յուզարկաւորութեան ատեն դազազին առջեւէն կ'երթար երաժշտական խումբն որ փողեր կը հնչեցնէր ու քնար կ'ածէր: Ետեւէն կ'երթային վարձկան յայկան կիկներ որոնք սեւ զգեստներ հագած՝ երգերով կը գովէին մեռնողը, իրենց երեսը կը ճանկրատէին, կուլային, և ուրիշներն ալ կը լացնէին:

Ննջեցեալին տէրերը սովորաբար սե զգեստներ կը հագնէին:

20. Խ Ո Ս Ր Ո Վ Ա . Մ Ե Ծ

Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Ծ Ք

«Ո՛վ որ իր եղբայրը կը սիրէ՝ լուսնի մէջ կը բնակի:»

Արտաշէսի յաջորդեցին իր վաղաբու Նաւասարդ եղբայրները — Տիրան Ա., Տիրան Գ.: Ատոր ալ յաջորդեց Վաղարշ իր որդին որ հիմնեց Վաղարշապատը՝ քաղաքը Մուրց* ու Երասխ գետերուն իրար խառնուելու տեղը: Վարդգէսի* աւանն ալ պատեց ամուր պարիսպներով ու անուանեց Վաղարշապատ* : Վաղարշի հրամանաւ վերահաստատուեցաւ Նաւասարդի տունը որ կը կատարուէր Բագաւան* քաղաքի մէջ Նպատ* լեռան հիւսիսային ստորոտը: Հոս կը գտնուէր Ամենաբէր ու Վանասուր—Հիւրընկալ աստուածին բազիլը: Հոս կատարուած զոհերուն միւսը կը բաժնէին անցորդներուն: Ատոր օրով հիւսիսային վայրենի ցեղերէն՝ Խաղիւրներն* ու Բաւիլները* ձորայ պահակէն* անցնելով՝ յարձակեցան Հա-

յաստանի վրայ: Վաղարշ քաջութեամբ հալածեց դանոնք, բայց ինկաւ թշնամուցն նետէն:

Հօրը մահուան վրէժն առաւ Խոսեօսուով Մեծ րով Ա. Մեծ որ յարձակեցաւ կովկասի լեռնականներուն վրայ, յաղթեց անոնց, արձան մը կանգնեց ի նշան այդ յաղթութեան և ի դարձին հետը բերաւ բազմաթիւ պատանդներ:

Խոսուով Ա. ի ատեն Պարսկաստանի Պակաւները մէջ Պահլաւ իշխանութիւնը տկարացաւ կը կործանին և թագն անցաւ Սսանդցի* Սասանեան Արտաշիւի ձեռքը (226) որ Պարսկաստանի մէջ հեմնեց Սասանեան իշխանութիւնը* : Մեծն Խոսուով Ա. փութաց իր ազգականին օգնութեան, բայց արդէն ուշ էր. Արտաշէս Պահլաւունի սպաննուած էր:

Խոսուով այնուհետեւ Հռոմայեցոց օգնութեամբ պատերազմեցաւ Արտաշիւի հետ, յաղթելով՝ հասաւ Տիգրան ու Արտաշիւրը փախցուց մինչև Հնդկաստան:


Արտաշիւ խորամանկութեան ղիսասանեան Գաւ մեց: Անոր խորհրդով Անակ Պահլաւունի իշխանն իբր թէ Արտաշիւէն փախստական ու հալածական՝ իր ընտանիքով ապաւինեցաւ Խոսուովի քով: Խոսուով Ուտի գաւառին մէջ սիրով ընդունեց Անակը:

Գարնան՝ որսի ատեն Անակ Խոսուովը սպաննեց: Նախարարները հետապնդեցին Անակն ու Արտաշատու կամուրջին վրայ բռնելով զայն՝ գետը նետեցին: Անոր ցեղն ալ սրէ անցուցին ոգեվար թագաւորին հրամանաւ (261): Միայն ազատեցաւ Գրիգոր անուն արու գաւառի մը իր ստնտուին ձեռքով:

**Հայասան
Սասանեան երկիր**

Խոսորովի մահէն ետք Հայ նա-
խարարները Փռիւզայի* զօրքերու
օգնութեամբ փորձեցին զիմադրել
Արտաշիւրի յարձակման, բայց յաղթ-
ուելով՝ ցրուեցան ու Արտաշիւր սիրեց Հայասանի: Ար-
տաշիւր հրամայեց որ Խոսորովի ցեղը սրէ անցնեն. միայն
ազատեցան Տրդատ ու իր քոյրը՝ Խոսորովի դուստր: Արտա-
շազդ Մաւիկոնեան Տրդատը փախցուց Հռովմական եր-
կիրը, Օսա Աւեստանի իշխանն ալ ազատեց Խոսորովի-
դուստրն ու Արքունի գանձերուն հետ պահեց Անի
ամրոցը:

Այսպէս Հայասան դարձաւ Պարսկական Ասիանց:



Գ Ա Ս

Թեւաղութամբ

Որո՞նք յաջորդեցին հետզհետեւ Արաւազդ Բ. ի . —
Որո՞նք որդին եր Վաղարշ. — Ո՞ր շինեց Վաղարշաւան
քաղաքը. — Ո՞ր քաղաքը նորոգեց ու Վաղարշապատ
կոչեց. — Հիմայ ի՞նչ կը կոչուի. — Վաղարշ ո՞ր տեղ
հաստատեց. — Նաւասարդի տեղն ո՞ր կը կասարուէր.
— Վանասուր ի՞նչ կը նշանակէ եւ ո՞ր կը գտնուի. —
Ջոհերուն միսն որո՞նց կը բաժնէին. — Հիւսիսային ո՞ր
վայրենի ցեղերը յարձակեցան Հայասանի վրայ. —
Վաղարշ ո՞ր մեռաւ. — Ո՞վ առաւ Վաղարշի վրեժը.
— Խոսորով Ա. ի՞նչ բրաւ. — Ինչո՞ւ սնկեց. — Պահլաւ-
ներու իշխանութիւնն ե՞րբ սկսեցաւ. — Սահրեցի Սա-
սանեան Արտաշիւր ի՞նչպէս եւ ի՞նչ հիմնեց. — Ո՞վ փու-
քաց Արաւանի օգնութեան եւ ինչո՞ւ. — Խոսորով Ա.

որո՞նց օգնութեամբ որո՞ւ յաղթեց եւ մինչեւ ո՞ր փախ-
ցուց. — Արտաշիւր ինչո՞ւ խորամանկութեան դիմեց. —
Ո՞վ կեղծաւորութեամբ Խոսորով Ա. ի քով ապաւինեցաւ.
— Անակ ե՞րբ ապանեց Խոսորովը. — Նախարարներն
ի՞նչ բրին Անակը. — Յե՞ղբ. — Ո՞վ ազատեցաւ եւ որո՞ւ
ձեռնով. — Նախարարներն ի՞նչ փորձեցին եւ ե՞րբ. —
Արտաշիւր ո՞ր դիմեց. — Խոսորովի ցեղն ի՞նչ բրաւ. —
Ո՞վ փախցուց Տրդատն եւ ո՞ր. — Խոսորովի դուստր. —
Այնուհետեւ Հայասան ի՞նչ դարձաւ:

Ը Ն Յ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ո Ւ Ե Տ Ա Տ Ե Ղ Ի Ն Ե Ր

Աստուածներու անունով Հայաստանի մէջ զանազան տեղեր
տաճարներ շինուած էին որոնց մէջ զետեղած էին անոնց արձանները:
Փողովուրդը տարուան մէջ որսուած օրեր ուխտի կ'երթար այդ տե-
ղերն և քուրմերու միջոցաւ զոհ կը տանէր:

Ամենէն նշանաւոր ուխտատեղին էր Վանասուրի Տաճարն
որ կը գտնուէր Քազրեւանդ—Այաշկերի Քազաւան գիւղը: Այդ
տաճարին տանը կը կատարուէր Օգոստոս 10ին, Նաւասարդին որ
Հայ տոմարին համեմատ Նօր տարին էր:

Հիմայ Վանասուրի տաճարին տեղ կը բարձրանայ Ս. Յով-
հաննէս եկեղեցին:

Արդի վանքերուն և ուխտատեղիներուն պէս մեհտաններուն կից
շինուած էին ուխտատեղիներու յատուկ ընդարձակ ընկալարաններ:

Ուխտատեղիները, ինչպէս հին աստիճանային նոյնպէս հիմայ ալ, Հա-
յաստանի շատ տեղեր տօնավաճառներ են: Մարդիկ զանազան կող-
մերէ հոն կը բերէին իրենց ապրանքներն ու կը ծախէին:

Ուխտատեղիները միեւնոյն ատեն ընդհանուր խրախճաքի ու
դրօտանքի տեղեր էին: Ուխտատեղիներն այդ տեղերը կ'երգէին, կը
նուագէին, կը պարէին, և աշուղները մրցումներ կը սարքէին:

ՆԱԽԱՍԱՐԴԻ ՏՕՆ ԳՈՒՍԱՆ

Նաւասարդի տօն է, նոր տարի է: Աւխտաւորները մըջիւնի պէս կը դիմեն Բագրեւանդ գաւառի Բագրաւանն ու ջերմեռանդ երախտագիտութեամբ կը փառաբանեն Վանասուր աստուածը: Անոնք հաւաքուած էին Հայաստանի զանազան կողմերէն նուիրական մեհեանին մէջ՝ սրտաբուրդի զոհերով պատուելու Ամենայրեւ աստուածն որ առատ հունձք պարգեւած էր արտերուն, և լիութիւն՝ սյգիներուն:

Կուսքին բազինը զարդարուած է ծաղիկներով ու նորախոյժ պտուղներով: Երկարգգեստ քուրմերն անուշահոտ խուռկով զոհեր կը մատուցանեն, Զրհեղեղի յիշատակին ջուր կը սրկեն ժողովրդին վրայ և աղանի կը թուցնեն: Ամբողջ կը հետեւի անոնց օրինակին: Մարդ մնացած չէ որ չթրջուի: հաղարաւոր ձեռքերէ վեր կը սլանան անհամար աղանիներ և օրին մէջ կը թուչին երամ երամ: Անոնց հետ վեր կը սլանան ժողովրդին մաղթանքները՝ խնդրելով բարբ Անանոր մը:

Ողջակէզներու թանձր ծուխ մը պտտած է մթնոլորտն և մաւախուղի պէս կը փռուի գետինը: Փոշն ու թմրուկը կը լծնգացնեն օդը: Զիբրու խնջիւնը կը խառնուի աւխտաւորներուն երգերուն հետ, ուրախութիւն մէն մի սայլի մէջ, մէն մի վրանի տակ:

Հեռուէն սպիտակափառ Մաւիւի գագաթը հաղարաւոր կայծերով կը պոպղայ ձիւնն աշնանամուտի արեւի շեղակի ճառագայթներէն: դիմացը բաղմած է լայնանիստ Նպաս լեռն որու ստորտէն դուրս կը ցայտէ առոյգ Արածանին: Գետն օձի պէս սողալով՝ կը քուրի Բագաւանի եղբրքին ու մանուածապատ կը փակչի դէպի Տարօնի գաւառը:

Նախարարներն ալ, թագաւորն ալ իրենց ընտանիքով եկած են հանդիսատես ըլլալու տօնին: Մեհեանէն քիչ մը հեռու, բացօդայ բանակած է Արքունի զօրքը: Բանակին մէջտեղ կը բարձրանայ Արքայական երփներանգ վանքը: Նիդակներն ու սաղաւարտները կը պոպղան հոս, հոն՝ ժողովրդին մէջէն: Նախարարներու օրգիները միայն խաղեր կազմած ի պատիւ աստուածին՝ կը ցուցադրեն իրենց ձեռքին յաջողութիւնը, նետեր կ'արձակեն, նիդակ կը թուցնեն, արշաւանքներու մէջ կը մըջին: Աղտուտոտ հիւեր պար թռնած են և կը շլացնեն ամբոխն իրենց գոհարներով ու ճակատի սկիւներով: Անոնք ալ կը փառաբանեն Վանասուրը:

Թագաւորին բանակը շքեղ է. անոր դրօշակներու թեւատարած

արծիւներն աչքեր կը խաղտացնէին: Թէև թագաւորին զօրութիւնն ու հարստութիւնը մ'իծ են, բայց այդ միջոցին Վանասուրն է իշխող ամէնուն որտին: Ասոր փառքն է որ ամենքը կը յանկուցանէ:

Հոս հոն ամբոխին մէջ կը լուրի ողբերուած Գուսանի = Երգչի = Ալուզի երգն որ կը պատմէ աստուածներուն գործերը: Բամբուր ձեռքը՝ կ'երգէ Հայոց Հայկ, Արամ, Արայ, Տիգրան, Վահագն, Արտաշէս և ին. դիւցազներու զրոյցները: Գուսանը հպարտութեամբ կը փառարանէր Հայկի ազատասիրտքիւնը, Արամի քաջտիւնը, կը դովէր Արայի պարկեշտքիւնը, Տիգրանի աշխարհաշինտքիւնը, Վահագնի նրաշալի ծնունդն ու դիւցազնտիւնները, Արտաշէսի մեծագործ ուրիւններն ու անէճք կը տեղաք Երուանդ Բ. և վիշապներու ծնունդ նախանձոտ, նենգամիտ Արտաւազդի ու Մհերի գլխին: Գուսանին խօսքերը խորապէս, անջինջ կը դրօշմուէին Հայոց մտքին և զանոնք զուգի գլաւկէ գլաւկէ կ'աւանդէին՝ երբեմն աւելի գեղեցկացնելով, երբեմն ալ խառնելով ու շփոթելով:

Այդ աւանդութիւններէն էր միայն որ Հայաստանցի պատանին տեղեկութիւն կ'ստանար իր աստուածներուն, նահապետներուն, դիւցազններուն և թագաւորներուն մասին, մինչև որ Հայոց գիրը գտնուեցաւ ու գրել կարգալ սորվեցաւ:

Գ. Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

ՀԱՅ-ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ԲՐԻՍՏՈՆԷՔՈՒԹԵԱՆ ՀԱՆԱԾԻՆԻՔԻ ԱՏՆՆ

Անանէ ու Սանատրուկ կը հալածէին Քրիստոնէութիւնը: Սանատրուկ սպաննել տուաւ իր Սանգուլիս աղջիկն որ քրիստոնէայ եղած էր ու Թաղէոս առաքեալը Սանատրուկէ հտը գրեթէ 3 դար Քրիստոնէութիւնը հալածուեցաւ Հայաստանի մէջ: Մօր կողմէ Արշակունի Երուանդ Բ. դաժան իշխանը կտորել տուաւ Սանատրուկի գերդաստանը: Կտորածէն ազատեցաւ միայն Երուանդ Բ. ր թագաւոր պսակել եւ Արտաշէսը փախցուցին Պարթեւստան: Երուանդ Բ. միշտ փորձեց Արտաշէսը սպաննել՝ չարախօսելով Բագրատունի Սմբատին ու Պահլաւ թագաւորին առջեւ: Երուանդ Բ. Միջագետքը յանձնեց Հռոմայեցոց՝ անոնցմէ օգնութիւն

գտնելու յուսով Արտաշէսի դէմ երուանդ շինեց իր անունով երկու քաղաք եւ Քրմապետութիւնը յանձնեց իր եղբոր:


Երբ Արտաշէս Բ. մեծցաւ, Սմբատ Բագրատունի պահլաւ զօրքերով Հայաստան արշաւեց՝ բուն գահաժառանգը թագաւորեցնելու համար: Ետտ նախարարներ միացան Արտաշէսի ու Սմբատի, երուանդ վարձկան զինւորներով չկրցաւ յաղթել Արտաշէսի եւ ինք երուանդաշատի իր պալատին մէջ զարնուեցաւ. մեռաւ:

Արտաշէս պատերազմէն ետք կը վարձատրէ իր բարերարներն եւ կարգ մը նոր նախարարութիւններ կը կազմէ: Աշանները կը յարձակին Հայաստանի վրայ, բայց գերի կ'իյնայ իրենց արքայորդին: Արտաշէս **Սարենիկի** հետ առնանանալով՝ հաշտութիւն կը կնքէ Ալանաց հետ: Արտաշէս Հայաստանը ծաղկեցուց որով Հայ ֆաղափախորդներէս և Երզնկայէս Գարսապաղի մը սկսաւ: Արտաշէս Պարթեւաստան երթալու ատեն կը հիւանդանայ եւ կը մեռնի: Յուդարկաւորութիւնը շատ փառաւոր կը կատարուի:

Արտաւազդ Բ. զարեւով ասոր վրայ՝ հօռմէն կ'անիծուի եւ հազիւ թագաւորած՝ Մասիս լեռն որսի գացած ատեն փոսի մը մէջ կ'իյնայ:

Արտաւազդ Բ. ի յաջորդներէն Վաղարշ շինեց իր անունով քանի մը քաղաքներ, վերահաստատեց Նաւասարդի օտեր, բայց հիւսիսային ժողովուրդներու դէմ պատերազմած ատեն ինկաւ մեռաւ:

Մեծն Խոսրով Ա. իր հօրը վրէժը լուծեց, Ասոր օրով Պոնտիկա-Արշակունիները շատ տկարացած էին. **Արտաշի Սասանեան** Պարսիկ իշխանն Արշակունի Արտաւանը սպաննելով՝ գահը յախշտուկեց եւ կործանեց Պահլաւ-Արշակունեաց հարսուրթիւնը: Մեծն Խոսրով Ա. ասոր վրէժը լործելու համար՝ յարձակեցաւ Արտաշիրի վրայ եւ գայն փակցուց մինչեւ Հնդկաստան: Արտաշիր ալ Անակ Պահլաւունի իշխանը Հայաստան ղրկեց ու անոր ձեռքով սպաննել տուաւ Խոսրովը: Հայոց թագաւորը կոտորել տուաւ Անակի սերունդը, միայն ազատեցաւ Գրիգոր անուն մանուկ մը: Արտաշիր Խոսրովի մահէն ետք տիրեց Հայաստանի եւ Հայ-Արշակունի ցեղը կտրել տուաւ: Այս կտորածէն ազատեցան **Տրդատ** ու իր բոլոր՝ Խոսրովի դուստ:



Գ. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՅԵԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ԲԵՐԻՍՏՈՆԷՍԻՑԵԱՆ ՀԱՆՍՏԱՆՔԻ ԱՏԵՆ

Ո՞վ եղաւ անգլանիկ հաւատացեալ թագաւորը. — Ի՞նչպէս. — Ո՞վ եղաւ առաջին Քրիստոնէայ ազգը. — Ո՞վ Քրիստոնէութեան համար շատ նահատակ զոհեց. — Հայ կոյսերն ու կիներն ի՞նչ կը փախաբէին. — Ո՞վ եղաւ ատոնց մէջ անգլանիկը. — Սանդուխտ ի՞նչ կը համարուի ամբողջ Քրիստոնէութեան մէջ. — Սանատրուկ ինչո՞ւ Քրիստոնէայները բանտարկել հրամայեց. — Սանատրուկ ինչո՞ւ ջշագրդիւ ու մտահոգ կատաղութեան ենթարկուեցաւ. — Սանդուխտ ե՞րբ և ի՞նչպէս գերազանց զօրութիւն մը ստացաւ և վսեմ պաշտօն մը ստանձնեց. — Սանդուխտ իր հօգին ի՞նչպէս աւանդեց. — Սանդուխտի նման կոյսեր ու կիներ կը ծանչնա՞ք. — Ի՞նչ պարագայի մէջ գիւցազնարար մեռան. — Ո՞ր թագաւորները կտրել կուտան, կ'աքսորեն, կը բանտարկեն իրենց նախորդ կամ յաջորդ իշխանները. — Ինչո՞ւ. — Զորս՞ք կը ծանչնաք այսպիսի թագաւորներէն. — Զեր ատեն կա՞ր այդպիսի թագաւոր մը. — Ինչե՞ր ըրած է. — Բանակալ թագաւորներ ի՞նչպէս կը կառավարեն իրենց երկիրը. — Երեսուդ Բ. ինչո՞ւ շինեց Երուանդաշատ քաղաքը. — Մեր ատեն կը յիշե՞ք Երուանդաշատի նմանող պալատ մը. — Կրնա՞ք բաղդատել Երուանդաշատն ու Երւորդը. — Ի՞նչպէս եղաւ բռնաւորին մահը. — Սմբատի ու Արտաշէսի բանակն ո՞ր ազատարար բանակին հետ կրնաք բաղդատել. — Արտաշէս Բ. ինչ նկարագրի տէր մարդ էր. — Սաթենի՞կ. — Ո՞ր թօսքերէն այդ մասին գաղափար մը կրնաք կազմել. — Արտաշէսի հարսնիքը Հայոց ո՞ր վիճակը մեր առջև կը պատկերացնէ. — Արտաշէս Բ. ի օրով ո՞ր նորութիւնները կը կազմեն Հայոց քաղաքակրթութեան դարազնութիւնը. — Կրնա՞ք բաղդատել Տիգրան Ա. ի Վաղարշակի ու Արտաշէս Բ. ի օրով Հայաստանը. — Արտաշէս Բ. ինչո՞ւ սիրելի եղած էր Հայ ժողովրդին. — Հայ ժողովուրդն իր անհուն սէրն ու երախտագիտութիւնն ի՞նչպէս արտայայտեց Արտաշէս Բ. ի յուզարկաւորութեան ատեն. — Ի՞նչ կը նշանակէ մարդազոհութիւն. — Ուրիշ ո՞ր պարագայի մէջ մարդիկ կը զոհուին. — Արտաւազդ Բ. ինչո՞ւ փոքր գահավիժեցաւ. — Հայ ժողովուրդն զարդը մոլի զուկին մասին ի՞նչ առատեղէ հիւսած է. — Զեր բնական տեղն այդ առատեղիը գոյութիւն ունի՞. — Ի՞նչ եղանակաւ բուսներ կրած է. — Մինչև Վաղարշ Հայաստանի մէջ ո՞ր նշանաւոր քաղաքները կային. — Վաղարշ զորս՞ք շինեց. — Այդ քաղաքները

ընն որոնք մնացած են և հիմայ ինչ կը կոչուին. — Ի՞նչ նկարագրի տեր էր Սասանեան Արտաշիր. — Անա՞կը. — Մեծն Խոսրո՞վ:

Մարդիկ իրենց շահերը նախ ինչպէս ձեռք կը բերէին. — Մարդիկ ե՞րբ սկսան Փոխանակութեան. — Ե՞րբ սկսու վաճառականութիւնը. — Վաճառականներն ինչերո՞ւ ծանօթ էին. — Ի՞նչ պէտ. — Ո՞ր երկիրներու մէջ զարգացաւ Վաճառականութիւնը. — Հայոց մէջ Վաճառականութեան զարգացումն ե՞րբ սկսաւ. — Հայերն ո՞ր միջոցներով վաճառք կը ներածէին ու կ'արտածէին. — Ի՞նչ կը նշանակէ Ներածել. — Արտածել. — Փոխանակութիւնն ե՞րբ անյարմար դատուեցաւ:

Մարդիկ աստուածներն որքեղու համար ի՞նչ միջոցներ խորհեցան. — Ո՞ր գէպերը թելադրեցին մարդոց այս խորհուրդները. — Մարդոց մէջ ի՞նչպիսի մասնագէտներ յառաջ եկան. — Յարդ կա՞ն այդպիսի մարդիկ. — Որո՞նք բարեխօսի գեր կը կատարէին ասոնց մէջէն. — Մարդիկ այդ բարեխօսներն ի՞նչ կ'ընէին. — Որո՞նք փամանակի ընթացքին մէջ քուրմ կոչուեցան. — Գուրմերու պաշտօնն ի՞նչ էր. — Գուրմերն որո՞նց պէտ ասանձանշորհուրդներու ու իրաւունքներ կը վայելէին. — Որո՞նց անունով ուխտատեղիներ կային. — Որո՞նց ուխտի կ'երթային և ո՞րն էր ամէնէն նշանաւոր ուխտատեղին. — Մեհեանին կից ինչե՞ր շինուած էին և ինչո՞ւ. — Ուխտատեղիները ինչե՞ր էին նաև. — Հայոց Նոր տարին ե՞րբ կ'իկուէր. — Այդ տօնն ո՞ւր կը կատարէին. — Ո՞ւր է Բագաւան. — Հիմայ ի՞նչ կը կոչուի Բագաւանի մէջ զո՞վ կը պատուէին. — Ինչո՞ւ. — Հին ասոն բոյրերու ինչե՞ր կը նուիրէին Ամենաբարձր աստուածին. — Այս պաշտամունքին ո՞ր հետքը կայ մեր մէջ. — Հիմայ Հայ եկեղեցւոյ մէջ ամէնուն տեղ ո՞ր բոյր կ'օրհնեն և ե՞րբ. — Ինչո՞ւ. — Նաւասարդին ի՞նչ սովորութիւն կար. — Հիմայ ալ կա՞յ այդ սովորութիւնը. — Ե՞րբ կը կատարէրք. — Ուրեմն Վարդավառը Հայոց ո՞ր տօնն է. — Նաւասարդի հանդէսին որո՞նք ներկայ կը գտնուէին. — Որո՞նք խաղեր կը կազմակերպէին. — Որո՞նք պար կը բռնէին. — Ի՞նչ կը նշանակէ Գուսան. — Գուսանները հիմայ ի՞նչ կը կոչուին. — Գուսաններն ի՞նչ կ'ընէին. — Ո՞ր նուագարանով կը փառարանէին Հայոց նախնիքը. — Գուսանները Հայկի ի՞նչը կ'երգէին. — Արավի՞ն. — Արայի՞ն. — Տիգրանի՞ն. — Վահագնի՞ն. — Արտաշեսի՞ն. — Զորո՞նք կ'անիծէին. — Գուսաներգութիւնն ի՞նչ կ'ընէր Հայոց վրայ. — Հայերն այդ երգերու պարունակութիւնն ի՞նչպէս կ'աւանդէին զաւակէ զաւակ. — Չեր բնական տեղն ո՞ր գուսաներգութիւնը ծանօթ է. — Զորո՞նք կը փառարանեն. — Զորո՞նք կ'անիծեն:

Գ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

1. Բաղդատել Հայաստանի բարգաւաճումն Արամի, Տիգրան Ա. ի, Վաղարշակի ու Արտաշէս Բ. ի օրով:
2. Ի՞նչպէս յառաջ եկաւ Քրմութիւնն ու ինչո՞ւ զօրւոր դիրք կազմեց:
3. Բաղդատել Քրմութեան ու Կղերականութեան = Եկեղեցւոյ նուիրապետութեան զբաւած դիրքերը:
4. Խմբագրել Նաւասարդի տօնին բնորոշ հանգամանքները:
5. Բաղդատել Արտաշէսի, Արտաւազդի, Մհերի զրոյցներու եղանակաւորումները, եթէ կան ժողովուրդին մէջ:
6. Բաղդատել Վաճառականութեան ու Հաղորդակցութեան հետզհետէ կրած բարեշրջումները:
7. Թագաւորներն ի՞նչպէս կը բռնակալեն. Երուանդ Բ. ի հետ բաղդատել ծանօթ բռնաւորները:
8. Համառօտակի, կարգաւ պատկերացնել գիտերը:
9. Համառօտակի պատկերացնել Ընկերային ու Կրօնային դիմայեղումները:

Գ. ՀԱՅ-ՊԱՀԼԱԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

21. ՏՐԴԱՏ ՈՒ ԳՐԻԳՈՐ ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՉ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

«Յիմարներուն սիրք՝ իրենց բեր-
նին մէջ, իմասուններուն բերանը՝
իրենց արին մէջ:»

Տրդատ կը մեծնար ու կը կրթուէր
Հռոմէական երկրին մէջ: Անիկա իր
Քաջութեամբ ու մարմնական ուժով
հուշակաւոր եղաւ: Անգամ մը վայրենի
ցուլի եղջիւրներէն բռնեց ու վիզը դարձնելով՝ սպան-
նեց: Ուրիշ անգամ մըն ալ իր հակառակորդին սրընթաց
կառքը բռնեց, կեցուց: Պատերազմի մէջ ալ մեծամեծ
քաջութիւններով հիացում կ'ազդէր Հռոմայեցւոց: Մինչ
Հռոմայեցի զօրքը սովէն կատաղած՝ յարձակեցաւ, սպան-
նեց Պրոքոս կայսրը, Տրդատ իր պաշտպան ու բարեկամ
Լիկիանոս կոմսի դրան առջև մինակ կանգնած՝ թող
չտուաւ որ ներս խուժեն ու անոր լինասին: Պարսից Պա-
տերազմին մէջ երբ կայսրը յաղթուեցաւ ու զօրքերը
փախան, Տրդատի ձին վերաւորուած ըլլալուն՝ ինք ետ
մնաց: Երբ Եփրատի քով հասաւ, Տրդատ իր հագուստն
ու ձիու սարուածքը մէջքին կապելով՝ լողաց, անցաւ
գետը: Գոթացւոց* Հոյի թագաւորին հետ ալ մենամար-
տեցաւ և յաղթելով՝ գերի տարաւ զայն Դիոկղեսիանոս

կայսեր: Տրդատ այս քաջութեան համար սերելի եղաւ
Դիոկղետիանոս կայսեր: Դիոկղետիանոս ուզելով կրկին
Հայաստանն իր գերիշխանութեան տակ առնել՝ զօրք
տուաւ Տրդատին որ Պարսից դէմ պատերազմի:



ՄԵՆՆ ՏՐԴԱՏ

Փախստական նախարար-
Տրդատ կը յաղթէ Պարսից ներէն շատերն ու բախտութեամբ
ու կը բազաւորէ Հայոց դիմաւորեցին Տրդատը կեսա-
րիոյ* մէջ ու միացան անոր
հետ, Օտա Ամատունի բերաւ յանձնեց Խոսրովի դուխան

ու Արքունի դանձերը: Տրդատ զայն կարգեց Տերու-
թեան Հագարապետս—Վերակացու և Արտաւազդ Մամի-
միկոնեան ալ՝ Սպարապետս:

Հայ ու Հռոմայեցի զօրքերով Տրդատ հալածեց Պար-
սիկներն և կրկին տիրեց իր հայրենի թագին: Յաջորդ
տարին արշաւելով Պարսկաստան՝ իր անձնական քաջու-
թեամբ սարսափ ազդեց թշնամուոյն:

Հայաստանը թշնամիներէ մաքրելէ ետք, ամուսնա-
ցաւ Աշխարհար թագաւորի աղջիկ՝ Ասիսիկի հետ: Չայն
Արշակունի գրեց, թագ դրաւ անոր զլուխն ու կարգեց
Հայոց թագուհի:

Անակի որդին՝ Գրիգոր ծը-

Գրիգոր Կեսարիոյ մէջ նաւ Վաղարշապատի մէջ (257):

Երեք տարեկան էր, երբ իր
դաւաճան հօր ընտանիքը սրէ անցաւ, միայն ինք ազա-
տեցաւ Սոփիա անուէնով ստնաուին ձեռքով: Սոփիա
Կեսարիա տարաւ Գրիգորը, մկրտեց ու քրիստոնէայ
դարձուց: Գրիգորը Կեսարիոյ մէջ սորվեցաւ յունարէն
ու ասորերէն: Երբ Հափահաս եղաւ, ամուսնացաւ Մա-
րիամ անուէնով յոյն աղջկան մը հետ ուրիշ ունեցաւ երկու
զաւակ՝ Վրթանէս ու Արիստակէս: Երեք տարի ետք
իրարմէ սիրով բաժնուեցան Աստուծոյ ծառայելու համար:
Գրիգոր Արիստակէսը յանձնեց դայեակներու և ինք
գնաց Տրդատ թագաւորին քով որ հաւատարիմ ծառա-
յութեամբ փառէ իր Անակի հօր գործած մեղքը: Իսկ Գրի-
գորի կինը՝ Մարիամ երէց որդին հետն առնելով՝ մտաւ
Կոռասնաց վանքը:

Գ Ա Ս

Թելադրութեամբ

Տրդատ ո՛ր կը մեծնար. — Ինչո՞վ նշանաւոր հան-
դիսացաւ. — Անգամ մը ի՞նչ փառութիւն գործեց. —
Ուրիշ անգամ մը. — Ո՞վ էր Լիկիանոս. — Ասոր
դրան առջեւ ի՞նչ քրաւ. — Պարսից պատերազմին մէջ
Տրդատ ի՞նչ փառութեամբ նշանաւոր եղաւ. — Տրդատ
որո՞նց հետ մեծամարտեցաւ. — Ի՞նչ եղաւ այս փառու-
թեան վարձատրութիւնը. — Որո՞նք դիմաւորեցին Տր-
դատն եւ ո՛ր. — Օտա Ամասունի գորոնք բերաւ յանձ-
նեց Տրդատի. — Տրդատ Օտան ինչո՞վ վարձատրեց. —
Չո՞վ կարգեց Սպարապետս. — Տրդատ որո՞նց շնորհիւ
յաղթեց պարսից եւ ո՛ր սիրեց. — Ո՞ր արեւելեց. —
Ե՞րբ ամուսնացաւ եւ որո՞նց հետ. — Անակի որդին ո՞վ
էր. — Ո՞ր ծնաւ. — Քանի՞ տարեկան էր, երբ կո-
տորածէ ազատեցաւ. — Որո՞նք ձեռքով. — Սոփիա ի՞նչ
քրաւ Գրիգորը. — Գրիգոր Կեսարիոյ մէջ ինչի՞ պար-
տեցաւ. — Ո՞վ էր Գրիգորի կինը. — Քանի՞ որդի
ունեցաւ. — Ինչո՞ւ այր ու կին իրարմէ բաժնուեցան.
— Գրիգոր ո՞ր որդին յանձնեց դայեակներու եւ ինք
ո՛ր գնաց. — Ինչո՞ւ. — Ո՞վ իր երեց որդոյն հետ ո՛ր
առանձնացաւ:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ա Շ Խ Է Ն Թ Ա Գ Ո Ւ Հ Ի

Հայ ազգը բարձր է գլուխ կը պարծի իր վկայութիւններով, խա-
չակիւր դշեպոյներով ու թագապաշտ սրբութիւններով: Ասոնց դասէն է
Ասիսիկն, մանաւանդ թէ պատգաւաբան ալ կը համարուի Հայազգում,
սրբաւեր թագաւորներու որոնք իրենց թագին զոհարները Գորգո-

Թայի փուշերով հիւսեցին և իրենց սփեթել ծիրանիները ներկեցին Քրիստոսի արևնով:

Աշխէն իր մարմնոյն ու հասակին վայելչութեամբ ու շնորհքով, մտքին կորովով ու ու սրտին փափկութեամբ ո՛չ միայն առաջինի ու գերագանց կը հանդիսանայ բոլոր Ծիրանազարդ Հայ բամբիշներուն մէջ, այլ և իրաւամբ կրնայ մրցիլ հին ու նոր դարերու բարեպաշտ թագուհիներու հետ ալ:



ԱՇԽԷՆ ԹԱԳՈՒՀԻՆ

Տրդատ Հայաստանը խաղաղեցնելէն ետք նախարարներու ամենէն ազնուահանը՝ Սմբատ Բագրատունին զրկեց Ալանոց Աշխադատ թագաւորին որ անոր Աշխէն ազգիկն իրեն հարսնութեան համար խնդրէ ու բերէ: Աշխէն Տրդատի հետ ընդունեց Քրիստոսնութիւնը՝ Այնուհետև աշխարհային փառքն ու վայելքը թողլով՝ իր անձը նախրեց Քրիստոսնութեան տարածման ու ժողովրդին ցաւերն ամաբելու: Աշխէն եղաւ Տրդատի գործակից, ինչպիսի չքննող օրինակ

այն Քրիստոսնեայ բարեպաշտ, հայրենասեր ու ազգանուէր տիկիններու որոնց բնական տկարութիւնն առաքինի գործերու մէջ զարմանայի արեւութեան կը փոխուի: Այսպիսիներ սանձահարեցով փառասիրութիւնը՝ իրենց զարդը կը համարեն թշուառներու խնամարկութիւնը:

Երբ Գրիգոր Լուսաւորիչ կը բարոզէր, կը վարդապետէր Առաքինութիւնն ու ճշմարտութիւնը, Տրդատ ու իր քոյրը գործով յարգելի կ'ընէին այս վարդապետութիւնը, Աշխէն ալ սրտով սիրելի կ'ընձայր զայն:

Աշխէնի Տիկնուրեան թագին ամէնէն աւելի փայլուն գոհարն էր իր Պարտականութեան Գիտակցութիւնը: Հայաստանի իբրև Մայր ու Տիկին՝ հողաց ու յանձանձնեց աղքատներն ու կարօտեալները: Ճըշմարտագէտ Քրիստոսնեայ ու խոնարհ հոգին հասկցաւ թէ Արքունիքն ու Տիկնութիւնը բնաւ արգելք չէին ներքին մարդուն բարեզարդութեան և կատարելութեան:

Տրդատի Մանեայ այրն առանձնանալէն ետք, Աշխէն մեկուսացաւ Իսառնի քաղաքը զոր Տրդատ շինած ու ամրացուցած էր: Այս մենաստանին մէջ ճգնութեամբ, սքնութեամբ, հսկուքներով ու մշտամրմունջ աղօթքներով կ'անցընէր իր օրերը:

22. ԲՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՂԹԱՆԱԿԷ
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Է Ջ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ս Ք

«Այբէ՛ ինչ որ պաշտեցիր, պաշտ՛ ինչ որ այրեցիր:»

Երբ Տրդատ Պարսից վրայ Ա. Գրիգոր Խոր-Վիրապը տարած յաղթութեան համար զո՞ն կը յազէր Հայաստանի Անանիոս դիցուհւոյն, հրամայեց որ Գրիգորն ալ պսակներ մատուցանէ անոր: Գրիգոր ընդդիմացաւ: Այնու-

հետև ո՛չ Տրդատի պատուէրն ու պատիժները, ոչ տանջանքներն ու չարչարանքները կրցան ստիպել որ Գրիգոր ուրանայ Գրիատոնէութիւնը: Այդ միջոցին Տրդատի յայտնեցին թէ Գրիգոր Անակի որդին է: Տրդատ զայրացած՝ հրամայեց որ զայն տանին ձգեն Արտաշատի Խոր-Վիրապը: Հոս Գրիգոր մնաց ամբողջ 15 տարի՝ Բարեպաշտ կին մը ամէն օր հաց կը բերէր, կը ձգէր Վիրապն որով Գրիգոր սովամահէ ազատեցաւ:

Այդ ատենները Դիոկղետիանոս

Ս. Հովիտիմեանք. կայսեր հալածանքէն փախչելով՝ Տրդատ՝ զիւսկար քառասուն կոյսեր Հայաստան եկան Գայիանէ կուսին առաջնորդութեամբ:



ՀՈՒՓՍԻՄԷ Ս. ԿՈՅՍ

Ասոնք կը ձգնէին Վաղարշապատի հնձաններուն մէջ՝ կոյսերուն մէջ էր արքայազուն Հովիտիմեան զոր Դիոկլ-

ղետիանոս կին առնել կ'ուզէր: Կայսեր թղթին վրայ Տրդատ գտաւ այդ կոյսերը, բայց ինք ուզեց կին առնել Հովիտիմէն: Սակայն Հովիտիմէ փախաւ Տրդատի ձեռքէն: Ասոր վրայ զայրացած՝ Տրդատ ջարդել տուաւ բոլոր կոյսերը:

Այն անմեղ կոյսերու արիւնն ի զուր չթափուեցաւ: Թագաւորին խիղճն սկսաւ տանջել զինք անյն աստիճան որ խեղագարուած՝ խողի նման կը թափառէր լեռ ու ձոր:

g o r d

Խորովիլդուխտ երազ մը

Աստուած կ'այցելէ Հայոց տեսաւ ուր իրեն լուսեղէն հրեշտակ մը կըսէր թէ միայն Գրիգոր կրնայ բժշկել խելագար, խողացած թագաւորին հիւանդութիւնը: Ո՛չ ոք հաւտաց այդ երազին, որովհետև չէին կարծեր թէ Գրիգոր կրնար ողջ մնալ այդ մահապարտներու զնտանին մէջ: Երազը կրկնուեցաւ: Այն պտեն Օտա Ամատունի գնաց Արտաշատ և ողջ գտնելով Գրիգորը՝ հանեց զայն Խոր-Վիրապէն ու բերաւ Վաղարշապատ: Թագաւորը ճամբայն իշխաններու հետ զիմաւորեց Գրիգորն որ ծնրադրած՝ աղօթեց ասոնց համար. ասոնք ալ ցաւերէն թեթեւեցան:

Ս. Գրիգոր հաւաքեց նահատակ կոյսերու մարմիններն ու ամենքն ալ թաղեց իրենց նահատակուած տեղերը:

Հետեւեալ օրը Բրիսնոսի կրօնիչը

Բրիսնոնէութիւնն փարոգեղով քազաւորիւ ու պաշասկաններուն՝ զսկոնի միրեց ու Բրիսնոնեայ դարձուց (301): Այդպէս

Արգարէն ետք Տրդատ — Հայ քազաւոր մը դարձեալ — առաջիկն էր որ բոլոր հեքսուսո քազաւորներուն մէջ

ընդունեց Քրիստոնէութիւնը: Ասոր համար մեր Հայ ազգն առաջինն ու ամենէն հին Քրիստոնէայ ազգն է անբողջ աշխարհի մեջ:

Այնուհետև Հուսաւորիչ կոյսերու նահատակուած տեղը Հռիփսիմէի, Գայիսնէի ու Շողակաթ անունով եկեղեցիներ շինեց որ ցարդ կանգուն կը մնան:

Գ Ա Ս

Թեւադուքեամբ

Տրդաս որո՞ւ եւ ի՞նչ հրամայեց . — Ե՛րբ . — Գրիգոր Ե՛րբ ընդդիմացաւ . — Տրդաս ի՞նչե՛ր բրաւ անօր . — Տրդաս ինչո՞ւ հրամայեց որ Ս. Գրիգորն Արսաւասու Խոր-Վիրապը նետեն . — Ի՞նչ կը նշանակե՛ Խոր-Վիրապ . — Ս. Գրիգոր ինչո՞ւ սովամահ չեղաւ . — Գրիգոր ո՞րչափ ասեն մնաց Խոր-Վիրապը . — Որո՞նք փախան Հայասան . — Ինչո՞ւ . — Կոյսերն ո՞ւր կ'ապրէին . — Ասոնց մեջ ո՞րն եր նշանաւորը . — Գիողղեսիանոս զայն ի՞նչ ընել ուզած էր . — Տրդաս ինչո՞ւ փնտռեց, գտաւ կոյսերը . — Հռիփսիմէ ու իր ընկերներն ինչո՞ւ նահատակուեցան . — Տրդաս ինչո՞ւ խելագարեցաւ . — Ո՞վ տեսաւ երազ մը եւ ի՞նչ . — Ինչո՞ւ չհաւատացին Խորովիղուխի երազին . — Օտա Ամասունի Ե՛րբ եւ ո՞ւր գնաց . — Չո՞վ հանեց Խոր-Վիրապէն . — Ճամբան ինչ պատահեցաւ . — Ս. Գրիգոր ի՞նչ բրաւ նահատակ կոյսերու մարմինները . — Ե՛րբ մկրտեց զանոնք . — Ո՞վ եղաւ Բ. հաւատացեալ քաղաւորը . — Ո՞վ է ամենէն հին Քրիստոնէայ ազգը . — Ս. Գրիգոր Ս. Կոյսերուն գերեզմանին վրայ ինչե՛ր տեսնուեց:

Ը Ն Յ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ս. ԽՈՍՐՈՎԻԴՈՒԵՏ

Ս. Խոսրովիգուլուս այն անձերէն է որոնց կեանքին ծանօթանալէ ետք անկարելի է չհետեւիլ անոնց օրինակին: Գեաւարուսիկ հասակին մէջ, երբ Արքունական ցեղը համայնաջինջ կորստեան վտանգի մէջ էր, Խոսրովիգուլուս ալ իր եղբոր նման գայեակի ձեռքով ազատեցաւ նենգաւոր սուրէն: Սասանեան բռնակալութեան 31 տարիներու



ԽՈՍՐՈՎԻԴՈՒԵՏ

ընթացքին մէջ, Օտա Ամասունի նախարարին հայրենի պաշտպանութեան ու խնամակալութեան ներքեւ, անգուլթ աչքերէ ու սիրտերէ հեռու՝ Անի ամրոցին մէջ կ'աճէր ու կը զարգանար, մինչև որ եկաւ եր Ծիրանածին եղբայրն և պաշտպանեց իր գահը: Այն պահուն միայն ելաւ իր միայնութենէն և խառնուեցաւ, մանաւանդ զլուխ կեցաւ Հայոց երաժիշտ օրիորդներու խմբին՝ իր օգոստափառ եղբոր

յաղթանակը հաշկեցու համար: Բայց դարձեալ մնաց Օրիորդ Հայոց: Երբ Հայոց աշխարհին կենսաբեր վերածնութեան երջանկաբեր ժամը հասաւ, Խոսրովի դուխտ միայն ընտրուեցաւ իբրև Աւետաւոր կամ Հրաւիրակ Լուսաբեր ծագման: Աստուծոյ հրեշտակն անոր միայն երեցաւ և յայտնեց թէ Խոր-Վերապին մէջ ձգուած Գրեգորը դեռ ողջ է, անոր ձեռքով եղբայրը՝ դուռող Տրդատ ու բոլոր Հայաստանցիք բժշկութիւն ու փրկութիւն պետի գանեն:

Այնուհետև Խոսրովի դուխտ Հայոց Վերանորոգութեան մէջ իր Թագապսակ եղբոր, Աշխէն դշտոյին ու Գրեգոր Լուսաւորչին հետ կը փութայ պատել Ս. Հռիփսիմեանց նշխարները, անոնց հանգստեան համար տաճարներ շինել, Հեթանոսութեան տաճարներն ու բազմին ներք կործանել և անոնց տեղ ճշմարիտ Աստուծոյ և Սուրբերու մաս տուռներ, սեղաններ ու թաշեր կանգնել:

Արքունի կեանքը յաճախ խորշակի կը նմանի որ Առաքիլութեան ծաղիկներն ու Կուսութեան շուշանները կը թամբեցնէ: Սակայն Հայոց արքունիքը թշնամի էր զեղիութեան ու անհամեմատութեան՝ Տրդատի, Աշխէնի ու Խոսրովի դուխտի շնորհիւ:

Խոսրովի դուխտ երբեմն այցելելով սիրալի կոյսերու նահատակութեան տեղերը՝ մի առ մի մտքին առջև կը ներկայացնէր անոնց կեանքի մէն մի դէպքերն և կը խօսէր անոնց յիշատակներուն հետ: Երբեմն ալ անոնցմէ աւելի վսեմ խորհրդածութեան մէջ խորատու ու ձած կը նուագէր ուրիշ աւելի սրբագոյն յիշատակներ՝ մտքով անցնելով Երասխի հովիտներէն ու Մասիսի ալեզարդ բարձունքներէն, Գառնի ամրոցի բուրգերուն խրամատներէն, ամբոխաշատ Արաաշատու և Վաղարշապատի խճճած հրապարակներու մէջէն: Վերջին անգամ ալ կը բարձրանայ Գեղամայ լեռներուն սարերը, յետոյ լեռնի մնջիկ կ'իջնէ՝ իր հառաչանքը խառնելու Ազատ գետի կարկաշտածայն հոսանքներուն հետ որ մի ին խոխուններու մէջէն սողակելով՝ կ'երթայ, կ'անհետանայ անմարդաձայն ու սրտադրաւ արձագանքներու մէջ: Հոն կը լռէ հեռուէն Անոյշ ձայն մը որ զինք կը հրուրէր Զուարթութուններու քունը քնանալու և կը դիմէ Անոր:

23. ՀԵԹԱՆՈՍ ՀԱՅՈՑ ԿՐՕՆԻԸ

Պ Ա Ս Մ Ո Ւ Ա Մ Ք

Հայկազանց օրով Հայերը պարզ ու ճշմարտութիւն բնական կրօնք մը ունէին. Արեւն էր անոնց պաշտամունքի գլխաւոր աւարկայն որ կը համարուէր Կեանքի սկիզբը, մարդուն ու բնութեան Կենսասուն: «Արեւս վկայ, արեւոյ, արեւը խաւարեցաւ» մինչև այս օր պահուած ու սովորական դարձած է ժողովրդին բերանը: Լոյսը կը համարէին երջանկութիւն ու բերկրանք. «Այցի լոյս, այցի լուսով մնաս» կ'ըսեն այս օր, երբ ուրիշ անձի ուրախութիւնը դէպք մը պատահած է: Ընդհակառակը խաւարը կը համարուէր դժբախտութիւն. «Անոր օրը խաւարեցաւ, անոր օրը մթնցաւ» դժբախտութեան նշաններ են ցարդ:

Ուրեմն լոյսը բարի է, խաւարը՝ դժբախտութիւն, արեւն ալ՝ կեանք:

Հին Հայերն անհատներու սուսալիւնեան գուշակութիւններ կ'ընէին: Անտառներու մէջ նշանաւոր էր Արմաւրի Սուեաց անտառն որուն նուիրուած էր Անուշաւան: Այդ պատճառով կոչուեցաւ Սու:

Արդէկ կոչուած տեսակ մը աւտուածներ ալ կային որ կը շիգեին պատերազմի մեջ ինկած վիրաւոր ֆաջերն ու զանազան կ'առողջացնէին:

Այս պարզ ու նախնական կրօնքը Կուսպատուրիւն բաւական ճոխացաւ դրացի Պարսկներու, Ասորիներու և յետոյ Յոյներու ազդեցութեամբ, այնպէս որ բնութեան զօրութիւններն ու աստղերը պաշտելէ զատ կ'երկրպագէին անոնց կուռքերուն և արձաններուն:

Աստուածներու հայր կը համարուէր Արին Արամազդ. ասոր արձանը կը գտնուէր Անի ամրոցը: Երիզայի մէջ կը գտնուէր Անահիտ զիցուհւոյն արձանն որ կը կոչուէր «Ոսկեմայր, Ոսկեծին» և կը համարուէր «Կեանքու Կեցուցիչ Հայոց աշխարհի»: Անահիտ Արամազդի աղջիկն էր:



ԱՆԱՀԻՏԻ ԱՐՁԱՆԸ

Արամազդի միւս աղջիկն էր Ասդիկ. ասոր արձանը կը գտնուէր Տարօն գաւառի Աշխշաս քաղաքը: Վահագնի արձանն ալ հոս էր: Վահագն կը համարուէր Բաջութեան աստուած ու կը կոչուէր Վիշապախալ: Ասիկա Աստղիկի ամուսինն էր:

Հայոց Հեթանոսութեան միւս աստուածներն էին՝ Տիր, Միհր, Բարեամին, Հեփեսոս, Նունէ ու Վանասուր:

Դ Ա Ս

Թեյադրու քեամբ

Հայկազանց օրով ի՞նչ էր Հայոց կրօնքը. — Ո՞րն էր պաշտամունքի գլխաւոր առարկայն. — Արեւն ի՞նչ կը համարուէր. — Արեւապաշտութեան ի՞նչ հետքեր կան ցարդ. — Ժողովուրդը լոյսն ի՞նչ կը համարէ. — Ի՞նչ կ'ըսեն ուրախաւիք դեպքի մը ատեն. — Խաւարն ի՞նչ կը համարուին. — Ո՞ր ասացուածները դժբախտութիւն կը համարուին. — Հին Հայերն ի՞նչերէն գուշակութիւն կ'ընէին. — Արկեզներն ի՞նչ կ'ընէին. — Հայկական պարզ կրօնքն ի՞նչպէս նոխացաւ. — Ի՞նչեր պաշտեցին. — Ո՞վ էր ասուածներու հայրը. — Ասոր արձանն ո՞ւր կը գտնուէր. — Երիզայի մէջ ի՞նչ կը գտնուէր. — Անահիտ ի՞նչ կը համարուէր. — Անահիտ որո՞ւ աղջիկն էր. — Ո՞վ էր Արամազդի միւս աղջիկը. — Արձանն ո՞ւր կը գտնուէր. — Ո՞վ էր Ասդիկի ամուսինը. — Վահագն ի՞նչ կը համարուէր. — Որո՞նք էին միւս ասուածները:

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ւ Մ

Հ Ա Յ Պ Ա Ն Թ Է Ն Ն Ը

Լեզուարանութիւնն և փննական պատմութիւնը, որքան երիտասարդ, նոյնքան հոյակապ գիտութիւններ են, քանի որ Հայոց Պատմութիւնը կոչուած գիւրափշուր շղթային տեղ, Պատմական յիշատակարաններու անուտ վկայութեանց վրայ յենած ստոյգ երողութեանց օգտակարութեամբ մը հաստատելու յաջողեցան: Հարկ էր որ Հայ Դիցարանութիւնն ալ կրէր, գէթ իր ծագումին մէջ, հիմնական փոփոխութիւն մը:

Ըստ այսմ, Մոլոսէա Խորենացւոյն աւանդած Հայկին ու անոր յաջորդող նահապետներուն, որոնք իբր թէ Արբաշամու միակ Աստուծոյ պաշտամունքն ունէին, կը յաջորդէին Նախահայերը՝ Տու-

րանեան, Քաղղէական և Սեմական ժողովուրդներու խառնուրդ մը որ իր տաճարներուն մէջ զոհ կը մատուցանէր իր Խաղի աստուածին և անոր Երրորդութեան:

Երկնի աստուածն էր Խաղի, որուն անունով Նախահայերը Խաղ կամ Խաղեանկ=Ուրարտուցիներ կը կոչուէին, իսկ Երրորդութեան միւս անդամներն էին Տիխափաւ՝ Օրի աստուածն և Արդիկի՝ Արեւու աստուածը: Իբր կեդրոն բարձր Աստուածային զօրութեանց սոյս Երրորդութիւնը շրջապատուած էր երկրորդական աստուածներէ՝ որոնց թիւը 16ի կը հասցնէ Վանայ Ուրարտեան արձանագրութիւններէն մէկն որ կը գտնուի Մհեր Գարու:

Խաղեան կամ Ուրարտեան շրջանէն անցնելով բուն Պատմական շրջանին՝ կը գտնենք որ Հայկական Գիցարանութիւնն երեք արբերներէ ծագում կ'առնէր, քանի որ առիկա, ինչպէս զինք բաւանոջ ժողովուրդը, իր Հնդեւրոպական կորիզին վրայ կը պատուաստէր Պարսկ-Պահլաւ և Ասորի փոխառութիւններ, թէ և աւելի վերջ շէրէն զարդարանքով մըն ալ պծուեցաւ:

Հայերը=Թոկ-Արմաները (Թորգոմեան) Է. և Զ. դարերուն (Ն. Ք.) երբ Փառեգիոյ ու Կապադովկիոյ լեռնադաշտերէն ու Մեդիտիկէի հովիտէն շրջաններ ընելէ ետք Եփրատն անցան և Ուրարտուի բարձրաւանդակները գրաւեցին, Ասորեստանի աշխարհակալ տէրութիւնը կը տկարանար և անոր աւերակներուն վրայ կը կանգնէր Մարաց, յետոյ Պարսից պետութիւնն որուն 420 գաւառներէն մին կը գաւառայն լեռնակողմն, որ առաջին անգամ բլլալով Արմենիա կը կոչուէր իր նոր ընտանիքներուն անունով, ինչպէս կը վկայէ Պեհիստունի նշանաւոր արձանագրութիւնը:

Ուրարտուի վրայ արշաւող Արմէններն, որ ըստ մասին իրենց մէջ ձուլեցին և ըստ մասին ցրուեցին հին ընկնէրը, թէ և ունէին իբրև Արևական ժողովուրդ իրենց համար կէս քաղաքակիրթ վիճակ մը, բայց նոր դարացիութեան բերմամբ, շփման մէջ գտնուելով աւելի զարգացեալ տարրի մը հետ՝ անոր քաղաքական, ընկերական ու կրօնական ազդեցութեան ենթարկուեցան: Այս պատճառաւ Հայ Գիցարանութիւնը, ինչպէս իր ձեւին, նոյնպէս իր ծագումին մէջ կրեց Երանեան տպաւորութիւն:

Հայկական Պանթեոնին գահերէցն Արամազդ, որու Երանեան հին ձեւերն են Անուրամազդա, Ոհրուամազդ, Որմիդդ, և այն լեզուով կը նշանակէր իմաստուն տէր, Հայ Գիցարանութեան մէջ ունէր Մեծ ու Հօր տիտղոսները: Հայ միտքը թերեւս առաջնորդուելով իր նախնի Յոյն, Լատին և ուրիշ Եւրոպական դրացիներէ՝ Երանեան Որմիդդը պծնեց ու զօրացուց՝ Երկնի ու Երկրի արարիչ, Աստուած-

ներու հայր, Հողին բարիքներ բաշխող գերագոյն էութեան մը աստ-րադիւքներով, զորս չունէր Երանեան Ահուրամազդան: Իր տաճարը բարձրացած էր Դարսուալի = այսօր Քեմախ գաւառին Անի ամրոցին քարաժայռին վրայ, ուր Մեհենական Գարութիւնները վերմանելու դպրոց ալ հաստատուած էր, առաւելագոյն քուրմերու ազոց համար, և ուր, աւելի վերջը, Արշակունի թագաւորներու ինչպէս գանձը, նոյնպէս ոսկերտոսին կ'ամփոփուէին՝ նկատուելով իբրև ամէնէն նուիրական և ամէնէն անմատոյց սրբավայրը: Ասոր համար է որ Անի ամրոցը Կեմախ, Կամախ, Քեմախ կը կոչուի:



Միևի բազմին կանգնուած էր Դեդեալի Բագառիճ գիւղին բլրակներուն վրայ, Արեւու և Հուրի ներկայացուցիչն էր: Յետոյ նոյնացաւ Յունաց Հեփեստոսի հետ: Անոր պաշտամունքը տարածուած էր ամբողջ Առաջաւոր Ասիոյ մէջ. անոր անունով կ'երգնուէին, անիկա կը չափէր սիրտերու ալքերը, վրէժխնդիր կ'ըլլար հայհոյիչներուն դէմ, ընդհակառակն պաշտպան էր Արգարութեան և ճշմարտութեան: Այսպէս՝ Միևրախիսից պաշտամունքը հնորդակից կ'ընէր Հայերը Զրադաշտական արեւապաշտի ու կրակաւոր ծեսերուն, ինչպէս որ սիրելի կը դարձնէր անոնց՝ Արգարութեան ու ճշմարտութեան երկնային գաղափարները: Միհրէն ունինը Միհրսն, Միհրդատ, Մեբուժան=Մեհրուժան, Զարմիհր, Վեհմիհրապուհ և ըն. անունները:

Սեմական սակայն աւելի ժողովրդական, ընդհանուր և ջերմ բարեպաշտութեան առարկայ դարձած էր. անիկա փառքն էր «Հայոց աշխարհին» և «Մայր ամենայն զգաստութեանց»: Այս պատճառաւ եթովք բազմին կամ տաճարներ կը յիշուէին կանգնուած յաւանէ յանուանէ, որոնց նշանաւորագոյնն Երկրայինն էր, Ոսկեւայր ու Ոսկեւայրի կոչուած, ոչ թէ սոկիէ ձուլուած բլլալուն համար, այլ վանն զի Աստուածուհին սոկի մարմնով ծնած էր:

Հայոց ամենասիրելի դիցուհին օտարներուն քով ալ մեծ պատիւ կը վայելէր և Հաովմայեցոց մէջ այն հաւատքը տարածուած էր թէ ո՛վ որ Ոսկեւայր Անահիտին գանձերուն ձեռք կը մտէր, կուրու-թեամբ և անդամալուծութեամբ կը պատուհասուէր:

Անահիտի անունը կը նոյնանայ Զրադաշտական մեծ ոգիներէն մէկուն հետ, ինչպէս նաև Քաղղէական ու Ասորեստանեան Անա գիցուհւոյն կը պաշտուէր Հայոց դրացի արեւելեան, հարաւային ու արեւմտեան մէկէ աւելի ժողովուրդներէ, կը ներկայացնէր անոնց քով Սեռը, Բևուրեան իգական զորուրիւնը, Արգասաւորոյ ու Գիճիկ

օտարը, Լուսնի անձնաւորութիւնը, վերջապէս Պասկերազմի ոգին: Անոր տօնը կը կատարուէր ամէնէն անսուրբ արարողութիւններու ցուցադրութեամբ:

Նսան: Արամազդի միւս դուստրը, որ կը նոյնանայ Յունաց Արեւնասի եւ Պարսից Պատերազմի համանուն զիցուհւոյն հետ, միակ տաճար մը ունէր Եկեղեցի թիւ Առանի մէջ: Նսանէական շիցուհին, ինչպէս Անասիտ իր քոյրը, պաշտամունք կ'ընդունէր Աեմական բոլոր ժողովուրդներուն կողմէ:

Աստղիկ՝ Վասազնի կինը, անոր և Անասիտին հետ Աշտիշատի տաճարին Երբեակ աստուածութիւնը կը կազմէր և կ'երեւի թէ Հայ-Յուրեան գնդապետին արտայայտութիւնն էր: Աստղիկ անունն ապահովարար Բարելացոց իսաւր և Փիւնիկեցոց Ասարդե զիցուհիներուն անուանական զիմայեղումն է:

Տիր՝ Արամազդի դուստրը, նաև որդին, քուրմերուն մեծ ուսուցիչը, ճարտարախօսութեան ու Գպրութեանց պաշտպանը, Արեւետից հնարիչը, Գաղտնեաց քննող՝ Միհրի նման, վերջապէս Երազնեբուն մեկնիչ, ունէր իր ճարտարագործ արձանն Արտաշատի մօտ Երազանոյն կոչուած վայրը, որ այս պատճառաւ Հայոց առաջին պատգամատեղին էր: Ապէ Տրդատ, Տիրան, Տիրիթ, Տիրոց, Սանասրուկ, Վարազաիրոց, և ըն. անունները:

* * *

Վահագն՝ Հայոց ամենէն ժողովրդականացած աստուածներէն մէկն որուն ծնունդին համար երկինք, երկիր և ծով երկուքի կը բընունուին, երկնքի եղէգներու բոցալառումն—արշալոյսէն լոյս աշխարհ կուգայ վերապնեբու, այսինքն՝ մրկայոյզ ամպրոպներու, թաթառի և շանթի զէմ մարտ կը գնէ ու կը յաղթէ և կ'ստանայ վիշապախաղ ու ֆաջ անունը, որ սյօրուան հասարակ նշանակութիւնը չունէր: Ձինք վերջին դարերու մէջ նոյնացուցին մերթ շերտերէն և մերթ Արեւի հետ՝ իր կեանքին մարտալուծչ գրուագներուն պատճառաւ:

Իսկ Վասագն անունին ծագումը պէտք է հետազոտել Մոզգեական Չեռ-Աեւտայի Վերերակնա—ոգի յաղորդեան բառին մէջ:

Իսկն Հայկական դրոշմ և վաղնջոց գոյութիւն ունէր Վասնասուր գիք, որ կը ներկայացնէր Թամանակը, Նոր տարին, Չորս եղանակները, կը պաշտպանէր Հունձքերը, կը սիրէր օթեւան ընծայել ու խոտուորներու, այցելուներու, ուղեւորներու. իր միւս ստորագրիքներն էին, եթէ ոչ իր ձեւափոխութիւնները, Ամանոր, Նաւասարդ, Ամենարեւ:

Բարձամինա, շատ ուշ, Թերեւս Ալեւկեանց տիրապետութեան շրջանին և անոնց ազդեցութեամբ եկած մտած է մեր Կիցական կառուարին մէջ, ուր իր հանգամանքն ու ստորագրիքն իսկ ծանօթ չեն: Փիւնիկէի ու Ասորիքի մէջ, որ իր որորանն է, արեւը կը խորհրդապատկերէր Բարձամինան: Արծաթէ, փղօսկրէ ու բերեղէ ընդէլուղուած իր արձանը, որ Սպիտակախառ տիտղոսով կ'որակուէր, կը փայլէր Թորդան գիւղին բարերբը ու նկարագրէր բարձունքին վրայ:

Իսկ Սպանդարաւես աւելի մեկուսացած և ժողովուրդին գրեթէ անծանօթ մնացած անդամն է Հայ Պանթէոնին, ուր եկած հաստատուած է Զրադաշտական կրօնի յղացումներէն: Անիկա ներկայացուցիչն է ինքնագոյ և մշտնջենի զօրութեան երկրի, ուր և հաստատած է իր գահը:

Դեռ կը մնան աստուածային երկրորդական գոյացութիւններ, ինչպէ՛ս՝ ֆաջեր, այսեր, առիկներ—արալիզ կամ շուն աստուածներ, վիշապներ, սօսիներ, և ըն. որոնց ծագումն ու կատարած գերը կը բացատրեն մեզի միշտ հարեւան ժողովուրդներու առասպելապատմ գրոյցները:

Այսպէս Մեր Հայ Կիցարանութիւնը թէև Խալդեան, Պարսիկ, Պահլաւ, Գաղղեացի, Ասորի և Յոյն բաղաբաղրութեան հետ ունեցած իր շփման կը պարտի, գէթ ընդհանուր գիծերու մէջ, իր ծագումը, զարգացումն ու ծաւալումը, բայց աւելի գեղեցիկ, աւելի մաքրափայլ, աւելի բարի հանգամանքներով կը ներկայանայ այն Հայ երկնիքի տակ, կրօնական արարողութիւններն որդեգրուելով մերէններէն՝ կը թօթափեն ինչ որ ունին անգութ, վայրագ ու լցիւրջ աստուածուհիները մեր մօտ կը դառնան աւելի տեսական, աւելի աղնիւ դաղափարներու ներկայացուցիչ: Միթիք խորհուրդներ ու յղացումներ Հայ իմացականութեան վրայ պատուաստուելով՝ կը դառնան նուազ կնճառ, նուազ մթին և նուազ վերացական, այլ միշտ աւելի պարզ, աւելի հզօր և աւելի գործնական: Ու այս ամենքը ներգործելով Հայ միսիին, Հայ զգացումին, Հայ յարկերուն վրայ վերջէն հանդերձեցին Հայ Բրիտանիկաւորեան, Հայ կրօնական դրոշմեան, Հայ սուրբերուն եւ սրբունիկերուն ուրոյն նկարագիրը:

24. ԲՐԻՍՏՈՆԷՆԻՑԻՒՆԸ ԿԸ ՏԱՐԱԾՈՒԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ծ Ք

«Այս Լուսաւորչին, հաւաստ
Քրիստոսին, Հայ Քրիստոնէին մեռ-
նիմ հաւաստին:»

Ս. Գրիգոր երազի մէջ կը տեսնէ թէ
Էջմիածին Փրկիչն երկնքէն վար իջած՝ կուսնով գետ-
նին կը զարնէր: Անիկա այնտեղ հիմնեց
Հայոց Մայր-Տաճարն որ յետոյ կոչուեցաւ Էջմիածին:

Հռոմայեցւոց Մաքսիմիանոս
Հայոց Ա. Կրօնական կայսրը բարկացաւ Տրդատի քրիս-
տոնեայ դառնալուն վրայ. պա-
տերազմ՝ հրատարակեց Հայոց դէմ
(311): Բարեբախտաբար շուտով կայսր եղաւ Մեծն Կոս-
տանդիանոս որ ընդունելով Քրիստոնէութիւնը՝ բարե-
կամեցաւ Տրդատի հետ: Տրդատ Ս. Գրիգորի, Ս. Արիս-
տակէսի ու բազմաթիւ իշխաններու հետ այցելութեան
գնաց կայսեր որ մեծամեծ պատիւներով ու հանդէսնե-
րով ընդունեց զանոնք:

Պարսից Սասանեան Շապուհ թագա-
ւորն օգուտ քաղելով Տրդատի բացակա-
ւորաւանքը յութեանն ուղեց խռովութիւն յարուցանել
Հայաստանի մէջ: Անոր գրգռմամբ Սղկունի՝
Սղուկ իշխանն ապստամբեցաւ Տրդատի դէմ: Սղկունի-
կան ազգերն՝ ալ Շապուհէն գրգռուած՝ արշաւեցին Հա-
յաստան: Շուտով հասաւ «Սէգն» Տրդատ և Գուգանաց՝

դաշտին մէջ խորտակեց Սղկութացւոց բանակը: Բաւիղ-
ներու թագաւորը՝ Գեղղեհոն ուղեց փոկով բռնել
Տրդատը, սակայն Տրդատ սրով զայն կիսեց՝ ձիու գլխին
հետ կտրելով:

Հայաստան դառնալու ատեն
Մամիկոնեանց Տրդատ Սղուկ իշխանն ալ սպան-
Տիրապետութիւնը նուաճ գտաւ Մամիկոնեանց ձեռքով:
Տրդատ ասոնց ընծայեց Տարօնի՝ մէջ
Սլկունի կալուածները:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապե-
տական աթոռը յանձնեց Ս. Արիստա-
Մանեայ այրը կէսի ու ինք առանձնացաւ Սեպուհ ղե-
րուս՝ Մանեայ այրև՝ և հոս վախճանե-
ցաւ (332): Հովիւները գտան անոր մարմինն ու թաղեցին:

Ս. Լուսաւորչին ետք Տրդատ
Նախարարներուն թագաւորն ամէն կերպով կ'աշխա-
պալեբախտութիւնը տէր քրիստոնեայ բարքն ու վարքն
ընտելացնել Հայաստանի մէջ: Սա-
կայն ձերացած ու յոգնած՝ թողուց թագաւորութիւնն
ու ինքն ալ առանձնացաւ Մանեայ այրը ճգնելու: Նա-
խարարները խնդրեցին որ, ետ դառնայ ու շարունակէ
թագաւորութիւնը: Տրդատ մերժելով այս խնդրանքը՝
ապերախտ նախարարները գաղտնի թունաւորեցին զայն
որ զրկուեցաւ կեանքէն (342): Տրդատը մեծ հանդէսով
թաղեցին Թորդան՝ գեղն ուր քանի մը տարիէն փոխադ-
րեցին Լուսաւորչի մարմինն ալ:

Գ Ա Ս

Թելադրութեամբ

Ո՞վ երեւցաւ Ս. Գրիգորի . — Ո՞ւր հիմնուեցաւ
 Հայոց Մայր-Տանարբ . — Յետոյ ի՞նչ կոչուեցաւ . — Ո՞վ
 եւ ինչո՞ւ հրատարակեց Հայոց դէմ պատերազմ . — Ե՞րբ .
 — Ո՞վ եղաւ կայսր եւ որո՞ւ հետ բարեկամացաւ . —
 Ո՞վ գնաց Կոստանդիանոսի այցելութեան եւ որո՞նց հետ .
 — Ո՞վ եր Ծապուհ . — Ի՞նչ ընել ուզեց . — Որո՞նք ար-
 ցաւեցին Հայաստան . — Որո՞ւ գրգռութեամբ . — Տրդատ
 ո՞ւր յաղթեց Սկիւքացոց . — Ո՞վ եր Գեղդեհոն . — Ի՞նչ
 ընել ուզեց . — Տրդատ զայն ի՞նչպէս սպանեց . —
 Ի դարձին Տրդատ զո՞վ գտաւ սպանուած . — Տրդատ
 ինչո՞ւ Մամգունի տուաւ Սկիւքեաց երկիրը . — Ո՞վ եր
 Մամգուն . — Մամիկոնեանք ո՞ւրկէ սերած են . — Ս.
 Գրիգոր Հայրապետական արձուն որո՞ւ յանձնեց եւ ինք
 ի՞նչ քաւ . — Ե՞րբ վախճանեցաւ . — Որո՞նք բաղեցին
 մարմինը . — Ս. Լուսաւորչի մահէն ետք Տրդատ ի՞նչ
 քաւ . — Ինչո՞ւ Մանեայ այրն առանձնացաւ . — Նա-
 խարտերը նախապէս ի՞նչ խնդրեցին եւ յետոյ ի՞նչ
 միջոցի դիմեցին . — Տրդատ ո՞ւր բաղուեցաւ . — Ս. Գրի-
 գորի մարմինն ո՞ւր փոխադրուեցաւ :

25. ՀԱՅ-ՊԱՀԼԱԻՈՒՆԻՒԹ ԿԸ ԳԱՀԱՎԻԺԻՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Մ Բ

«Երկու ժամու լուսարար՝ մէկուն
 սել երես:»

Հայերը Քրիստոնէութիւնն ըն-
 դունելով՝ խզեցաւ այն կապն որ
 կար Հեթանոս Հայաստանի ու
 Պարսկաստանի միջև: Արշակուն-

Սասանեան
 Բաղաճակաւորին

եաց թշնամի Սասանեանք կը ջանային գրաւել Հայաս-
 տանն և բնաջինջ ընել Քրիստոնէութիւնն որով կապ-
 ուած էին Հայերը Յոյներու = Հռոմայեցոց հետ:

Տրդատի յաջորդները թող ու-
 ղեզգային կռիւներ .
 Խոսրով Բ. Կոսակ .
 Տիրան Բ.

մեղկ էին՝ զբազած որսով ու
 շուայտութեամբ: Ատոր համար
 Հայաստան ասպարհզ դարձաւ ան-
 վերջ պատերազմներու մէկ կողմէն

Հռոմի ու Պարսից, միւս կողմէ՝ ասպտամբ ու ամբարտա-
 ւան նախարարներու միջև: Այս վերջինները կամ իրարու
 դէմ կը պատերազմէին՝ տկարացնելով երկրին ներքին
 ուժերն և կամ թագաւորին դէմ՝ միանալով արտաքին
 թշնամիներուն հետ: Այսպէս Տրդատէն ետք իրարու
 յաջորդեցին Խոսրով Բ. Կոսակ որ գահը փոխադրեց
 Գուից, յետոյ Տիրան Բ. (353) Յուլիանոս «Ուրացող»
 կայսեր օրով: Ծապուհ զայն գահընկէց ընելով՝ աչքերը
 կուրցուց ու աքսորեց: Սակայն Հայոց սիրտը շահելու
 համար՝ Տիրանի որդին Արեակ Բ.ը Հայաստանի թագաւոր
 դրաւ. (364):



ՅՈՒՆԱՆՈՍ ԱՌԵՍՅՈՂ

Շատ խախուտ էր Արշակի Արցալի Բ.ի ձախող դիրքը, ինչպէս և իր նախորդներէ-
 քաղաքականութիւնը բունը: Հազիւ Պարսից թագաւորին
 հետ կը բարեկամանար, Յունաց
 կայսրը կ'ասպատակէր Հայաստան և հարկ կը պահանջէր՝
 եթէ Յոյներուն կամքը կատարէր, Պարսից թագաւորը
 վրէժ կը լուծէր անուրի պատերազմով: Այս արտաքին
 թշնամիներու վրայ աւելցան նաև ներքին զժտութիւն-
 ները: Արշակ Բ. խեղդէր տուար իր կոյր հայրն ու սպան-
 նեց իր եղբորորդին՝ Գնեղ և յափշտակեց անոր կինը՝
 Փառանձեմ:

Արշակ Բ. Մասիսի ստորտար հիմնեց
 Հայոց Ներքը Արշակաւան՝ քաղաքը: Որպէս զի քա-
 ղաքը շուտով շէննայ, բաղամամարդ
 դառնայ, հրամայեց հոն անպատիժ ընդունել ամէն տե-

սակ յանցաւոր: Իսկոյն քաղաքը լեցուեցաւ գողերով ու
 աւազակներով որոնք նախարարներու ինչքերը յափշտա-
 կած՝ հոն ապաստանեցան: Նախարարները բողոքեցին.
 Արշակ նկատողութեան չառաւ անոնց բողոքը. ուստի
 ամենքը բարկացուց ու թշնամացուց:

Նախարարները դիմեցին Շապուհի օգնութեան:
 Պարսիկ զօրքերն եկան, պաշարեցին Անի Անրոցն՝ ու
 կողոպտեցին թագաւորներու գերեզմանները: Հայ իշ-
 խանները կործանեցին Արշակաւանն ու բնակիչները սրէ
 անցուցին: Հազիւ վրայ հասաւ Մեծն Ներսէս կաթողի-
 կոսն և ազատեց կաթնիկեր մանուկները:

Արշակ զնաց Վրաստան՝
 Արցալի դաւաճանութիւնը վրաց ու Սկիւթացի զօրքով
 նախարարներէն վրէժ լու-
 ծելու: Սակայն Մեծն Ներսէսի միջնորդութեամբ հաշտ-
 ուեցաւ առանց պատերազմի, թէև վերջը դրժեց իր
 խոստումը, չարաչար հալածեց ու խորտակեց հակառա-
 կորդ նախարարները՝ բնաջինջ ընելով անոնցմէ քանի մը
 ցեղեր:

Նախարարներու դրդմամբ
 Արցալի Անյոյս բերդը Պարսից Արսևոզան իշխանը Հա-
 յաստան եկաւ ու Արշակը գերի
 տարաւ Պարսկաստան:

Երբ Շապուհն պահանջեց Փառանձեմ թագուհւոյն
 հետ բոլոր նախարարներու կիներն ալ Պարսից Դուռը՝
 Տիգրոն տանիլ, նախարարները միացած՝ խորտակեցին
 Պարսից զօրքն ու հալածեցին: Շապուհն բարկացած՝
 Արշակը բանտարկեց Անյոյս՝ բերդը: Արշակ լսելով իր
 Փառանձեմ թագուհւոյն մահն ու Հայաստանի թշուառ
 կացութիւնը՝ ինքնապաշտան եղաւ (382) Անյոյս բերդին մէջ:

Գ Ա Ս

Թելազուրեանք

Սասանեանք ինչո՞ւ բռնամացան Հայոց. — Ի՞նչ էր Սասանեան քաղաքակցութիւնը. — Տրդատի յաջորդներն ի՞նչ նկարագրի տէր էին. — Հայաստան որո՞նց միջուկու առաջադիւզու դարձաւ. — Ի՞նչպիսի ներքին կռիւներ կային. — Ո՞վ գահը փոխադրեց Դուին. — Շապուհ զո՞վ գահընկեց քաւ ու անոր աչեքը փորեց. — Շապուհ Հայոց սիրքը շահելու համար ի՞նչ քաւ. — Արեակի դիրքն ի՞նչպէս էր. — Ի՞նչ երկդիմի քաղաքակցութեան կր հետեւէր. — Ի՞նչ եղաւ հետեւանքը. — Արեակ Բ. ի՞նչ խոզութիւններ գործեց. — Արեակ Բ. ո՞ւր հիմնեց Արեակաւանք. — Ինչո՞ւ. — Բազմամարդեցեցելու համար ի՞նչ հրամայեց. — Նախարարներն ի՞նչ քրին. — Նախարարներն որո՞ւր դիմեցին. — Որո՞նք պաւարեցին Անի ամրոցը. — Որո՞նք քաղուած էին հոն. — Հայ իշխաններն ի՞նչ քրին Արեակաւանք. — Կաթնկեր մանուկներն որո՞ւր շնորհիւ ազատեցան. — Արեակ Բ. ինչո՞ւ վրասան գնաց. — Մեծն Ներսէս ի՞նչ քաւ նախարարները. — Արեակ Բ. յետոյ ի՞նչպէս վարուեցաւ նախարարներուն հետ. — Ո՞վ եկաւ Հայաստան եւ որո՞նց դրդամար. — Ալանոզան ո՞ւր տարաւ Արեակը. — Նախարարներն ինչո՞ւ խորակեցին ու հալածեցին Պարսից զօրք. — Շապուհ անոր վրէժն ո՞ւրկէ լուծեց. — Ի՞նչ քաւ. — Արեակ ինչո՞ւ ինքնասպան եղաւ եւ ո՞ւր :

Գ. ՀԱՅՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ ԵՐԿՈՒՔԻ ԲԱԺՆՈՒԱԾ

26. ՅՈՒՆԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՊԱՐՍԻՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Պ Ա Ս Մ Ո Ւ Ա Մ Ք

«Գիրկս նստե՛ր՝ մօռուս կր փեհէ:»
«Ո՞վ որ կր մօտեայ ձեքին՝ կր քարխուի:»

Արշակի մահէն ետք Շապուհ իր քոյրը՝ Ուրիզդուխս կնութեան տուաւ Մեհրուժան Արծրունի ուրացեալ նախարարին որ անոր ձեռքով Քրիստոնէութիւնը ջնջէ Հայաստանի մէջ ու զայն միացնէ իր երկրին: Մեհրուժան անլուր չարիքներ հասցուց Հայաստանի մէջ — կղերականները հալածեց, նախարարներու կիները գերի տարաւ ու զանազան բերդերու մէջ բանտարկեց:

Մեծն Ներսէս այդ միջոցին Բիւրեղանի զանդիւնի մէջ էր. խնդրեց Մեծն Թեոդոս կայսրէն որ Արշակի որդին Պապը թագաւորեցնէ Հայաստանի վրայ: Կայսրն ընդունեց Մեծն Ներսէսի խնդրուածքն ու յոյն զօրքով Պապը զրկեց Հայաստան: Փախտական Հայ նախարարները մրացան Պապին: Ասոնց մէջ նշանաւորն էր Մուժեղ Մամիկոնեան:

Նպաս լերան մօտ Ջիրաւ* դաշտին
 մէջ Մենրուժան Պարսիկ զօրքով ճա-
 կատեցաւ քրիստոնեայ զօրքին դէմ:
 Մեծն Ներսէս լերան գլուխը քրիստոնե-
 եայներու յաջողութեան համար բազկատարած կ'աղօթէր:
 Պատերազմը կատաղի եղաւ. վերջապէս Հայերը յաղթե-
 ցին: Մենրուժան Արծրունի փախաւ. Սմբատ Բագրատունի
 սպարապետը հաննելով անոր ետեւէն՝ հովիւներէն առաւ



ՄԵՆՐՈՒՋԱՆ ԿԸ ՊԵՏՅՈՒՆ

հրաշէկ շամփուրը, դրաւ Մենրուժանի գլուխն և բաւ.
 «Ո՛վ Մենրուժան, քեզ թագաւոր կը պսակեմ, որովհետեւ
 կը փախաքէիր Հայոց թագաւոր ըլլալ, և ես իբրև թա-
 գադիր ասպետ կը կատարեմ հայրենի պաշտօնս:»

Դաւաճան ուրացեալն այսպէս խայտառակ մահ մը
 ունեցաւ: Իսկ անոր օգնական Վահան Մարտիրոսեան
 սպաննուեցաւ իր հարազատ զաւակ՝ Սարուշէկն:

Պապի թագաւորութեան ա-
 տեն Մեծն Ներսէս հիմնեց բազմ-
 մաթիւ վանքեր, հիւանդանոց-
 ներ, որբանոցներ և ուրիշ բարե-
 պաշտական հաստատութիւններ:

Պապ թագաւորն անառակ
 կեանք կը վարէր. ճանճրացած Մեծն
 Ներսէսի խրատներէն, քունաւորեց
 Հայոց Հայրապետը: Յոյներէն ալ զզուելով՝ ուզեց Պարսից
 կողմն անցնիլ, բայց Յոյն զօրավարը՝ Տերեկեսիանոս որ
 զօրքով Հայաստանի մէջ էր Պապին վրայ հսկելու հա-
 մար՝ շղթայակապ գերի տարաւ զայն Բիւզանդիոն*:
 Կայսրը գլխատել տուաւ Պապը:

Պապին յաջորդեց Արշակունի ցեղէն
 Վարազդաս Վարազդաս անունով քաջ ու հզօր երի-
 տասարդը: Այս Վարազդատը Հռոմայեցւոց
 և Յունաց Ողիւնպիսիանի* խաղերուն մէջ անօրինակ քա-
 ջութիւններ գործած էր: Անգամ մը պատերազմի մէջ
 հինգ ախոյեան միանգամայն սրով զարկաւ սպաննեց,
 ուրիշ անգամ մըն ալ բերդի մը վրայ յարձակելով՝ 17 հոգի
 նետահար գահավիժեց պարսպէն վար: Եւ երբ թագաւոր
 եղած՝ Հայաստան կը դառնար, աւազակներու հանդիպե-
 ցաւ. ասոնք որովհետև ստիպուած էին փախչիլ՝ անցան
 եփրատ գետի կամրջէն ու քակեցին զայն: Վարազդատ
 22 կանգուն լայն գետէն ցատկեց, հասաւ աւազակնե-
 րուն որ զարհուրած՝ անձնատուր եղան: Վերջը Վարազ-
 դատ Հայաստանի յոյն իշխաններուն քմահաճոյքներուն
 դէմ բողոքելու համար գնաց Կ. Պոլիս. բայց կայսրը
 փոխանակ մտիկ ընելու, զայն աքսորեց:

Յունաց կայսրը Հայաս-
 տանը դիւբաւ կառավարելու
 համար՝ Հայաստանի Արեւել-
 եան կողմը քազաւոր կարգեց (394) Պապի Արշակ Գ.
 որդին, Արեւմտեան կողմն ալ՝ Վաղարշակ Բ. որ նմա-
 նապէս Պապի որդին էր: Նոյն տարին մեռաւ Վաղար-
 շակ ու թագը մնաց միայն Արշակ Գ.ի:

Այդ ժամանակ (395) Յոսիերն ու Պարսիկները մէջերնին բաժնեցին Հայաստանն ու Միջագետքը: Հայաստանի մեծ մասն ինկար Պարսից բաժին: Արշակ չուզելով հեթանոս թագաւորի երկրի մէջ մնալ՝ բազմաթիւ նախարարներու հետ անցաւ Յունաց բաժինը: Շապուհ իր մասին վրայ թագաւոր դրաւ Խոսրով Գ. Հայ-Պահլաւ իշխանն որ Արշակի մահէն ետք թագաւորեց նաև Յունաց բաժին ինկած Հայաստանի վրայ: Ասոր վրայ կասկածելով Պարսից Արտաշիւր թագաւորը՝ Խոսրովը կանչեց Տիգրանն ու արտորեց Անոյշ բերդը:

Գ Ա Ս

Թելադուրեամբ

Արեակի մահէն ետք Շապուհ ի՞նչ րբաւ . — Ինչո՞ւ Մեհրուժան Արժուռնին Հայաստան ղրկեց . — Մեհրուժան ի՞նչ րբաւ Հայաստանի մէջ . — Մեծն Ներսէս այժմից ղրկեցին ո՞ւր եւ ի՞նչ խնդրեց . — Կայսրն ի՞նչ րբաւ . — Որո՞նք միացան Պապին . — Ո՞վ եր նշանաւոր նախարար . — Ո՞ւր կը գտնուի Չիրաւ դաւոք . — Մեհրուժան ո՞ւր նակասեցաւ քրիստոնեայներու դեմ . — Մեծն Ներսէս նպաս լերան գլուխն ի՞նչ կ'ընէր . — Որո՞նք յաղթեցին . — Ո՞վ փախաւ . — Սմբատ Բագրատունի ի՞նչ րբաւ . — Բագրատունիք ի՞նչ պատժուցին եւ ո՞ւրկէ ի վեր . — Ո՞վ եր վահան Մամիկոնեան եւ ո՞ւրկէ սպանուեցաւ . — Մեծն Ներսէս ի՞նչեր հիմնեց . — Պապ ի՞նչ կեանք վարեց . — Զո՞վ բունաւորեց եւ ինչո՞ւ . — Տերենտիանոս յոյն գորավարն ինչո՞ւ Պապը տղրայակապ ղրկեց Կ. Պոլիս . — Հոն ի՞նչ եղաւ . — Պապի ո՞վ յաջողեց . — Ո՞ր ցեղին եր . — Վարազդաս

թագաւորելէ առաջ ի՞նչ փառութիւններ գործած եր . — Երբ Հայաստան կը դառնար , որո՞նց պատահեցաւ . — Ի՞նչ րբաւ . — Վարազդաս ինչո՞ւ Կ. Պոլիս գնաց . — Կայսրն ի՞նչ րբաւ Վարազդասը . — Յունաց կայսրն ինչո՞ւ նամար Հայաստանի վրայ երկու քաղաւոր կարգեց . — Որո՞նք էին . — Յոյներն ու Պարսիկներն ե՞րբ Հայաստան մեջերնին բաժնեցին . — Արեակ Գ. ինչո՞ւ Յունական Հայաստան գնաց . — Շապուհ Պարսիկական Հայաստանի վրայ զո՞վ քաղաւոր դրաւ . — Պարսից քաղաւորն ինչո՞ւ Խոսրովը Տիգրան կանչեց ու Անյոյշ բերդն ախորեց :

Ը Ն Թ Ե Բ Յ Ո Ւ Մ


Մ Ե Ե Ն Ն Ե Բ Ս Է Ս

Մեծն Ներսէս Աթանազիոսի որդին էր Վահան ասէ՛ք ջաղջրասամ պատու յ որ մաքուր մնալով բոլորովին իր անարժան հօր ազդեցութիւնէն՝ արժանաւոր ժառանգ հանգիտացաւ իր Ս. Յուսէփ հաւուան թէև հայրենական փուշերու մէջ ծնաւ, բայց չբնադազիւտ ծաղկի մը պէս դեռաբուսիկ հասակէն ուրիշ աւելի պարարտ ու արդաւանդ հողի մէջ՝ Կեսարիա քաղաքը տարին, տնկեցին: Հոն հմուտ վարժապետներու առաջնորդութեամբ իւրացուց Յունարէն լեզուն և Յոյն հանճարը: Անկէ Բիւզանդիոն երթ ալով՝ զարգացաւ Գիտութեան ու Գորութեան մէջ: Հաս Հայ կորովի մտաբը զուգեւով Յոյն կիրթ ու փառուկ սրտին՝ յառաջ եկաւ գերաշխարհիկ հոգի մը ուրկէ ծագեցաւ իրեն համանման վեհ հոգի մը՝ Ս. Սահակ — Ներսէսաւլաշիւ Կորիւն մը, մանաւանդ անմահ Լուսաւորիչ մը Հայոց:

Մամիկոնեան ցեղէն իր Սանդուխտ սրբաւոր կնոջ մահէն ետք, Մեծն Ներսէս թողուց Կեսարիա, հայրենիք դարձաւ և Արշակ թագաւորին սենեկապետ եղաւ: Նոյն միջոցին Հայրապետական դաւաղանն անարժան անձերու ձեռքն տնցնելով՝ Հայաստան ամէն տեսակ աղէտներու, եղեռներու պփռալի ստպարեղեղած էր: Պարզել Գնունի որ Շիրակի ծոզկաւէտ հովիտներուն մէջ առանձնացած՝ երկնաւոր վայելքներու կը պարպէր, մատնանիշ կ'ընէր հեռուէն լուսաւոր ջահը՝ Հայոց արժանաւոր Հայրապետը: Թէև շատ ընդդիմացաւ

Մեծն Ներսէս նախարարներուն և թագաւորին կամքին, իր ու ասոնց մեղքերը յանդիմանելով՝ սակայն վերջէն համակերպեցաւ և գնաց կետարեա կարողիկոս անուանուելու:

Մեծն Ներսէս Ազգին հոգն ու խնամքը ստանձնելէն առաջ աւարդէն հայր էր, և որբերու և այրիներու մխիթար, Երջանիկ տարիներ, սրբա՛ն բազմաթիւ վանքեր ու կուսաստաններ շէնցուցին լեռներն ու հովիտները, ս՛րչափ մատուռներ ու եկեղեցիներ զարդարեցին:



ՄԵՏՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՆ

գաշտերն ու անապատները, քանի՛ն հոյակապ հիւ բանոցներ ու եղբայրանոցներ լեցուցան քաղաքներն ու գիւղերը, և քանի՛ քանի՛ դարձանոցներ ամէն տեսակ հիւանդութեանց: Պարծանքով կը կրկնէին մեր պատմիչները թէ Մեծն Ներսէսի հայրապետութեան միջոցին մուրացիկ կամ աղքատ բնաւ չէին տեսուեր ամէն աեղ, իշխաններու եւ դասաւորներու մեղքը դրաւ Արդարութեան կշիռը, մեծատուններու սոսիւ մեջ եղայրախորտութեան գուրը հասասեցի, որբերու եւ աղիւսներու հայր եղաւ, վշտացեալներուն արցունքը արեկ, ջկարներուն պասսպարաւ եղաւ եւ յնալներուն յոյսը:

Քաղցր ու զթած հայր էր, սակայն արդար վրէժխնդիր Աստուծոյ փառքին ու Ազգին պատուոյն: Տեղւոյն ու պարագային համեմատ Գթութեան ու Բարութեան շնորհքները Սպառնալիք ու Հարուած կը դառնային անոր ձեռքին մէջ: Այն աշքերէն՝ ուրկէ յոյս ու մխիթարութիւն կը գտնէին տկարներն ու վշտացեալները, յանկարծ Բարութեան ու Վրէժխնդրութեան շննթեր կը թօթափէին անզեղջ ու խոտասիրտ մեղուորներու գլուխը:

Էթանստական սովորութեանց մնացորդները վերցուց, աննց տեղ առաջնորդ կանոններ ու հայրենի կարգեր հասասեց: Ի՛նքն իր աշխարհին հայրապետն ու քաղաւորը միանգամայն: Ինք հասասեց Նախարարութեանց դասակարգը՝ յորս հարիւր քարձ որոշելով զանոնք: Հայաստանի այլ և այլ գաւառներուն մէջ գրեթէ նոյնչափ ալ եպիսկոպոս հաստատեց, Յոյն ու Ասորի շեղուներու մասնաւոր դպրոցներ բանալով՝ Աւսման ու Գիտութեան մղում տուաւ:

Աշխարհիս վրայ ամէնէն նշանաւոր անձերու կատարելութիւնները գեղեցկորէն միացուցած էր իր անձին վրայ. երկար տարիներ տաւրածեց իր հայրական հովանին մեր Հայրենիքին վրայ, բանի՛ քանի՛ անգամ հաստատուն բունեց Արքունի գահը, երբ գահավիժման կը փութար: Ա՛րչափ անգամ զէնքերու և զրահներու զօրութեանէն աւելի իր աստուածաղբեցիկ պերճախօսութեամբ ու պատկաւելի սրբութեամբ Հայաստանն ազատեց օտար զէնքերու հարուածներէն ու մտալուս վտանգներէն: Մէկ խօսքով եղաւ Պարիսպ մը թշնամիներու յարձակումներու դէմ, Բարեկարգի՛ բովանդակ Ազգին ու Աշխարհին, Ախոյեան՝ Կրօնքի ու Սրբութեան, Յորդորի՛ Գիտութեանց և Ներշնչող՝ Յաղթութեանց ու Յաջողութեանց: Սակայն այնչափ ու այնպիսի բարիքներէ ու երախտիքներէ ետք զ՛ճ եղաւ ամբարիշտ Պապ՝ հոպիտ ու մոլի թագաւորին զեղծուածեղծ բարքին ու կրքերուն: Մեծն Ներսէս անխառն ու զուարթութեամբ բմպեց իրեն մատուցուած մարտիրոսական բաժակը:

Մահուան գուռը հասած՝ կարապի նման որդաց Ազգին ապագայ կրեւք շարիքները, օրհնեց ժողովուրդը, մանաւանդ Մամիկոնեանց ճեղը, մտաւ Աստուծոյ տաճարն և տուաւ այն Հրաժեշտի ողջոյնը զոր Հայ եկեղեցին կրօնաւորներու թաղման ատեն կ'երդէ:

ՄՈՒՆԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Մամիկոնեան Վասակի որդին էր ֆաշակոսով Մուշեղ Մամիկոնեան: Ասիկայ լսելով իր աւելածասիրտ հօր անգութ մահն ու Արշակ

Թագաւորին եղբրական կատարածը՝ փախաւ Հայաստանէն ու գնաց Կ. Պոլիս Յունաց կայսեր քով ուր կը գտնուէր նաև Մեծն Ներսէս:

Կայսրը Մուշեղը սպարապետ կարգեց և Հայ ու Յոյն զօրքերով Պապի հետ Հայաստան ղրկեց: Մուշեղ Հայրենի հողին վրայ Պարսից բանակները ջիր ու ցան ըրաւ վատասիրտ նապաստակներու նման՝ քանդեց Ատրուշանները, սրբեց բոլոր Հայաստանն ու Պարսիկ հետք մը չլքողուց:



ՄՈՒՇԵՂ ՄԱՍԻՎՈՆԵԱՆ

Այս առաջին յաղթութեան վրայ գօտեպնդուած՝ Մուշեղեան դուռնի երբ իրենց հայրական կոկորդալիը հազագներով գողցին միաձայն «Մուշ Տեառն ևս Մուշեղայ», անտառաներն ու լեռները թնդացին, դաշտերն ու հովիտները գրգեցան, անոնց դէմ՝ դէմի արծա-

դանդներէն արթնցան, սիրտ առին հայազարմ ոգիները, Հայրենիքի փարազները գունդ գունդ էլան, կանգնեցան, խորտակեցին Պարսիկ գերութեան երկաթները, մանաւանդ թէ գանոնք իրենց զէնք ու լրտաճ գարձուցին՝ անոնցմով Մուշեղի անպարտելի դրօշին տակ Պարսիկներէն վրէժնին առնելու:

Մինչդեռ Մուշեղ կազմ ու պատրաստ՝ քառասուն հազար ընտիր ու կարիճ ազատատէրներու հետ դարան նստած՝ կ'սպասէր, գազաշոտ Դապուհ ալ իր աղճատած խելագատակին մէջ նորանոր հնարքներ, նորանոր նենգութիւններ գարընելով՝ կը յուսար Մուշեղի յառաջխաղացութիւնը կտրել, Հայոց սահմանագլուխները գրաւել, բերդերուն տիրել և ճամբուն անցքերուն և կիրճերուն մէջ դարան նստիլ: Ուստի Մեհհրուստանի յանձնեց անհամար բանակ մը և ղրկեց իր առջեւէն, ինքն ալ ետեւէն, բոլոր տիպիներու խուճին առած՝ կուգար մըմաւալով հիմնայատակ կործանել Հայաստանը: Բայց երբ Պարսիկները Հայոց սահմանը պիտի անցնէին, ահա յանկարծ լեռներու ծայրերէն, բերդերու աշտարակներէն, պարիսպներէն, անտառներու խորերէն Հայկական կորովի բաղուկներէ թաւած յորդահոտ տարափ մը ժայթքեցաւ նետերու, սլաքներու, տէգերու և Պարսից բանակին վրայ տեղաց: Երբ Պարսիկներն անոնց տակ պիտի թաղուէին, դիմացին կանգնեցաւ Հայկական բանակն առաջնորդութեամբ Մուշեղի որ նստելէ աւելի կանգնած էր իր ձերմակ-նարսուկ երիվարին վրայ: Պարսիկները սարոսփահար՝ փախան վատարար Դառ Պարսիկներ գերի ինկան: Մուշեղ անոնցմէ վեց հարիւր հոգի սպաննեց և տիկ հանելով խոտով լեցուց զանոնք ի վրէժ իր Աստուկ հօրը, և արձանացուց Պարսից սահմանագլուխն որ ամէնքը տեսնեն թէ ի՞նչ կ'ըլլայ վատերուն վերջը, միայն իրբև Քրիստոնէայ խնայեց Դապուհի կիներուն: Պարսից թագաւորն ասոր վայր հիացած՝ սովորական մահկանացուներէ գերազանց, վեհ համարեց Մուշեղը, ի պատիւ և յիշատակ անոր մեծանձնութեան՝ նկարել տուաւ բաժակին վրայ Իլեցոպոլիս ու անոր ճերմակ օգապար ձիուն պատկերը:

Վերջապէս սթափելով երկար ազըլութենէ, վրէժխնդրութեան ոգւով վառուած՝ հաւաքեց բոլոր հարկատու — ամէն տեսակ լեզու, ցեղ ու կերպարանք — խառնիճաղանճ մարդիկ և անճոռնի փիղերու հետ ղրկեց Հայաստան: Մուշեղ բանակ յորդարեց Նպաս լեռան ստորոտը, Արածանի գետին մօտ Ջիրաւ դաշտին մէջ: Պարսից բանակին մէջ նշանաւոր էր քաջութեամբ ու յաղթանդամ հասակով Հնունաց Ուռնայր թագաւորն որ յիսորտանքով կը յեղ յեղէր թէ ի՞նչ միայնակ պիտի ճակատէր Հայոց գնդին դէմ: Պատերազմական շե-

փորները հնչեցին. Մուշեղ ակնթարթի մէջ ամէն կողմ՝ կը շողար, կ'որոտար, կը քաջալերէր, կը սրտապնդէր, թ շնամիրներուն աչքը կը շլտցնէր, մինչև անգամ խելքերնին կը թռցնէր: Կայծակի նման կը մտնէ անարի Արիներու դնդին մէջ՝ երբ արեւակէջ չորցած եղէգնուտի մը մէջ, Մամիկոնեան Աքիլլէոսի Սուրբ կ'այրէ, կը շափէ զանոնք: Ո՞վ էր որ համարձակէր դէմ՝ դնել զայրացած Առիւծին «Առիւծը կը գոչէ, ո՞վ է որ չի սարսիւր» Մինչ Մուշեղի մէն մի քայլ, մէն մի շարժում՝ օրհասարեր կ'ըլլար Պարսից, Սպանդարտս Կանաքական սրակնեայ արծուի նման ուժգին թափով կը յարձակի, կը ճեղքէ թ շնամիրներու ստուար խումբը, կը խոյանայ Լեկաց Ներսիս թագաւորին վրայ և մէկ հարուածով դետին կը տապալէ: Ետզու՛ թագաւորը հետիտան, փոսէ փոս ցատկերով, ծակէ ծակ սողակերով օձի նման, այս անգամ՝ ալ կ'ազատի Մուշեղ յանկարծ Ուռնայրի ետեւէն կը հասնի և նիզակը զարնելով անոր ճաղատ գլխուն՝ ձիէն վար կը ձգէ: Կը դիտէ անոր գլուխը և կ'ըսէ. «Եթէ դուն Ուռնայրն ես, ես ալ Մուշեղն եմ, բայց դուն շնորհակալ եղիր որ թագ ունիս՝ վասն զի ես թագաւոր մ'որդ չեմ սպաննէր» Մուշեղ թողուց որ Ուռնայր փախչի Հոնաց աշխարհը:

Պատերազմէն ետք ոմանք նախահնձով կապուտցած, սեւցած, միշտ կը չարախօսէին Մուշեղի մասին Պապին ու Վարազդատին առջեւ: Վարազդատ զուրկ մտրի ու որտի ազնուութենէ՝ նենգութեամբ ճաշի հրաւիրեց ու սպաննեց Մուշեղը Սահառունեաց Սմբատ իշխանին ձեռքով: Մարմինը մեծաշուք հանդէսով տարին Տարօն՝ հայրենի գաւառն ու թողեցին Գրակայ վանիչը:

27. Հ Ա Յ Ո Յ Ո Ս Կ Ե Դ Ա Ր Ը

Վ Ռ Ա Մ Շ Ա Պ Ո Ւ Հ


Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Մ Ք

«Անմուխ, անկրակ երիւ:»

Խոսրով Գ. ի յաջորդեց եզ-

Վառամբապուհի խոհեմ բայրը՝ Վառամբապուհ (400—421) որ խոհեմ, հեռատես ու շրջահայեաց քաղաքականութեամբ կառավարեց Հայաստանը: Անիկա լաւ զիտէր

անցեալ սխալներու տխուր հետեւանքները. այս պատճառաւ թէ՛ Պարսից և թէ՛ Յունաց հետ համերաշխաբար վարուեցաւ և անոնց երկուքին ալ վստահութիւնը գրաւեց: Այնպէս որ երբ Միջագետքի մէջ Յոյներն ու Պարսիկները գժտութիւն ունեցան, Վառամբապուհ երկու կողմի հաւանութեամբ զնաց հոն ու վէճերը մանրամասն քննեց ու արդարութեամբ կարգադրեց:



Վ Ռ Ա Մ Շ Ա Պ Ո Ւ Հ

Հայերը թէև Քրիստոնէութիւնն ընդունած էին դարեր առաջ, բայց որովհետև Գիր ու Գրականութիւն չունէին, Աւեստանը Հայ եկեղեցիներու մէջ կը կարդացուէր սեղ մը Յունարեւ, ուրիշ սեղ մըն ալ՝ Ասորե-րեւ: Ժամերգութիւնն ալ այդ շեղումներով կը կատարէին: Ժողովուրդը բան մը չէր հասկնար և ազատուած չէր Խաւարէն ու Հեթանոս սովորութիւններէ:

Վառձապուհի թագաւորութեան ատեն էր որ հնարուեցաւ Հայոց զիրև և սկսաւ Հայոց հաւար նոր դարագրուիւ մը: Այդ օրէն Հայերէն յեզուն ու Գրականութիւնը կեանք կ'առնեն, Հայ ժողովուրդը հոգեպէս կը մխիթարուի եւ կ'սկսի յառաջանալ Իմացական ճամբուն մէջ:

Մեսրոպ Մաշտոց Տարօնի (Մուշ) Հացիկ գեղէն էր: Մեծն

Ս. Մեսրոպ. Հայերէն գրի գիւտը

Ներսէսի աշակերտելով՝ անկէ սորված էր Պարսկերէն, Յունարէն ու

Ասորերէն: Յետոյ Մեսրոպ Մաշտոց Արքունի զիւանապետութեան պաշտօնը վարեց: Ասկէ ձանձրանալով՝ աշխարհէ հրաժարեցաւ և գնաց Գողթն գաւառը՝ Աւետարանը հոն քարոզելու: Այս միջոցին մօտէն տեսնելով թէ ժողովուրդը չի հասկնար Աւետարանի լեզուն՝ խորհեցաւ Հայերէն տառեր գտնել որ Ս. Գիրքը թարգմանէ Հայերէնի: Այս նպատակաւ զիմեց Ս. Սահակ Կարոյիկոսին ու անոր յայտնեց իր խորհուրդը: Հայրապետը Վաղարշապատի մէջ ժողով գումարեց՝ այդ մասին խորհրդակցելու համար: Ժողովին ներկայ էր Վառձապուհի թագաւորն ալ որ յայտնեց թէ Ասորիքի մէջ Դանիէլ անունով եպիսկոպոսին քով Հայերէն տառեր սեւած էր: Մարդ զրկեցին ու բերել տուին այդ տառերը: Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ աշակերտներ ժողովեցին ու փորձեցին այդ տառերը, բայց տեսան որ ատոնք պակաս են և Հայերէն բոլոր հնչիւնները—ձայները չունէին:

Ուստի Ս. Մեսրոպ շատերու զիմեց ձեռնունայն վերջն ապաւինեցաւ աղօթքի և Աստուծոյ ներչնմամբ գտաւ ու Յունարէնի վրայ ձեւակերպեց (404) Հայերէն տառերը:

Մէկ կողմէ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ իրենց աշակերտներու օգնութեամբ իսկոյն սկսան քարգնանել Ս.

Գիրքը: Առաջին անգամ թարգմանեցին Առակաց Գիրքն որուն սկիզբն է «Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն:» եւ միւս կողմէ Հայաստանի մէջ բազմաթիւ դպրոցներ բացին թագաւորին ձեռնառութեամբ:

Ընդունակ ու խելացի աշակերտներ. կերտները զրկեցին աւելի զարթ. Հայ ուսուցիչները գացած քաղաքներ՝ իրենց ուսումը կատարելագործելու: Ասոնք էին որ յետոյ եղան մեր եկեղեցւոյ նշանաւոր հայրերը, պատմագիրներն ու մատենագիրները, ինչպէս Ղեւոնց երեց, Եզնիկ Կողբացի, Կորիւն՝ Ս. Մեսրոպի կենսագիրը, Մովսէս Խորենացի՝ Հայոց Պատմութեան հայրը, Դաւիթ Աճյաղք փիլիսոփայն, Եղիշե՛ վարդա՛նանց պատմութեան հեղինակը, Ղազար Փարպեցի՝ որ գրեց վարդանանց ու վահանաց պատմութիւնը, և այլն:

Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի, Ոսկեղար ու Գրական զարթում. նաև իրենց աշակերտներուն անձնութեամբ Հայ Գրականութիւնն ու Լեզուն այնքան ծաղկեցան ու զարգացան Ե. դարուն որ արդարև կոչուեցաւ Հայ Գրականութեան Ոսկեղարը:

Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի նշանակութիւնը շատ մեծ է, որովհետև իրենց ջանքով գտնուած տառերուն շնորհիւ ծաղկեցաւ ու բարգաւաճեցաւ մեր Գրականութիւնն և Հայ քրիստոնէութիւնն ընդ միշտ դարձաւ Ազգային կրօնի:

Գ Ա Ս

Թելադրութեամբ

Խոսում զ.ի ո՞վ կը յաշորդէ . — Վաւաճապունի ի՞նչ նկարագրի տէր էր . — Ի՞նչ փաղափականութեան հետեւեցաւ . — Հետեւանքն ի՞նչ եղաւ . — Ինչո՞ւ տեղ մը յունարեան , ուրիշ տեղ մը ասորեան կը կոչուէր եկեղեցական արարողութիւնը . — Ժողովուրդն ի՞նչ վիճակի մեջ էր . — Վաւաճապունի ասեմն ի՞նչ մեծ նշանաւոր դեպք մը պատահեցաւ . — Անոր հետեւանքն ի՞նչ եղաւ . Ո՞ր տեղացի էր Մեսրոպ Մաւսոց . — Ի՞նչ տորմած էր . — Ի՞նչ պատժու վարեց . — Ինչո՞ւ Գողթան գաւառը գնաց . — Երբ խորհեցաւ Հայերէն գիր հնարել . — Ասոր համար որո՞ւ գիտեց . — Ս. Սահակ կարողիկոսն ի՞նչ քաւ . — Ժողովին ո՞վ ներկայ էր . — Թագաւորը ժողովին ի՞նչ յայտնեց . — Այս գիրերն ո՞ւր բերին եւ ի՞նչպէս փորձեցին . — Փորձին արդիւնքն ի՞նչ եղաւ . — Այնուհետեւ ի՞նչ քաւ Ս. Մեսրոպ . — Որո՞ւ ներքերնչմամբ եւ ե՞րբ ձեւակերպեց Հայերէն տառերը . — Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ Գրի գիւտեան ետ ի՞նչ քրին . — Առաջին անգամ ի՞նչ քարգտնեցին . — Ինչե՞ր բացին . — Ո՞վ ձեռննու եղաւ այս մասին . — Որո՞նք զրկուեցան ուրիշ փաղանքեր եւ ինչո՞ւ . — Որո՞նք են նշանաւոր աշակերտները . — Ո՞վ է Ս. Մեսրոպի կենսագիրը . — Ո՞վ է Մովսէս Խորենացին . — Ո՞վ է Անյաղը փիլիսոփայն . — Եղիշէ ի՞նչ գրեց . — Ղազար Փարպեցի . — Ո՞րն է Հայոց Ոսկեղէն դարը . — Ինչո՞ւ . — Ս. Մեսրոպ ու Ս. Սահակ ինչո՞ւ համար նշանաւոր եղան ընդ միշտ :

Ը Ն Յ Ե Ր Ց Ո Ւ Մ

Ն Ա Ե Ն Ա Վ Ա Ն Գ Ի Բ

Մարդիկ շատ ետքն է որ գիրը հնարած են : Գիրն ի սկզբան այն էր, ինչ որ է այս օրուան մեր գործածածը : Գիրը նշաններէ սկսելով շատ դանդաղորէն զարգացած է :



ՍԵՊԱԳԻՐ



ՊԱՏԿԵՐԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հին ատեններն երբ մարդիկ չէին ուզեր որ իրենց սէ է առարկայն, օրինակ՝ պաղատու ծառը, ընտանի անասունը կամ իր ազգականներու գերեզմաններն ուրիշներու հետ փոխուէին կամ կորուսէին, անոնք այդ առարկայներու վրայ սէ է նշան կը դնէին : Հետզհետէ Հանացին աւելի որոշ ձև մը տալ այդ նշաններուն :

Ա Բ Գ Ե Ձ Է Ի

Լ Ր Կ Հ Ղ Մ Յ Ի Ե Ն :

ՄԻՋԻՆ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԱԳԻՐ

Յետոյ մարդիկ ուզելով նշաններու միջոցաւ սէ է միտք արտայայտել ու հասկցնել, ուղղակի կը նկարէին այն առարկայն որուն մասին էր խօսքը :

Նկարներով այս կամ այն առարկայի մասին իրարու գաղափար տալուն մէջ վարժուելէն ետք, կ'սկսին այն նկարի միջոցաւ աւելի բաղադրեալ իմաստներ յայտնել: Օր. երբ կ'ազգէին բացատրել թէ մարդիկ, կովերը կամ ձիերը գացած են, կը նկարէին գացող մարդ, կով, ձի, և այլն: Իսկ եթէ ուզէին ըսել թէ մարդիկ իրարու հանդիպեցան կամ իրարմէ բաժնուեցան, կը նկարէին դէմ առ դէմ կանգնող կամ իրարմէ հեռացող մարդոց պատկերները:

ԵՐԹ ԵՌ ԿՌ ԶԻԻՆՆ ՈՎ
ՎԵՄ ԵՒ ՆԱՍԻՆՉԵԱՅ ԸՄԻ
ՃԵՆԱՊԱՐՏԱ ՆՈՐԱ ԵՒ ԼՅՐ
ԻՄ ԱՍՄՆԱԳՈՅՆ ԵՐԱ ՔԵՆ
ՉՆԱ.

ՄԻՋԻՆ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳԼԵԱԳԻՐ

Բայց կեանքի պայմաններն որչափ կը կնճռատէին, մարդիկ այնչափ պէտք կ'ըզային նշաններով աւելի բազմամասն իմաստներ ար

Բ, Է, Ժ, Ծ, Կ, Ղ, Ը, Չ, Փ

Բ, Է, Ժ,

Ծ, Կ, Ղ, Ը, Չ, Փ

ԵՐԳԴԵՉԷԸԹԺԻԼԽ Ծ Կ Տ

ՉՂՃՄՅՈՉՊ ՉԹՎՄՐԻՓ

ԱՆՑՄԱՆ ԳԻՐ

տայայտել: Եւ որովհետեւ այս պարագային գործն աւելի կը դժուարանար, մարդիկ կ'սկսին ու է առարկայի նկարն ամբողջ նախագառութեան տեղ գործածել, որպէս զի շատ ժամանակ չկորսնցնեն նկարելու համար: Յաճախ ամբողջ առարկայն չէին նկարէր, այլ անոր մէկ մասը, ուրկէ դիւրին էր հասկնալ թէ ի՞նչն էր առարկայի մասին էր:

Այս եղանակաւ յօրինուած գիրը կը կոչուի Պակեւագիր: Մասնաւորապէս Հին Եգիպտոսի մէջ շատ զարգացած էր Պատկերագիրը:

ԵՐԹ ԵՌ ԿՌ ԶԻԻՆՆ ՈՎ ՎԵՄ ԵՒ ՆԱ
ԽԱՆՉԵԱՅ ԸՄԻ ՃԵՆԱՊԱՐՏԱ ՆՈՐԱ
ԵՒ ԼՅՐ ԻՄ ԱՍՄՆԱԳՈՅՆ ԵՐԱ ՔԵՆ ՉՆԱ

ՓՈՌԻ ԵՐԿԱԹԱԳԻՐ

Յետոյ մարդիկ տշխատեցան պատկերագիրներու աւելի պարզ ձև տալ, որպէս զի գրելը դիւրին ըլլայ ու մարդիկ կարենան արագ գրել: Այդ բազմութիւն ու երկարժամանակեայ սղուծներու և փոփոխութեանց հետեւանքը սա՛ եղաւ որ յառաջ եկաւ ուրիշ տեսակ գիր մը՝ բոլորովին անմասն պատկերագրին: Այդ տառերը ճիշդ գամի ձև ունենալնուհ համար՝ կը կոչուին Բելեւագիր: Այդ բեւեաագիրը գործածած են հին ատեն Բարելոն ու Ատրեստան և ասոնց գրացի երկիրները, ինչպէս՝ Հայաստան:

Հին ատեն քուշք ալ չիկար: Թղթի տեղ կը գործածէին աղիւսի կտորներ: Նախ թաց աղիւսին վրայ պատկերագրով կամ բեւեաագրով կը գրէին իրենց ուղածն և յետոյ գրուած աղիւսը կը քրծէին: Թրծուած աղիւսը կրնայ հաղարու որ տարի անվթար մնալ: Շատ ետրն է որ մարդիկ սորվեցան գրել նաև մագաղաքի վրայ:

Ս. ՄԵՍՐՈՊ

439ի ձմեռն էր: Հայոց Մեհեկան ամիրը՝ նոր կը մտենար իր կէսին ու Արարտեսան մեծ գաշտին վրայ դեռ կը տիրէր սառնամանիքներու մեռելութիւնը: Բայց մարդիկ ցուրտ ու անզգայ չէին ընուլթեան պէտ: Անոնց մէջ սաստիկ յուզում մը կը տեսնուէր: Տխուր դէպք մը պատահած էր: Վաղարշապատի մէջ, կաթողիկոսական ապարանքը, Մեհեկան 43ին 60 տարեկան ծերունի մը մեռած էր:

Վերջին տասը տարիներու ընթացքին մէջ Հայ ժողովուրդը մեծամեծ կորուստներ ունեցած էր: Կործանուած էր իր թագաւորութիւնը, վերջացած էր Հայ-Պատերազանը: Արշակունեաց սոհմը, Կաթողիկոսական իշխանութիւնը յափշտակած էին Լուսաւորչի ցեղէն ու յանձնած էին վատազգի ու արատաւոր օտարազգիներու: Դեռ նոր վեց ամիս անցեր էր. ինչ խորին վշտի մէջ մեռած էր գահէն հեռացած Հայոց Կաթողիկոսը, որուն հետ կը վերջանար Լուսաւորչի կրոնական իշխանութիւնը: Իսկ հիմայ վերջին այս կորուստը կը տանէր իրեն հետ գեղեցիկ յիշատակներ: Կ'զգային թէ Հայ աշխարհէն կը վերնար սուրբ մը: Կաթողիկոսարանի մէջ հաւաքուած էին, կը մտածէին թէ Հայաստանի մէջ ո՞ւր պէտք է փնտաւել ափ մը հող որ այդ մարմինն իր ժողովուրդի մէջ ամփոփելու պատիւն ունենայ: Երեք տեսակ կարծիքներ կային երեք վիճող կողմեր. ամէն մէկը տեղ մը կ'առաջարկէր, իր պատճառաբանութիւնները յառաջ կը բերէր և չէր ուզեր զիջանիլ ուրիշներու:



Ս. ՄԵՍՐՈՊ

Այդ ժողովին Առաջին Հայ ուսուցիչն էր Գործած էր 35 տարի: Գրքի հերոսն առաջին անգամ Հայ հողի վրայ կ'ստանար այն պատիւն ու մեծարանքները զոր մինչև այն ատեն սովոր էին ընծայել Զէնքի հերոսին:

Վիճարանողներու մէջ էր Հայոց Հաղարայեանը՝ Վահան Ամասունցի որ Առաջին Հայ ուսուցիչն աշակերտներէն էր և յաջողեցաւ իր սիրելի վարժապետն իր Օշական ամրոցին մէջ թաղել:

Այդ վարժապետը Ս. Մեսրոպ Մառոնէն էր, Տարօն գաւառի Հացեկաց գիւղէն: Վարդան անուն մէկու մը որդին՝ ծնած 353ին: Մանուկ հասակէն մտացի ու աշխատասէր՝ փութով զարգացաւ և սորվեցաւ Գունարին լեզուն ու գրութիւնը: Նախ Ներսէսի փոքրուոր եղաւ, վերջն արքունիքին քարտուղար, դիւանապետ, թարգմանիչ: Վերջապէս քանի մը տարիէն առանձնացաւ Տարօն. հան պարապեցաւ Գրչի աշխատութեան և աշակերտներ հաւաքեց քովը: Յետոյ Տարօնի այս լուսոթեւ տրծիւն իր աշակերտներով քարոզեց Սիւնեաց ու Գողթան դաւաճները:

Ս. Մահակ ու Ս. Մեսրոպ իրարու աջակից՝ կ'աշխատին Հայ ազգն աղատել Յոյն ու Ասորի լեզուներու դարտուր գերութեան շղթայներէն, կը ճշգրտեն օտար այբուբենի սխալները, կը հնչեն եկեղեցիներու մէջ հայրենաշունչ բարբառով քարոզարար երգեր ու օրհնութիւններ: Արքունի վճիռներն ու հրովարտակները, հայրապետական կոնդակներն ու աղօթագրքերը նոր փայլ մը կ'առնեն, նոր գեղեցիկութիւն ու քարոզութիւն կ'զգենուն: Ս. Գիրքը Հայերէնի թարգմանիչն էր, Ս. Մեսրոպ կը շրջէր ամէն տեղ, կը սորվեցնէր անդադար, կը վարդապետէր անձանձիր, խումբ խումբ աշակերտներ կը ժողովէր, ամէն տեղ Հայերէն լեզուի և ուրիշ գիտութեան վարժարաններ կը բանար և Գունական ճեմարաններ կը հաստատէր:

Ս. Մեսրոպ լուսոթեւը ջահ մըն էր որուն նշողները կը հասնէին մինչև շրջակայ աշխարհները: Վերջ ու Աղուանք իրարու ձեռքէ կը խլէին զայն. անոնց համար նշանագրեր կը հնարէ, անոնց լեզուով կը թարգմանէ Ս. Գիրքն և գործքներ կը հաստատէ այն տեղերը:

Ս. Մեսրոպի համբաւը կը հասնի մինչև Բիւզանդիոն՝ Փոքր Թեոփոս կայսեր ու Ակակիոս Պատրիարքին: Ասոնք կը բաղձային տեսնել զայն: Առիթը չուշացաւ. Ս. Մահակի յանձնարարութեամբ Վարդան Մամիկոնեանն իրեն հետ առած՝ Բիւզանդիոն գնաց, Հոն սիրով հիւրընկալուեցաւ, պատուեցաւ և իրեն տունն Ակալիոս պատուանունն որ Մայրաքոյն վարդապետութեան աստիճան էր: Կայսրն ու Պատրիարքն արտօնեցին որ Ս. Մահակ հսկուէ Գունարածին Հայերն ալ և հոն նաև Հայերէն լեզուի վարժարաններ բացուին:

28. ՊԱՅ-ՊԱՀԼԱԻ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Պ Ա Տ Մ ՈՒ Ա Ծ Ք

«Անխելք կը դատի, խելօքը կ'ուսէ:»

Վառաձայուհի էր Ս. Սահակաբեկը՝ հակի խնդրանքով նորէն թագաւոր կարգուեցաւ Սոսրով Գ. որ որ հաղիւ մէկ տարի թագաւորեց:

Յազկերտ Ա. փորձելով վերջ տալ Արշակունեաց թագաւորութեան՝ Հայաստան զրկեց իր որդին Շապուռն որ չորս տարի թագաւորեց անարգաբար: Հայ նախարարներն արհամարհանքով կը վարուէին Շապուռնին հետ, մանաւանդ Ասոն Մոկացի* նախարարը: Շապուռն լսելով իր հօր հիւանդութիւնը՝ գնաց Պարսկաստան և հոն սպաննուեցաւ հօրը մահէն ետք: Հայերը ներսես ձիւնակացի իշխանին թելադրութեամբ ապստամբեցան ու հալածեցին Պարսիկները:

Ս. Սահակ ներքին ու արտաքին խռովութիւններէ զրզուած՝ իր ուշադրութիւնը դարձուց Յուսական Հայաստանի վրայ: Մեսրոպ Մաշտոցն ու իր թոռը Վարդան Մամիկոնեան զրկեց Կ. Պոլիս՝ կայսրէն խնդրելու որ Յունական Հայաստանի մէջ Յոյները Հայերէն լեզուն սորվեցնելու արգելի չչարուցանեն: Կայսրը հրովարտակով արտօնեց Ս. Սահակի խնդիրքն ու Վարդանի ալ շնորհեց Սպարապետութեան պատիւ:

Յազկերտ Ա. յաջորդ՝ Վառաձայերը սիրաւանելու անուանելով որ Պարսկական Հայաստանն անտէր մնաց ու Հայերը կը գաղթեն, ուղեց հաշտուիլ Հայոց նախարարներու հետ: Նախարարները Ս. Սահակը խորհրդակցութեան համար Արարատ հրաւիրեցին: Հայրենասէր Հայրապետին կողմէ Սմբատ Բագրատունի ու Վարդան Մամիկոնեան ներկայացան Վառամբ: Պարսից թագաւորը մեծ պատուով ընդունեց զանոնք և Վառաձայուհի 18 տարեկան որդին Արտաշէսը Հայոց թագաւոր կարգեց (422): Արտաշէս Պարսիկ անունով կոչուեցաւ Արտաշիւր:

Արտաշիւր իր մոլութիւններուն համար ատելի եղաւ Արեւիկունեաց վախճանը նախարարներուն: Ասոնք դիմեցին Ս. Սահակի որ գահընկեց ընէ զայն ու անոր տեղը Պարսիկ իշխան մը հրաւիրէ: Ս. Սահակ նախարարները յորդորեց՝ ըսելով. «Քա՛ւ լիցի, հիւանդ ոչխարս գայլի հետ չեմ փոխեր. անոր առողջութիւնը մեզի վնասակար է:» Նախարարները չհնազանդեցան Ս. Սահակի, այլ գացին Տիզրոն ու գանգատեցան թէ՛ թագաւորին և թէ՛ Կաթողիկոսին վրայօք: Վառամ Ե. առանց քննելու՝ Արտաշիւրն ու Ս. Սահակը Պարսկաստան կանչեց և հոն պահեց: Մէկը զրկեց թագէ (433) և միւսը կաթողիկոսութեանէ: Այսպէս վերջացան Հայ-Պահլաւ Արեւիկունեաց քաղաւորութիւնն ու Լուսաւորչի ցեղի կաթողիկոսութիւնը:

Այնուհետև Պարսիկ մարզպաններ Հայաստանը կառավարեցին ու Ս. Սահակի տեղ Կաթողիկոս կարգեցին Սուրմակը:

Գ Ա Ս

Թելադուրեամբ


Վճամեապուհեն ետք ո՞վ եղաւ քազաւոր. — Որո՞ւ խնդրանեով. — Յազկեռս Ա. ինչո՞ւ իր Շապուհ որդին Հայասան ղրկեց. — Հայ նախարարներն ի՞նչպէս կը վարուէին Շապուհի հետ. — Շապուհ ինչո՞ւ Պարսկաստան գնաց. — Հայերն որո՞ւ քելադուրեամբ ապսամբեցան ու ի՞նչ քրին. — Ս. Սահակ ինչո՞ւ Յունական Հայասան գնաց. — Զորո՞ց ղրկեց Կ. Պոլիս եւ ինչո՞ւ. Կայսրն ի՞նչ արձօնեց. — Ո՞վ եր Վճամ Ե. — Ի՞նչ քրաւ. — Նախարարները զո՞վ Արարատ հրաւիրեցին. — Ս. Սահակ զորո՞ց ղրկեց Վճամի եւ ինչո՞ւ. — Վճամ Ե. զո՞վ քազաւոր կարգեց. — Արժաշտ ինչո՞ւ ասելի դարձաւ նախարարներուն. — Նախարարներն ի՞նչ խնդրեցին Ս. Սահակէն. — Ս. Սահակ ի՞նչպէս յորդորեց նախարարները. — Նախարարներն ո՞ւր գացին եւ ի՞նչ գանգատեցան. — Վճամ Ե. ի՞նչ քրաւ Ս. Սահակն ու Արժաշտը. — Ե՞րբ վերջացան Արեւիկունեաց քազաւորութիւնն ու Ս. Գրիգորի ցեղի Կաթողիկոսութիւնը. — Հայասան այնուհետեւ ի՞նչպէս կառավարուեցաւ. — Ո՞վ Կաթողիկոս դրուեցաւ Ս. Սահակի տեղ:

Ը Ն Յ Ե Ր Յ Ո Ւ Մ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՆ

Ս. Ներսէսի արժանաւոր որդին էր Ս. Սահակ Պարթե: Իր կրօնական ու մտաւոր զարգացումն առաւ Կեսարիոյ ու Բիւզանդիոնի մէջ ոչով յարաբերութիւն ունեցաւ Գ. դարուն Եկեղեցւոյ գերագոյն անձերու հետ: Ս. Սահակ իր կեանքի առաջին երեսունհինգ տարիները Հայաստանէն դուրս անցուց և շատ պատիւներ ու պաշտօններ ալ ստացաւ Բիւզանդիոնի մէջ իր անձնական կատարելու-

թեամբ ու ազգատոհմի ազնուականութեամբ: Գտարիկ մը միայն ունեցաւ՝ Սահականոյ զոր յետոյ հարսնութեան տուաւ Մաւրիկոնեան Համագասպ իշխանին: Սահականոյ ձեռն կրօնի ու Հայրենիքի երեք սիրալի ու պանծալի գիւցազն նահատակներ — **Կարմիրն Վարդան**, Հմայեակ ու Համագասպ: Ս. Սահակ անդրոնիկ թողը որդեգրեց և առանձին խնամքով մեծցուց ու պահեց իբրև սրբազան աւանդ մը:



Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՆ

Երբ 389ին բաղմեցաւ Մեծն Ներսէսի աթոռը, իր հօր քաղցր յիշատակներն արթնցուց ժողովրդին սրտին մէջ և այնուհետեւ եղաւ անոր մտակ մխիթարութիւնն ու ապարեկն մտէն վշտի մէջ: Մեծ ու զորաւոր էր Ս. Սահակի ազգեցուած լուծը ժողովրդին վրայ. ո՛չ միայն հայր ու դաստիարակ էր ժողովրդին, այլ և իշխող ու թագաւոր սիրտերու: Երբ Վճամ Ե. Ս. Սահակը ձգեց կաթողիկոսութեան, տանկոյ գնաց Տելզոն: Հո՞ն ցուցուց իր պերճախօս ու կորովի հանձարը, սիրելի ու պատկառելի եղաւ թագաւորին, հաստատուեցաւ Հայրապետութեան մէջ, բոլոր խնդիրքն ընդունուեցաւ, փետայն՝ Համագասպ տուածեան մէջ, բոլոր խնդիրքն ընդունուեցաւ, նաեւ կնքել ու հաստատել Մամիկոնեան սպարապետ կարգուեցաւ, նաեւ կնքել ու հաստատել տուաւ Հայ նախարարներու Իանկանակը*:

Ամէն բանի մէջ հետեւող ու նմանող եղաւ հօրը. նորոգեց, հաստատեց քաղաքական ու եկեղեցական բարեկարգութիւններ, շէնցուց, պայծառացուց Եկեղեցին ու Հայրենիքը, իրախօսեց մտա-

ւոր ու բարոյական կրթութիւնը, ուսումն ու զիտութիւնը, իր քաջա-
լերութեամբ ու թեւադրութեամբ Ս. Մեսրոպ Տնարեց Հայոց գիրքը:

Իր գերազանց պերճախօսութեամբ ո՛չ միայն ողբեց Վ. Ասամի
բարկութիւնը, այլ և այնքան տարի ամայի մնացած արքունի դասուն
վրայ բազմեցուց Վ. Ասամչապուհի որդին՝ Արտաշէսը, Բայց ինչպէս որ
Պապ ապերախտ Գանուեցաւ Մեծն Ներսէսի, այնպէս ալ Արտաշէս
ստաճակ ու անաստող եղաւ Ս. Սահակի խրատներուն, մինչև որ իր
անկարգութեամբ ու զազրութեամբ բոլորովին զուեցուց Ազգին մե-
ծամեծներն ու իշխանները: Ատոնք նշնպէս արճամարտէրով Ս. Հայ-
րապետին շահաւէտ խրատն ու խորհուրդները՝ զիմեցին Պարսից ար-
քունիքն և մտանեցին Մոլորեալ դաւնուկն Արտաշէս իրմէ աւելի
զերծ, անօրէն, արիւնարբու գայլին ձեռքը: Ամբաստանեցին նաև
Ս. Սահակն ու զայն յանցաւոր ցուցուցին տէրութեան օրէնքին դէմ:

Ս. Սահակ փութաց Տիգրան՝ Վ. Ասամի արքունիքը: Վեհ ու կորովի
ատենախօսութեամբ ոչ բոլորովին անպարտ, այլ անդատապարտ
ցուցուց Արտաշէսը, կարկեց հակառակորդներու լեզուները, մինչև
իսկ համարձակեցաւ Պարսից կրօնքին ստութիւնը կշտամբել: Թէև
Ս. Սահակ անպարտ արձակուեցաւ ատենանէ և ակնածելի եղաւ
Պարսիկներուն, սակայն Վ. Ասամ Ե. բոլորովին մարեց Արշակունի թա-
գաւորներու վերջին կայծն և միանգամայն Հայաստանն առժամեայ
զրկեց Ս. Սահակի հոյրագութ խնամքէն: Պարսիկ բանակալութիւնը
քարաւոր գերութեան շղթային առաջին օղակն անցուց այրիացած
Հայաստանի պարանոցը, երբ Վ. Ասամ Ե. Հայ թագաւորի տեղ Պարսիկ
Մարզպան մը կարգեց, իսկ Ս. Սահակի փոխանորդ դրաւ շարաւեզու-
Սուրմակ երէցը:

Նախարարները դարձեալ խնդրեցին իրենց գթատէր ու ոնծ-
նուէր հովելը: Բայց երբ Վ. Ասամ մասնական իշխանութիւն մը կ'ուզէր
յանձնել Ս. Սահակի, նորէն գնաց Տիգրան ու ջատագովեց իր 40
տարիէն աւելի հաւատարիմ ծառայութիւնը: Ամենքն ալ հիացան
ու պատկառեցան անոր անվեհեր լեզուէն: Ս. Սահակ խնդրեց Վ. Ա-
մէն որ Հայ նախարարներուն պատուոյ և իշխանութեան Դաննամակը
դարձեալ հաստատէ և Արշակունեաց խնամի իշխաններուն կալուած-
ներն ետ դարձնէ: Վ. Ասամ Ե. կատարեց Հայրապետին բոլոր խնդ-
րանքները. անոր թո՛ւր Ս. Վարդանը հաստատեց Մամիկոնեանց տե-
րութեան ու Հայոց սպարապետութեան պատուոյ մէջ:

Ս. Սահակ յաղթանակաւ ետ դարձաւ իր աթոռը, բայց քիչ
ատենէն թողլով զայն՝ առանձնացաւ Բագրեւանդ գաւառը՝ Ս. Յովհ-
հանու ուխտատեղին: Ազգին հոգեւոր խնամքը յանձնեց իր հոգեկից

Ս. Մեսրոպի և շատ չանցած՝ Բյուր* դիւղին մէջ աւանդեց իր հոգին
(439 Սեպ. 5):

Երբոր Սուրբին մահուան բօթը հնչեց, ամէն կողմ՝ տիրեց սուգ
ու ցաւ. ազնուական իշխաններու, քահանայներու խուռն բազմու-
թիւն մը ու իր աշակերտները տրտուտախառն հեկեկանքով, շքեղ
հանդէսներով տարին Սուրբին մարմինը մինչև Աշխիշաս* և հանգչե-
ցուցին մաքուր տապանի մէջ: Մամիկոնեանք Անոր վրայ արժանաւոր
մատուռ մը ու մեծապայծառ եկեղեցի մը կանգնեցին:

29. ՄԱՐԶՊԱՆՆԵՐ ՌԻ ԿՈՄՍԵՐ

Պ Ա Ս Մ Ռ Ի Ա Ս Բ

«Անխելին հացը՝ խելօխն փորը:»

Հայ-Պահլաւ Արշակունւ
Պարսկական Հայաստան եաց թագաւորութեան կործա-
նուէն ետք Պարսիկ Սասան-
եան թագաւորները Հայաստանի մեծ մասին տիրացան,
մինչդեռ յո՛րք մասը Յուևաց ձեռքն աւելած եր:

Պարսիկներն իրենց բաժինը կը կառավարէին Մարզ-
պան կոչուած կուսակալներով, միայն թէ բոլոր Հայ
նախարարներն իրենց երկրին մէջ կէս անկախ էին, կը
վարէին տեսակ մը ինքնօրինութիւն և ունէին առանձին
զօրք: Մարզպանները Դուլին կը նստէին:

Թէոդոս Բ. ու իր յաջորդ-
Յուևական Հայաստան ները Հայաստանի Յուևաց բաժ-
նին կառավարութիւնը յանձնեցին
կորն կոչուած զինուորական իշխաններու, միայն թէ
Հայ նախարարներն իրենց երկիրներուն մէջ ինքնօրէն
մնացին: Թէոդոս Բ. իր Հայ ու Յոյն զօրքերուն ապաւ-

հովութեան համար նորոգեց կարին* քաղաքն ու Թեո-
դոպոլիս կոչեց :

Յունաց բաժնի նախարարներու իշխանութիւնն սկզ-
բան ժառանգական էր հին սովորութեան համեմատ : Յե-
տոյ ապստամբութեանց պատճառաւ այս սովորութիւնը
փոխուեցաւ և նախարարներու ժառանգորդ կ'ըլլային
այն իշխանները զորոնք կայսրը կ'ընտրէր :

Յունաց կայսրերն ընդհանրապէս Հայ
Հայ կոմսեր իշխաններու կը յանձնէին իրենց բաժնին
Վերակացոռքիւնը : Այսպէս իբրև Վերա-
կացուր = Դուխ նշանաւոր են Տանաս, Ծնառն, Հանա-
զապ, Մուշեղ Մարիկոնեան ևայլն : Սակայն Հայերը
դառն հալածանք ու նախատինք կը կրէին Յոյներէն կրօ-
նական կամ եկեղեցական տարբերութեանց համար :

Գ Ա Ս

Թելադուրեամբ

Ե՞րբ Պարսիկները սիրացան Հայասանի մեծ մա-
սին . — Փոքր մասն որո՞նց ձեռքն եր . — Պարսիկներն
իրենց բաժինն ի՞նչպէս կը կառավարէին . — Որո՞նք
անկախ էին . — Մարզպաններն ո՞ւր կը նստէին . —
Յոյներն իրենց բաժին Հայասանն ի՞նչպէս կը կառա-
վարէին . — Հայ նախարարներն ի՞նչ կեանք կը վարէին .
— Ո՞վ նորոգեց կարին քաղաքն եւ ի՞նչ անուանեց . —
Ինչո՞ւ նորոգեց . — Յունաց բաժնի նախարարներուն
իշխանութիւնն ի սկզբան ի՞նչպէս եր . — Յետոյ որոնք
նախարար կ'ընտրուէին . — Յունաց կայսրերն ընդհան-
րապէս Հայասանն ի՞նչպէս կը կառավարէին . — Ո-
րո՞նք են Հայ նշանաւոր դուխերը . — Յոյներն ինչո՞ւ
կը նեղէին Հայերը :

Ը Ն Յ Ե Ր Յ Ո Ւ Մ

Լ Ե Ձ Ո Ւ

Նախապատմական մարդիկ ի սկզբան՝ ինչպէս որ իրենց կենցա-
ղով ու ապրուստով չէին տարբերեր զիրենք շրջապատող կենդանի-
ներէ, այնպէս ալ չէին տարբերեր խօսելու եղանակով : Մարդիկ
ի սկզբան չէին գիտեր խօսիլ այնպէս, ինչպէս որ հիմայ մենք կը խօ-
սինք, այլ միայն կենդանիներու նման զանազան ճիշեր ու ձայնար-
կութիւններ յօդել գիտէին :

Ահա այդ ճիշերէն ու ձայնարկութիւններէն է որ հետզհետե
շատ յամբօրէն ու երկարատե քարերու ընթացքին մէջ կազ-
մուած, զարգացած ու ճոխացած է մարդկային լեզուը :

Լեզուի կազմութեան նպատակն է մանուսանդ այն պարագայն
ուր մարդիկ սկսան մանուսանդ մեծ խմբերով ապրիլ : Այդ ատեն
ստիպուած էին կարծիքներ փոխանակել և առօրեայ գործերու մասին
իրարու տեղեկութիւններ հաղորդել : Օրինակ, խումբն երբ կը պատ-
րաստուէր որսի երթալ ու խմբի անդամներէն մէկն իր ընկերներուն
հասկցնել կ'ուզէր թէ այս ինչ տեղը վաղը, արջ, գայլ կամ ուրիշ
գազան կայ, կ'սկսէր այս կամ այն գողտնի նման ձայներ արձակել :
Այսպէս շունն անոնց համար «հաւ հաւ» էր, կատուն՝ «մալաւ»,
թռչունը՝ «ծիւ, ճիւ», ձագուկները՝ «ծիւ ծիւ» ևայլն : Նոյն եղա-
նակով մարդիկ խօսքեր կը կազմէին թէ՛ բնութեան զանազան երեւ-
ոյթներն և թէ՛ իրենց գործածած գործիքներն որոշելու համար :

Եւ որչափ մարդոց կեանքն ու ապրելու պայմանները կը կնճառ-
տէին, նոյնչափ ևս անոնց գործածած բառերու մթերքը կ'աւելնար,
լեզուը ու ոճը կը հարստանային :


Յաճախ երբ մարդիկ միեւնոյն բառը տարբեր լեզուով ու
եղանակաւորուցնելով կ'արտասանէին, տարբեր իմաստ կը յայտնէին :
Օրինակ, երբ ուզէին ըսել թէ այն ինչ բանը շատ հեռուն կը գտ-
նուի, միայն կ'ըսէին «հեռուն» :

Մարդկային զանազան ցեղերն իրարմէ տարբեր երկիրներ ապ-
րելով՝ անոնցմէ իւրաքանչիւրն իր բնական երկրին ու իր ապրելու
պայմաններու համեմատ իրեն յատուկ լեզու կ'ստեղծէր :

Միեւնոյն լեզուն խօսող ու միեւնոյն երկրի սահմանները բնա-
կող բոլոր մարդիկ կը համարուին միեւնոյն ազգի անդամ :

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Տարօնի Խորոնի գիւղէն էր Մովսէս Երրօսասարգութեան իր միւս ընկերներուն հետ ճամփորդած էր Եգիպտոս, Բիւզանդիոն, Աթէնք ու Աղեքսանդրիա ա՛լ աւելի զարգտնալու։ Երբ Հայաստան դարձաւ, հարցուց, փնտռեց իր հոգեւոր դաստիարակները, սիրելիներն ու ծանօթները։ Ամէն տեղ լռութիւն ու ամոլութիւն, մանաւանդ թէ ամէն կողմէ հեծութիւն ու ողբեր կը լսուէին, աւերակներու դերուակներ կը տեսնուէին, թագաւորներու և իշխաններու շքեղ սպարանքները կը ծխային տակաւին, Հայաստան աշխարհը գերեզմանական քոտմնելի տեսարան մը կ'ընծայէր զոր ինք տարինեք առաջ ծաղկած ու բարգաւաճ տեսեր ու թողուցեր էր։



ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Երկարամեայ պանդուխտ սաղեցաւ, շուարեցաւ։ Ինք իրեն կը հարցնէր զարմանալով. «Ասիկայ իմ Հայաստանն է, քողորիկ հայրենիքս է. գուցէ խարուեր, օտար երկիր մը եկեր եմ։» Սակայն

պղպիտի խօսքերով չէր կրնար ինք զինք խաբել։ Ո՛րչափ ալ ջանար, Հայրենիքի քարերը կ'ազաղակէին թէ դու և մեր ծանօթ Մովսէսն ես իր կոխած նուիրական վայրերը կը յիշեցնէին իրեն քանի մը տարի յառաջ հանդիպած սխրալի պատահարները։ Կրակի ու սառնամանիքի դետեր խառն՝ անցան Խորենացոյն Հայրենիքի համար հալած, մաշած սրտէն։ Աշտիշատի սրբին ու Օշականի սրբին ուխտի երթալէն ետք, կը հաստատուի իր սիրելի քեռիին ու վարդապետին նուիրական դերեզմանին քով։ Գրեթէ 30 տարի անդու ու մեղուաջան կը գրէ, կը պատկերացնէ Գիւցազն Հայկի Բոկուրեան վրայ արած յարաւնակը, Քաջն Արամի շահասակուրիակը, Ողջախոն Արայի վսեմ մահը, Զարմայրի զարմանալի ֆաշոքիւնները Տոյոյոյ դաշտին վրայ, Պարոյրի ֆաշապակն արիւրիւնները, Տիգրաններու փառաւոր յաղթուրիւնները, Վաղարշակի օրհնալի բարեկարգուրիւնները, Արտաշեսներու աշխարհակալ ու աշխարհաշէն թիւսպիսուրիւնը, Մեծն Խոսրովու անպարտելի թագուկը, Տոյոյոյ հզօր ու ֆրիւսնեայ իշխանուրիւնը, վերջապէս Վռամշապուռի խաղաղ ու երջանիկ թագաւորուրիւնը, Նախարարներու և զօրավարներու ֆաշագործուրիւնները, պանծալի հայրապետներու սխնելիլները, ուսանց ևսահասակուրիւնը, ուրիշներու սխտրն ու երջանիկ դարձը, և ամենուն՝ Ազգին մասուցած բարիքն ու երախտիքը։

Այս ուսուցիչութեան ատեն Հայոց Քերրոյանայն ամէն տեղ գթութեան ու սիրոյ դուները զոյգ գտնելով՝ անմիջական սնունդ հայթայթելու համար՝ ստիպուած էր պարկն ուսն առած՝ դռնէ դուռ շրջիլ ու մուրալ։ Խորենացին չուզելով ա՛լ շարունակել Հայաստանի ցաւայի պատկերները, ողբերգական խօսքերու քողով ծածկեր է մեր աչքէն, մանուսնդ թէ ողբերն ու հեծեծանիքները կապեր ու խլեր էր ձեռքէն անոր հրաշալի գրեկը։

Երբ Գլուս կաթողիկոս իր թեմին այցելութեան համար՝ Օշական գիւղը հասաւ, ճաշի հրաւիրուեցաւ աղնուական ու հարուստ իշխանի մը քով։ Հոն ժողվեցան նաև բազմաթիւ ձայնեղ ու երաժիշտ մարդիկ ի պատիւ կաթողիկոսին երգեր երգելու։ Այլևայլ գեղեցիկ երգերէ ետք, երբ պահ մը ընդհանուր լռութիւն տիրեց, բոլոր հանդիսականները լսիկ մնջիկ կը խորհրդածէին, յանկարծ անկիւնը կծկած խեղճ ծերուկ մը ոտքի կ'ելլէ։ Աչքերը կը փայլփին, գողգոջուն շրթներէն անոյշ երգ մը թուցնելով՝ ամենուն սիրտը կը թնդացնէ, կ'զմայլեցնէ և ամէնուն ուշադրութիւնը կը գրաւէ։ Լսեց ծերունին, բայց տակաւին անոր ներդաշնակ ձայնին արձագանգը կը շարունակէր հոյնէլ անոնց սրտին մէջ։ Եւ երբ հանդիսականներն փռած՝ իրարու երես կը նայէին, երիտասարդ մը որ ծերին քով կեցած էր՝ հատկեալ

ձայնով ըսաւ կաթողիկոսին. «Մովսէսն է՝ Սահակի ու Մեսրոպի ծերացած առակերտը»։ Շուարեցաւ կաթողիկոսը, չէր զխտեր թէ ուրախանա՞ր արդեօք այս անակնկալ գիւտին վրայ թէ լար անոր թշուառութեան վրայ, Յասկեց աթոռէն, թռաւ գրկեց իր Տին աշակերտակիցը, Բոլոր Հանգիսականներն, արտատուախառն ուրախութեան ձայնով տունը թնդացուցին, կաթողիկոսը Բագրեւաճկի եպիսկոպոս ձեռնադրեց Մովսէսը, բայց շատ չանցած՝ վախճանեցաւ և ամբողջեցաւ Տարօնոյ Առաքելոց վանքը։

Գ. — Ե. Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ .

ՀԱՅ-ՊԱՒԷԼԱՅ ԼԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԳՐԻՍՏՈՆԷՆՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԿՐ ԲԱԺՆՈՒՒ

Մեծն Տրդատ՝ Խոսրովի որդին Հռոմայեցւոց երկրին մէջ մեծացաւ, Հռոմայեցւոց կայսրը Տրդատի քաջագործութեանը համար զայն Հայոց թագաւոր կարգեց, փախստական նախարարները միացան Տրդատի որ տիրեց Հայաստանի, Տրդատ ամուսնացաւ Աշխէնի հետ, Գրիգոր մերժելով Անահիտի զոհ ընել՝ չարչարանքներ կրեց ու յետոյ Խոր-Վիրապը նետուեցաւ, Տրդատ Քրիստոնէութիւնը հալածեց որուն զոհ գացին Ս. Հռիփսիմեանը, Բայց Ս. Գրիգոր Խոր-Վիրապէն հանուեցաւ ու Քրիստոնէութիւնը Հայոց մէջ տարածեց Տրդատի հետ եւ կոչուեցաւ **Բ. Լուսաւորիչ**։ Գրիգորի որդիներն էին Ս. Արխաակէս ու Ս. Վրբանէս։

Ս. Գրիգոր ու Ս. Տրդատ կառուցին Ս. Էջմիածինը, Հայերը Հռոմի Մաքսիմիանոս կայսեր դէմ կրօնական պատերազմ երասարակեցին։ Տրդատ յաղթեց Սկիւթացւոց եւ ի դարձին հաստատեց Մամիկոնեան նախարարութիւնը։ Ս. Գրիգոր ու Ս. Տրդատ Մանեայ Այրը ձգնուրեան մէջ վախճանեցան։

Հայկազանց օրով Հայերը բնապաշտ էին։ Այս նախնական կրօնը հետզհետէ խառնուեցաւ դրացի ժողովուրդներու հաւատարիֆներուն հետ եւ յառաջ եկաւ Հայ կուսպաշտութիւնը։

Քրիստոնէութիւնը պատճառ եղաւ որ Հայերն ու Պարսիկներն իրարու աւելի թշնամանային։

Տրդատի յաջորդները թոյլ ու մեղի էին։ Նախարարներն այդ միջոցին ներքին կռիւներ կը մղէին։

Պարսից Շապուհ թագաւորը Տիրան Բ. ի աչքերը կուրցուց, բայց Հայոց սիրտը շահելու համար՝ **Արցալ Բ.**ը Հայաստանի թագաւոր կարգեց։

Արշակ Բ. իր ծախող ու երկղիմի քաղաքականութեամբ թէ Պարսից եւ թէ Յունաց ատելի եղաւ, իր անձը նախարարներու դէմ պաշտպանելու համար՝ Արշակաւան քաղաքը շինեց, Բայց Ալանազան իշխանն Արշակը բռնեց ու զրկեց Անոյ բեռը, Արշակ Բ. հոս անձնասպան եղաւ։

Մեհրուժան Արծրունի աշխատեցաւ Հայաստանի մէջ բնաջնջ ընել Քրիստոնէութիւնն եւ ինք թագաւորել, Բայց **Մեծն Ներսէս** յաջողեցաւ Յունաց օգնութեամբ Արշակի որդին Պապը թագաւորեցնել, եւ որովհետեւ Պապ ոչ Մեծ Ներսէսի խրատներուն կ'անսար եւ ոչ կը ճանչնար յունաց բարեկամութիւնը, գլխատուեցաւ կայսեր հրամանաւ։

Մեծն Ներսէս Հայաստանի բարեբար եղաւ։

Յունաց կայսրը Վարազդատի թշնամիներուն խօսքին հաւտարով՝ զայն արսորեց, Յոյներն ու պարսիկները **Հայաստանը մէջերնին բաժնեցին 395ին**։ Մեծ մասը Պարսիկներուն ձեռքը մնաց։

Պարսկական բաժնի թագաւորը՝ **Վառաճապուհ** հետեւեցաւ խոհեմ քաղաքականութեան, Ասոր օրով **Ս. Մեսրոպ ձեւակերպեց (404) Հայերէն տառերը**։ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ իրենց աշակերտներով **Եկեղեցական գիրքեր Հայերէնի բարգմանեցին**։ Հայերը Գրական մեծ զարթնում մը ունեցան որով սկսաւ **Հայոց Ոսկեղէն դարը**։ Այնուհետեւ Քրիստոնէութիւնն ազգային կրօն դարձաւ։

Խոսրով Գ. հազիւ տարի մը թագաւորեց նորէն։

Այնուհետեւ Պարսից Շապուհ արքայորդին 4 տարի թագաւորեց։

Վառաճապուհ թագաւորը Վառաճապուհի որդին՝ Արտաշիրը Հայոց թագաւոր դրաւ, Բայց ասիկայ իր մոլութիւններով ատելի եղաւ նախարարներուն, Պարսից թագաւորը թէ Արտաշիրը զահրնկեց ըրաւ եւ թէ Ս. Սահակը կաթողիկոսական աթոռէն զրկեց, Այսպէս վերջացան թէ **Հայ-Արցալուկոնեաց ցեղի հարստութիւնն եւ թէ Լուսաւորչի ցեղի կարողիկոսութիւնը**։

Հայ-Արշակուկոնեաց կործանումէն ետք Պարսից Հայաստանը կառավարուեցաւ մարզպաններու եւ Յունաց Հայաստանն ալ կռուներու ձեռքով։

Գ. — Ե. ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՏԱՅԵԱԼ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ՊԱՀԱՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՆՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ.

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՌԱԺՆՈՒԻ.

Որոնցմէ՞ կը բարկանար Նախահայ Խորհրդանց երեքութիւնը — Պատմական շրջանին Հայ Միթիաբանութիւնն ինչ դիմայեղուններ կրեց. — Ո՞ր ատուածն էր Հայ պանթթոնին գահերեցը. — Ո՞ր կը գտնուէր Արամազդի տաճարը. — Որո՞նք էին Արամազդի ստորագրելիքը. — Ո՞ր կը գտնուէր Միհրի բագինը. — Անահիտի՞նը. — Նաշէի՞նը. — Ատողիկի՞նը. — Տիրի՞ն. — Վահագնի՞ն. — Բարշաբինի՞ն. — Սպանդարամատի՞ն. — Որո՞նք էին ասոնցմէ իւրաքանչիւրին ստորագրելիքը. — Որո՞նք էին երկրորդական աստուածները. — Հայ Պանթթոնը բարոյական ինչ բարձրութեամբ կը տարբերէր միւս ժողովուրդներու աստուածներու կաճառին նկարագրէն. — Քրիստոնէութիւնը Հայոց մէջ առաջին անգամ ե՞րբ տարածուեցաւ. — Քանի՞ գար հալածուեցաւ. — Վերջնականապէս ե՞րբ յաղթանակեց Քրիստոնէութիւնը. — Ո՞վ եղաւ Հայոց երկրորդ Լուսաւորիչը. — Ս. Գրիգոր ինչպէս ընդունեց Քրիստոնէութիւնը. — Ի՞նչ բարեպաշտական կեանք վարեց. — Ի՞նչ գէպը պատահեցաւ որ Հայերը պաշտօնապէս ընդունեցին Քրիստոնէութիւնը. — Տրդատ ո՞ր անցուց իր մանկութիւնը. — Որո՞նք են Տրդատի քաջութիւնները. — Տրդատ ինչո՞ւ և ինչպէս չարչարեց Ս. Գրիգորը. — Ի՞նչ կը նշանակէ Խոր-վիրապ. — Հին ատենուան բանտերն անտանելի՞ էին թէ հիմնականները. — Ս. Գրիգոր ու Տրդատ ինչ մեծագործութիւններ ըրին Հայաստանի մէջ. — Ո՞վ էր Աշխէն թագուհին. — Հայ ազգի ինչներով կը պարծի. — Ո՞վ և ինչերով կրնայ մրցիլ Հին ու Նոր դարերու բարեպաշտ թագուհիներու հետ. — Ո՞վ էր Տրդատի գործակից. — Աշխէն ինչերով չքնաղ օրինակ հանդիսացաւ. — Աշխէնի Տիկնութեան թագին ամէնէն փայլուն գահարներն որո՞նք են. — Ո՞վ էր Հայոց Օրիորդը. — Խորովիդուստ ինչպէ՞ս աճեցաւ ու զարգացաւ. — Ո՞վ ընտրուեցաւ Հայոց Վերածնութեան հրահրակ. — Ինչո՞ւ. — Քրիստոնէութիւնը Հայոց մէջ տարածուելէն ետք Հայոց Օրիորդն ինչ պի՞տի կեանք վարեց. — Տրդատ ինչո՞ւ թունաւորուեցաւ. — Տրդատի յաջորդներուն ատեն Հայաստան ինչ վիճակ ունէր. — Տրդատի՞ օրով — Տիրանն ինչո՞ւ կուրցուցին. — Որո՞նք են Արշակ Բ.ի երկրիմի քա-

ղաքականութիւնը. — Արշակ Բ. ինչպէս ատելի եղաւ նախարարներուն. — Ո՞ր և ինչպէս մեաւաւ. — Այդ միջոցին ո՞վ էր որ Հայոց ցաւերը կ'ամբէր. — Ո՞վ էր Մեծն Ներսէս. — Ո՞ր դատարարակաները կ'ամբէր. — Ո՞վ էր Մեծն Ներսէս ու Տրդատի ինչերով շէնցուց. — Ո՞ր ատեն Հայաստանի մէջ մաւրացի չիկար. — Մեծն Ներսէս ինչ նկարագրի տէր էր. — Ո՞ր սովորութիւններն արդիւնց. — Ո՞վ հաստատեց նախարարներու դատարարը. — Ինչ կը նշանակէ նախարար. — Այն ատեն Հայաստանի մէջ քանի՞ նախարար կար. — Քանի՞ եպիսկոպոսութիւն. — Ո՞վ եղաւ Հայաստանի պարիսպը. — Ո՞րոնք են մէկ խօսքով Մեծն Ներսէսի կատարած գերը. — Ինչպէ՞ս վախճանեցաւ. — Մեհրուստան Արծրունի ինչ ընել կ'ուզէր. — Ինչո՞ւ չյաջողեցաւ. — Հայոց ո՞ր զօրապետը ստուգուած կը պատճառէր. — Մուշեղ Մամիկոնեան ինչ քաջութիւններ գործեց. — Չիրաւի ճակատամարտին մէջ ինչ նշանաւոր գէպքեր կատարուեցան. — Պարսից թագաւորն ինչ նկարել տուած էր իր բաժակին վրայ. — Պայ ինչո՞ւ գլխատուեցաւ. — Որո՞նք են Արշակունեաց բարի թագաւորները. — Չարե՞րը. — Չար թագաւորներն ինչ չարիք հասցուցին Հայոց. — Բարիներն ինչերով օգտակար եղան Հայաստանի. — Որո՞նք են մտրմնական գերդանց ուժով թագաւորները. — Տրդատէն զատ զ՞վ կը յիշէք. — Ինչ եղաւ վախճանը. — Ինչպէս մեաւաւ Մուշեղ. — Վարազդ գատի մասին ինչեր կ'աւանդեն. — Յունաց կայսրը Հայոց վրայ ինչո՞ւ երկու թագաւոր գրուաւ. — Հայաստան ե՞րբ երկուքի բաժնուեցաւ. — Ինչ եղաւ ասոր հեռանկարը. — Հայաստանի բաժանումն օգտակար եղա՞ւ Պարսից ու Յունաց. — Ինչո՞ւ. — Ինչ էր Վառամշապուհի քաղաքականութիւնը. — Ինչ եղաւ ասոր հետեւանքը. — Ս. Մեսրոպ ինչո՞ւ յունարէնի վրայ ձեւակերպեց Հայերէն գրիւրը. — Ո՞րն էր այն ատեն պաշտօնական լեզուն. — Մարդիկ ի սկզբան ինչպէ՞ս կը խօսէին. — Ո՞ր պարագայները նպատած են Լեզուի կազմութեան. — Իրենց գաղաբարներն ինչպէս կը յայտնէին. — Մարդիկ ինչո՞ւ բաւերը տարբեր կը շէշտէին. — Ինչ պայմաններով յատուկ լեզուներ կազմուեցան. — Որո՞նք են միւսնայն ազգի անդամ. — Ինչ եղաւ Գրիգորի գիւտին հեռանկարը. — Ինչպէ՞ս կ'աղի ինչպէս Հայոց Ուկրէն դարը. — Որո՞նք են այդ դարուն մեծ գործիչները կամ թարգմանիչները. — Գրիգոր ինչպէս զարգացած է. — Հին ատեն ինչերով վրայ նշան կը դնէին, և ինչո՞ւ. — Այդ նշանները հետզհետէ ինչ եղան. — Ե՞րբ ուղղակի նկարեցին առարկայն — Մարդիկ այդ նկարներով ինչպէս կը յայտնէին իրենց գաղաբարը. — Ե՞րբ առարկայի մը նկարն ամբողջ նախադասութեան տեղ գործածուեցաւ. — Ո՞րն է

Պատկերագիրը. — Որո՞նք զարգացուցին Պատկերագիրը. — Ի՞նչպէս յառաջ եկաւ Բեհեռագիրը. — Ո՞ւր կը գտնուին բեհեռագիր արձանագրութիւնները. — Հին ատեն ինչերո՞ւ վրայ կը գրէին. — Ո՞ր ազգք Եգիպտական պատկերագիրը պարզեց. — Յոյներն իրենց գիրն ո՞ւրկէ առին. — Հայերը. — Որո՞ւ շնորհիւ. — 439ին ձմեռն ի՞նչ պատահած էր. — Վերջին տարւոյն հետոյ մէջ Հայ ազգն ի՞նչ մեծամեծ կորուստներ ունեցած էր. — Ո՞վ էր Մեհեդեան 43ին մեռնող ծերունին. — Ո՞ւր էր ծնած Առաջին Հայ ուսուցիչը. — Ի՞նչ պաշտօններ վարեց. — Ի՞նչ եղաւ Ս. Մեսրոպի ու Ս. Սահակի ջանքը. — Ս. Մեսրոպ ուրիշ ո՞ր աղբերուն օգտակար եղաւ. — Ո՞վ էր Ս. Սահակ. — Ո՞ւր կրթուեցաւ. — Ս. Սահակ զ՞իլ իրեն որդեգրեց. — Ս. Սահակ որո՞ւ օրինակին հետեւեցաւ. — Հայաստանի մէջ ի՞նչ բարեգործութիւններ բրաւ. — Կաթարաններն ի՞նչ բրին այսչափ բարիքի փոխարէն. — Ս. Սահակ հրաժարելով Ազգին հոգեւոր խնամքն որո՞ւ յանձնեց. — Երախտագէտ ժողովուրդն ի՞նչ յուզարկաւորութիւն կատարեց Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի. — Ո՞ւր ծնած էր Մովսէս Խորենացի. — Երիտասարդութիւնն ի՞նչպէս անցուց. — Դարձին ի՞նչ վիճակի մէջ տեսաւ Հայաստանը. — Ինքնիրեն ի՞նչ կը մտածէր. — Ո՞ւր ուխտի գնաց. — 30 ասրի ո՞ւր ճգնեցաւ և ո՞ր զբաղումով սփոփուեցաւ. — Մովսէս ինչո՞ւ կը մուրար. — Օշական գեղին մէջ ի՞նչ պատահեցաւ. — Այդ հանդէսին մէջ ո՞վ և ի՞նչպէս ամէնուն ուշադրութիւնը գրաւեց. — Ո՞վ և ի՞նչպէս յայտնեց կաթողիկոսին թէ այդ ծերունին Մովսէս Խորենացին է. — Կաթողիկոսն ի՞նչ եղաւ. — Մովսէս որո՞ւ եպիսկոպոս կարգուեցաւ. — Ե՞րբ վախճանեցաւ և ո՞ւր ամփոփուեցաւ:

Դ.—Ե. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

1. Խմբագրել Մեծն Ներսէսի կատարած դերն եւ այն ատենուան Հայաստանի վիճակը:
2. Խմբագրել Ս. Սահակի Ազգին մատուցած ծառայութիւնները:
3. Շարադրել Ս. Մեսրոպի օգտակարութիւնները:

4. Շարադրել Գրի կրած եղանակաւորումներն ու իր օգտակարութիւնը:
5. Խմբագրել Հայոց Աքիլլէսի՝ Տարօնի Առիւծին կենսագրական մեծ գիծերը:
6. Զուգակշռել Աշխէն թագուհին ու Խոսրովիդուխտը:
7. Վերլուծել տալ Խորենացոյն հոգեբանութիւնը:
8. Բաղդատել Լուսաւորիչը, Մեծ Ներսէսը, Ս. Սահակը, Ս. Մեսրոպն ու Մովսէս Խորենացին:
9. Բաղդատել Հայկը, Արամը, Տիգրան Ա., Վահագն, Տրդատը, Մուշեղ Մամիկոնեանն ու Վարազդատը:
10. Բաղդատել Հայաստանի վիճակն Արամի, Պարոյրի, Տիգրան Ա.ի, Վաղարշակի, Տիգրան Բ.ի, Արտաշէս Բ.ի, Տրդատի ու Վառամշապուհի օրով:
11. Բաղդատել Հայաստանի վիճակն Անուշաւանի, Վահէի, Արտաւազդ իշխանի, Արտաւազդ Ա.ի, Տրդատի յաջորդներուն, Արշակ Բ.ի, Պապի ու իր որդիներուն եւ Արտաշիրի օրով:
12. Դիւցագնական շրջանին, Հայկազանց ու Հայ-Արշակունեաց օրով ո՞ր ազգերը Հայոց թշնամացան, ո՞ր պատերազմները մղուեցան, որո՞նց մէջ յաղթեցին որո՞նց մէջ պարտեցան:
13. Նկարագրել Հայ Պանթէոնը:



- Աբգար. — Ասորերէն կը նշանակէ «կաղ». Հայոց Պատմութեան մէջ ծանօթ Արշամի որդի Աբգարն որ իբրև Հայոց թագաւոր կը յիշուի՝ շիթուած է Իզատի որդի Աբգարի հետ (109-116) որ Հայ-Պարթև Արշակունիներու ազգակից էր: Քրիստոսի ժամանակակից Աբգարը Մանու Գ.ի որդի Աբգար Ե. Սև—Ուշամա —Արշամն է որ Հայոց հետ որ և է աղերս ունեցած չէ:
- Աբգարեանք. — Ուր—Հայաստանի վրայ իշխող Արքայական հարստութիւն մը (Ն.Ք. 92—Յ.Ք. 244): 11 Աբգար կը յիշուին որոնցմէ առաջինն է Աբգար Ա. «Թլուատ» (Ն.Ք. 92-68) և վերջինը Մանու Թ.ի որդի Աբգար ԺԱ. (244-244) որ մեռաւ Հռոմի մէջ:
- Ադիաբէն. — Ասորեստանի հիւսիսային արևմտեան կողմը ընդարձակ նահանգ մը որ նախ Ասորեստանի ինքնակալութեան մէկ գաւառն էր, յետոյ եղաւ առանձին թագաւորութիւն: Ադիաբէն հիմայ կը համապատասխանէ Մուսուլ կուսակալութեան Մուսուլ նահանգին:
- Ագաս Գ. — Սիւնեաց նահանգի Գեղարքունեաց գաւառի Գեղ լեռնէն բղխելով՝ կը սողոսկի Արարատ նահանգի կոտայքէն ու Դուրն ստանէն, կ'անցնի Գառնի քաղաքին առջեւէն և կը թափի Երասխ գետ: Հիմայ կը կոչուի Գառնոյ ջուր:
- Ալանք. — Սկիւթացի ժողովուրդ մը՝ որ իրենց բնակավայր Այսրկովկասիոյ թերէք գետի հովտէն արշա-

ւեցին դէպի հարաւ և արշակեցին Մարաստանի ու
Հայաստանի սահմանները : Ալանք հիմայ կը կոչուին
Օսեր յոր ցանուցիր կը բնակին Անդրկովկասիոյ մէջ :

Ախուրեան Գ. — Վրահայոց Գառնայ = Արբա չայ լիճէն
կը բղխի, կը թրջէ Սրարատ նահանգի Շիրակ գա-
ւառը, կ'անցնի Անի քաղքէն ու Բագարան ավտոցին
մէջէն և կը թափի Երասխ գետը՝ Երեւանդաշատ քաղ-
քին առջև :

Աղեֆսանդրիա. — Մեծն Աղեքսանդր հիմնեց (332
Ն. Ք.) Եգիպտոսի Աղեֆսանդրիա քաղաքն որ յե-
տոյ Պտղոմեանց մայրաքաղաքն եղաւ : Դիւնկրասկս
երկրաչափը պատրաստեց Աղեքսանդրիոյ յատակա-
գիծը : Ասոր համաձայն քաղաքն ունեցաւ փառաւոր
փողոցներ Եւրոպիոյ արդի քաղաքներու պէս : Եգիպ-
տոսի Աղեքսանդրիա քաղաքէն զատ՝ հին ատեն Ա-
ղեքսանդրիա անունով շատ քաղաքներ կային :

Աղիովիս. — Տուրուբերան նահանգի գաւառներէն մէկը
որ նախապէս Գնունեաց կը պատկանէր, բայց յետոյ
Հալքեանք գաւառը արքայազուներու բնակութեան
չբաւելով՝ Աղիովիս գաւառի մէկ մասն անոնց բնա-
կութեան յատկացուեցաւ : Արդի Բաղնոցի ու Աղնա-
վազի մէկ մասը կը համապատասխանէ Աղիովիսի :

Աղուանք. — Աղուանից բուն աշխարհը կը տարածուէր
Կուր գետէն մինչև Դարբանտ. սահմանն էր հիւսի-
սէն՝ Լեկաց ու Վրաց երկիրներն ու Կովկաս լեռ-
ները, արեւելքէն՝ Կասպից ծով, հարաւէն ու արեւ-
մուտքէն Մեծ Հայքի Փայտկարան և Ուտի նահանգ-
ները : Աղուանից երկիրը հիմայ կը կոչուի Շիրուան
ու Տերպեկն Անդր-Կովկասիոյ մէջ :

Այս երկրի բնակիչներէն էին Գարգմանացիք,
Կովդէացիք, Գարգարացիք և Ուտեցիք որ առհա-
սարակ Աղուանք կը կոչուին : Այս Աղուանք ցեղերը

պէտք չէ շփոթել Երանեան լեռնադաշտի բնակիչնե-
րէն Աֆղաններուն հետ :

Ամասուրի. — Արագածոտն գաւառի նախարարութիւնը .
ասոր համար Արագածոտն գաւառի եպիսկոպոսը կը
կոչուէր Ամասուրեաց եպիսկոպոս : Ամատուրիք եր-
բեմն Երկրին Հաղարապետութեան = Վերակացութեան
պաշտօն վարած են :

Ամիսոս. — Արդի Սամսոն քաղաքն որ հին Պափլագոն-
իոյ = արդի Գասդեմունի կուսակալութեան նշանա-
ւոր քաղաքներէն մին էր : Վերջերս Սամսոն Պոնտո-
սի = Տրապիզոն կուսակալութեան մէկ սանձազն էր,
հիմայ ալ առանձին նահանգ եղաւ :

Անի Աւրոց. — Եփրատի ձախ եղերքը, Թանաձոր վը-
տակին արեւմտեան կողմը, Բարձր Հայք նահանգի
Դարանաղեաց գաւառի նշանաւոր քաղաքն որ ան-
ուանի ու ամուր բերդ էր : Արշակունեաց գանձա-
րանն ու դամբարանն էր իբր Արշակունեաց դամբա-
րան կը կոչուէր նաև Կաւնախ = Կաւնախ. ասկէ՝ իր ար-
դի անունը Քաւնախ : Յարդ կը տեսնուին կիսաւէր
բերդն ու աշտարակն որ հիմայ կը կոչուի Գրալ գրզըն
չարսակը : Այս գըրալ գըրը՝ Տրդատի քոյր Խոսրովի-
զուխան է :

Անոյ՛ Բե՛ղ. — Արդի Թուրքիոյ Աֆիս ու Պոսրուլ գա-
ղեսի բերդերուն պէս Պարսկաստանի մէջ բերդ մը ուր
չընդ միշտ կ'աքտորուէին քաղաքական յանցաւորները :

Անիով. — Ասորոց = Սելեւկեանց թագաւորութեան հիմ-
նադիր Սելեւկոս Նիկասոս հիմնեց այս քաղաքն Ո-
րոնդէս = Ասը գետին եղերքը իր Անտիոքոս հօր ա-
նունով : Սելեւկոս այս Անտիոքէն զատ հիմնեց բազ-
մաթիւ քաղաքներ որոնցմէ 7ը կոչեց իր անունով
Սելեւկիս, 16ը Անիով իր հօր, 5ը Լաւոդեկէ՝ իր մօր
անունով, 3ն ալ՝ Ապամե իր առաջին կնոջ անունով :

Անտիոք ատեն մը նշանաւոր էր մեծափարթամութեամբ ու ազնիւ ճաշակով, այնպէս որ Հռոմէական կայսրութեան քաղաքներուն մէջ երրորդն էր: Հիմայ կը կոչուի Անդափա:

Աճիւս. — Տարօն դաւառի երեւելի քաղաքներէն մէկն էր Աշխիւս (Քարքէ լերան վրայ, Ս. Կարապետէն 1 ժամ դէպի արեւելք) որ կը նշանակէ « զոհերու փաղափ », հիմայ անչքացած է և կը կոչուի Տերիկ (Մուշ): Հոս կը բարձրանային Անահիտի, Վահագնի ու Ասողկի մեհանները: Նախ Վահունեանց կալուած, յետոյ Մամիկոնեանց սեփականութիւն: Աշխիւս թէ՛ Հեթանոսութեան և թէ՛ Քրիստոնէութեան ատեն շէն ու ծաղկած էր:

Առբերանի. — Վասպուրականի դաւառներէն մէկը՝ դաշտածաւալ երկիր մը որ կը կոչուէր նաև Բերկրացոց դաւառ և յատկացուած էր արքայազուններու բնակութեան: Հիմայ կը կոչուի Բերկրի (Վան սանճագ):

Ասորեստան. — Հզօր ինքնակալութիւն մը Ն. Ք. ԺԳ. դար — է. դար: Հիմնադիրն եղած է Աշուր=Ասորասակէ՝ իր անունը: Ասորեստանի ինքնակալները 6 դար ա՛ն ու սարսափ ազդեցին Արեւմտեան Ասիոյ իրենց գաղանաբարոյ վայրագութեամբ: Հին աշխարհի ամէնէն անգութ ժողովուրդն էին: Ասորեստանի ինքնակալութիւնը կործանեցաւ 606 (Ն. Ք.): Բուն Ասորեստան կը համապատասխանէ Մուսուլ կուսակալութեան:

Ասորի. — Արդի Հալէպ և Սուրիա կուսակալութիւններն որ դարերու ընթացքին մէջ բազմաթիւ աշխարհակալներէ նուաճուեցաւ: Այս երկրին մէջ կը բնակէին շատ ցեղեր որ առհասարակ Ասորի կը կոչուէին, ինչպէս հիմայ ալ կը կոչուին Արաք՝ արաբերէն խօսելուն համար:

Ասրայասական. — Ասրայասական — Պարսկաստանի արդի Արարկան երկիրը — կը տարածուէր Հայաստանի արեւելեան կողմը, Կասպից ծովուն քով, Մարաստանի հիւսիսային դին: Կը կոչուէր նաև Փոփր-Մարֆ. մայրաքաղաքն էր Դաւրեթ: Երբեմն Մարաստանի ու Պարսկաստանի մաս, յետոյ անկախ թագաւորութիւն, վերջն ալ Պարթեւաց ու Պարսկական դաւառ:

Արաբացի. — Արշակունեաց օրով յիշուած արաբացիները բուն Արաբիոյ բնակիչները չեն, այլ Ուր-Հայաստանի ու Միջագետքի բնակիչներէն են որ թխամորթ ըլլալով՝ այսպէս կոչուած են, ինչպէս որ հիմայ այդ երկիրներուն բնակիչներն արաբերէն խօսելով՝ Արաք կը կոչուին:

Արագած լ. — Արարատ նահանգի Արագածոտն դաւառի մէջ. հիմայ կը կոչուի Աշակիօզ (4190 մ.), հրաբլդխային հսկայ հաստամետ մը չորս գագաթով: Մասիսէն ետք Հայաստանի ամէնէն բարձր լեռն է:

Արագածոտն. — Հիմայ կը կոչուի Սարսարայաս, Կիւմրիւ դաւառին (Անդր-Կովկասի) հարաւային կողմը, Երասխի ու Ախուրեանի միջև: Այս դաւառին մէջ նշանաւոր էին Օշական, Փարսի, Աշսարակ, Կուաշ, Թալին, Աշնակ և այլն: Աշնակ արքունի ձմերոց էր:

Արածանի. — Նախահայկան Արզանիս անունն որ Հայկական շրջանի մէջ եղած է Արածանի և որ հիմայ ալ կը կոչուի Մուրաս=Մուրաս ջայ: Արածանի կը բղխի Բագրեւանդի Մարիպաց (Ալա տաղ) լեռնէն և հոսելով հիւս. արեւելքէն դէպի արեւմուտք կոչկոռներու և խոխոմներու մէջ՝ բազմաթիւ քարավաղներ=ջրվէժներ ձեւացնելէն ետք, Քեպան Մատենի լոճ և կը միանայ Եփրատի հետ:

Արարատ լ. — Արարատեան դաշտին մէջ, Հայաստանի գրեթէ կեդրոնը կը բարձրանայ ամէնէն բարձր լեռը՝

- Մասիս կամ Արարատ: Արարատն երկու հաստամետ ունի. Մեծ Մասիս (5160 մ.) ու Փոքր Մասիս (3596 մ.): Հրաբլխային լեռ որ 1840ին նորէն բորբոքեցաւ և իր լաւային տակ ծածկեց Ակոռի գետը:
- Աւիստի. — Արարատ նահանգն Արարատ աշխարհ ալ կը կոչուէր: — Դաւառ. Էջմիածին ու չրջակայ տեղերը կը համապատասխանեն հին Արարատ գաւառին:
- Դաւոս. — Սարտարապատ գաւառի ընդարձակ դաշտն ուրկէ կը հոսին Քասաղ = Կարբոյ ջուր և Մեծաւոր = Շաւքի ջուր:
- Երկիր. — Ուրարդու նախահայական ձեւն եղած է Արարատ: Երասխի հովիտն ընդհանրապէս Արարատեան երկիր կը կոչուէր:
- Արեւմտեան Ասիա. — Ասիական Թուրքիա ու Երանեան լեռնադաշտը կը կոչուին Արեւմտեան Ասիա: Հին ատեն Արեւմտեան Ասիա ըսելով՝ կը հասկնային բուն Անասոյուն:
- Արծրունիք. — Մեր ամէնէն հին ու ընդարձակ նախարարութենէն մէկն որ գրաւած էր գրեթէ ամբողջ Վասպուրականը: Արծրունիք նախահայական ցեղ մըն էին որ յետոյ հայացան:
- Վ Արմաւիր. — Հայաստանի չորս մայրաքաղաքներէն մէկը Արագածոտն գաւառին մէջ, Խալդեան Արամաղի անունն որ Հայական չրջանին եղաւ Արմաւիր: Հիմայ աւերակ է և կը կոչուի Թեքեճիայի: Արմաւիրի աւերակներէն շինուեցան Սարսարապատ ու Ծեհրիար: Հայաստանի միւս մայրաքաղաքներն էին Արտաշատ, Վաղարշապատ ու Դուին: Հայոց չորս մայրաքաղաքներն իրարու մօտ էին, ինչպէս մօտ էին նաև Բաբելոն, Տիգրոն ու Սելեւկիա:
- Արեւիկ. — Պարթև ու Պահլաւ թագաւորներն Արշակ տիտղոսը կը կրէին, ինչպէս որ Օսմանեան Վեհապետներն ալ Սուլթան տիտղոսը կը կրեն:

- ¹
— աւան. — Արարատի կողովիս գաւառին մէջ, հետքն անգամ ջնջուած:
- ունիք. — Արբելայի ճակատամարտէն ետք (33 Ն.Ք.) Աքիմենեան Պարսից ինքնակալութիւնը կը կործանի. բայց Աքիմենեան Դարեհ կողմանոսի տեղը 254ին (Ն. Ք.) Բակտրիոյ = Պահլի մէջ (Թուրքաստան) կը թագաւորէ: Այսպէս կ'սկսի Պարթև Արեւիկունի ճիւղին թագաւորութիւնը: Պարթև Արշակունի Ա. թագաւորը կ'ըլլայ Դարեհ = Չարեհ Ա.: Այս Դարեհի ցեղէն ուրիշ ճիւղ մը՝ Մար-Սկիւրացի Պահլաւ անունով կը թագաւորէ (14-226): Դարեհի այս երկու ճիւղերը կը կոչուին Արեւիկունիք:
- Արճազ = Աւարայր. — Վասպուրականի գաւառներէն մէկը որ կը կոչուէր նաև Շաւարշան. հիմայ կը կոչուի Մակուի վիճակ՝ Պարսկահայոց մէջ: Արտազ = Աւարայր թէ՛ գաւառի և թէ՛ դաշտի անուն է: Արտազու մէջէն կը հոսի Տղնուս գետն որ հիմայ կը կոչուի Ագ-չայ:
- Արտաւոս. — Դուինի հարաւային կողմը, Երասխ ու Ազատ գետերուն մօտ. հիմնայատակ կործանուած: Արտաշատի հարաւային կողմը, Երասխի եզերքը կը գտնուէր Խոր-Վիրապը:
- Աքիմենեան. — Աքիմենես = Հախանեսի եղած է Պարսից հին ինքնակալութեան հիմնադիրն որուն եօթներորդ յաջորդն էր Մեծն Կիւրոս: Պարսից հին ինքնակալութիւնը Հաքամանիի անունով կոչուեցաւ Աքիմենեան:
- Բաբելացիք. — Քաղդէաստանի մէջ վաղուց կը բնակէին Սուներներն ու Ագասներն որոնք յետոյ իրենց երկիրն արշաւող Սեմական ցեղերու հետ ձուլուելով՝ կոչուեցան Բաբելացիք: Բաբելացիք հզօր ինքնակալութիւն մըն էին որ կործանեցան 520ին (Ն. Ք.): Բաբելոնի վերջն թագաւորն էր Նաբոնիդ որուն գահակիցն էր իր Բաղդասար որդին:

Բաբելոն. — Եփրատի եզերքը քառակուսի քաղաք մըն էր Բաբելոն, Լոնտոնէն 5 անգամ մեծ: Ունէր 338 ոտք բարձր ու 85 ոտք թանձր պարիսպ մը՝ ամէն կողմէ աշտարակներով ու արոյրէ դռներով: Հիմայ աւերակ է. աւերակները կը գտնուին Հիլէ (Պաղտատ) քաղաքին մօտերը:

Բաբերդ. — Բարձր Հայքի Սպեր գաւառի մէջ ամուր բերդաքաղաք մը՝ ճորոխի եզերքը: Երբեմն Բագրատունեաց գլխաւոր քաղաք, հիմայ կը կոչուի Պայպուրդ: Ռուսերն 1828ին խանգարեցին բերդն ուր ջրի սանդխաւոր ճամբաներ փորուած էին:

Բագարան. — Արարատի կողովիտ գաւառին մէջ, Շիրակի Մրէն գեղին հարաւային կողմը, Ախուրեանի մօտ, աստուածներու պաշտամունքի տեղ մը: Հիմայ աւերակ:

Բագաւան. — Արարատի Ծաղկոտն (հիմայ Տիատին) գաւառին մէջ աւան, Նպատ լեռան հիւսիսային արեւելեան ստորոտը, Արածանի գետին ու Շահապիթակ լեռան մօտ, աստուածներու պաշտաման նշանաւոր տեղ: Հիմայ կը կոչուի Իւչ-ֆիլիսէ:

Բագրեւանդ. — Արարատի գաւառներէն մէկը, հիմայ կը կոչուի Աշաշկեռս ու Գարաֆիլիսէ: Այս գաւառին մէջ նշանաւոր էին Նպատ լեռն ու Ջիրաւ դաշտը, վազարչակերտ քաղաքը, Տիրատին ու Բլուր գետերը:

Բասեյի. — Սկիւթացի ցեղ մըն էին որ կովկասու կիրճերէն անցնելով՝ կ'ասպատակէին Հայաստանի սահմանները:

Բարձր Հայք. — Հայաստանի 15 նահանգներէն մէկը: Արդի երկրում կուսակալութիւնը մեծ մասամբ կը համապատասխանէ Բարձր Հայքի:

Բզնունեաց ծով = Վանայ ծով. — Հայաստանի ամէնէն մեծ լիճն որ Աղի ծով, Ռշտունեաց ծով, Աղքաւարի

ալ կը կոչուի: Խալդեանց օրով կը կոչուէր Նայիրի ծով: Մէջը կան չորս կղզեակ. Աղքաւար, Աոսեր, Կսուց և Լիւն:

Բզնունիք. — Տօբոլբերանի գաւառներէն մէկը, հիմայ կը կոչուի Խլաք ու Արծկի և նշանաւոր է Նեւրոս լեռնով և Նազիկ լճով: Այս գաւառին մէջ նշանաւոր էր հին ատեն Խլաք որ եղաւ մայրաքաղաք Սեւանուկեան Սուրեանի հաստատած (1100) իշխանութեան: Խլաթի իշխանները Շահ-Արմէն տիտղոսը կը կրէին:

Բիրզանդիոն. — Կ. Պոլսոյ հին անունը: Նախկին Բիւզանդիոն զոր հիմնած էր Բիւզանդ անունով Մեգարացի գաղթական մը՝ կը բարձրանար արդի Սէրայ-Պրունիի բլրին վրայ: Մեծն Կոստանդինոսի յաջորդները Բիւզանդիոնն ընդարձակելով՝ կոչեցին Կ. Պոլիս: Բլուր. — Բագրեւանդ գաւառի գիւղերէն մէկը, հիմնադատակ կործանած:

Գանմանակ. — Հայ նախարարութեանց դասակարգութեան ցուցակն որ քանի մը անգամ փոխուեցաւ:

Գաննի. — Սիւնեաց Գեղարքունի գաւառին քաղաքներէն մէկը, Գեղամի ծովուն քով, Ազատ գետի մօտ նշանաւոր ամրոց որ կը կոչուէր նաև Սարաւոյք Տըրդասայ: Երեւանի մեծ գեանաշարժին (1679) խապառ կործանեցաւ և անբնակ եղաւ:

Գեղ լեռ. — Գեղարքունի գաւառին մէջ լեռ մը. հիմայ կը կոչուի Աշաշիցեկ:

Գեղամայ լեռ. — Գեղարքունեաց լեռներէն մէկը, հիմայ կը կոչուի Նալ-թեյիէ:

Գեղամայ ծով. — Գեղարքունեաց գաւառը, լեռներու մէջ, կը կոչուի Սեւանայ լիւն: Զուրն անուշ է. մէջը կը գտնուի հրաբլխային համանուն կղզին՝ նշանաւոր իր վանքով: Գեղամայ ծովը 75 քլմ. երկայնք,

27 քլմ. լայնք ունի և տարածութիւնն է 1333 քլմ.
խորութիւնն է 110 մ. :

Գեղարձունեաց լեռներ. — Գեղամայ ծովուն եզերքի
լեռները :

Գեղարձունիք. — Սիւնեաց մէջ գաւառ մը, հիմայ կը
կը կազմէ Կեօջայի, Ապարսևի ու Տարիշիջակի մաս-
երը :

Գործքիք. — Եւրոպայի հիւսիսային մասին ցեղերն որոնք
Հռոմէական կայսրութեան կործանումէն ետք ծանօթ
են Ուսրոգորք=Արեւելեան Գորացիք ու Վիսիգորք=
Արեւմտեան Գորացիք անունով : Ասկէ՝ Կորթիք անունը
Կոթիկը=Գոթացիք — տեսակ մը գիր ու ճարտարասպե-
լ լատիւն :

Գողթն. — Վասպուրականի գաւառներն մէկն որ հիմայ
կը կոչուի Ագուշիս՝ Երեւան նահանգին նախիջեւան
գաւառին մէջ : Գողթն գաւառը կը գտնուի Երասխի
քով, Սիւնեաց սահմանակից : Յարդ նշանաւոր է
խաղողը : Բնակիչները հին ատեն հանճարեղ ու բա-
նաստեղծ էին — Հայոց գուսանները — որոնք նուա-
գարաններով կ'երգէին Հայոց նախնեաց քաջու-
թիւնները :

Գոշգարք. — Հայաստանի նահանգներէն մէկը՝ զոր Մեծն
Տիգրանի նախնիք Վրաց ձեռքէն գրաւած էին : Մեծն
Տիգրան հոն կազմեց բղէշլոտիւն մը=Միւշիրու-
քիւն իր պետութեան հիւսիսային սահմանները պաշտ-
պանելու համար : 387ին դարձեալ Վրաց անցաւ և
Վրաց աշխարհի հետ Պարսից գերիշխանութեան տակ
մնաց : Հիմայ կը կոչուի Պորչալու (Թիֆլիս նահանգ) :

Գիւջազն. — Հին աշխարհի հերոսներն որ կը համարուէին
նաև իբրև կիսաստուած և կը պաշտուէին աստուած-
ներու պէս :

Գուրն. — Ազատ գետի ձախ ափը, Երեւանէն դէպի հա-

րաւ 5 ժամ հեռու, Հայոց մայրաքաղաքներէն մէկը,
յետոյ Կաթողիկոսական աթոռ : Թ. դարու վերջերը
հիմնայատակ կործանեցաւ գեանաշարժէ : Հիմայ կը
տեսնուին իր աւերակներու դերբուկները :

Գուռն Ալանաց. — Հիմայ կը կոչուի Տարիշի կիրճ որ
Կովկաս լեռներուն ամէնէն բանուկ անցքն է : Կը
կոչուի նաև Կովկասեան կիրճ, Սարուսակաւ անց :
Իր արդի անունն առած է այն ամրոցէն զոր Վրաց
Մրուան թագաւորը 140ին (Ն. Ք.) շինեց բարձր ժայ-
ռերու ծայրը՝ իր երկրին սահմանները պաշտպանելու
կազարներու յարձակման դէմ :

Եղեսացիք. — Եղեսիոյ բնակիչներն որոնք նշանաւոր էին
փարթամութեամբ ու գիտութեամբ :

Եղեսիա. — Ուրայաստանի մայրաքաղաքը : Հիմայ կը
կոչուի Ուրֆա : Սելեւկոս Նիկատոր հիմնեց (304 Ն.
Ք.) այս քաղաքը և կոչեց Եղեսիա որ կը նշանակէ
«Նոր փաղաք» : Իսկ Ուրհա=Ուրֆա կը նշանակէ Զրար-
քի երկիր :

Եկեղիք. — Բարձր Հայոց գաւառներէն մէկն որ կը կոչ-
ուէր նաև Անահեսակաւ, Լուսաւորչի գաւառ, հիմակ-
ուան Երզնկաւ գաւառը : Հոս նշանաւոր էին Երիզա
աւանը, Թիլն աւանը, Խախ գիւղն և այլն : Եկեղիք
գաւառին մէջ հիմայ կան նշանաւոր վանքեր ու Հայ
գիւղեր :

Եռապետ. — Հռոմի Հասարակապետութիւնը կործանուե-
լէն ետք, Հռոմէական աշխարհը կառավարուեցաւ ե-
րեք իշխաններէ որ կը կազմէին Եռապետութիւն մը .
Օգոստոս կայսրը ջնջեց Եռապետութիւնն ու հաստա-
տեց Հռոմէական Ինքնակալութիւնը=Միապետու-
թիւնը=Կայսրութիւնը :

Երասխ Գ. — Հայաստանի նշանաւոր գետներէն մէկը —
բուն Հայկական գետը — որուն բոլոր ընթացքը Հա-

յաստանի մէջ է : Երասխ նախահայական անուն մըն է : Գեան ունի 780 քլմ. երկայնութիւն : Կը բլլի էր-զրու մի Պիկկոզ հաստամետէն և ընդունելով Արա-րատի և Սիւնեաց գետերը՝ կը միանայ Կուր գետին հետ և կը թափի Կասպից ծովը :

Երեւան. — Արարատի կոտայք գաւառին գլխաւոր քա-ղաքը՝ Հրազդանի=Ջեկկի չայի ձախ կողմը. հիմայ համանուն նահանգին կեդրոնը զոր Ռուսերը գրաւե-ցին 1827ին : Երեւան 1841ին Ռուսական Հայաստա-նի գլխաւոր քաղաքն եղաւ : Պարսկական աղտոտ քաղաքի մը կը նմանի՝ շրջապատուած այգիներով : Օղը վատառողջ, ամառն անտանելի տաք է : Երե-ւան նախահայական անուն մըն է :

Երիզա. — Եկեղիք գաւառի գլխաւոր տեղը, արդի Եր-զնկան : Երզնկան 1045—1784 տասնեհինգ անգամ կործանած է : Երզնկան Դ. զօրարանակի կեդրոնն է :

Երեւանդաւան. — Արարատի Արշարունեաց գաւառին մէջ, Ախուրեան գետին մօտ, հիմնայատակ կործա-նած : Հետքը չի տեսնուիր :

Երուանդակեհէս. — Արշարունեաց գաւառի արդի Սհարշու վիճակին մէջ, Երասխի ու Ախուրեանի խառնարանին անկիւնը, Երեւանդաշատի դիմաց : Հիմնայատակ կոր-ծանած և կը կոչուի Գըզըղ-գուշէ :

Երեւանգաւաս. — Երեւանդակերտի դիմաց. կը տես-նուին իր աւերակներու դերբուկները :

Եփրատ Գ. — Հայաստանի ամէնէն մեծ գետը (2860 քլմ. երկայնք) որ կը բլլի էրզրու մի հիւսիսային արեւելք Տոււշու լէռնէն. Երզրու մի դաշտին մէջ ճահիճներ=չամբեր կազմելն ետք, մանուածապատ կը սողոսկի դէպի հարաւային արեւմուտք և անցնելով Երզնկանի բարեբեր դաշտէն՝ կը գահավիժի Ակնայ կողմերն և Բեպան-Մատէնի առջև կը միանայ Արածանի գետին

հետ : Եփրատ ալ նախահայական անուն մըն է : Եգեան. — Արքիպեղազոս ծովուն հին անունը :

Էջմիածին. — Արարատ գաւառի գլխաւոր քաղաք Վա-ղարշապատի քով, Հայոց Հայրապետութեան աթոռը : Թիլն. — Եկեղիք գաւառի նշանաւոր գեղերէն մէկը, ուր թաղուած են Ս. Արիստակէս ու Մեծն Ներսէս : Հին ատեն հոս կը գտնուէր Նանէ դիցուհւոյն ար-ձանը : Հիմայ կը կոչուի Ջուխսակ Հայրապետ :

Թոքան. — Բարձր Հայքի Դարանաղեաց գաւառի մէջ, Սեպուհ=Գոհանամ լեռան արեւելեան կողմը : Հոս թաղուած են Ս. Լուսաւորչի թոռներն որով կը կոչ-ուի Ինն Գերեզմանի :

Ինդոս. — Հնդկաստանի մեծ գետերէն մէկը. ասկէ՝ Հնդկաստան անունը : Հնդկաստան առաջ կը կոչուէր ՚ Արխա-Վարդա=Արիաց երկիր :

Լեկի. — Լեկի կամ Լեկաց աղբն Ալանաց պէս Սկիւթա-ցի ժողովուրդը մըն էին որոնց երկիրը կը գտնուէր Աղ-ուանից ետին, Կասպից ծովուն մօտ : Հիմակուան Տաղսաւնն է : Լեկք հիմայ կը կոչուին Լեզկի : Ասոնք երբեմն Հայաստանի հիւսիսային սահմանները կ'աս-պատակէին :

Խաղտիք. — Հայաստանի հիւսիսային արեւմտեան կողմը, Կողքիսի կամ Եգերացուց չորս գաւառներէն մէկն և կը կոչուէր նաև Լազիկիս=արդի Լազուսան նահան-գը : Խաղտիք կոչուեցաւ Խալդեանց անունով : Հի-մայ այս նահանգին մէջ նշանաւոր է Հաւշէն ուր ցրուած են աղճատ գաւառաբարբառով Հայեր :

Խառան. — Միջագետքի մէջ, Եփրատի մէկ ճիւղին վրայ, տափարակ ու աւազուտ, բայց ջրարբի դաշտի մը մէջ հին քաղաք :

Խորոնի. — Տարօնի գիւղերէն մէկն որ ցարդ կանգուն կը մնայ :

Ծննդոց անճառ. — Արշարունեաց գաւառի մէջ, Երասխի մօտ, զոր Երուանդ Բ. անկեց և չորս կողմը պատ քաշեց և մէջը տեսակ տեսակ որսի կենդանիներ լեցուց:

Կապաղովկիա. — Փոքր Ասիոյ հին գաւառներէն մեծագոյնն որ կը կոչուէր նաև Գաւիրի՝ Գամիրեանք = Կեմիրեանք հոն հաստատուելուն համար: Ալիս գետը կ'ուռգէր այս գաւառն որ նշանաւոր էր արօտավայրերով, ձիով, էջով ու ոչխարով: Հիմայ էնկիւրիւ կուսակալութեան Գայսերի սանճագը: Կապաղովկիա Փոքր Հայքի մէկ նահանգն էր և կը կոչուէր Առաջին Հայք:

Կասպից ծով. — Կը կոչուէր նաև Վրկանաց ծով: Հիմայ Թիւրքմէնները կը կոչեն Ա. գ. Տեւիզ = Ճերմակ ծով: 396,500 քլմ. տարածութեամբ Կասպից ծովը Ռուսական լիճ մըն է ուր կը թափին Կուր և Երասխ գետերէն զատ Թէրէք, Ուրալ ու Վոլկա գետերը:

Կարին. — Բարձր Հայքի Կարին գաւառի գլխաւոր քաղաքն որ Թեոդոսուպոլիս ալ կը կոչուէր: Հայաստանի ամէնէն բարձրադիր քաղաքը: Հիմայ կը կոչուի Էրզրու: Նախահայական անուն մըն է Կարին:

Կեդրոնական Ասիա. — Թուրքաստան կը կոչուի Կեդրոնական Ասիա, ուրկէ գաղթած են, կ'ըսեն, Արիական ժողովուրդները:

Կեսանիա. — Կապաղովկիոյ մայրաքաղաքն որ կը կոչուէր նաև Եւսեթիա ու Մազախ: Հիմայ Գայսերի կը կոչուի: Այս Կեսարիայէն զատ կային նաև 1. Կեսարիա Պաղեսիւնացոց, Միջերկրականի մօտերը՝ Տիւրօսի ու Յոպպէի մէջտեղ, 2. Կեսարիա Փիլիպպեանց՝ Յորդանան գետին արեւելեան ակներուն մօտ:

+ Կեմլերեանք. — Կեմլերեանք = Գաւիրի Սկիւթական ժողովուրդ մըն էին որոնք Մարաստանն ասպատակե-

լէն ետք ցրուուեցան Սիւնեաց ու Կապաղովկիոյ մէջ: Կիլիկիա. — Փոքր Ասիոյ երկիրներէն մէկն որ յաջորդաբար Պարսից, Մեծն Աղեքսանդրի, Սելեւկեանց, Հուստանացոց, Բիւզանդական կայսրութեան մասը կազմեց և յետոյ Ռուբինեանց թագաւորութեան երկիրը: Կիլիկիա երկու մասի կը բաժնուէր. Լեոնալիս = Բարոս Կիլիկիա ու Դաշսայիս = Ծովեզերեայ Կիլիկիա: Հիմայ կը կոչուի Ատանա կուսակալութիւն:

Կոնս. — Բիւզանդական Կայսրութեան նահանգապետները Կոնս տիտղոսը կը կրէին: Բիւզանդական շրջանին բազմաթիւ Հայ կոմսեր կը յիշուին:

Կովկաս. — Սև ծովու և Կասպից ծովու միջև լայնատարած ու երկարաձիգ լեռնագօտի մըն է Կովկաս զոր Թուրքերը Գափ-Տաղ, Թաթարները Ճալ-պուկ «Սառի բարշ» կը կոչեն: Կովկաս լեռնագօտին Կովկասիան երկու երկրամասի կը բաժնէ. Այսր-Կովկասիա՝ հիւսիսային ու Անդր-Կովկասիա՝ հարաւային: Կովկասի բարձր գագաթներն են Էջպրուզ (5646 մ.) ու Գազպիկ (5094 մ.):

Կովկաս Հայոց. — Տաղստանէն մինչև Հրազդան գետ ու անկէ դէպի հարաւային արեւելք՝ մինչև Երասխ գետ տարածուող լեռները կը կոչուին Հայոց Կովկաս:

Կորդուաց լեռներ. — Պագման գետէն մինչև Փոքր Զապ երկարող լեռները կը կոչուին Կորդուաց լեռներ: Հիմայ կը կոչուին Ճիւսի կամ Հեփեարի լեռներ:

Կորդուք. — Նախահայական անուն մըն է Կորդուք, Ասորեստանեայց Նայիրի երկիրներէն մէկը զոր Մեծն Տիգրան գրաւեց ու Հայացուց: Արդի Հեքեարի նահանգն ու Մուսուլի մէկ մասը:

Կուաք. — Արագածոտն գաւառի, Արագած լեռան կողը, Թալիշ աւանի հիւսիսային կողմը, Մեծամօր գետակի աղբերակին մօտիկ կը գտնուէր Կուաք աւանը:

Կուր գ. — Վրահայոց գետ (1050 քլմ.) որ հոսելով հիւսիսային արեւմուտքէն դէպի հարաւային արեւելք՝ կ'ընդունի Ռուսական Հայաստանի հիւսիսային մասի բազմաթիւ գետակներն և Երասխի հետ միանալէ ետք, կը թափի Կասպից ծովը: Կուրը կը քաշկրտէ, կը տանի հետը մեծաքանակ աւազ ու կաւ և կը թխմէ բերանը: Կուրի տեղւոյն 4 քլմ. կ'երկնայ ամէն տարի:

Հայկաեփ. — Տուրուբերանի Հարք գաւառին մէջ գեղ մը որուն հետքը ջնջուած է:

Հանձիթ. — Նախահայական էնզիս որ հայացած՝ եղած է Հանձիթ. Չորրորդ Հայքի գաւառներէն մէկը, արդի Խարբերդ գաւառը:

Հաւսեանք. — Նախահայական անուն մը, Չորրորդ Հայքի գաւառներէն մէկը, արդի Պիթլիս կուսակալութեան Կինճ նահանգի Ճապաղաշուր գաւառը: Սահմանակից էր Տարօնոյ. ունէր ձորահովիտ մը ուր կը բնակէին անդրանիկէն զատ՝ միւս կրտսեր Արշակունի թագաւորազուները: Այս գաւառին մէջ անուանի էր Կրառիճ քաղաքը, որ արդի Կիւնէք-Գալէի ձախ կողմը գտնուող Կոնարիչն է:

Հարբ. — Տուրուբերանի գաւառներէն մէկն որ հիմայ կը կոչուի Վերին Պուշանըզ (Մուշ նահանգ) որուն գըլխաւոր տեղն է Եոնճարու: Հին ատեն այս գաւառին մէջ նշանաւոր էր Մանազկէրտ զոր հիմնած էր Խալդեանց թագաւոր Մինուաս:

Հացիկ. — Տարօնոյ գեղերէն մէկը՝ Ս. Մեսրոպի ծնընդավայրը:

Հեռաւոր Յունաստան. — Բուն Յունաստան—Հելլադա:

Հեռ. — Պարսկահայք նահանգի գաւառներէն մէկը. հիմայ կը կոչուի Խոյ (Պարսկական Հայաստան):

Հիւպատոս. — Հռոմէական կայսրութեան մէջ վարչական

տիտղոս մը՝ տարբեր արդի նշանակութիւնէն: Հիմայ հիւպատոս կը կոչուին գաւառներու մէջ օտար տէրութեանց ներկայացուցիչները:

Հնդեւրոպական. — Արիական ժողովուրդները Հնդեւրոպական ալ կը կոչուին, որովհետեւ ցրուուած են Հնդկաստանէն մինչև Եւրոպայի ծայրը: Հնդեւրոպական ցեղը կը բաժնուի Հայ, Երանեան, Հնդիկ, Յոյն, Լասիւն, Գերման, Սլաւ և Լիթուան ճիւղերու:

Հոնք. — Բուշեան ցեղէ Հոնք—Հեթրաշները երբեմն կը բնակէին Բակարիա և ասկէ կ'ասպատակէին Պարսկական երկիրները: Յետոյ կովկասեան երկիրները հաստատուելէ ետք Ասսիլասի առաջնորդութեամբ ողողեցին Եւրոպա:

Հրեայք. — Սեմական ցեղէ Հրեայներուն—Եբրայեցիներուն նախահայրն է Աբրահամ նահապետը: Հրեայներն իրենք զիրենք կ'անուանեն Իսրայելացի: Հիմնեցին թագաւորութիւն մը 1097ին (Ն.Ք.) որ երկուքի բաժնուեցաւ 978ին (Ն.Ք.): Թագաւորութիւնը կը կործանի 539ին (Ն.Ք.) և հետզհետէ կ'ենթարկուի օտարներու տիրակալութեան:

— Հռոմայեցիք. — Նախապէս Հռոմ քաղաքին բնակիչները կը կոչուէին Հռոմայեցիք. յետոյ Հռոմ քաղաքէն նուաճուած դանազան ազգերու երկիրներն ալ Հռոմէական քաղաքացիութիւնն ընդունելով՝ առհասարակ Հռոմայեցի անունը կրեցին:

Չիրաւ. — Ծաղկոտն ու Բագրեւանդ գաւառի միջև, Նպատ լեռան ստորոտը դաշտ մը:

Չինացիք. — Ճինացիք կամ Չինացիք դրացի ցեղերու ասպատակութիւնէն ստիպուած (Ն.Ք. 165ին) սկսան գաղթել: Այդ գաղթական Չինացիք ծանօթ են Հընդիկ—Սկիւթացի անունով: Հնդիկ—Սկիւթացիք նախ հաստատուեցան Հնդիկ—Աֆղանեան սահմանադիւի

վրայ, յետոյ Պարթեւաց երկիրը, ուրկէ ճիւղ մը եկաւ վերջնականապէս հաստատուեցաւ Հայաստանի մէջ Մամիկոնեան անունով:

Ճորոխ. — Հայաստանի չորս գետերէն մէկը. հիմայ կը կոչուի Արարիկ-Սու՝ Ճորոխի թրքացած ձեւը: Նախահայական անուն մըն է: Կը բղխի Սպերու լեռներէն, կ'անցնի Անդր-Կովկասէն և Սև ծով կը թափի:

Մակեդոնացիք. — Լիւրիկեցի ու Հելլէն ցեղեր իրարու հետ ձուլուելով՝ կոչուեցան Մակեդոնացի և Ը. դարուն (Ն.Ք.) թագաւորութիւն մը կազմեցին: Առաջին թագաւորն եղաւ Պերդիկաս: Մակեդոնացոց մայրաքաղաքն էր Եղեւա՝ արդի Վոսիւնա: Փիլիպոս ընդարձակեց երկիրն ու իր որդին՝ Մեծն Ալեքսանդր այդ թագաւորութիւնը կայսրութեան բարձրացուց:

Մակեդոնիա. — Արդի Մանասեր, Սելանիկ կուսակալութիւններն ու Գոսովայի հարաւային մասն ուր կը բնակէին Մակեդոնացիք:

Մասիս. — Հայաստանի բարձր լեռը. ունի երկու սար՝ Մեծ Մասիս (5160մ.) ու Փոքր Մասիս (3596): Հրաբխային լեռ մը, ինչպէս հրաբխային է Հայաստանի լեռներուն մեծ մասը, որովհետև ասոնց ներքին կազմութիւնը մեծ մասամբ պաղաւղ է որ սովորաբար հրաբուխի տեղեր կը գտնուի: Մասիսի 4,320 մ. բարձրութեան վրայ կայ սառնարան մը:

Մարասան. — Հայաստանի հարաւային արեւելեան կողմը Պարսկաստանի արդի Ասրպեճան, Կիլիս, Մազանդերան ու Երագ-Աճեմի կոչուած երկիրները, Կը բաժնուէր երկու մասի. Փոքր Մարս=Ասրպասական հիւսիսային արեւմտեան կողմը, և Մեծ Մարս՝ հարաւային կողմը: Մարաստանի մայրաքաղաքն էր Եկրասան=արդի Հաւասանը:

Միջագետք. — Հայաստանի ձիւնապատ լեռներէն բղխող

Եփրատ ու Տիգրիս գետերը զուգահերաբար ընթանալէն հոք, հեղահեղ իրարու կը միանան, մինչև որ հովիտ մը կազմեն որ կը կոչու Միջագետք: Հովիտը երեք մասի կը բաժնուի — Քաղիկասան՝ հարաւային կողմը, Ասորեսան՝ հիւսիսային կողմը և Բուն Միջագետք՝ հիւսիսային արեւմտեան կողմը:

Մծբին. — Նախապէս կը կոչուէր Նախիթնա, յետոյ կոչուեցաւ Մծբին, արդի Նեղիպիս (Տիարպեքիբի կուսակալութիւն), Ուրհայաստանի=Աբգարեանց երկրին, գլխաւոր քաղաքներէն մէկը:

Մոկի. — Նախապէս Նայիրի երկիր, յետոյ Հայաստանի 15 նահանգներէն մէկը. հիմայ Խիզակ, Պիրուարի, Մոկոս, Շասախ կալն:

Մուրց Գ. — Երասխի գետակներէն մէկը, Արարատի Բասեան գաւառի մէջ. հիմայ կը կոչուի Հասան-Գաշի ջուր:

Մոսաւուր Յուլիսան. — Փոքր Ասիոյ Յոյն գաղութներն որոնք ցրուած էին Արքեսիլագոսի եղերքը:

Յոյն կայսրութիւն. — Հռոմէական կայսրութիւնը Մեծն Թէոդոսի մահէն հոք երկուքի բաժուեցաւ, Արեւելեան ու Արեւմտեան: Արեւելեան կայսրութեան զանազան ազգերու լեզուն յունարէն ըլլալով՝ կոչուեցաւ Յոյն=Յունաց կայսրութիւն որ կը կոչուի նաև Բիզանդական և կամ Ասորիս:

Յունաց բաժին. — Փոքր Հայք և Մեծ Հայքի Բարձր Հայք ու Չորրորդ Հայք գաւառները:

Նիւուե. — Ասորեստանի մայրաքաղաքներէն մէկը՝ Տիգրիսի ձախ եզերքը. ունէր 89 քիլոմետր պարիսպ մը: Պատերը 33 մետր բարձր ու այնչափ լայն էին որ վրայէն երեք կառք քով քով կրնային անցնել: Ունէր 9500 աշտարակ, իւրաքանչիւրը 66 մետր բարձրութեամբ: Իր աւերակները կը գտնուին Մուսուլի մօտ Գոյունըզ եեղը:

Նպաս. — Ծաղկոտն գաւառի Ծաղկէոյ—Ալատաղ լեռան հիւսիսային արեւմտեան կողմի լեռնազագաթն որ կը գտնուէր Բագրեւանդ գաւառի մօտ:

Շաւարճան. — Վասպուրականի Արտաղ գաւառին քաղաքը, արդի Մակուի կողմերն ուր թագաւորական ամարանոց և զօրանոց կային: Հետքը բոլորովին ջնջուած է:

Շիրակ. — Արարատ նահանգի գաւառներէն մէկը, Երասխի հիւսիսային կողմը, Ախուրեան գետին եզերքը, բարեբեր ու ջրարբի: Նախ կամասրականներու կալուածք էր, յետոյ Ը. դարուն Բագրատունեաց երկիր դարձաւ: Շիրակի գլխաւոր քաղաքն է Անի: Շիրակ հիմայ կը կոչուի Շորագեայ՝ Երեւան նահանգի Աղեքսանդրապոլի գաւառին մէջ:

Ողիմսիակսն խաղեր. — Յոյն մարմնամարզական փորձեր ու հանդէսներ որ չորս տարին անգամ մը ամառը կը կատարուէին Յունաստանի Ելիս գաւառի Ողիմսիա քաղաքը: Ասկէ՝ իր անունը:

Ուսեացիք. — Սկիւթացի ցեղ մը էին Ուսեացիք որ յետոյ հայացան. կը կոչուին նաև Սեւորդիք որ կը բնակէին Ուտի նահանգը: Ուտեացիք հիմայ կը բնակին Անդրկովկասի Գանձակ նահանգին մէջ:

Ուտի. — Հայաստանի 15 նահանգներէն մէկն որ հիմայ Անդր-Կովկասի Գանձակ նահանգի ձիւրանշիր գաւառն է: Ուտիք 8 գաւառ և նշանաւոր էին իր Գարդնան, Շաւխոր, Գանձակ, Պարսաւ քաղաքներն և Անարասի ու Գանձասարի վանքերը:

Ուրհայասան. — Ուրհայասան կը կոչուի նաև Միջագետքի Հայոց՝ Հայաստանի Աղձնիք նահանգին սահմանակից Եփրատ ու Տիգրիս գետերուն միջև, Հին Միջագետքի հիւսիսային կողմը: Հին ատեն կը կոչուէր Բեւ-Չաւան, Հայ-Պարթև Արշակունիներն այս երկիրն երբեմն նուաճեցին: Հռոմայեցիք Քրիստոսի

349 թուականին Հայոց Միջագետք կոչուած երկիրն երկու մասի բաժնեցին: Գլխաւոր քաղաքներն էին Եղեսիա, Մծբին ու Ամիս=Տիարսիֆիլ:

Ուրմիա. — Հայաստանի Պարսկահայք նահանգին մէջ, համանուն ծովուն արեւմտեան կողմը բարեբեր գաւառ մը՝ համանուն քաղաքով:

Ուրմիոյ ծով. — Ատրպատականի մէջ, կը կոչուի նաև Կապուտսան ծով ու պարսկերէն Տարխանա=Փոքր ծով. 4000 քլմ. տարածութեամբ ու 14 մ. խորութեամբ: Մէջը կայ 8 կղզի. մեծագոյնն է Թեղաւ=Գոյուն ասալը ուր թաթարներու Հուլաղու խանը բերդ ու գանձարան շինեց: Այս կղզիներն ունին արօտավայրեր:

Պահլաւ. — Բակտրիոյ Մար-Սկիւթացի թագաւորական ցեղ մը որուն առաջին թագաւորը կ'ըլլայ Արսաւան Գ. (14-44): Պահլաւ Հայաստանի ալ կը տիրեն և կը հաստատեն Հայ Պահլաւ—Արշակունեաց հարսութիւնը Քրիստոսի 51 թուականին: Պահլաւ կը նշանակէ Բեհիշլիան=Ըմբիշ:

Պաղեսից. — Հրէաստան Պաղեստին ալ կը կոչուի որ արդի Գուտա Շերիֆ ուրոյն սանձազն է:

Պանքեոն. — Տաճար մը ուր կը պաշտուէին բոլոր աստուածները:

Պարթեւ. — Սկիւթացի Մազգութներու ցեղէն էին Պարթեւ որ կը բնակէին Պարթեւասան = Պարսկաստանի Խորասան երկիրը: Պարսից թագաւոր Կողոմանոսի ցեղէն Դարեհ=Չարեհ կը հիմնէ (254 Ն. Բ.) Պարթեւաց թագաւորութիւնն որ կը տեւէ մինչև Քրիստոսի 44 թուականը:

Պարսիկ. — Հնդեւրոպական ցեղէ հրապաշտ ու հրավապարսիկները հզօր ինքնակալութիւն մըն էին Աքիմենեան կիրոսէն մինչև 330 (Ն. Բ.): 332-254 Սելեւկեանց, յետոյ (254 Ն. Բ. — 226 Յ. Բ.) Պար-

Թեւեբրուն և Պահլաւեբրուն հպատակ: Վերջն ալ Արսաշիր 211ին կը հիմնէ Սասանեան Կայսրութիւնն որ կը տեւէ չորս դար:

Պարսից Բաժին. — Մեծ Հայքի բացի Բարձր Հայք, Չորրորդ Հայք ու Տուրուքերան նահանգներէն միւս նահանգները կը կոչուին Պարսից բաժին:

Պոնտոս. — Սեւ ծովու հարաւային եզերքի արեւելեան մասն որ երեք մաս կը պարունակէր. 1. Գաղասիոյ Պոնտոս, 2. Պողեմոնական Պոնտոս ու 3. Կապադոկիոյ Պոնտոս: Արդի Տրապիզոն կուսակալութիւնը, Սվասի Ամասիա սանձագը, Գասդեմունի Սինոպ սանձագը:

Ռոսուքիք. — Վասպուրականի 36 գաւառներէն մէկը, Վանայ ծովուն մօտիկ որ կը կոչուի նաև Ռշտունեաց ծով: Հիմայ կը կոչուի Ուսան ու Գաւառ (Վան սանձագ): Գաւառին գլխաւոր տեղերն էին Ուսան ու Նարեկ: Աղթամար կղզին ալ այս գաւառին կը պատկանէր: Ռշտունիք Նախահայական նախարարութիւն յըն էին, իրենց անունն առած են Խալդեան Ռուշաս թագաւորէն, հիմայ կը կոչուին Վոշիկ:

Սասանեանք. — Տե՛ս «Պարսիկ»:

Սելեկեանք. — Մեծն Աղեքսանդրի զօրավարներէն Սելեւկոս Նիկասոս որ Բաբելոնի կուսակալ կարգուած էր՝ հետզհետէ տիրեց Ասիոյ մինչև Ինդոս ու Եաքսարտէս գետերը, և հիմնեց Սելեւկեանց տէրութիւնը 312ին որ տեւեց մինչև 64 (Ն.Ք.): Սելեւկոս Նիկասոսի յաջորդները կոչուեցան Սելեւկեանք:

Սելեւկիա. — Տիգրիս-Եփրատ ջրանցքին եզերքը, Պաղտատի հարաւային արեւմտեան կողմը, Սելեւկեանց մայրաքաղաքը. մեծափարթամ քաղաք մը՝ որ Սեւ ծովու եզերքի երկիրներուն, Հայաստանի, Կովկասի, Հնդկաստանի հետ առեւտրական յարաբերութեանց մէջ էր:

Սեւաւար. — Տե՛ս Միջագետք:

Սեպուհ Լ. — Հայաստանի մէջ երկու Սեպուհ լեռ կայ. մէկը՝ Տուրուքերանի Բզնունեաց գաւառին մէջ, Վանայ ծովուն հիւսիսային կողմն Ալճավազի մօտերը. հրաբխային հաստամետ մըն է որ կը կոչուի նաև Սիփան լեռ. ստորտը կան փոքրիկ լիճեր: Միւսն է Բարձր Հայքի Եկեղեաց գաւառին մէջ, Դարակաղեաց լեռներու ամէնէն բարձր սարն որ կը կոչուի նաև Գոհանաւ, հիմայ ալ՝ Սիքիկոս:

Սեւան կղ. — Երեւան նահանգի Նոր-Պայաղիտ գաւառը, Գեղամայ ծովուն մէջ կղզի՝ նշանաւոր իր մենաստատանով: Վանքն աքսորատեղի է պարտազանց հոգեւորականներուն:

Սիւնիք. — Հայաստանի 15 նահանգներէն մէկը, նախահայական երկիր մը որ ունէր 12 գաւառ: Սիւնեաց նախարարը Հայաստանի գլխաւոր նախարարութեան մէկն էր որ 970-1166 թագաւորութեան բարձրացաւ: Սիւնիք հիմայ կը կոչուի Շուշի=Գարապաղ որ Գանձակ նահանգի գաւառներէն մէկն է:

Սիկունքիք. — Տարոնոյ նախնի նախարարութիւնն որուն յաջորդեցին Մամիկոնեանք:

Սկիւքացի. — Երանեան լեռնադաշտի հիւսիսային ու արեւելեան կողմի զանազան ցեղերն որոնցմէ Հայոց պատմութեան մէջ ծանօթ են Ալանները, Մազգութները, Հեփթաղներն և այլն:

Սկիւքիա. — Ընդարձակ երկիր մը որ կը համապատասխանէ արդի Երոպական ու Ասիական Ռուսաստանի հարաւային երկրամասի՝ Ազախու ծովէն մինչև Պարսիկ լեռնադաշտը:

Սպեր. — Բարձր Հայքի է. գաւառը. հիմայ Էրզրում սանձագի Սպիր գաղան՝ համանուն քաղաքով: Բազրատունեաց կայուածներէն մէկն որուն գլխաւոր քաղաքներն էին Սպեր ու Բաքերդ:

Usahh. — Պարսիկ Ա. քիմենեան մայրաքաղաքներէն մէկն է Սպահը որ կը կոչուի նաև Պերսեպոլիս, որուն աւերակներ կը տեսնուին Շիրազէն դէպի հիւսիսային արեւելք 50 քմ. հեռու, Սպահանի ճամբուն վրայ: Տեղացիք այդ աւերակները կը կոչեն ձեւշիսի քաղղ:

Վաղարշապահ. — Արարատի գաւառներէն Բասենի քաղաքներէն մէկը, Հասան-Գալէէն դէպի արեւելք ժամ մը հեռու: Հիմայ կը կոչուի Քորքիւ-ֆոյ: Այս գեղին մօտ, Մուրցի Երանս խառնուած տեղը կը գտնուի եօթնակամար կամուրջ մը զոր տեղացիք Չոպան-Քորքիւսիւ կը կոչեն:

Վաղարշակեհեր. — Արարատի Բազրեւանդ գաւառին մէջ Սուկաւէտ = Զրարալիս, արդի Շահեօլը լերան ստորոտը, վտակի մը եզերքը պարսպապատ բերդաքաղաք. հիմայ կը կոչուի Թօքրագ-գալի Ալաշկերտ գազայի մէջ (Պայաղիտ սանձագ):

Վաղարշապահ. — Հայոց մայրաքաղաքներէն մէկն որ նախ կը կոչուէր Արտաւէտ կամ Վարդգեսի աւան: Վաղարշ նորոգեց և իր անունով կոչեց Վաղարշապատ: Քաղաքին չորս կողմը խրամ փորած էր անառիկ ըլլալու համար և ունէր միջնաբերդ: Այդ հնութեանց հետքերն անգամ չեն մնացած: Վաղարշապատի կից չինուած է էջմիածինն որ Վաղարշապատի պէս հնուց ի վեր եղած է Հայութեան ու Հայաստանի սիրտը:

Վան. — Վասպուրականի Տոսպ գաւառի գլխաւոր քաղաքը: Նախահայական Բիւսնան է որ Վան եղած է: Երբեմն մայրաքաղաք Խալդեանց և յետոյ Արծրունեաց թագաւորութիւն:

Վանայ Ծով. — Տես Բնունեաց ծով:

Վանայ Ծովու աւազան. — Վանայ ծովուն շրջակայ երկիրները:

Վիքի. — Հայաստանի հիւսիսային կողմը, Վիրք կամ

Վրացիք՝ Կովկասեան ժողովուրդ մը որ Կուրի վերին ու Միջին աւազանը կը բնակին. ասկէ՝ իրենց կիւրճի անունը: Վիրք անունին թագաւորութիւն մըն էին, յետոյ Հայ-Պարթեւներու հպատակեցան, վերջն ալ Սասանեանց և 899-1800 Բագրատունեաց ճիւղ մը հոս թագաւորեց որ կոչուեցաւ Վրահայ Բագրատունի: Տարիկի կիրճ. — Կովկասի կիրճերէն մէկն որ հին ատեն կը կոչուէր Աշանաց դուռ:

Տարօն. — Տուրուբերանի գաւառներէն մէկը, արդի Մուշ գաղան. նախահայական անուն մը: Տարօն Մամիկոնեաց երկիրներէն մէկն էր, բարեբեր ու ջրաբեր: Տարօնի մէջ նշանաւոր էին Աշիշուս, Մուշ, Աւսդարեղ = Աւսդոնի, Գլակայ վանք = Ս. Կարապետ Լէն:

Տիգրանակեհեր. — Սխալմամբ կը կարծեն հիմակուան Տիարպեքիւր քաղաքը, մինչդեռ պիտի ըլլայ արդի Տարդիկ քաղաքն որ կը կոչուէր նաև Նիրկեհեր = Մարտիրոսաց քաղաք. ասիկա Չորրորդ Հայք նահանգի Ծոփ գաւառի մայրաքաղաքն էր:

Տիգրիս. — Հայաստանի չորս գետերէն մէկը, Նախահայական անուն մը որ հայացած եղած է Տիգրիս:

Տիգրոն. — Պարթեւաց ու Սասանեանց մայրաքաղաքը, Սելեւկիոյ դիմացը:

Տոսպ. — Վասպուրականի գաւառներէն մէկը, Վանայ ծովուն արեւելեան եզերքը: Տոսպ նախապէս Վան քաղաքին անունն էր, Վան ալ գաւառին անունը: Յետոյ գաւառ ու քաղաք իրարու անուն փոխանակեցին: Այս խառնակութենէն է որ գաւառը Վան — Տոսպ ալ կը կոչուի:

Տրոյա. — Արդի Պիղա սանձագը: Հին Տրոյական թերակղզոյն մէջ բլրակի մը բարձունքն որ կը շահապետէր Սկամանդր գետին հովտին՝ կը գտնուէր Տրոյա քաղաքը, արդի Հիւսարղի մօտերը: Նշանաւոր

իր սասնամեայ պատերազմով զոր մղեցին Յոյնել
ու Տրոյացիները :

Sornu. — Փոքր Ասիոյ հարաւային լեռնակողմը՝ անագի՛
հաստամետ մը որ քանի մը խումբերու կը բաժնուի
— Լիկեան Sornu, Պիսիդեան Sornu, Պաւնիդեան
Sornu, Իսաւրեան Sornu, Կիլիկեան Sornu, Աւնի
-Sornu ու Արեւելեան Sornu=Հայսկան Sornu:

Փիւնիկ. — Արդի Պէյրութ կուսակալութիւնն ուր կը
բնակէին Փիւնիկեցիք :

Փոքր Ասիոյ ժողովուրդներ. — Հիմակուան բուն Անա-
տոլուն որ հին ատեն կը կոչուէր Փոքր Ասիա՝ նշա-
նաւոր եղած է իր այլացեղ ու այլակրօն ժողովուրդ-
ներով որոնց մէջ գլխաւորներն էին Լիւդացիք, Գա-
ղատացիք, Փոխեզացիք, Գամիրք=Կապադովկիա-
ցիք: Ասոնց իւրաքանչիւրը զանազան ցեղերու խառ-
նուրդ էր: Այս պատմական ցեղերը հիմայ ձուլուած
են Փոքր Ասիոյ զանազան ժողովուրդներու հետ:

Փոքր Հայք. — Հայաստան երկու մաս ունէր. Մեծ Հայք
Եփրատի արեւելեան կողմը և Փոքր Հայք՝ Եփրատի
արեւմտեան կողմը: Փոքր Հայք բաժնուած էր երեք
նահանգի, Առաջին Հայք, Երկրորդ Հայք և Երրորդ
Հայք, այսինքն՝ Սվաս կուսակալութիւնը, Գայսերի
սանճազը, Արաբկեր ու Ակն գաղաններն ու Մալա-
թիա սանճազը:

Փոխիզիա. — Փոխիզիա Փոքր Ասիոյ ներքին նահանգն
էր: Բիւթանիոյ, Գաղատիոյ, Կապադովկիոյ, Լիւ-
կիոյ, Պիսիդիոյ, Իսաւրիոյ, Միւսիոյ, Լիւդիոյ և
Կարիոյ միջև ցորենաշատ ու գինաւէտ լեռնադաշտ
մը՝ նշանաւոր նաև իր ոչխարով ու արջառով: Փոխի-
զիա հիմայ բաժնուած է Խիւտավենաիկեար, Էնկիւ-
րիւ, Գոնիա ու Սուրիս կուսակալութեան մէջ:

Օսակեան. — Արեւմտեան գաւառի=Ամատունեաց երկ-
րին նշանաւոր բերքը միջիամնի մօտերը:



« Ազգային գրադարան



NL0412798

90.66

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Ա. ՆԱԶԺԺԻԱՆ
ԳՐԱՏԱՆ

ԳԼՍԱԳԻՔԵՐՈՒ ՄԷՋ
ՈՐՆ Է ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Գ Ր Ա Ւ Ք Ի Ս Տ Ա Ն
Ս Ա Ր Ր Ա Վ Ա Ն, Մ Է Ջ Ի Ն

Նոր հայագրութիւն
Հիմնովին բարեփոխում՝ պարունակութեամբ,
ճիշտութեամբ ու մերտալ եւ հորատում՝
ԲԱԶՄԱԹԻՔ ԳՐԱՏԱՆՈՂ ԲԱՐՏԵՍԵՐՈՂ

Ամբողջի նմանօրինակ նրաարտադրութեան մէջ, Աճէն զորոգու-
թիւն տանն առան էնք Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
հարձաւորն Աճիւրհագրութիւններու Գ. ՆԱԶԺԺԻԱՆ Գ., ՄԷՋԻՆ ու
ճառագի ընձայեւ Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
կանցի Աշխարհագրութիւնները գործածելով ու անողն ալեւա գեւոք
չգիտի զգալ եւրոպական աղբաներու Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
Փորձեցէք ու անտէք Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
Բարձրագոյն Աճաւհագրութիւններու Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
առաւելու ճիշտ ու հակամակալու Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
կիներու ճիշտ ու հակամակալու Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
թեանց վրայ Աճիւրհագրութիւններու Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
ծեր Գ. ՆԱԶԺԺԻԱՆ ու ՔԱՍԿԻՆ, ՄԱՃԻՆ զորոգու-
Ռեանտողութեան եւ կապիտալի պիտի կազմուանն իրենց կրթական

A. NAZIDJIAN
LIBRAIRE-EDITEUR
Sultan-Hamam, Bakirdjilar 11,
CONSTANTINOPLE

Գ
9147.9257
Դ-29